



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

А. С. АМБАРЯН, Д. А. МУРАДЯН,  
А. Г. СИМОНЯН

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ, Դ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ  
Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

ИСТОРИЯ ПРОЛЕТАРИАТА  
ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1988

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1988

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Պատասխանատու խմբագիր՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Բ. Բարխուդարյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական  
գիտությունների թեկնածուներ Վ. Խ. Հովակիմյանը և Հ. Ա. Պետրոսյանը

Համբարյան Ա. Ս. և ուրիշ.

Հ 205 Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմությունը | Ա.  
Ս. Համբարյան, Գ. Ա. Մուրադյան, Ա. Հ. Սիմոնյան; [Պատ. խմբ.՝  
Վ. Բ. Բարխուդարյան; ՀՍՍՀ ԳԱ. Պատմ. ին-տ.- Եր.: ՀՍՍՀ ԳԱ  
հրատ., 1988.— 301 էջ.

Մենագրության մեջ քննվում է Արևելյան Հայաստանի պրոլետարիատի ձևավորման ու զարգացման ընթացքը: Ցույց են տրված ինչպես պրոլետարիատի կազմում տեղի ունեցած որակական ու քանակական, այնպես էլ սոցիալ-տրնտեսական և իրավական փոփոխությունները: Լուսարանվում են պրոլետարիատի դասակարգային պայքարը, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հեղափոխական գործունեությունը: Մենագրությունը զրկված է բազմաթիվ փաստաթղթերի և նյութերի հիման վրա:

Հասցեագրվում է պատմաբաններին և ընթերցող լայն շրջաններին:

Պրոլետարիատի պատմության ուսումնասիրությունը սովետական պատմագիտության առաջնակարգ խնդիրներից է: Լինելով առավել համախմբված, զարգացած ու գիտակից դասակարգ, պրոլետարիատն իր ավանգարդի՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կազմակերպել է հասարակության բոլոր ճնշված ու շահագործվող խավերի պայքարը և հասցրել հաղթանակի: Վ. Ի. Լենինը նշում է, որ «միայն պրոլետարիատն է, որ շնորհիվ խոշոր արտադրության մեջ կատարած իր տնտեսական դերի, ընդունակ է առաջնորդը լինելու այն բոլոր աշխատավոր ու շահագործվող մասսաների, որոնց բուրժուազիան շահագործում, կեղեքում ու ճնշում է հաճախ ո՛չ թե պակաս, այլ ավելի ուժեղ շափով, քան պրոլետարներին, բայց որոնք իրենց ազատագրության համար ինքնուրույն պայքար մղելու անընդունակ են»<sup>1</sup>:

Ռուսաստանում պրոլետարիատը իր ազատագրական միսիան կատարել է անգամ այն դեպքում, երբ նրա քանակը անհամեմատ փոքր էր բնակչության ընդհանուր թվի մեջ: Նման երևույթը Վ. Ի. Լենինը բացատրում էր նրանով, որ «պրոլետարիատը տնտեսապես տիրապետում է կապիտալիզմի ողջ տնտեսական սիստեմի կենտրոնին և նյարդին, ինչպես նաև այն պատճառով, որ պրոլետարիատը տնտեսապես և քաղաքականապես՝ արտահայտում է աշխատավորության վիթխարի մեծամասնության իսկական շահերը կապիտալիզմի օրով»<sup>2</sup>:

Պրոպագանդելով Լենինյան գաղափարները հայ իրականության մեջ, Ստ. Շահումյանը բազմիցս ընդգծում էր պրոլետարիատի փրկարար դերը ազատագրական պայքարում և մատնանշում, որ նա այդ միսիան կարող է կատարել միայն իր կուսակցության գլխավորությամբ: Նա գրում էր. «Սոցիալ-դեմոկրատիան է այն միակ կուսակցությունը, որ նպատակ է դնում մինչև վերջ և անհողողող կռվել ժողո-

1 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 33, էջ 32:

2 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 40, էջ 28:

0505040000  
703(02)—88 24—87

ԳՄԴ 63.3(22)

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1988

վրրդի ազատության համար: Նա միակ կուսակցությունն է, որ չի ճանաչում ազգային խտրությունն ու թշնամություն, որ կազմակերպելով իր դրոշակի տակ բոլոր ազգերի բանվորներին, պրոլետարներին, հավասար կերպով ձգտում է դեպի ընդհանուր բարօրությունը»<sup>3</sup>:

Սովետահայ պատմաբանները՝ Հ. Ա. Ավետիսյանը, Վ. Ա. Ավետիսյանը, Մ. Վ. Արզումանյանը, Մ. Պ. Աղայանը, Խ. Հ. Բարսեղյանը, Գ. Ա. Գալոյանը, Ա. Կ. Գրիգորյանցը, Մ. Ա. Խոնդկարյանը, Հ. Ն. Կարապետյանը, Թ. Խ. Հակոբյանը, Ա. Ս. Համբարյանը, Ա. Բ. Հարությունյանը, Գ. Ա. Հարությունյանը, Հ. Մ. Հարությունյանը, Պ. Պ. Հարությունյանը, Վ. Խ. Հովակիմյանը, Գ. Բ. Ղարիբջանյանը, Հ. Ս. Մելիքյանը, Ա. Ն. Մնացականյանը, Ռ. Հ. Մովսիսյանը, Գ. Ա. Մուրադյանը, Ե. Մելիք-Յուլյանը, Մ. Գ. Ներսիսյանը, Վ. Ս. Ներկարարյանը, Վ. Ա. Պարսամյանը, Հ. Ա. Պետրոսյանը, Վ. Ա. Ռշտունին, Ա. Հ. Սիմոնյանը և ուրիշներ, զգալի աշխատանք են կատարել Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմության ուսումնասիրության գործում: Իրենց աշխատություններում նրանք այս կամ այն չափով անդրադարձել են պրոլետարիատի ձևավորման, նրա սոցիալ-տնտեսական, իրավական-քաղաքական դրությունը, հեղափոխական ելույթներին և այլ հարցերին: Նրանք հատուկ ուշադրություն են դարձրել սոցիալ-դեմոկրատական, բուլճերիկյան կազմակերպությունների գործունեությանը, վեր են հանել հայ պրոլետարիատի ինտերնացիոնալ կապերը, նրա համատեղ պայքարն այլազգի բանվորների հետ՝ ցարական իշխանությունների ու կապիտալիստների դեմ: Հատկապես շեշտել են ուսու պրոլետարիատի դերը եղբայրական ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի պրոլետարիատի դասակարգային գոտեմարտերի կազմակերպման ու դեկավարաման գործում: Պատմաբանները լուսաբանել են Վ. Ի. Լենինի և նրա հայ զինակիցների հեղափոխական գործունեությունը ինքնակալության դեմ մղված ազատագրական պայքարում: Նրանք Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմության վերաբերյալ հրապարակել են նաև արժեքավոր փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ: Այդուհանդերձ հրապարակի վրա դեռ չկա Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմությանը նվիրված հատուկ մասնագիտական ուսումնասիրություն: Ներկա աշխատությունը գալիս է վերացնելու այդ բացը: Այն ընդգրկում է XVIII դ. վերջին քառորդից մինչև 1917 թ. ընկած ժամանակաշրջանը: Պրոլետարիատի սաղմնավորման տարրերը

Արևելյան Հայաստանում թեև առաջանում են XVIII դարի վերջին քառորդում և քիչ թե շատ աճում նրա Ռուսաստանին միացումից հետո, բայց իբրև դասակարգ այն ձևավորվում ու զարգանում է հետոսֆորմյան շրջանում, մասնավորապես XIX դ. վերջին և XX դ. սկզբին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Արևելյան Հայաստանն ավելի սերտորեն է կապվում Ռուսաստանի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի հետ և նրա պրոլետարիատն էլ դառնում է կայսրության բազմազգ բանվոր դասակարգի բաղկացուցիչ մասերից մեկը:

Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմությունն ստեղծելիս, գրքի հեղինակները, անշուշտ, օգտագործել են սովետական պատմագիտության նվաճումները, միաժամանակ ի հայտ են բերել ու գիտական շրջանառության մեջ դրել բազմաթիվ նոր վիճակագրական տվյալներ, ինչպես և պարբերականներից, հուշագրություններից և այլ աղբյուրներից քաղած տեղեկություններ: Այդ ամենի հիման վրա նրանք կատարել են գիտական ընդհանրացումներ և ավելի խորացրել պրոբլեմի ուսումնասիրությունը:

Շարադրելով Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմությունը համառուսաստանյան պրոլետարիատի պատմության հետ սերտորեն շաղկապված, հեղինակները վեր են հանել նաև տեղական առանձնահատկությունները:

Աշխատության վերջում տրվում են երկու հավելվածներ, որոնցից առաջինի աղյուսակները կազմել է Ա. Հ. Սիմոնյանը, իսկ երկրորդինը աղբյուրներից քաղել է Ա. Ս. Համբարյանը: Մատենագրությունը կազմել է Գ. Լ. Կիրակոսյանը:

<sup>3</sup> Ստ. Շահավյան, ԵՊԺ, հ. 1, Ե. 1975, էջ 176:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայաստանի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական զարգացումը երկար ժամանակ կաշկանդված էր օտարերկրյա տիրապետությունների հետևանքով: Ավարի ու ավերի սովոր հորդաները ոչ միայն թալանում էին հայ ժողովրդին, այլև հաճախ ենթարկում էին նրան ֆիզիկական բնաջնջման: Այդպես են վարվել նաև պարսիկ բռնակալները, որոնք, տիրանալով Արևելյան Հայաստանին, դարեր շարունակ ասպատակել ու ամայացրել էին երկիրը:

Շահական կարգերը խոչընդոտում էին Արևելյան Հայաստանի տնտեսության զարգացմանը: Երկրագործությունը գտնվում էր խիստ հետամնաց վիճակում: Մշակվում էր երկրի հողային տարածության սոսկ փոքր մասը: Իսկ մնացածը կամ ծառայում էր կիսաքոչվորների ու քոչվորների համար որպես արոտավայր, կամ պարզապես մնում էր անօգտագործելի: Շահագրգռված չլինելով աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ, գյուղացիները խուսափում էին ընդարձակել իրենց ցանքատարածությունները: Նրանք աշխատում էին ցանել ու հավաքել այնքան, որ բավարարեր իրենց անհրաժեշտ պահանջները, ապահովեր իրենց կյանքի գոյությունը միայն:

Ավելի անմխիթար վիճակում էր անասնապահությունը: Այն կենտրոնացված էր գերազանցապես կիսաքոչվոր ու քոչվոր քրդերի կամ աղբբեջանցիների ձեռքում և տարվում էր էքստենսիվ եղանակներով:

Գյուղացիներն օգտագործում էին հետամնաց երկրագործական գործիքներ, որոնք դարեր շարունակ, անցնելով սերնդից սերունդ, տիրապետող սոցիալ-տնտեսական կարգերի հետևանքով, մնացել էին միևնույն մակարդակի վրա:

Չափազանց անմխիթար էր նաև Արևելյան Հայաստանի արդյունաբերության վիճակը: Տակավին տիրապետում էին տնային արհեստագործությունն ու արհեստները: Երկրի հանքային հարստությունները

կամ անմշակ էին, կամ մշակվում էին ամենապրիմիտիվ եղանակներով: Պարսկական ու թուրքական տիրապետությունների ժամանակ համարյա նախնադարյան եղանակներով էին մշակվում նախիջևանի, կողբի, կաղզվանի և Օլթիի աղահանքերը: Շահական ու սուլթանական տիրակալները դրանք համարում էին պետական սեփականություն, տալիս էին կապալով և հարկադրում շրջակա գյուղերի բնակիչներին աշխատել աղահանքերում:

Արևելյան Հայաստանում աղի արտադրությունը որոշ չափով աշխուժացավ XVII—XVIII դդ.: Այն ավելի ներքաշվեց ապրանքադրամական հարաբերությունների մեջ՝ արտահանվելով հեռավոր վայրեր<sup>1</sup>: Բայց թուրք-պարսկական կոիվները և ֆեոդալական ներքին ընդհարումները խափանեցին այդ առաջընթացը, և աղի արտադրության գործը վերստին ենթարկեցին անկման ու լճացման:

Պարսկական տիրապետության ժամանակ թույլ էր զարգացած նաև առևտուրը: Երկրի բազմաթիվ շրջաններում տիրապետում էր նրա արխաիկ ձևը՝ ապրանքափոխանակությունը: Արհեստավորները իրենց շինվածքները կամ գործվածքները փոխանակում էին գյուղատնտեսական մթերքների հետ, իսկ գյուղացիները՝ ընդհակառակը: Երկրում շարունակում էր գերիշխել բնատնտեսությունը: Շինականներն ու արհեստավորներն իրենք էին արտադրում իրենց անհրաժեշտ համարյա բոլոր պարագաները և իրենք էլ սպառում էին դրանք: Արևելյան Հայաստանի յուր յուր գավառ ամփոփված էր իր ներքին կյանքով, ապրում էր ու աշխարհով, ուներ իր շափն ու կշիռը, դրանց տարբեր անվանումը: Աշխատանքի հասարակական բաժանումը չէր խորացել ոչ երկրագործության և ոչ էլ արդյունաբերության մեջ: Այն արտահայտվում էր գերազանցապես նրանով, որ արհեստը քիչ թե շատ բաժանված էր գյուղատնտեսությունից, իսկ գյուղատնտեսությունը՝ անասնապահությունից:

Շահական կարգերը չէին նպաստում նաև Արևելյան Հայաստանի ճանապարհների ու փոխադրական միջոցների կարգավորմանը: Երկրում կային միայն սայլուղիներ ու գրաստային ճանապարհներ:

Պարսկական տիրապետության ժամանակ Արևելյան Հայաստանում գերիշխող արտադրանեղանակն ասիական բռնապետական ֆեոդալիզմն էր: Խաներն ու բեգերը, մուլքադարներն ու թիուղարները, կազմելով

<sup>1</sup> А. М. Марголюс, Соляные промыслы Закавказья, их прошлое, современное состояние и возможное будущее. Тифлис, 1906, с. 4—5.

շահագործող վերնախավը, անլուր կեղեքման ու հարստահարման էին ենթարկում բազմահազար աշխատավոր գյուղացիությունը: Սահմանելով ֆեոդալական գանձումների որոշ նորմեր, նրանք, սակայն, երբեք չէին բավարարվում դրանցով, գյուղացիներից վերցնում էին ինչ ուզում էին կամ ինչքան կարող էին: Նրանք կողոպտում ու կեղեքում էին նաև արհեստավորներին ու առևտրականներին և արգելակում արտադրության կապիտալիստական եղանակի առաջացումը: Ֆ. էնգելսը, խոսելով Արևելքի երկրների մասին նշում էր, որ ասիական «տիրապետությունն անհամատեղելի է կապիտալիստական հասարակության հետ: Ձեռք բերած հավելյալ արժեքը ոչնչով ապահովված չէ սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից, գոյություն չունի բուրժուական ձեռնարկուական գործունեության առաջին հիմնական պայմանը—վաճառականի անձի ու սեփականության ապահովությունը»<sup>2</sup>:

Իրերի վիճակն այդպիսին էր նաև օսմանյան տիրապետության տակ ընկած պատմական Վանանդում կամ Կարսի մարզում:

Փոքր-ինչ այլ էր դրությունը Հյուսիսային Հայաստանում, մասնավորապես Լոռիում, որը գտնվում էր Վրաստանի կազմում: Այստեղ տնտեսական զարգացման համար համեմատաբար տանելի պայմաններ էին ստեղծվել: Դրա ապացույցն Ալավերդում և Ախթալայում հանքային արդյունաբերության վերականգնման փաստն էր XVII դարի երկրորդ կեսին: Այն կապված էր վրաց թագավոր Իրակլի II-ի անվան հետ, որը 1763, ապա 1770 թթ. Ախթալայի և Ալավերդու արծաթ-կապարի և պղնձի հանքերում աշխատելու համար Թուրքիայից հրավիրեց հույն հանքարդյունաբերողներին<sup>3</sup>: Սակայն լեզգին Օմար խանի և պարսից խան Աղա Մուհամեդի արշավանքները (1785 և 1795 թվականներ) մեծապես վնասեցին հանքարդյունաբերական աշխատանքներին<sup>4</sup>:

Վրաստանի Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո Ախթալայի և Ալավերդու հանքերն ու «գործարանները» թեև շարունակում էին գոր-

ծել, բայց գտնվում էին անմխիթար վիճակում: Դրությունը ըստագամ և այն ժամանակ, երբ 1802 թ. այստեղ աշխատելու համար Սիբիրից բերվեցին արհեստավորներ ու վարպետներ<sup>5</sup>, Գունավոր մետաղների արդյունահանման գործն աշխուժացնելու նպատակով 1816 թ. Ախթալայի, Ալավերդու և Շամլուղի հանքերն ու «գործարանները» տրվեցին հույն հանքարդյունաբերողներին, որոնք մնացին նրանց տնօրինության տակ մինչև 1887 թ.<sup>6</sup>:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին առաջադիմական հսկայական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում: Վերջապես սահմանվեց անձի և գույքի հուսալի ապահովություն: Շինականն ու արհեստավորն այլևս չէին մտահոգվում իրենց կյանքի կամ ունեցվածքի պահպանման մասին, իսկ առևտրականն ու արդյունաբերողը բավական լայն հնարավորություններ ստացան իրենց գործունեության ծավալման համար:

Այդ կարևոր ու անհրաժեշտ հանգամանքի շնորհիվ Արևելյան Հայաստանում հինգ-վեց տարվա ընթացքում (1827—1832 թթ.) հայերի թիվն աճեց ավելի քան 147 տոկոսով: 1832 թ. Արևելյան Հայաստանի ժողովուրդներն իրենց թվաքանակով ու տոկոսային հարաբերությամբ արդեն հետևյալ պատկերն էին ներկայացնում՝ հայերը կազմում էին 141 682 մարդ կամ բնակչության 58,8 տոկոսը, ադրբեջանցիները՝ 83 165 մարդ կամ բնակչության 34,5 տոկոսը, քրդերը՝ 15 415 մարդ կամ բնակչության 6,4 տոկոսը: Այլ ժողովուրդները կազմում էին 850 մարդ կամ բնակչության 0,3 տոկոսը<sup>7</sup>:

Միանգամայն հասկանալի է, որ հայերի թվաքանակի այդպիսի արագ մեծացումը պայմանավորված էր ոչ այնքան նրանց բնական աճով, որքան ներգաղթով: Իմանալով իրենց հայրենիքի ազատագրման մասին, բազմաթիվ հայեր թողեցին օտար հողը ու տուն վերադարձան:

<sup>5</sup> ՍՍՁՄ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 3, գ. 284, թ. 38, Բ. Գ. Մելիքյան, *Եղված աշխ.*, էջ 36, *Կասարովա Ի. Գ. Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал. Ер., 1961, с. 13, 170.*

<sup>6</sup> Բ. Գ. Մելիքյան, *Եղված աշխ.*, էջ 52, 65:

<sup>7</sup> Խ. Հ. Ավդալբեկյան, *Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.)*, Ե., 1959, էջ 19:

<sup>2</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч.; 2-ое изд., т. 22, с. 33.

<sup>3</sup> ՍՍՁՄ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 749, թ. 24, *Гулишамбаров С. И. Обзор фабрик и заводов Тифлисской губернии. Историко-статистическое описание фабрично-заводской деятельности Тифлисской губернии в связи с развитием в ней кустарных промыслов. Тифлис, 1888 г., с. 175. Բ. Գ. Մելիքյան, Հայաստանի պղնձարդյունաբերության պատմություն (XVII դարի երկրորդ կեսից մինչև 1920 թ.)* Եր. 1972, էջ 21:

<sup>4</sup> ՍՍՁՄ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 749, թ. 24, *Гулишамбаров С. И. Եղվ. աշխ.*, էջ 175, Բ. Գ. Մելիքյան, *Եղվ. աշխ.*, էջ 21—22:

Հետագա տարիներին Արևելյան Հայաստանի բնակչության աճը ոչ միայն կանգ չառավ, այլև անշեղորեն շարունակեց առաջ ընթանալ: Արևելյան Հայաստանը դարձավ հայ բուրժուական ազգի կազմավորման օջախը:

Միացումից հետո Արևելյան Հայաստանի տնտեսությունը դուրս եկավ դարավոր լճացումից ու քայքայումից և բռնեց առաջընթացի ուղին: Որքան էլ այդ զարգացումը դանդաղ էր ու անհավասարաչափ, այնուամենայնիվ կայուն էր ու անշեղ:

Լուրջ տեղաշարժեր կատարվեցին գյուղատնտեսության մեջ: Ընդարձակվեցին ցանքատարածությունները, աճեց գյուղատնտեսական մթերքների՝ ցորենի ու գարու, խաղողի և բանջարաբոստանային զանազան կուլտուրաների արտադրությունը: XIX դարի կեսերից Արևելյան Հայաստան մուտք գործեց բամբակի ամերիկյան տեսակը, արմատավորվեց կարտոֆիլը:

Առաջադիմեց նաև Արևելյան Հայաստանի անասնապահությունը: Համարյա ամենուրեք աճեց անասունների գլխաքանակը: 1829—1870 թթ. ընթացքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 16000-ից հասավ 27000-ի, ոչխարներինն ու այծերինը՝ 341000-ից՝ 688000-ի, ձիերինը՝ 22000-ից՝ 39000-ի, ուղտերինը՝ 5000-ից՝ 16000-ի (բուրդ թվերը կտրացված են):

Անասնապահության մեջ քանակական փոփոխությունների հետ մեկտեղ կատարվեց նաև որակական փոփոխություն: Երկրի մի շարք շրջաններում անասուններն արդեն պահում ու բազմացնում էին վաճառելու, իսկ կաթը՝ մշակելու և ստացված արդյունքը արտահանելու համար: Այլ կերպ ասած՝ պապենական անասնապահությունը կամաց-կամաց արտամղվում էր և իր տեղը զիջում ապրանքային անասնապահությանը:

Չեռնարկատերերն ամենուրեք լավացնում էին անասունների տեսակները: Աշխատում էին բազմացնել այնպիսիները, որոնցից կարելի էր ստանալ շատ միս ու կաթ, կամ բուրդ ու մազ: Եվրոպայից բերեցին ցեղական ցուլեր ու կովեր, ավելացրին նրբագեղմ ոչխարների գլխաքանակը և զարկ տվեցին անգորական այծերի աճին, որոնք հատկանշվում էին համեղ մսով, կաթով, հիանալի մազով ու աղվամազով:

<sup>8</sup> М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении в XIX в., Е. 1957, с. 168.

Տեղական լճացումից ու քայքայումից դուրս եկավ նաև Արևելյան Հայաստանի արդյունաբերությունը: Արհեստը դանդաղ, բայց հաստատապես սկսեց առանձնանալ երկրագործությունից և կենտրոնանալ քաղաքներում: Բազմաթիվ արհեստավորներ եկան նաև Արևմտյան Հայաստանից: Նրանք սկսեցին դառնալ մանր արտադրողներ, աշխատելով այժմ ոչ այնքան պատվիրատուի պահանջարկներով, որքան պատրաստած ապրանքները շուկայում վաճառելու նպատակով: Երկրի քաղաքներում բացվեցին բազմաթիվ մանր ապրանքային բնույթի արհեստանոցներ: Նման արհեստանոցներ բացվեցին նաև որոշ գյուղերում:

Որոշակի տեղաշարժեր եղան Արևելյան Հայաստանի լեռնային արդյունաբերության մեջ: Սկսեցին շահագործվել նաև երկրի պղնձի արդյունաբերության մյուս կենտրոնի՝ Զանգեզուրի հանքերը: Ռուսական մաքսատան պաշտոնյա Յ. Ռոզովի կողմից այստեղ 1845 թ. կառուցվեց գործարան, որը սկսեց ձուլել Ագարակի հանքերի պղնձի հանքաքարը: Բայց մի քանի տարի անց գործարանը փակվեց:

Միացումից հետո շարունակվեց աղի արդյունահանումը: Շահագործվող աղահանքերն ինչպես առաջ, համարվեցին պետական սեփականություն և տրվեցին վարձակալությամբ: Ցարական ինքնակալությունը միաժամանակ պահպանեց նրանցում հարկադիր աշխատանքը: Բայց ի տարբերություն պարսկական տիրապետության, երբ շրջակա գյուղերի բնակիչներն աղահանքերում աշխատելու հետ մեկտեղ պարտավոր էին վճարել նաև զանազան հարկեր, այժմ նրանք ոչ միայն ազատվում էին դրանցից, այլև իրենց արտադրած աղի համար վարձատրվում էին:

Ցարական կառավարությունն աղի արտադրության գործը ենթարկեց նաև այլ փոփոխությունների. 1836 թ. ժամանակավոր կանոններով աղի արտադրությունն ու վաճառքը կազմակերպում էր Հատուկ վարչությունը, որը ենթարկվում էր Հայկական մարզի կառավարչությանը: 1844 թ. հունվարի կանոններով այդ վարչությունը Հայկական մարզի լիկվիդացման պատճառով սկսեց ենթարկվել վրաց-իմերեթական կառավարչությանը և իրավունք էր ստանում կազմակերպել աղի արտադրությունը ոչ միայն ամրակցված գյուղացիների, այլև ազատա-

<sup>9</sup> Сборник статистических сведений о горнозаводской промышленности России в 1908 г. ч. I. Общий обзор. Пг. 1917, с. 168.

վարձու մարդկանց ուժերով: 1850 թ. պետական եկամուտները մեծացնելու նպատակով լիվիդոսովեց Հատուկ վարչությունը և աղահանքերը նորից տրվեցին կապալով:

Միացումից հետո աշխուժացավ նաև Արևելյան Հայաստանի առևտուրը: Համարյա ամենուրեք բնակիչները վաճառքի համար սկսեցին արտադրել գյուղատնտեսական ու արդյունաբերական ապրանքներ: Անասնապահական շրջաններն իրենց արդյունքի մի մասն ուղարկում էին դեպի խաղողագործական շրջանները, իսկ սրանք՝ ընդհակառակը: Նման փոխանակման մեջ էին գտնվում նաև երկրի հացահատիկային գավառներն այգեգործական վայրերի հետ: Նատուրալ կյանքով ապրող շրջաններն ավելի կամ պակաս չափով սկսում էին ներգրավվել շուկայական հարաբերությունների մեջ: Առևտրի արխաիկ ձևը՝ ապրանքափոխանակությունը թեև չէր վերանում, բայց նկատելի տեմպերով մղվում էր հետին պլան: Եվրոպական շափերն ու կշիռները, մուտք գործելով Արևելյան Հայաստան, արտամղում էին տեղական խայտաբղետ շափերն ու կշիռները:

Բացի ներքին առևտրից, սկսեց զարգանալ նաև Արևելյան Հայաստանի արտաքին առևտուրը: Մոտավոր պատկերացում կազմելու համար, թե ինչպիսի արագություն էր աճում ապրանքաշրջանառությունը Եվրոպական Ռուսաստանի ու Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի միջև, բերենք հետևյալ թվերը. 1833 թ. ներմուծվել է Անդրկովկաս 576 հազար, իսկ 1870 թ.՝ 11461 հազար ուրբու ապրանք: Այլ կերպ ասած՝ 37 տարվա ընթացքում Անդրկովկասի ներմուծումը մեծացել է ավելի քան 19 անգամ: Այդ նույն ժամանակաշրջանում նրա արտահանումը դեպի Եվրոպական Ռուսաստան 336 հազարից հասել է 3927 հազար ուրբու, այսինքն՝ ավելացել է շուրջ 11 անգամ<sup>10</sup>:

\* 1861 թ. Ռուսաստանում անցկացվեց գյուղացիական ռեֆորմ, որն իր բնույթով թեև ճորտատիրական էր, պահպանեց կալվածատերերի ընդարձակ տիրույթները, իսկ գյուղացիներին թողեց սակավահողության ու հողազրկության մեջ, այնուամենայնիվ իր բովանդակությամբ բուրժուական էր, նպաստեց երկրի կապիտալիստական զարգացմանը:

<sup>10</sup> М. А. Адоны, 2-й. т. 221.

Գնահատելով այդ ռեֆորմը, Վ. Ի. Լենինը նշում էր. «Ռուսաստանում գյուղացիներին «ազատագրում» էին իրենք կալվածատերերը, ինքնակալ ցարի կալվածատիրական կառավարությունն ու նրա շինովնիկները: Եվ այդ «ազատարարները» գործը այնպես տարան, որ գյուղացիներն «ազատվեցին» մինչև ազքատության աստիճանի թալանված, դուրս գալով կալվածատերերի տիրույթներից, ընկան այդ նույն կալվածատերերից ու նրանց դրածոներից լիակատար կախման մեջ»<sup>11</sup>: Այդուհանդերձ, ցույց էր տալիս Վ. Ի. Լենինը, ռեֆորմը «...մի քայլ էր Ռուսաստանը բուրժուական միապետության վերածելու ուղիով»<sup>12</sup>:

Ընդառաջելով բարձրացող բուրժուազիայի պահանջներին, ցարական կառավարությունը XIX դ. 60—70-ական թվականներին գյուղացիական ռեֆորմ անցկացրեց նաև կայսրության ծայրամասերում: 1864—1865 թթ. այդ ռեֆորմը իրագործեց Վրաստանում, իսկ 1870-ական թվականներին՝ Արևելյան Հայաստանում ու Ադրբեջանում: 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությամբ «կանոնավորվում» էին «բարձր դասին» պատկանող մուլքադարների ու գյուղացիների, 1875 թ. մայիսի 14-ի կանոններով՝ թրուվդարների և գյուղացիների, իսկ 1877 թ. սեպտեմբերի 5-ի կանոններով՝ «բարձր դասի» շախտկանող հողատերերի ու գյուղացիների հարաբերությունները: Կայսրության ինչպես Եվրոպական մասում, այնպես էլ Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում ռեֆորմը պահպանեց ֆեոդալական-ճորտատիրական մնացորդները: Արևելյան Հայաստանի ամբողջ տերիտորիան կազմում էր 6.838.835 դեսյատին, որից 80-ական թվականներին ցարական պետությանը սեփականության իրավունքով պատկանում էր 6249401 (91,4 %), կալվածատերերին՝ 441.328 (6,5%), վանքերին և եկեղեցիներին՝ 140.000 (2%), իսկ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը կազմող գյուղացիներին՝ ընդամենը 8006 դեսյատին (0,1 %)<sup>13</sup>:

Ցարական արքունիքը, կալվածատերերը և վանքերը իրենց հողերը սովորաբար տալիս էին գյուղացիներին օգտագործման համար, հատկացնելով նրանց երկրի տարբեր շրջաններում տարբեր տարածքներ (ամեն մի տնտեսությանը միջին հաշվով 5—10 դես.), որոնք անբավարար էին ընտանիքների կերակրման համար: Այդ հողակտորների համար նրանք գանձում էին բնավճարներ ու դրամավճարներ և քամում

<sup>11</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 20, էջ 169:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 212:

<sup>13</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, 1981, էջ 34:



գյուղացիների հյուսիսը: Նրանք հաճախ բարձրացնում էին այդ գանձումները և ավելի խստացնում աշխատավորների հարստահարումներն ու շահագործումը: Բավական է նշել, որ միայն 1900 թ. հունիսի 12-ի օրենքով ցարական իշխանությունները գյուղացիների տուրքերը բարձրացրին Երևանի նահանգում 48,5, իսկ Կարսի մարզում՝ 50 տոկոսով<sup>14</sup>: Ի վիճակի չլինելով վճարել պետական հարկերը, գյուղացիները շատ հաճախ դիմում էին վաշխառուներին, որոնք իրենց հերթին ավելի էին սաստկացնում նրանց շահագործումը և արագացնում տնտեսական քայքայումը:

Այնուամենայնիվ գյուղացիական ռեֆորմը, ինչպես կայսրության այլ շրջաններում, այնպես էլ Արևելյան Հայաստանում ճանապարհ հարթեց կապիտալիզմի զարգացման համար: Այն հողի օգտագործման համայնական եղանակը փոխարինեց ծխային եղանակով, ամրացրեց յուրաքանչյուր տնտեսության հողաբաժինը նրա վրա և վերացրեց հողի պարբերական վերաբաժանումները: Ռեֆորմը իրավունք տվեց գյուղացիներին վաճառելու, նվիրելու կամ գրավ դնելու իրենց հողակտորները համայնքի ներսում, իսկ այգիները, բանջարանոցները և տնտեսողները՝ նույնիսկ համայնքից դուրս: Ռեֆորմը կալվածատիրական որոշ բնատուրքեր վերածեց դրամականի և այդպիսով նպաստեց ապրանքակապիտալիստական հարաբերությունների զարգացմանը: Ռեֆորմը գյուղացիներին տվեց նաև քաղաքացիական որոշ իրավունքներ, սահմանելով, որ կանոնագրեր կնքելիս նրանք կարող են հանդես գալ իրենց անունից, հաշտարար դատավորները իրավունք չունեն կնքել դրանք առանց նրանց համաձայնության և այլն<sup>15</sup>:

Ցարական կառավարության քաղաքականության համընթաց Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի տնտեսության զարգացման և պրոլետարիատի կազմավորման պրոցեսներում մեծ դեր խաղաց նաև ռուսական կապիտալիզմը: Հետևեֆորմյան շրջանում զարգանալով ըստ խորության ու լայնության, նա սկսեց իր հորձանուտի մեջ ներքաշել կայսրության ծայրամասերը, այդ թվում նաև Կովկասը, դարձնելով դրանք, մի կողմից, հումքի բազա, մյուս կողմից՝ վաճառքի շուկա: Ռուս ձեռնարկատերերը Անդրկովկաս էին ուղարկում գերազանցապես

արդյունաբերական ապրանքներ և այստեղից ներմուծում գյուղատնտեսական մթերքներ ու հանքային հանածոներ: Տեղական տնայնագործությունը, չդիմանալով ֆաբրիկագործարանային արտադրության մրցակցությանը, սկսեց արտամղվել: Վ. Ի. Լենինը բնութագրելով այդ պրոցեսը, գրում էր, որ ռուսական կապիտալիզմը «Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր ֆաբրիկաների համար շուկա էր ստեղծում»<sup>16</sup>:

Հետևեֆորմյան տարիներին լուրջ տեղաշարժեր կատարվեցին Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության մեջ: Որոշ միջոցառումներ ձեռնարկվեցին հացահատիկային կուլտուրաների զարգացման և նրանց տեսակների բարելավման ուղղությամբ: Երևանի նահանգում սկսեցին մշակել ցորենի «առնաուտկա», իսկ Կարսի մարզում «աշնանացան» տեսակները: Ճիշտ է, 60-ական թվականներին բամբակենու զարգացման հետևանքով ցորենի ու գարու ցանքադաշտերը կրճատվեցին, սակայն հետագա 70—80-ական թվականներին վերստին ընդարձակվեցին, իսկ Երևանի նահանգը դարձավ Անդրկովկասի հացահատիկի շտեմարանը: Հայաստանի հացահատիկը արտահանվում էր երկրամասի զանազան վայրերը, Պարսկաստան, իսկ 80-ական թվականների կեսերին՝ նաև Եվրոպա: Բայց 90-ական թվականներին, երբ ռուսական հացահատիկը մեծ քանակությամբ ներմուծվեց Անդրկովկաս, ու Արևելյան Հայաստանը մասնագիտացավ գյուղատնտեսական այլ կուլտուրաների մշակությամբ, ցորենի ու գարու արտադրությունը նրանում նվազեց: Եթե 70-ական թվականներին Երևանի նահանգում գյուղական բնակչության մեկ շնչին արտադրվել էր 4,3 չետվերտ, ապա 90-ական թվականներին արտադրվեց 2,4 չետվերտ<sup>17</sup> (1 չետվերտը = 8—9 փթի): Չնայած դրան, Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններ, հատկապես Կարսի մարզն ու Ալեքսանդրապոլի գավառը, մասնագիտացան հացահատիկի մշակությամբ, վաճառելով այն Անդրկովկասի տարբեր շրջաններում:

XIX դ. երկրորդ կեսին զարգանում էր նաև անասնապահությունը: 1862—1900 թթ. բոլոր անասունների գլխաքանակը 595 հազարից հա-

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 325:

<sup>15</sup> Ա. Ս. Համբարյան, Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն (XIX դ. երկրորդ կես—XX դ. սկիզբ), Եր, 1983, էջ 9—10:

<sup>16</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԾ, հ. 3, էջ 755:

<sup>17</sup> А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1920), Е, 1959, с. 63.

սով 1.201 հազարի կամ աճեց ավելի քան 2 անգամ: Երկրի մի շարք շրջաններ դարձան առևտրային անասնապահության կենտրոններ (Կարսի մարզը, Լոռին, Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառները, Դարալագյազը):

Հիմնվեցին ձիաբուծական ու ոչխարաբուծական ֆերմաներ, որոնք պետք է բուծեին ու տարածեին արագավազ և ուժեղ ձիեր ու ավելի մթերատու ոչխարներ:

Կաթնապրանքային տնտեսության զարգացման հետևանքով խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը գնալով աճում էր, իսկ մանր եղջերավոր անասուններինը՝ նվազում: 1860-ական թվականներից կազմակերպվեց շվեյցարական ու հոլանդական պանրատեսակների արտադրությունը, որը հետագայում հասավ մեծ շահերի:

1860—1870-ական թվականներին հատկանշական էր այգեգործության ու խաղողագործության վերելքը: 1864 թ. Երևանի նահանգապետը գրում էր, որ նահանգում այգեգործությունը «կազմում է գյուղատնտեսության գլխավոր ճյուղերից մեկը»<sup>18</sup>:

Վերականգնվեցին ոչ միայն հին այգիները, այլև զցվեցին նորերը: Ղրիմից ու ալլ տեղերից բերվեցին խնձորի, տանձի, ծիրանի, դեղձի, սալորի և այլ մրգերի տնկիներ ու բաժանվեցին տեղացիներին, հիմնվեցին փորձակայաններ, հատապտուղների ու մրգերի հիվանդությունների դեմ պայքարելու հաստատություններ և այլն:

Սակայն 80-ական թվականներին ցարիզմի վարած ակցիզային (հարկային) քաղաքականության հետևանքով, այգեգործության ու խաղողագործության զարգացման ընթացքը կաշկանդվեց: Մի շարք տեղերում գյուղացիները գերադասեցին վերացնել այգիները և զբաղվել այլ, ավելի շահութաբեր կուլտուրաների մշակումով: Բայց 80-ական թվականների վերջերին և 90-ական թվականներին, երբ կառավարությունը փոխեց իր հարկային քաղաքականությունը, գյուղատնտեսության այդ ճյուղերը կրկին բունեցին վերելքի ուղին: 1884—1885 և 1894—1895 թթ. ընթացքում Երևանի նահանգի հինգ գավառներում խաղողագործական գյուղերի թիվը 282-ից հասավ 325-ի, իսկ խաղողի բերքը՝ 1.111 հազար փթից 1.771 հազար փթի<sup>19</sup>: Արևելյան Հայաստանի այգեգործությունն ուներ ապրանքային բնույթ: Նրա քաղցրահամ մրգերն ու հատապտուղները մեծ քանակությամբ վաճառվում էին թարմ ու չորա-

ցրած վիճակում, իսկ խաղողի բերքի մեծ մասը հումք էր ոգելից խմիչքների պատրաստման համար:

XIX դարի երկրորդ կեսին արագ տեմպերով առաջ գնաց բամբակի արտադրությունը: Բավական է նշել, որ միայն երկու տարվա ընթացքում (1861—1863 թթ.) այն աճեց հինգ անգամ՝ 30 հազար փթից հասնելով 150 հազար փթի: Սակայն, երբ Ամերիկայում դադարեցին քաղաքացիական պատերազմները, և այդ աշխարհամասը նորից սկսեց բամբակի հումք մատակարարել եվրոպական երկրներին, այդ թվում նաև Ռուսաստանին, բամբակի արտադրությունն Արևելյան Հայաստանում անկում ապրեց: Բայց դա երկար շտեկեց: Ռուսական իշխանությունների ու ձեռնարկատերերի ջանքերով այն նորից բունեց վերելքի ուղին:

1870-ական թվականներին Երևանի նահանգում բամբակենու մշակման համար ընդարձակ հողամասեր տրվեցին կապալով, արտասահմանից ներմուծվող բամբակի վրա բարձր մաքսեր սահմանվեցին, հիմնվեցին փորձադաշտեր, մի խումբ երիտասարդներ ուղարկվեցին, Ամերիկա՝ բամբակամշակման առաջավոր եղանակներն ուսումնասիրելու և Ռուսաստանում տարածելու համար:

1880—1899 թթ. Երևանի նահանգում բամբակի բերքը 81 հազար փթից հասավ 406 հազար փթի, կամ 19 տարվա ընթացքում աճեց 5 անգամ<sup>20</sup>: Միաժամանակ բամբակի տեղական ցածրորակ «կարակոզ» տեսակը փոխարինվեց ամերիկյան բարձրորակ տեսակով: 1890 թ. Երևանի նահանգում ամերիկյան տեսակն արդեն կազմում էր հավաքած բերքի մոտ 70 տոկոսը: Դարավերջին Արևելյան Հայաստանը դարձավ ռուսական կապիտալիզմի բամբակի հումքի Անդրկովկասում առաջին, իսկ կայսրության մեջ՝ Թուրքեստանի երկրամասից հետո, երկրորդ գլխավոր բազան:

Բացի առաջնակարգ ճյուղերից էական տեղաշարժեր կատարվեցին Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության նաև երկրորդական ճյուղերում՝ շերամապահության, ծխախոտագործության, յուղատու բույսերի արտադրության և այլ բնագավառներում:

Միաժամանակ աշխատանքներ տարվեցին ռոտզման ցանցի ընդլայնման ուղղությամբ: 1850—1860-ական թվականներին կառուցվեցին Քահանայի, Բազարչայի, Սաղարակի, Քյալաշբեկի, Բողղղանի, իսկ

<sup>18</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1268, ց. 10, գ. 127, ք. 158—159.

<sup>19</sup> М. Балас, Виноделие в России, ч. III, СПб., 1897, с. 223—225

<sup>20</sup> Памятная книжка Эриванской губернии на 1902, отд. IV, с. 127.

1870-ական թվականներին՝ Խան-աղովի, Շան-Գիրեի և Կախանովի ջրանցքները, որոնք ոռոգեցին ընդարձակ տարածություններ Արարատյան դաշտում, Արազդաշտում, Շարուր-Ռարալագյազի գավառում և այլ վայրերում:

Ռուսական իշխանությունները որոշակի քայլեր կատարեցին նաև գյուղատնտեսական գործիքների կատարելագործման ու զարգացման ուղղությամբ: Անգլիայից, Ամերիկայից ու Ֆրանսիայից բերվեցին ժամանակակից գութաններ, կայսիչներ, քամհարներ, հնձիչներ, բամբակի, բրնձի և հում մետաքսի նախնական մշակման մեքենաներ, որոնք զգալիորեն տարածվեցին Արևելյան Հայաստանում XIX դ. երկրորդ կեսին և հատկապես XX դ. սկզբին:

Այդպիսով Արևելյան Հայաստանի գյուղատնտեսությունը գնալով ավելի է ներքաշվում շուկայական հարաբերությունների մեջ: Ռուսական կապիտալիզմի պահանջներին համեմատ ամենից շատ ապրանքային բնույթ են ընդունում բամբակը, ապա՝ խաղողն ու մրգերը, այնուհետև անասուններն ու անասնապահական մթերքները, իսկ հացահատիկը, ինչպես ամենուր, այնպես էլ Արևելյան Հայաստանում՝ համեմատաբար քիչ:

Առևտրային հողագործության զարգացումը առաջ է բերում աշխատանքի երկրագործական բաժանում. 80—90-ական թվականներին բամբակի արտադրության գլխավոր կենտրոնը դառնում է Սուրմալուի գավառը, խաղողագործության և այգեգործության կենտրոնը՝ Էջմիածնի ու Երևանի գավառների ցածրադիր շրջանները, անասնապահության կենտրոնը՝ Լոռին, Կարսի մարզը, Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառները և Դարալագյազը, իսկ հացահատիկների արտադրության գլխավոր կենտրոնը՝ Կարսի մարզը, Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառները և երկրի մյուս գավառների մի շարք շրջանները: Այդ կենտրոնները իրենց գլխավոր արդյունքներով փոխանակվում են միմյանց հետ, որի հետևանքով ամրապնդվում են երկրի առանձին շրջանների միջև եղած տնտեսական կապերը: Միաժամանակ պետք է նշել, որ ինչպես Անդրկովկասը, այնպես էլ Արևելյան Հայաստանը եվրոպական Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններին մատակարարում են հումք ու զանազան ապրանքներ, որի հետևանքով տնտեսական կապեր են ստեղծվում ու զարգանում կայսրության այդ շրջանների ու երկրամասի միջև:

XIX դ. երկրորդ կեսին, հատկապես վերջին, ապրանքային արտա-

դրությունը՝ ավելի կամ պակաս շափերով, իր ցանցի մեջ ընդգրկել էր երկրի բոլոր շրջանները և հասարակական բոլոր խավերը: Այն զարգացած էր հատկապես Արարատյան դաշտում, ուր մշակվող բամբակն ու այգեգործական արդյունքները արդեն ունեին շուկայական առաջնակարգ նշանակություն: Գյուղացիական տնտեսությունները ներքաշված էին ապրանքադրամական հարաբերությունների մեջ և այլևս չէին կարողանում յուր գնալ առանց առք ու վաճառքի: Ռ. Ի. Դանիլովիչը 1894 թ. գրում էր, որ Արաքսի հովտում գյուղացու ամբողջ հագուստը, սկսած գլխարկից, վերջացրած կոշիկներով գնովի է, գնովի են նաև նրա տան ու տնտեսության առարկաները, «առանց կրպակի ու շուկայի նա չի կարող յուր գնալ»<sup>21</sup>:

Ապրանքային տնտեսության պայմաններում առանձին թափով զարգանում էր առևտրավաշխատական կապիտալը: Առևտրականներն ու վաշխատուները թալանում էին գյուղացիներին, օգտվելով նրանց անելանելի դրուժյունից, աղքատությունից ու խեղճությունից: XIX դ. վերջին գյուղացիության մեծ մասն արդեն տառապում էր նրանց ճիւղաններում:

Վերլուծելով ռուսական գյուղի տնտեսական դրուժյունը, Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ նրա իսկական տերը հանդիսանում են կալվածատերերն ու վաշխատուները<sup>22</sup>: Իրավիճակն այդպիսին էր նաև հայկական գյուղում: Բայց միաժամանակ Վ. Ի. Լենինը նշում էր, որ դրանց կողքին հանդես են եկել նաև կուլակները, որոնք առևտրավաշխատական գործունեությունը միակցելով ձեռնարկուական գործունեության հետ, որոշակիորեն կերպարանափոխում են գյուղը, դնելով այն բուրժուական զարգացման հունի մեջ: Նա գրում էր. «Եթե կապիտալը մեր գյուղում անզոր լիներ մի այլ բան ստեղծելու, բացի ստրկացումից ու վաշխատությունից, այն ժամանակ մենք չէինք կարող արտադրության մասին տվյալներով արձանագրել գյուղացիության քայքայումը, գյուղական բուրժուազիայի ու գյուղական պրոլետարիատի գոյանալը, — այն ժամանակ ամբողջ գյուղացիությունը կներկայանար որպես բաժականաշափ համահավասար տիպ կարիքից ճնշված տնտեսատերերի, որոնց մեջ կգատվեին միայն վաշխատուները, կգատվեին բացառապես

<sup>21</sup> «Район Тифлиско-Карско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях», исследование А. М. Аргутинского-Долгорукого, В. П. Бочкарева и Р. И. Даниловича, Тифлис, 1897, с. 728—729.

<sup>22</sup> Վ. Ի. Լենին, ԵԺԺ, հ. 3, էջ 214:

դրամական կարողության շահով, բայց ոչ թե հողագործական արտադրության շահով ու դրվածքով»<sup>23</sup>:

Ճեռնարկուական կապիտալը դարավերջին զարգացման որոշակի մակարդակի էր հասել նաև հայկական գյուղում: Հարուստները վարձում էին բատրակներ և անցնում կապիտալիզմի զարգացած ձևերին: Բայց արևելահայ գյուղում տիրապետողը կապիտալիզմի նախնական կամ սաղմնային ձևերն էին, որոնք Ռուսաստանում հայտնի էին կաբալա անունով: Քննադատելով Ստրուվեին, որը կաբալան համարում էր կապիտալիզմի հետ առնչություն չունեցող, միջնադարյան երևույթ, Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ այն արդեն այդպիսին չի, նոր պայմաններում «...նրա էությունը զուտ կապիտալիստական է, և ամբողջ առանձնահատկությունն այն է, որ կապիտալիստական հարաբերությունների այդ սկզբնական, սաղմնային ձևն ամբողջովին կաշկանդված է նախկին, ճորտատիրական հարաբերություններով»<sup>24</sup>:

Ապրանքակապիտալիստական հարաբերությունների զարգացումը քայքայում էր գյուղը և գյուղացիության աղքատացած շերտերին մղում դեպի քաղաք: Դրա հետևանքով աճում էր քաղաքային բնակչության թիվը:

Աղյուսակ 1

Աճա այդ մասին կոնկրետ տվյալներ<sup>25</sup>:

Քաղաքները	1865 թ.	1886 թ.	աճը տոկոսներով
Բաքու	14715	86611	654,2
Նիդավիտալու	15051	20294	135,0
Քիֆլիս	67770	76445	116,0
Քուլթախ	11807	22643	200,0
Նրեան	14070	17738	125,1
Ալեքսանդրապոլ	16814	24230	144,0

Այս տվյալները ցույց են տալիս, որ բնակչության աճը արագ էր կատարվում Բաքվում, որը պայմանավորված էր նավթարդյունաբերության բուռն զարգացումով: Իսկ Արևելյան Հայաստանի գլխավոր քա-

ղաքներում այն համեմատաբար դանդաղ էր: Դա բացատրվում է նրանով, որ այդ երկիրը դեռ հեռու էր երկաթուղիներից, նրա բնական հարստությունները մշակվում էին տակավին անբավարար: Հայ դրամատերերը հարևան երկրներում ավելի ակտիվ գործունեություն էին ծավալում և ավելի մեծ դեր էին խաղում, քան Արևելյան Հայաստանում:

XIX դ. երկրորդ կեսին զարգանում էր նաև Արևելյան Հայաստանի արդյունաբերությունը: Նրա զարգացման համար իրականացվեցին մի շարք ձեռնարկումներ:

Ցարական ինքնակալությունը թեև պաշտպանում էր ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունները, վարում շովինիստական ազգային քաղաքականություն, սակայն նպաստելով Անդրկովկասի տնտեսական առաջընթացին, նա միաժամանակ խոչընդոտում էր երկրամասի արդյունաբերական այն ճյուղերի զարգացմանը, որոնք կարող էին մրցակցել Կենտրոնական Ռուսաստանի արդյունաբերության հետ: Ռուսաստանյան բուրժուազիան, ամբանալով երկրամասում զգաց, որ կարող է մեծ օգուտներ ստանալ Անդրկովկասի տնտեսության մի շարք ճյուղերի զարգացումից: Առանձին օգտակար հանածոների (նավթ, մարգանեց, պղինձ) նկատմամբ մեծ պահանջարկ կար ոչ միայն Ռուսաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Դրանց արդյունահանումը միլիոնների եկամուտ էր բերում: Իր հերթին նավթի և պղնձի արդյունաբերության բուռն զարգացումը պահանջում էր այդ ճյուղերը սպասարկող նավանորոգման, մեխանիկական, մետաղամշակման ձեռնարկությունների առաջացում:

Հետոնֆորմյան շրջանում Արևելյան Հայաստանում շարունակվում էր պղնձի արտադրությունը: 80-ական թթ. վերջում Ախթալայի, Շամլուղի և Ալավերդու հանքերն ու գործարանները դարձան «Ախթալայի հանքերի ֆրանսիական ընկերության» սեփականությունը: Բացի այդ հանքերից ու գործարաններից Հյուսիսային Հայաստանում պղնձի հանքաքարը արդյունահանվում և ձուլվում էր նաև Սիսիմադանում (Ալեքսանդրապոլի գավառ), Դիլիջանում (Ղազախի գավառ): Հանքաքար էր արդյունահանվում մի շարք վայրերում ևս (Չամլուղ, Անտոնեսկի, Արմուխի և այլն):

Հարավային Հայաստանում մինչև XIX դ. 60-ական թթ. վերջերը իրար ետևից կառուցվեցին Փիրզոռուգանի, Կավարտի, Աթկիզի, Ղաթաքի, Հալիձորի, Ուղտրչայի ձախափնյա, Բարաբաթումի, Նյուվադիի

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 213:

<sup>24</sup> Վ. Ի. Լենին, ԵԺԺ, հ. 1, էջ 619—620:

<sup>25</sup> О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. 1, Ереван, 1954, с. 92.

գործարանները<sup>26</sup>: Հետագայում, մինչև 1890 թ., հիմնվեցին Ուղուրչայի աջափնյա, Լազարևի, Թեյի և Դաղդաղան-Դյուզի գործարանները<sup>27</sup>:

1863 թ. ամբողջ Արևելյան Հայաստանում ձուլվել էր 13,5 հազար փութ պղինձ, որը կազմում էր այդ ժամանակ Անդրկովկասում ձուլված պղնձի 84,4 %-ը, 1870 թ.՝ 13,3 հազ. փութ (Անդրկովկասում ձուլվածի 23,2 %-ը), 1885 թ.՝ 7,8 հազ. փութ (Անդրկովկասում ձուլվածի 9,6%), 1895 թ.՝ 42,3 հազ. փութ (Անդրկովկասում ձուլվածի 25,4%-ը), 1898 թ.՝ 36,6 հազ. փութ (Անդրկովկասում ձուլվածի 21%-ը)<sup>28</sup>: Բերված տվյալներից պարզորոշ երևում է, որ պղնձի ձուլումը մեկ վերելք, մեկ անկում է ապրել:

Ընդհանուր առմամբ, մինչև XIX դ. 90-ական թվականների վերջը Արևելյան Հայաստանի ամբողջ պղնձարդյունաբերությունը շարունակում էր զարգանալ դանդաղ տեմպերով: Որոնք էին դրա պատճառները:

Առաջին հերթին երկաթուղային տրանսպորտի և հաղորդակցության քիչ թե շատ հաբմար ճանապարհների բացակայությունը: Գործին մեծապես խոչընդոտում էին նաև աշխատանքների կազմակերպման հնացած ձևերը, ներդրվող կապիտալների անբավարար լինելը, վառելիքի պակասը, տեխնիկական միջոցների բացակայությունը և որակավորում ունեցող բանվորական կազմերի սակավաթվությունը<sup>29</sup>: Այս բոլոր արգելակներն առավել ցայտուն ի հայտ էին գալիս Չանգեզուրում, որի պղնձահանքերը Անդրկովկասում ամենահարուստն էին (հանքաքարի մեջ պղնձի պարունակությունը հասնում էր մինչև 35%-ի)<sup>30</sup>:

XIX դարի վերջին քառորդում զգալի տեղաշարժեր եղան Արևելյան Հայաստանի լեռնարդյունաբերության մյուս կարևոր ճյուղի՝ աղի ար-

դյունահանման մեջ: Աղահանքերը գտնվում էին Երևանի նահանգի Սուրմալուի (Կողբ) և Նախիջևանի (Նախիջևան, Սուստին) գավառներում, ինչպես նաև Կարսի մարզում (Կաղզվան, Օլթի): 1884 թ. կանոններով դրանք ակցիզային վարչության տնօրինումից անցան Լեռնային վարչության ղեկավարման տակ: Միաժամանակ շարունակվում էր աղահանքերը կապալով տալու պրակտիկան: Որոշ փոփոխություններ կատարվեցին նաև աղի արտադրության տեխնիկայի մեջ: Բարելավվեցին աղահատման գործիքները, կիրառվեցին վառողային պայթեցումներ, հանքերում տեղ-տեղ կառուցվեցին երկաթգծեր և հանած աղը սկսեցին տեղափոխել վագոնիկներով:

Այդ ամենը, անշուշտ, նպաստեց աղի արտադրության վերելքին: Սակայն Արևելյան Հայաստանում աղի արտադրության տեմպերը կաշկանդվում էին մի շարք պատճառներով, որոնցից պետք է նշել հանքերի շահագործման կապալային եղանակը, արտադրության հետամնաց գործիքների տիրապետումը, ճանապարհների ու փոխադրական միջոցների անբարեկարգ վիճակը<sup>31</sup>, ռուսական աղի ներթափանցումն Անդրկովկաս և նրա ճնշող մրցակցությունը, ներդրվող կապիտալի քրոջությունը, ցածր աշխատավարձը, բանվորական ուժի պակասը, աղախորհրի հանախակի փուլոզումները և այլն: 1850 թ. Կողբում ու Նախիջևանում արդյունահանվել է 429,0 հազ. փութ աղ, 1867 թ.՝ 1920,0 հազ. փութ, 1870 թ.՝ 1241,2 հազ. փութ աղ: Արևելյան Հայաստանի բոլոր աղահանքերում արդյունահանվել է 1880 թ.՝ 495,0 հազ. փութ աղ, 1885 թ.՝ 1203,0 հազ., 1890 թ.՝ 1170,0 հազ., 1895 թ.՝ 1423,2 հազ., 1898 թ.՝ 1955,5 հազ. փութ աղ<sup>32</sup>:

Արդյունահանող արդյունաբերության հետ համեմատած Արևելյան Հայաստանում շատ ավելի թույլ էր զարգացած վերամշակող արդյու-

<sup>26</sup> Сборник статистических сведений о горнозаводской промышленности России в 1908 г. ч. I. Общий обзор. Пг. 1917. с. 168.

Каспарова И. Г. *Նշված աշխ. էջ 21—22* Բ. Գ. Մեքրումյան, *Նշված աշխ., էջ 184*

<sup>27</sup> *Նույն տեղում*:  
<sup>28</sup> Горнозаводская производительность России в 1885 году. Ч. I. СПб., 1887, с. 148—149. Сборник статистических сведений о горнозаводской промышленности России в 1895 г. СПб., 1897, отд. II, с. 192—195, то же в 1898 г. СПб., 1900, отд. II, с. 194—197. И. Г. Каспарова, *Նշված աշխ.*, Приложение, тб. 3Б.

<sup>29</sup> Всеподданнейший доклад Министра государственных имуществ по горной части на Кавказе 1883 г. СПб., 1884, с. 8; О. Карапетян. Краткий очерк развития горного дела на Кавказе. Тифлис, 1901, с. 14.

<sup>30</sup> О. Карапетян, *Նշված աշխ., էջ 14*:

<sup>31</sup> В.П. Погосев, Кавказские очерки. СПб., 1910, с. 52—53.

<sup>32</sup> ՍՄՇՄ Կողբ, ք. 1268, ց. 4, դ. 119, Բ. 1—10, Кавказский календарь на 1871 г., отд. III, с. 312, то же на 1878 г., отд. II, с. 213, Сборник сведений о Кавказе, т. II, Тифлис, 1872, с. 13. Сборник статических сведений о горнозаводской промышленности России в 1890 г., СПб., 1892, с. 243, то же в 1895 заводском году, СПб., 1897, с. 335—336, то же в 1898 г., СПб., 1900, с. 353—354: Кавказский календарь на 1883 г., отд. I, с. 199, на 1892 г., отд. II, с. 32, А. М. Марголюс, Соленосные образования Карсской области и Эриванской губернии и другие, кроме каменной соли, полезные ископаемые. Тифлис, 1909, с. 160, 167, 195, его же Соляные промыслы Закавказья..., с. 40, 58—59 Գ. Կիրակոսյան, Արևելյան Հայաստանի լեռնարդյունաբերությունը և նրանում զբաղված բանվորների թվաքանակը (XIX դ. 80—90-ական թվականներ), «Լրաբեր», 1984, № 8, էջ 54:

նաբերությունը: Այդ բնագավառի ձեռնարկությունների գերակշռող մեծամասնությունը թե՛ արտադրանքի ծավալով, թե՛ տեխնիկական զինվածությամբ ու աշխատող բանվորների թվով մնաց կապիտալիստական մանր արտադրության մակարդակին: Նրանցից քչերը կարողացան թևակոխել մանուֆակտուրային արտադրության, իսկ հատուկենտ ձեռնարկություններ՝ մեքենայացված արտադրության փուլերը: Այդ ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը վերամշակում էր գյուղատնտեսական և հանքային հումք: Նրանք հիմնականում բաժանվում էին շորս խմբերի՝ մանրաթելի, սննդանյութերի, հանքային նյութերի և կենդանական հումքի վերամշակման: Դրանց շարքում առանձնակի տեղ էին գրավում գինու-կոնյակի, օղու և սպիրտի արտադրության ձեռնարկությունները, որոնք տեղական հարուստ հումքի՝ մասնավորապես խաղողի վերամշակումից ստանում էին Ռուսաստանի շուկաներում լայն սպառում ունեցող բարձրորակ խմիչքներ:

Եթե մինչև 1860-ական տարիներին գինեգործությունը և օղու թորումը խաղողագործության բաղկացուցիչ մասն էին, ապա XIX դ. 2-րդ կեսին դրանք աստիճանաբար անջատվեցին և դարձան արդյունաբերության ինքնուրույն ճյուղ: Ոգելից խմիչքների արտադրության վերելքը սկսվեց 1860-ական թվականներին: Սակայն հետագայում, մասնավորապես 1880-ական թվականներին ոգելից խմիչքների ձեռնարկությունների թիվը նվազեց. կառավարությունը ձգտում էր արգելակել ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Արևելյան Հայաստանի նրանց արտադրությունը, որպեսզի երկրամասը դարձնի ռուսական խմիչքների վաճառքի շուկա: Ուստի իշխանությունները բարձրացրին գինի և օղի արտադրողների վրա դրված հարկերը և գործադրեցին նրանց գործունեությունը սահմանափակող այլ միջոցառումներ: Դրա հետևանքով բազմաթիվ մանր գինեգործներ և օղեգործներ դուրս մղվեցին ասպարեզից: 1880-ական թվականների վերջերին և 1890-ական թվականներին ցարիզմը փոխեց իր հարկային քաղաքականությունը, և այգեգործությունն ու ոգելից խմիչքների արտադրությունը կրկին բռնեցին վերելքի ուղին: Այդ տարիներին էր, որ իրենց ձեռնարկությունները կառուցեցին արդյունաբերողներ Թաթրյանը, Աֆրիկյանը, Գյուզալյանը, Սարաչևը, Սողոմոնյանը, Խուբլարովը, Տեր-Մկրտչյանը<sup>33</sup>:

<sup>33</sup> թ. և. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), Ե., 1963, էջ 55—56, 58:

XIX դ. վերջին զգալի հաջողությունների հասավ Երևանի նահանգի մետաքսաթելի արտադրությունը, ուր կապիտալիստական հարաբերությունները ներթափանցեցին 70-ական թվականներին: Սկզբում արդյունաբերության այդ ճյուղը գտնվում էր մանր ապրանքային և մանուֆակտուրային արտադրության մակարդակի վրա, սակայն դարավերջին այն թևակոխեց զարգացման գործարանային փուլը:

Արևելյան Հայաստանում կային նաև ալրաղաց, բրնձագտիչ, բամբակազտիչ, ձիթհան, հանքային ջրերի, կաշվի, աղյուսի, բրուտագործական և բազմաթիվ այլ մանր ձեռնարկություններ, որոնք ավելի կամ պակաս չափով նույնպես ներթափանցել էին կապիտալիստական հարաբերությունների ոլորտը:

Իհարկե, Անդրկովկասի ոչ բոլոր նահանգներում ու մարզերում էր կապիտալիզմի զարգացումն ընթանում բարձր տեմպերով: Եթե Բաքվի և Թիֆլիսի նահանգներում, Բաթումի մարզում այն ընթանում էր համեմատաբար արագ, ապա նույնը չի կարելի ասել, օրինակ, Երևանի նահանգի և Կարսի մարզի մասին: Այստեղ արդյունաբերական կենտրոնների զարգացումը և, բնականաբար, արդյունաբերական պրոլետարիատի առաջացումը դանդաղ էր տեղի ունենում: Այդ մասին են վկայում տեղական գավառապետների զեկուցագրերը, որոնցից մասնավորապես երևում է, որ դարապսիսի Երևանի, էջմիածնի, Նոր Բայազետի, Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Շարուր-Պարալագյազի գավառներում արդյունաբերական ձեռնարկություններն իրենց ճնշող մեծամասնությամբ մանր, արհեստանոցային տիպի «գործարաններ» էին<sup>34</sup>:

Արևելյան Հայաստանում արդյունաբերության թույլ զարգացման հիմնական պատճառներից մեկը ինչպես ասվեց հաղորդակցության միջոցների անբավարար վիճակն էր: Ծիշտ է, Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս (1899 թ.) և Ալեքսանդրապոլ—Երևան—Ջուլֆա (1908 թ.) երկաթուղագծերի կառուցումից հետո դրությունը զգալիորեն փոխվեց, սակայն մի շարք շրջաններ, ինչպես, օրինակ՝ Ջանգեղուրը և Սևանի ավազանը, զերծ մնացին երկաթուղու ազդեցությունից: Դրան պետք է ավելացնել և այն, որ անմխիթար վիճակում էին գտնվում Արևելյան Հայաստանի խճուղային ճանապարհները:

Ինչևիցե, արդյունաբերական հեղաշրջման պրոցեսը, թեև խիստ դանդաղ, իր համար ճանապարհ էր հարթում նաև Արևելյան Հայաստանում: Խոսելով Անդրկովկասում և, մասնավորապես, Արևելյան Հա-

<sup>34</sup> ՂՍՄՀ կողմ, ֆ. 94, ց. 1, գ. 2664, ք. 3—8, 136—138:

յաստանում կապիտալիստական արդյունաբերության զարգացման մասին, անհրաժեշտ է նշել, որ ամբողջությամբ վերցրած նրան բնորոշ էին ինչպես աստիճանական փոփոխումներ (այսինքն՝ մանր կապիտալիստական արտադրության վերածումը սկզբում մանուֆակտուրային, ապա մեքենայացված արտադրության), այնպես էլ նոր, համեմատաբար մեծ կապիտալիստական ձեռնարկությունների առաջացումը, որոնք երևան եկան առանց նշված փոփոխումների անցնելու, միանգամից: Այդ տեղաշարժերը զգալի չափով համաշխարհային և, մասնավորապես, ռուսական կապիտալիզմի ազդեցության հետևանքն էին: Վ. Ի. Լենինը նշում է. «Նրիտանիայում երկրներում՝ հին երկրների օրինակով և օգնությամբ՝ կապիտալիզմի զարգացումը զգալիորեն առաջանում է»<sup>35</sup>:

Նրկրի արդյունաբերական մի շարք ձեռնարկություններում ներդրվեցին կապիտալիստական դարաշրջանին բնորոշ կատարելագործված գործիքներն ու մեքենաները: Այսպես, բամբակի նախնական մշակման ասպարեզում մուտք գործած եվրոպական բոտոնջիները սկսեցին արտամղել տեղական պրիմիտիվ շագրիխները: Թե ինչպիսիք արագությամբ էր տեղի ունենում այդ արտամղումը, կարելի է դատել հետևյալ տվյալներից՝ 1864 թ. Երևանի նահանգում կար միայն երեք քոթոնջին, իսկ 90-ական թվականներին դրանց թիվը հասավ 346-ի: Երևանի նահանգապետը 1893 թ. իր հաշվետվության մեջ արձանագրում էր. «Ձիների թիվը մշտապես աճում է, իսկ բամբակի մաքրման հին եղանակը, որը կատարվում էր այսպես կոչված «շագրիխների» օգնությամբ, արդեն անցել է հնույն թանգարանը»<sup>36</sup>:

Չնայած տնտեսության մեջ կապիտալիստական արտադրության բարձր ձևերի առկայությանը, Արևելյան Հայաստանի արդյունաբերության ճյուղերի գերակշռող մասը մնում էր տակավին մանր ապրանքային արտադրության աստիճանի վրա: Դեռ ավելին, իրենց դիրքերը մեծ չափով պահպանել էին տնայնագործությունն ու արհեստագործությունը, որոնք հենվում էին հետամնաց տեխնիկական բազայի վրա:

XIX դարի երկրորդ կեսին սկսեցին բարեկարգվել նաև ճանապարհները: 1850—1860-ական թվականներին կառուցվեց ու խճապատվեց Թիֆլիս—Ախալցխա—Ախալքալաք—Ալեքսանդրապոլ—Երևան ու-

<sup>35</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 3, էջ 620:

<sup>36</sup> Обзор Эриванской губернии за 1893, Эривань, 1894, с. 5.

դին և խճապատման աշխատանքներ ձեռնարկվեցին Թիֆլիս—Ջուլֆա գծի վրա: Բացվեցին նաև նոր ճանապարհներ, որոնք միմյանց կապեցին երկրամասի քաղաքներն ու գյուղերը:

Նշանավոր էր հասկապես երկաթուղիների կառուցումը, որը սկսվեց 1860-ական թվականների կեսերից և շարունակվեց հետագա տասնամյակներում: 1872 թ. շահագործման հանձնվեցին Փոթի-Թիֆլիս, 1883 թ.՝ Սամտրեդիա—Բաթում և Թիֆլիս—Բաքու, իսկ 1899 թ. Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս գծերը: Վ. Ի. Լենինը, խոսելով երկաթուղիների մասին, գրում էր. «Նրկաթուղիները կապիտալիստական արդյունաբերության ամենազխավոր ճյուղերի՝ քարածխի և երկաթագործական ճյուղերի հանրագումարներն են, և համաշխարհային առևտրի ու բուրժուադեմոկրատական քաղաքակրթության զարգացման ամենից ավելի ակնառու հանրագումարներն ու ցուցանիշները»<sup>37</sup>: Դարավերջից համաշխարհային բուրժուադեմոկրատական քաղաքակրթության այդ նվաճումները իրենց բազուկների մեջ էին վերցնում նաև Արևելյան Հայաստանը:

XX դ. սկզբին Ռուսաստանում կապիտալիզմը թևակոխեց իր զարգացման իմպերիալիստական փուլը: Դա, իհարկե, չէր հեղաբեկում երկրի հասարակական հարաբերությունները, հասարակության դասակարգային կառուցվածքը, քաղաքական կարգերը, բայց տեղաշարժեր էր առաջացնում տնտեսության, արտադրողական ուժերի զարգացման, արտադրության ու իրացման մեջ: Վ. Ի. Լենինը ցույց է տալիս, որ իմպերիալիզմը մոնոպոլիստական, պարազիտային, փտող ու մեռնող կապիտալիզմ է, բայց միաժամանակ նշում է, որ այդ բանը տեղի է ունենում առանձին երկրներում կամ տնտեսության առանձին ճյուղերում, իսկ «Ամբողջությամբ վերցրած՝ կապիտալիզմը անչափ արագ է աճում, քան առաջ»<sup>38</sup>:

Իմպերիալիզմի դարաշրջանում կապիտալիզմը Ռուսաստանում շարունակում էր զարգանալ խորությամբ ու լայնությամբ, իր ոլորտը ներթաշելով նորանոր տարածություններ: Կապիտալիզմի զարգացումը

<sup>37</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 27, էջ 368:

<sup>38</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 27, էջ 517:

Ռուսաստանում ընթանում էր հաղորդակցության միջոցների բարեկարգումով, հատկապես երկաթուղիների կառուցումով: XX դ. սկզբին Անդրկովկասում կառուցվեցին նոր երկաթուղիներ: Արևելյան Հայաստանում 1902 թ. ավարտվեց Ալեքսանդրապոլ—Երևան, 1908 թ.՝ Ուլուխանյու—Ջուլֆա, իսկ 1913 թ. Կարս—Սարիղամիշ գծերի շինարարությունը: Միաժամանակ ընդլայնվեցին խճուղիները և բացվեցին նոր սայլուղիներ: Հաղորդակցության միջոցների բարեկարգումը խթանեց եվրոպական Ռուսաստանի ու Անդրկովկասի միջև տեղի ունեցող ապրանքաշրջանառության վերելքին և ավելի սերտացրեց նրանց սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կապերը:

Գարասկզբին շարունակվեց Ադրբեջանի, Վրաստանի արդյունաբերական մի շարք ճյուղերի, հատկապես նավթի ու մարգանցի արտադրության զարգացումը: Տեղաշարժեր կատարվեցին նաև Արևելյան Հայաստանի տնտեսության մեջ, նոր ուժով ծավալվեց նրա լեռնահանքային արտադրությունը: Դեռ 1897 թ. Փարիզում հիմնված ֆրանսիական կապիտալիստների «Կովկասի արդյունաբերական մետաղագործական ընկերությունը» (ԿԱՄԸ) «Ախթալայի հանքերի ֆրանսիական ընկերությունից» գնեց պղնձահանքերի ու գործարանների շահագործման իրավունքը: 1902 թ. ֆրանսիական կապիտալիստների մի այլ բաժնետիրական միավորում՝ «Շահալի-էլիյարի լեռնարդյունաբերական ընկերություն» անունով ձեռնամուխ եղավ Շահալիի ու Խաչիգեղի պղնձահանքերի մշակմանը, որոնք մի քանի տարի անց ևս անցան ԿԱՄԸ տնօրինության տակ:

ԿԱՄԸ հիմնովին վերակառուցեց պղնձի արտադրության գործը: Նա կառուցեց նոր «Մանես» գործարանը (1900 թ.), հիմնադրեց հարբստացման (1906—1907 թթ.) և էլեկտրոլիզի (1912 թ.) ֆաբրիկաները, արմատական վերակառուցման ենթարկեց Ալավերդու («Պիրիտիկ Ա») և Շամլուղի («Պիրիտիկ 3») գործարանները: ԿԱՄԸ երկաթգծերով իրար միացրեց նշված ձեռնարկությունները և կապեց դրանք Թիֆլիս—Կարս երկաթուղու հետ: 1909 թ. Դեբեդ գետի վրա կառուցվեց հիդրոէլեկտրակայան, որն էժան էլեկտրաէներգիա սկսեց մատակարարել «Ընկերության» հանքերին ու գործարաններին<sup>39</sup>:

Պղնձարտադրությունը բարելավվեց նաև Զանգեզուրում, ուր կապիտալիստ Ա. Ա. Մելիք-Ազարյանցը դեռ 1897 թ. կառուցեց «Սյունիք» պղնձաձուլական գործարանը, որը թեև զուրկ էր շոգու կամ նավթի ու-

ժով աշխատող շարժիչներից, սակայն շնորհիվ ներդրված նոր սարքավորումների և պղնձի ձուլման առաջավոր մեթոդների կիրառման, շուտով աչքի ընկավ արտադրության բարձր տեմպերով և գրավեց գերիշխող դիրք: Արդեն 1900-ական թվականներին Զանգեզուրի մի շարք ձեռնարկատերեր հարկադրված եղան փակել իրենց գործարանները և հանքաքարը ձուլման ուղարկել «Սյունիք» գործարանը: 1911 թ. ԿԱՄԸ գնեց Մելիք-Ազարյանցի զանգեզուրյան բոլոր ձեռնարկությունները: Կոնսերվացնելով հին «Սյունիքը», նա հիմնեց նոր գործարան՝ դարձյալ «Սյունիք» անունով, ինչպես նաև պղնձի հանքաքարի հարստացման ֆաբրիկա<sup>40</sup>:

Այսպիսով «ԿԱՄԸ» իր ձեռքում կենտրոնացրեց Արևելյան Հայաստանի պղնձարդյունաբերության գերակշռող մասը (բացի ԿԱՄԸ գործարաններից, այդ տարիներին շարունակում էին պղինձ ձուլել Սիսիմադանի և Ուլուբլայի ձեռնարկությունները):

Շնորհիվ նշված ձեռնարկումների Արևելյան Հայաստանում պղնձի ձուլումն արագորեն աճեց: Բավական է նշել, որ եթե 1905 թ. ձուլվել է 145,3 հազ. փութ (Անդրկովկասում ձուլված պղնձի 63,3%-ը), ապա 1910 թ. 278,3 հազ. փութ (Անդրկովկասում ձուլվածի 58,4%-ը)<sup>41</sup>:

Շահագործելով անմիջական արտադրողներին, կապիտալիստները ստանում էին մեծ եկամուտներ: 1900—1901 թթ. ԿԱՄԸ-ի եկամուտները կազմում էին 283, իսկ 1908—1909 թթ.՝ 501 հազ. ֆրանկ<sup>42</sup>, Սկզբում այդ եկամուտների մի մասը ներդրվում էր Արևելյան Հայաստանի պղնձարդյունաբերության մեջ, հետո համարյա ամբողջապես արտահանվում էր Ֆրանսիա:

Պղնձարդյունաբերության զարգացման հետ մեկտեղ 1900-ական թվականներին Հայաստանում շարունակվում էր աղի արդյունահանումը: Բացառությամբ Սուստինի աղահանքի, մյուսները պետական էին՝ վարձակալությամբ տրված կապիտալիստ Զանգեզուրյաններին: Հետագայում նրանց կողքին երևացին նոր վարձակալներ՝ հանձին Սելյանովի, Փրիդոնյանի և Բրոդսկու: Աղի արդյունահանման շափերը խիստ տատանվում էին և ամբողջովին կախված էին շուկայի սահմանափակ

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 64, 130:

<sup>41</sup> Сборник статистических сведений о горнозаводской промышленности России в 1905 г., СПб., 1908, с. 240—241, то же в 1910 г., СПб., 1913, с. 228—231.

<sup>42</sup> И. Г. Каспарова, նշված աշխ., էջ 121—122:

<sup>39</sup> И. Г. Каспарова նշված աշխ., էջ 88—88:



պահանջներից: Այսպես, 1900 թ. Արևելյան Հայաստանում արդյունահանվել է 1521,0 հազ. փութ աղ, 1905 թ. ընդամենը 444,0 հազ., իսկ 1910 թ.՝ 1437,0 հազ. փութ աղ<sup>43</sup>:

Բացի պղնձից և աղից, Արևելյան Հայաստանի տարածքում տարբեր տարիների արդյունահանվել են նաև մի շարք ուրիշ հանքային հանածոներ: Երևանի նահանգի Տանձուտ, Չալքենդ և այլ վայրերում 1900-ական թթ. սկզբից սկսվեց ծծմբաքարի արդյունահանումը, որի մի մասը վերամշակվում էր հենց տեղում: Ծծմբաքարի մշակումով զբաղվում էին նաև Ալավերդու և Սիտիմադանի գործարաններում:

Երևանի նահանգի, Կարսի մարզի, Բորչալուի գավառի մի շարք վայրերում շատ սահմանափակ քանակությամբ շահագործվում էին նաև արծաթ-կապարի, ցինկի, մկնդեղի հանքեր:

Արևելյան Հայաստանի տարբեր շինանյութերի՝ քարերի, ավազի, կվարցի, կվարցիտի, կրի, հրակայուն կավի հանքերը նույնպես մշակվում էին անբավարար և պրիմիտիվ եղանակներով:

Լեռնային արդյունաբերությունից հետո իր տեսակարար կշռով 1900-ական թվականների սկզբին շարունակում էր երկրորդ տեղը բրոնզե ոգելից խմիչքների արդյունաբերությունը, որը վեր էր ածվել քիչ թե շատ խոշոր կապիտալիստական արտադրության: 1899 թ. ռուս հայտնի կապիտալիստ Շուստովը գնեց Թաիրովի գործարանը և վերակառուցելով այն դարձրեց կոնյակի հիմնական արտադրողը Հայաստանում: 1907 թ. Շուստովի ֆիրման կառուցեց կոնյակի մի նոր գործարան ևս, ինչպես նաև օղեգտիչ ձեռնարկություն: Շուստովի կոնյակը, որ երբեմն «Արարատ» մականիշով էր վաճառահանվում, մրցությունից դուրս էր համարվում:

Հայաստանի սպիրտը և կոնյակը արտահանվում էին Պետերբուրգ, Մոսկվա, Վարշավա, Ռիգա, Բաթում, Թիֆլիս, Բաքու, Ելիզավետպոլ, ինչպես նաև Պարսկաստան: Սպիրտի և կոնյակի արտադրությամբ Հայաստանը ամուր դիրքեր զբաղեցրավ ռուսական շուկաներում, մասնակցում էր համաշխարհային ապրանքաշրջանառությանը: Կոնյակը, կոնյակային սպիրտը ստացվում էր միայն բարձրորակ գինուց՝ բացառապես գործարանային մշակման եղանակներով:

<sup>43</sup> Сборник статистических сведений о горнозаводской промышленности России в 1900 г. СПб., 1903, с. 418, то же в 1905 г., СПб, 1908, с. 464, то же в 1910 г., СПб., 1913, с. XXX, 412—413.

1910 թ. Երևանի նահանգում եղած 9742 դեսյատին այգուց խաղողի բերքը եղել է 4.759.970 փ., որից ստացվել է 2.725.5 հազար դուլլ գինի և 9.979.7 հազար աստիճան խաղողի սպիրտ: Կոնյակային սպիրտ, որ արտադրվում էր նահանգում գտնվող մեծ ու փոքր 13 գործարանում, ստացվել է 4.799.463 աստիճան<sup>44</sup>:

1913 թ. կոնյակային սպիրտի արտադրությունը Անդրկովկասում գործող 24 գործարաններից կազմել է 8.517.248 աստիճան, որից Երևանի նահանգում միայն ստացվել է 6.738.626 աստիճան: Նույն տարում Անդրկովկասում գործող 11 ուկրաինացի (կրկնազտիչ) գործարաններում ստացվել է 24.945 աստիճան անջուր (մաքուր սպիրտ), որից Հայաստանի երեք գործարաններում՝ 6.145 աստիճան<sup>45</sup>:

Հարկ է նշել, որ թեև սպիրտի և կոնյակի արտադրությունը կենտրոնացված էր հիմնականում Երևանում, ոգելից խմիչքների ձեռնարկություններ կային նաև Ալեքսանդրապոլում, Կարսում, Աշտարակում, Վաղարշապատում և այլուր:

Շարունակվում էր նաև բամբակագործության զարգացումը: 1910 թ. Երևանի նահանգում ստացվել է ամերիկյան տեսակի 325.854 փ., կարակոզ տեսակի՝ 35.740 փ., ընդամենը 361.594 փ. բամբակ<sup>46</sup>: Մեկ դեսյատինից ստացվում էր մոտավորապես 16 փութ ամերիկյան տեսակի բամբակ, որի մեկ փթի արժեքը 14 ռուբլի էր, կարակոզ տեսակի մեկ փթի՝ 10—12 ռուբլի: 1912 թ. Երևանի նահանգում ցանվել է 23.145 դեսյատին բամբակ, որից ստացվել է ամերիկյան տեսակի 426.249 փ., կարակոզ տեսակի՝ 41.403 փ., ընդամենը 467.652 փ.<sup>47</sup>: 1913 թ. հավաքվել է 613.000 փ.: Ամբողջ Անդրկովկասում բամբակ ստացվել էր 1.793.000 փ.: 1914 թ. Երևանի նահանգում բամբակ մթերվել է 700.000 փ.: Անդրկովկասյան բամբակի հիմնական սպառողը դարձյալ ռուսական շուկան էր:

Պատերազմի նախօրյակին Երևանի նահանգում կար բամբակի մամլման 19 սարք (պրես), յուրաքանչյուրը 10—60 հազար փութ արտադրողականությամբ: Այդ տարիներին Երևանի նահանգի բամբակագործական կարևոր ձեռնարկությունները պատկանում էին Եղիազարովին, Գևորգյան և Աֆրիկով եղբայրներին, Հաջի Իրզա Կյալամովին և այլոց:

<sup>44</sup> Кавказский календарь на 1912 г. ч. IV, с. 261—262.  
<sup>45</sup> Кавказский календарь на 1913 г. ч. IV, с. 317—318.  
<sup>46</sup> Памятная книжка Эриванской губернии на 1912 г. ч. IV, с. 4.  
<sup>47</sup> Նույն տեղում, 1914, մ. IV, էջ 5, 6, 189:

Ինչպես ողջ Անդրկովկասում, այնպես էլ Երևանի նահանգում գործող բամբակազտիչ ձեռնարկություններից ոչ բոլորն էին գործարանային բնույթի: Նրանց մեծ մասը աշխատում էր նավթի այրման, ջրի, ձիու ուժով: Իրենց պարզունակ կառուցվածքով ցածր արտադրողականությամբ, սպասարկող փոքր անձնակազմով դրանք մանրապրանքային տիպի ձեռնարկություններ էին: Անհամեմատ մոտ էին գործարանային ձեռնարկություններին գոլորշու ուժով աշխատող բամբակազտիչ ձեռնարկությունները:

1912 թ. Երևանի նահանգում կար նավթով աշխատող 108, գոլորշով՝ 33, ջրով՝ 153, ձիու ուժով՝ 24, ընդամենը 328 բամբակազտիչ ձեռնարկություն, որոնց արտադրանքը կազմում էր 429.789 փութ<sup>48</sup>:

XX դարի սկզբներին Հայաստանում կային տասնյակ մետաքսափաթաթման և մետաքսագործական ֆաբրիկաներ ու տնայգործական արհեստանոցներ: Ղափանի մետաքսափաթաթման ձեռնարկությունում սեզոնային աշխատանքի էր ընդունվում մինչև 170 մարդ: Այդ ֆաբրիկայի բոժոժ փաթաթող 40 դազգահներն արտադրում էին օրական մեկ փութ մետաքս: Այստեղ վերամշակվում էր նաև Պարսկաստանից բերված հումքը<sup>49</sup>:

Հայաստանի քաղաքներում և գյուղերում կային հարյուրավոր մանր ու միջին արհեստանոցներ ու տնայնագործական ձեռնարկություններ: 1908 թ. Երևանի նահանգում եղել է այդպիսի 3183 «ֆաբրիկագործարան» 1:749.951 ու դրամական շրջանառությամբ և 6632 բանվորներով, իսկ 1910 թ.՝ 3642 ձեռնարկություն, 2,224.367 ու շրջանառությամբ, 10.306 բանվորով<sup>50</sup>:

XX դարի սկզբին Արևելյան Հայաստանում ավելի զարգացավ սպրանքային արտադրությունը: Շուկայի հետ ավելի ամուր կապվեցին հասարակական բոլոր խավերը, տնտեսության բոլոր ճյուղերը և երկրի բոլոր շրջանները: Մեր ձեռքի տակ եղած անուղղակի տվյալներով, 1912—1913 թթ. Երևանի նահանգում ու Կարսի մարզում ցորենի ու գարու ապրանքայնությունը կազմում էր նրանց համախառն արտադրության 10—15%, խաղողինը՝ 80%, բամբակինը՝ 92%<sup>51</sup>: Հասկանա-

լի է, որ ուղղակի տեղեկությունների առկայության դեպքում այդ ցուցանիշներն ավելի բարձր կլինեին: Աճում էր նաև անասնապահության ապրանքայնությունը: 1913 թ. Երևանի նահանգական գյուղատնտեսը գրում էր, որ Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառներում «վաճառվող անասունների գլխաքանակը տարեցտարի մեծանում է», որ անասնապահությունն ընդունել է «պարզ արտահայտված արդյունաբերական բնույթ»: Ապա շարունակում էր, որ Արևելյան Հայաստանում վաճառքի է ուղարկվում խոշոր եղջերավոր անասունների 1/3-ը, իսկ մանր եղջերավոր անասունների՝ 2/3-ը: Մեծանում է նաև կաթնամթերքների շուկայական մասը<sup>52</sup>:

Ապրանքային արտադրության աճը խորացրեց աշխատանքի երկրագործական բաժանումը: Երկրի առանձին շրջաններ ավելի մասնագիտացան գյուղատնտեսական այս կամ այն գլխավոր կուլտուրաների արտադրության մեջ, և ավելի սերտացան նրանց միջև եղած տնտեսական կապերը: Աճեցին ցանքատարածությունները, հատկապես ոռոգելի հողերը: 1913 թ. Երևանի նահանգի ջրարբի վարելահողերը արդեն կազմում էին 204.368 դեսյատին, որոնք ընկած էին գերազանցապես էջմիածնի, Սուրմալուի, Երևանի և Նախիջևանի գավառներում: Արմատավորվեցին նոր կուլտուրաներ, իսկ հների որոշ տեսակներ թեև նեղվեցին, բայց շանհետացան:

Ապրանքային արտադրության աճը նպաստեց գյուղատնտեսական գործիքների բարելավմանը: Ավելի ու ավելի մեծացավ եվրոպական գութանների, հնձիչների, փոցխերի և այլ գործիքների թիվը: Միայն վեց տարվա ընթացքում (1904—1910) Կարսի մարզում ֆուրգոնների թիվը 2078-ից հասավ 4145-ի, սայլերինը՝ 2295-ից 5127-ի, հնձիչներինը՝ 150-ից 412-ի, բամհարներինը՝ 420-ից 1395-ի և այլն<sup>53</sup>: 1911 թ. Լոռիում Մանթաշեի կավածքում առաջին անգամ սկսեց աշխատել տրակտորը<sup>54</sup>:

Ապրանքային արտադրության աճը խորացրեց աշխատանքի բաժանումը նաև արդյունաբերության մեջ: Արդյունաբերության գլխավոր ճյուղերը գնալով ավելի ու ավելի են տեղայնանում երկրի այս կամ

<sup>48</sup> Նույն տեղում, մ. III, էջ 186—190.

<sup>49</sup> В. А. Дарьян, Шелковая промышленность Армянской ССР, Ереван, 1956, с. 159.

<sup>50</sup> Памятная книжка Эриванской губернии на 1912 г. ч. IV, список № 4.

<sup>51</sup> А. С. Амбарян, նշված աշխ., էջ 199—200.

<sup>52</sup> ЗУУЗ ԿողԱ, §. 133, գ. 4993, №. 36. Обзор Карсской области на 1909 г., Памятная книжка Карсской области на 1914 г.

<sup>53</sup> Обзор Карсской области на 1904 г. и 1910 г.

<sup>54</sup> Весь Кавказ, редакция и издание М. С. Шапсовича, Баку, 1914, с. 128.

այն շրջանում: Առաջ են գալիս արդյունաբերության նոր ճյուղեր, իսկ հնեներից մի մասը արտադրում է, բայց բոլորովին չի անհետանում:

Ապրանքային արտադրության զարգացման հետևանքով խորանում էր աշխատանքի հասարակական բաժանումը: Արդյունաբերությունը գնալով ավելի ու ավելի է անջատվում գյուղատնտեսությունից և կենտրոնանում քաղաքներում: Աճում է քաղաքային բնակչության թիվը<sup>55</sup>:

Աղյուսակ 2

Քաղաքները	1897 թ.	1910 թ.
Երևան	29.033	32.369
Ալեքսանդրապոլ	32.018	34.603
Կարս	20.891	35.732
Նոր Բայազետ	8.507	10.121

Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ 13 տարվա ընթացքում քաղաքային բնակչությունը նկատելիորեն մեծանում է: Քաղաքային բնակչությունն աճում է նաև Կովկասում, հասնելով 1897—1914 թթ. 1200000—1923000 մարդու: Առանձնապես արագ է մեծանում Կովկասի քաղաքաբնակ հայերի թիվը, որը նշված ժամանակամիջոցում 248000-ից հասավ 444000-ի<sup>56</sup>: Դա նշանակում է, որ հայերն ավելի շատ էին ներքաշվել կապիտալիստական հարաբերությունների ոլորտը, քան Կովկասի մյուս ազգությունները:

XX դարի սկզբին ցարական կառավարությունը գյուղում բուրժուական հարաբերությունների զարգացմանը նպաստող նոր ձեռնարկումներ կատարեց: Եթե մինչ 1905 թ. նա ամեն կերպ աշխատում էր պահպանել գյուղական համայնքը, ապա 1905 թ. հետո անցավ նրա քայքայմանը, նպատակ ունենալով ամրապնդել գյուղում թուլացող իր սոցիալական հենարանը: 1906 թ. նոյեմբերի 9-ին ցարիզմը հողային օրենք հրատարակեց, որով իրավունք տվեց պետական գյուղացիներին դառնալու իրենց հողաբաժինների սեփականատերեր: Դրանով նա, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, 1861 թ. ռեֆորմից հետո երկրորդ կարևոր քայլն էր կատարում Ռուսաստանի ֆեոդալական միապետությունը

բուրժուական միապետության վերածման ճանապարհին: Ցարիզմը ենթադրում էր, որ գյուղացիության զգալի մասը և ամենից առաջ կիսապրոլետարական շերտերը վերջնականապես կքայքայվեն ու իրենց հողերը կվաճառեն կուլակներին, որոնք դառնալով մասնավոր սեփականատերեր, կհամագործակցեն կալվածատերերին գյուղացիական հեղափոխական շարժումների դեմ: Սակայն նրա այդ քաղաքականությունը անհաջողության մատնվեց: Գյուղացիության հիմնական մասը դեմ դուրս եկավ համայնքի վերացման ճորտատիրական եղանակին և վճռականապես դիմագրավեց հողային նոր օրենքի կենսագործմանը:

Ստոլիպինյան ռեֆորմը սկզբում տարածվեց Անդրկովկասի, այդ թվում նաև Արևելյան Հայաստանի միայն ուս վերաբնակիչների վրա: Բայց սրանք ևս աննշան չափով արձագանքեցին նոր օրենքին: Ապա իշխանությունները նախագծեր մշակեցին ռեֆորմը ամբողջ Անդրկովկասի վրա տարածելու ուղղությամբ, սակայն նրանց այդ նախագծերը չիրագործվեցին:

1909 թ. փետրվարին Կովկասի փոխարքայությունն օրենքի նախագիծ մշակեց Անդրկովկասի կալվածատիրական, ինչպես նաև էջմիածնապատկան գյուղացիների «ժամանակավոր» պարտավորյալ, կախյալ հարաբերությունների վերացման մասին<sup>57</sup>:

1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով, որը կոչվում էր «Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի, Ելիզավետպոլի, Բաքվի նահանգների ժամանակավոր պարտավորյալ, կախյալ գյուղացիների՝ կալվածատերերի նկատմամբ, ունեցած հարաբերությունները դադարեցնելու և պետության օժանդակությամբ հողաբաժինները պարտադիր կերպով ետ գնելու մասին», որոշվում էր 1913 թ. հունվարի 1-ից գյուղացիներին պարտադրել ետ գնելու իրենց հողերը որպես մասնավոր սեփականություն: Օրենքը վերաբերվում էր նաև էջմիածնի վանքապատկան հինգ գյուղերին (Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Իղվարդ և Մուլնի) և նրանց բնակիչներին ազատում էր վանքին տրվող գանձումներից: Անշուշտ, պետությունն առաջին հերթին շահագրգռված էր կալվածատերերի շահերի պաշտպանությամբ, ուստի և գանձարանից հողի գինը տրվում էր միանվագ, իսկ էջմիածնի վանքին՝ տասը տարվա ընթացքում՝ տարեկան 21 հազար ռուբլի<sup>58</sup>: Նոր օրենքով, 1913 թ. հունվարի

<sup>55</sup> Кавказский календарь на 1899 г., отд. стат., с. 35—36, 39, на 1912 г., отд. стат., с. 237, 244.

<sup>56</sup> Ա. Ս. Համբարյան, նշված աշխ., էջ 154:

<sup>57</sup> Մ. Ա. Խոնդկարյան, Արևելյան Հայաստանի ազգային հարաբերությունների պատմությունից XIX դ. վերջ և XX դ. սկզբ, Ե., 1974, էջ 151—153:

<sup>58</sup> Օ. Մ. Հովհաննիսյան, Ազգային հարցը Երևանի նախկին նահանգում XIX դարի վերջին, XX դարի սկզբին, Ե., 1949, էջ 115—117:

1-ից մինչև գյուղի հողաբաժինների ետգնման արձանագրության վերջ-  
նական հաստատումը, կալվածատերերը պետական գանձարանից պետք  
է ստանալին իրենց հասանելիք գումարի 4,5%-ը, իսկ հետագայում՝  
ամբողջ գումարը:

1913 թ. հունվարի 1-ից գյուղացիները դադարեցնելու էին դրամով  
կամ բնամթերքով բահրայի վճարումը կալվածատիրոջը և հաշտարար  
միջնորդի կողմից կազմված նախնական հաշիվների հիման վրա ետ-  
գնման գումարը վճարելու էին պետությանը<sup>59</sup>: Պետական այդ «օժան-  
դակությունը» գյուղացիները փոխհատուցելու էին 56, 41 և 28 տարի-  
ների ընթացքում, նայած թե որ գյուղի համար ինչպիսի ժամկետ էր  
սահմանվում համայնքի կողմից պարտքերը մարելու համար: 1912 թ.  
դեկտեմբերի 20-ի օրենքով Երևանի նահանգում փրկագնման ենթակա  
հողերը 131121 դեսյատին էին և գնահատվում էին 5384336 ռուբլի,  
իսկ էջմիածնապատկան գյուղերում, ինչպես նաև Լոռու, Չանգեզուրի  
ու Ղազախի հայկական շրջաններում ընդհանուր հողատարածությունը  
կազմում էր 184202 դեսյատին, որի դրամական արժեքը 6993229 ռուբ-  
լի էր<sup>60</sup>: Սակայն պետությունը կալվածատերերին վճարած փրկագու-  
մարի դիմաց գյուղացիներից ստանալու էր ոչ միայն հողի գինը, այլև  
բաց թողած վարկի յուրաքանչյուր ռուբլու դիմաց տոկոսներ՝ 56 տար-  
վա ժամկետի համար 4,5 կոպեկ, 41 տարվա համար՝ 5 կոպեկ և 26  
տարվա համար՝ 6 կոպեկ, որը տասնյակ տարիների ընթացքում աս-  
տիճանաբար ավելանալով կազմելու էր հսկայական մի գումար:

Այս բուրից բխում է, որ 1912 թ. դեկտեմբերի 20-ի ռեֆորմը պե-  
տության կողմից՝ հօգուտ կալվածատերերի, գյուղացիության օրինա-  
կանացված անխիղճ կողոպուտ էր և միաժամանակ շատ թերի բուր-  
ժուական բարենորոգում: Այնուամենայնիվ այն որոշ շահով օժանդա-  
կեց գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացմանը: Այս տե-  
սակետից կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ պար-  
տադիր նատուրալ բահրայի վերացման հետևանքով մեծանում էր  
գյուղացիության շահագրգռվածությունը գյուղատնտեսության արտա-  
դրողականությունը բարձրացնելու գործում: Այժմ նախկինում ձեռա-  
նորեն կախյալ հարաբերությունների մեջ գտնվող անհատական կու-  
լակային տնտեսությունների համար ավելի մեծ հնարավորություններ

էին ստեղծվում գյուղատնտեսության մեջ միջոցներ ներդնելու, ռացիո-  
նալ-ապրանքային տնտեսություն վարելու: Կալվածատերերին տրվող  
նատուրալ բահրայից պետությանը տրվող դրամական վճարումներին  
անցնելը ևս զարկ էր տալիս ապրանքադրամական հարաբերություն-  
ների հետագա զարգացմանը գյուղում:

Ինչպես ստոլիպինյան ազդարային քաղաքականության այլ միջո-  
ցառումները, այնպես էլ 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը չուվեց այն  
արդյունքները, ինչ նախատեսել էր ցարիզմը: Նախ շատ սահմանափակ  
տարածում ուներ օրենքը և հետո գյուղացիների տնտեսական ուժերից  
վեր էր ետգնման բարձր վճարումներ կատարելը: Արտադրողական ու-  
ժերի զարգացմանը շատ էին խանգարում նաև պետական գյուղացի-  
ների հողի սեփականատեր չճանաչելը, պետական ծանր հարկերը, որ  
ամենագլխավորն է՝ պահպանվում էր ճորտատիրության և աշխատա-  
վճարումների ամենահիմնական բազան՝ կալվածատիրական հողատի-  
րությունը<sup>61</sup>:

Ցույց տալով Արևելյան Հայաստանում կատարված տեղաշարժերը,  
չպետք է սակայն անտեսել, որ կյանքի նահապետական եղանակները  
տակավին շարունակում էին էական դեր խաղալ:

Հայաստանում ռոտզելի հողերը մեծ տարածություններ չէին գրա-  
վում, գյուղատնտեսական մթերքների արտադրությունը ցածր էր: Տըն-  
տեսության ինտենսիվ զարգացմանը զգալիորեն խոչընդոտում էր նաև  
հողի շատ բարձր վարձագինը, հողամշակությունը տարվում էր գերա-  
զանցապես պապենական եղանակներով, կատարելագործված գործիք-  
ներն իրենց քանակով բացարձակապես գիշում էին պարզունակ ար-  
տադրողական միջոցներին: Այսպես, 1909 թ. Կարսի մարզում օգտա-  
գործվում էր 18500 արոք և ընդամենը՝ 2472 երկաթե գութան, իսկ  
Երևանի նահանգում 1912 թ.՝ 62800 արոք և 6532 երկաթե գութան<sup>62</sup>:

Ինչպես XIX դ. վերջին, այնպես էլ XX դ. սկզբին Հայաստանում  
շարունակում էր գերիշխել համայնական հողատիրությունը, որը հար-  
կավ, չէր կանխում գյուղացիության հետագա հողազրկության պրո-  
ցեսը:

Ցարական կառավարությունը, ելնելով իր գաղութատիրական շա-  
հերից, շարունակում էր Ռուսաստանի կենտրոնական նահանգներից  
Անդրկովկաս, այդ թվում և Հայաստան, վերաբնակիչներ փոխադրելու

<sup>59</sup> Մ. Ա. Խոնդկարյան, նշված աշխ., էջ 160—161:

<sup>60</sup> Մ. Հ. Աղոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագի-  
տական միտքը XX դարի սկզբին, Ե., 1968, էջ 89:

<sup>61</sup> Մ. Ա. Խոնդկարյան, նշված աշխ., էջ 169—171:

<sup>62</sup> Մ. Հ. Աղոնց, նշված աշխ., էջ 145:

քաղաքականությունը: Նա անտեսում էր այն փաստը, որ տեղական բնակչությունը տառապում էր սակավահողությունից: Այս քաղաքականության հետևանքով արդեն 1914 թ. Կարսի մարզում հաստատվեցին 3112, Ղազախի և Չանգեզուրի գավառներում՝ 236 շունչ վերաբնիկիչներ: Նույն թվականին իշխանությունները մտադրվում էին Ռուսաստանի ներքին նահանգներից Երևանի նահանգ տեղափոխել ևս 2496 մարդ<sup>65</sup>:

Ցարական կառավարությունը ոտնահարում էր տեղական ժողովուրդների կարիքները: Նա Կովկասից գանձում էր տարեկան 14—15 միլիոն ռուբլու հարկ, իսկ տեղում կատարվող ծախսերը պետական գանձարանին նստում էր մոտավորապես 28—30 միլիոն ռուբլի: Այս թվացող տարբերությունը ցարական կառավարության ռեակցիոն գործիչներին առիթ էր տալիս ամենուրեք հայտարարելու և աղմկելու Կովկասյան երկրամասը՝ Ռուսաստանի վրա թանկ նստելու մասին: Երականում Կովկասից ւտացվող եկամուտները մի քանի անգամ գերազանցում էին տեղում կատարված ծախսերը: Երկրամասից ստացվող ուղղակի և անուղղակի հարկերը և պետական այլ հասույթները, այդ թվում նավթահանքերից, պղնձի, մարգանցի հանույթից ստացվածը կազմում էր տարեկան 120—125 միլիոն ռուբլի<sup>66</sup>:

Ռուսական առաջին հեղափոխությունից հետո Կովկասի փոխարքա Վրոնցով-Դաշկովը՝ ելնելով երկրամասի տնտեսական և հասարակական զարգացման հասունացած պահանջներից, հարց հարուցեց Անդրկովկասում տեղական ինքնավարության մարմիններ՝ զեմստվոներ մտցնելու մասին: 1907 թ. փոխարքան Նիկոլայ II-ին ներկայացրած իր «ամենահպատակ զեկուցագրում» առաջարկում էր Անդրկովկասի համար հաստատել տալ ինքնավարության քառաստիճան սիստեմ՝ հիմնված ընտրական սկզբունքի վրա: Ըստ որում ինքնավարության առաջին և ստորին օղակը գյուղական հասարակության ժողովն էր լինելու, որին հաջորդելու էր տեղամասային զեմստվոն: Հաջորդ օղակը գավառային զեմստվոն էր, որից հետո գալիս էր Անդրկովկասյան ընդհանուր զեմստվոն: Սակայն Պետական խորհուրդը, որին ներկայացվեց Վրոնցով-Դաշկով նախագիծը, մերժեց այն: Հետագայում ևս Անդրկովկասում զեմստվո մտցնելու մի շարք պահանջներ և նախա-

<sup>65</sup> А. С. Амбарян, նշված աշխ., էջ 139—141:

<sup>66</sup> Մ. Զ. Արոնց, նշված աշխ., էջ 100:

գծեր ներկայացվեցին պետական դոմաներում, սակայն դրանք այնպես էլ կառավարական հաստատման չհասան<sup>65</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ինչպես Ռուսաստանի բազմաթիվ այլ շրջանների, այնպես էլ Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանի տնտեսությունը սկսեց քայքայվել ու անկում ապրել: Ծանր վիճակի մեջ ընկավ գյուղատնտեսությունը: Երևանի նահանգում 1913—1916 թթ. ցորենի ցանքատարածությունները նվազեցին 43,5%-ով, գարունը՝ 25,5%-ով, իսկ գյուղատնտեսական բոլոր կուլտուրաներինը՝ 30,5%-ով: Շուրջ երկու անգամ կրճատվեց այդ կուլտուրաների բերքը: Զիերի մի մասը հանձնվեց բանակին, խոշոր ու մանր անասունների դիտաքանակը անասնակերի պակասի պատճառով կրճատվեց 20—28%-ով: Աճեց անասնազուրկ տնտեսությունների թիվը, աղքատությունն ու խեղճությունը: Արագորեն բարձրացան պարենամթերքների ու սպառման ապրանքների գները: Բավական է նշել, որ 1913—1916 թթ. 1 փութ ցորենի գինը 1,50 ռ. հասավ 7,27 ռ., գարու գինը՝ 1,10 ռ.—4,43 ռ., բրնձիկը՝ 2,40 ռ.—14,28 ռ., կարտոֆիլինը՝ 50 կոպ.—3,13 ռ., մսինը՝ 2,88 ռ.—5,95 ռ. և այլն<sup>66</sup>:

Չնայած այդ ամենին, ցարական կառավարությունը պատերազմի տարիներին ավելի սաստկացրեց աշխատավորների հարկային հարստահարումները, նրանց շահագործումն ու ճնշումը:

Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի լեռնարդյունաբերությունն՝ այդ թվում պղնձարդյունաբերությունը, պատերազմի առաջին տարիներին համեմատաբար քիչ տուժեցին<sup>67</sup>: Բայց պատերազմի երկրորդ շրջանում պատկերը կտրուկ փոխվեց: Բանվորներից շատերը զորակոչվեցին բանակ, մեծացավ աշխատուժի և վառելիքի կարիքը, որոշ ձեռնարկություններ փակվեցին, իսկ մյուսների արտադրանքն իջավ միմիումի: Արևելյան Հայաստանում նվազեց պղնձի արտադրությունը: Եթե 1913 թ. ձուլվել էր 343,1 հազ. փութ (Անդրկովկասում ձուլվածի 54,6%-ը), ապա 1917 թ. 103 հազ. փութ (Անդրկովկասում ձուլվածի

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 16—18:

<sup>66</sup> Մ. Զ. Արոնց, նշված աշխ., էջ 451—454:

<sup>67</sup> ՄՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 67, գ. 666, ք. 1:

44,5% -ը)<sup>68</sup>, Կրճատվեց աղի արտադրությունը, վայրէջք ապրեցին երկրի արդյունաբերության նաև մնացած ճյուղերը:

Այդպիսով, Արևելյան Հայաստանը պատմական կոնկրետ պայմանների ներգործության հետևանքով թեև Ռուսաստանի թույլ զարգացած շրջաններից էր և համեմատաբար ուշ մտավ կապիտալիստական մեքենայացված արտադրության պրոցեսի մեջ, այնուամենայնիվ ունեցավ արդյունաբերական մի շարք նշանավոր կենտրոններ, որոնք XIX դ. վերջին և XX դ. սկզբին դարձան պրոլետարիատի կազմավորման օջախներ:

<sup>68</sup> И. Г. Каспарова, նշված. աշխ., Приложение, тб. 36.

## ԱՐԿՅՈՒՆԱԲԵՐԱՎԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովուրդը կապիտալիզմի զարգացման դարաշրջանը թևակոխեց որոշակի յուրահատկություններով: Ընթարկվելով օտար նվաճողների ավերիչ արշավանքներին, հայերի մի զգալի մասը դեռ վաղ անցյալում հարկադրաբար թողել էր իր հայրենիքը և ցրվել աշխարհով մեկ: Արտագաղթողները հաստատվել էին Ասիայի, Աֆրիկայի, Եվրոպայի և Ամերիկայի զանազան երկրներում: Կապիտալիզմի զարգացման դարաշրջանում այնտեղ, որտեղ պայմանները եղել են բարենդպաստ, հայերը տիրապետող ազգերի հետ միաժամանակ մուտք են գործել հասարակական զարգացման նոր ֆորմացիան: Այդպես է եղել, օրինակ, Ռուսաստանում, ուր հայրիական գաղթօջախներում սկզբում ձևավորվեց արևելահայ առևտրական, իսկ հետո նաև արդյունաբերական բուրժուազիան: Բուն Հայաստանում հայ բնակչությունը երկար ժամանակ շարունակում էր ապրել ֆեոդալական կացութաձևով:

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին մեծ նշանակություն ունեցավ արևելահայերի համար: Այդ միացման շնորհիվ նրանց տնտեսական, հասարակական ու կուլտուրական կյանքը սկսեց դուրս գալ լճացումից ու քայքայումից ու բռնել առաջընթացի ուղին: Արագորեն զարգացավ կովկասահայ առևտրավաշխատական բուրժուազիան: Հարստահարելով աշխատավորներին, առևտրականներն ու վաշխառուները ձեռք բերեցին խոշոր դրամագլուխ: Նրանց մեծ մասը հաստատված էր առավելապես Թիֆլիսում, Բաթումում, Բաքվում և Անդրկովկասի առևտրական ճանապարհների վրա ընկած այլ քաղաքներում, իսկ Արևելյան Հայաստանում դրամատերերն ունեին համեմատաբար համեստ միջոցներ<sup>2</sup>:

<sup>1</sup> Ա. Ս. Համբարյան, Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն (XIX դ. երկրորդ կես—XX դ. սկիզբ), Ե., 1933, էջ 63—64:

<sup>2</sup> Նույն տեղում:

XIX դարի երկրորդ կեսին, երբ Անդրկովկասն սկսեց ավելի արագորեն ներքաշվել համառուսական կապիտալիզմի հորձանուտի մեջ, հայ դրամատերերից շատերը իրենց գործունեությունը շրջանառության ալտրտից տեղափոխեցին արտադրության ոլորտը և հիմնեցին գործարաններ ու ֆաբրիկաներ: Նրանք երկրամասի արդյունաբերական կյանքում սկսեցին երևելի դեր խաղալ: Բացի հայ դրամատերերից երկրամասի ու Արևելյան Հայաստանի արդյունաբերական բուրժուազիայի շարքերը համալրեցին նաև վրացիները, ադրբեջանցիները և այլ ազգի ներկայացուցիչներ:

Բուրժուազիայի կազմավորման հետ միասին ձևավորվում է նաև պրոլետարիատը: Արևելահայ արդյունաբերական բուրժուազիայի ու պրոլետարիատի ձևավորումն ունեւ որոշ առանձնահատկություններ: Հարեան Վրաստանում ու Ադրբեջանում նրանք ավելի շուտ սկսեցին կազմավորվել, քան Արևելյան Հայաստանում: Այդ երկրներում հայ բուրժուազիան տնտեսապես ավելի ուժեղ էր, իսկ պրոլետարիատը ավելի ստվարաթիվ, քան Արևելյան Հայաստանում: Այդ առանձնահատկությունները պայմանավորված էին գերազանցապես հայ ժողովրդի պատմական ճակատագրով: Հալածվելով օտար նվաճողների կողմից հայերը ստիպված թողել են իրենց հայրենիքը և հաստատվել տարբեր երկրներում, այդ թվում նաև Վրաստանում ու Ադրբեջանում: 1897 թ. մարդահամարի տվյալներով, Ելիզավետպոլի նահանգում բնակվում էր 292188 հայ, Թիֆլիսի նահանգում՝ 196189, Բաքվի նահանգում՝ 52233, Քութայիսի նահանգում ու Բաթումի մարզում՝ 24043, Երևանի նահանգում 441000, իսկ Կարսի մարզում՝ 73406 հայ: Այլ կերպ ասած՝ Անդրկովկասի հայերի շուրջ կեսը ապրում էր Վրաստանում ու Ադրբեջանում: Հասկանալի էր, որ կապիտալիզմի զարգացման պայմաններում նրանք պետք է համալրեին այդ երկրների բուրժուազիայի ու պրոլետարիատի շարքերը: Բացի դրանից, հայ պրոլետարիատի կազմավորումը հարեան Վրաստանում ու Ադրբեջանում պայմանավորված էր նաև ուրիշ հանգամանքներով, որոնց մասին կապիտալիստը:

<sup>3</sup> Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г. под ред. Н. А. Тройницкого, Общий свод по империи результатов разработки данных первой всеобщей переписи населения, произведенной 28 января 1897 г., т. II, СПб., 1905, с. XV—XVI.

Պրոլետարիատը ինչպես այլ երկրներում, այնպես էլ Արևելյան Հայաստանում պատմական թատերաբեմ ելավ կապիտալիստական արդյունաբերության զարգացման հետ զուգընթաց:

Նախառեֆորմյան ժամանակաշրջանում վարձու աշխատանքի կիրառման խիստ սահմանափակ պայմաններում արդյունաբերական ձեռնարկությունների աշխատուժը կազմված էր կամ տվյալ ձեռնարկությանը ամրացված գյուղացիներից, կամ քաղաքային ստորին խավերի՝ գլխավորապես արհեստավորական դասի ներկայացուցիչներից: Օրինակ, դեռ վրաց թագավոր Իրակլի 2-րդի օրոք, հուլյն հանքագործներին օգնելու նպատակով, Ախթալայի, Ալավերդու և Շամլուղի հանքերում ու գործարաններում օժանդակ աշխատանքները կատարում էին (անտառահատում, փայտածուխի պատրաստում և այլն) շրջակա 32 գյուղերի գյուղացիները<sup>4</sup>:

Կողբի, Նախիջևանի, Սուստինի աղահանքերում աշխատողները մոտակա գյուղերի բնակիչներ էին:

Վարձու աշխատանքի նկատելի կիրառման շրջանը սկսվեց XIX դ. կեսերին, երբ վերը նշված գյուղերն ազատվեցին աշխատանքային պարտադիր պարհակից: 1850 թ. հունվարի 1-ից այդ պարհակից ազատվեցին Բորչալուի գավառի պղնձահանքերին ու գործարաններին կցված գյուղացիները, իսկ 1868 թ. օգոստոսի 26-ից՝ Կողբի և Նախիջևանի աղահանքերին կցված Կողբ և Շեխմահմուդ գյուղերի բնակիչները (մինչ այդ աշխատանքային պարհակից ազատվել էին Կողբի մոտ գտնվող Չինչավատի գյուղացիները)<sup>5</sup>:

Արևելյան Հայաստանում վարձու աշխատուժի և արդյունաբերական պրոլետարիատի ձևավորմանը նպաստեցին մի կողմից տեղի քայքայված, աղքատացած ու հողազուրկ գյուղացիներն ու արհեստավորության ստորին խավերը, մյուս կողմից Թուրքիայի և Պարսկաստանի գյուղերից եկած սեզոնային բանվորները: Արևելյան Հայաստանի արդյունաբերության մեջ սահմանափակ քանակով աշխատում էին նաև

<sup>4</sup> ՄՍՀՄ ԿԳՊԱ, ֆ. 37, ց. 11, դ. 448, Թ. 321, 332, Каспарова И. Г., Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал Е., 1961, с. 8, 161.

<sup>5</sup> ՄՍՀՄ ԿԳՊԱ, ֆ. 37, ց. 11, դ. 448, Թ. 353, 409, 413, ֆ. 1268, ց. 13, դ. 76, Թ. 5, ՄՍՀՄ ԿԳՊԱ, ֆ. 272, ց. 1, դ. 124, Թ. 1, Ст. И. Гулишамбаров Обзор фабрик и заводов Закавказского края. Тифлис, 1884, с. 91, И. П. Каспарова *նշված աշխ.*, էջ 19, 173.

Կովկասի մյուս շրջաններից և Ռուսաստանի տարբեր վայրերից եկած բանվորներ, որոնք նույնպես հիմնականում գյուղացիներ էին:

Արևելյան Հայաստանի պրոլետարիատի կազմավորման աղբյուրներից ամենակարևորը գյուղացիության երկրագործական և ոչ երկրագործական արտադնացույթյունն էր: Կապիտալիստական հարաբերությունների անհամաչափ զարգացմամբ էր պայմանավորված բնակչության հոսքը դեպի համեմատաբար խոշոր քաղաքներն ու արդյունաբերական կենտրոնները:

Խոսելով այդ պրոցեսի մասին, Վ. Ի. Լենինը նշում է նրա առաջադիմական լինելը, ընդգծելով, որ այն «կտրում է բնակչությանը հեռավոր, հետամնաց, պատմության կողմից մոռացված խուլ անկյուններից և ներգրավում արդի հասարակական կյանքի հորձանուտի մեջ»<sup>6</sup>: Արտադնացույթյունը, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, «բարձրացնում է գյուղացու քաղաքացիական անձնականությունը, ազատելով նրան նահապետական և անձնական կախման ու դասայնություն այն բազմաթիվ հարաբերություններից, որոնք այնքան ուժեղ են գյուղում»<sup>7</sup>:

Արևելյան Հայաստանի ոչ երկրագործ արտադնացների գերակշռող մասն աշխատանք փնտրելու էր գնում Անդրկովկասի զանազան վայրերը: Դա բացատրվում էր մշակվող հողային ֆոնդի սակավությունը, տեղական արդյունաբերության թույլ զարգացմամբ, որն ի վիճակի չէր զբաղեցնելու առաջացող աշխատուժը, ինչպես նաև համեմատաբար խոշոր արդյունաբերական այնպիսի կենտրոնների մոտիկությունը, ինչպիսիք էին Բաքուն և Թիֆլիսը: Դեպի այդ քաղաքներն էր մեկնում Արևելյան Հայաստանի արտադնացների զգալի մասը<sup>8</sup>:

Ըստ 1884 թ. տվյալների, Ջանգեզուրի բնակչության 28—30% -ը արտադնացության մեջ էր գավառի սահմաններից դուրս<sup>9</sup>: Միայն Բաքու աշխատելու էին մեկնել 2925 մարդ<sup>10</sup>: 1885 թ. տվյալներով նոր Բայազետի գավառից արտադնացության էր դիմել բնակչության

<sup>6</sup> Վ. Ի. Լենին, Եժ, հ. 3, էջ 731:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 732—733:

<sup>8</sup> էջ 46—52-ը շարադրված է Ա. Ս. Համբարյանի հետ համատեղ—(Ա. Ս.):

<sup>9</sup> Վ. Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղմունքները (1828—1978), Ե., 1979, էջ 63:

<sup>10</sup> Խ. Հ. Բաղսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1830-ական թթ. 1904 թ.), գիրք առաջին, 1967, էջ 60:

3,7%-ը<sup>11</sup>, իսկ 1893 թ.՝ 1247 մարդ<sup>12</sup>, Երևանի նահանգից 1893 թ.՝ 5,2 հազ. մարդ<sup>13</sup>, Մինչև XIX դ. 90-ական թթ. երկրորդ կեսը արտադնացության տեմպերը Երևանի նահանգում համեմատաբար ցածր էին: Այդ է վկայում նահանգապետի 1891 թ. հաշվետվությունը. «Արտադնացային զբաղմունքները տակավին գտնվում են սաղմնային վիճակում. տղամարդ բնակչության միայն աննշան մասն է դատումների գնում Թիֆլիս, Բաքու, Օդեսա և Հյուսիսային Կովկաս»<sup>14</sup>:

XIX դ. 90-ական թթ. երկրորդ կեսից այդ պրոցեսն Արևելյան Հայաստանում գնալով աճեց: Ս. Ջավարովը նշում էր, որ այդ շրջանում Երևանի նահանգում գյուղ չկար, որի աշխատունակ բնակչության ոչ պակաս 10%-ը շմեկներ արտադնացության: Քիչ չէին այն գյուղերը, որտեղից մեկնում էր բնակչության 1/4-ը, 1/3-ը, և նույնիսկ 1/2-ը<sup>15</sup>: Ապա նա շարունակում էր, «20 տարի սրանից առաջ գյուղացիների համար ամոթ էր գնալ գործարան և կերակրվել օրվա աշխատանքով: Բայց հիմա նրանք աշխատուժ են մատակարարում ոչ միայն Կեսաբեկի «Միմենսի» գործարանին, այլև Օդեսայի ու Սևաստոպոլի արվարձաններին»<sup>16</sup>:

90-ական թթ. վերջերին արտադնացության ասպարեզում տեղի ունեցած փոփոխություններն իրենց արտացոլումն են գտել Երևանի նահանգապետի 1898 թ. հաշվետվության մեջ, ըստ որի «Արտադնացային զբաղմունքը տարեցտարի ընդունում է ավելի ու ավելի նշանակալի շափեր: 1898 թ. տարբեր քաղաքներ (Թիֆլիս, Բաքու, Բաթում և այլն) դատումների է մեկնել մինչև 20,000 մարդ»<sup>17</sup>:

XX դ. սկզբին արտադնացությունն ավելի մեծացավ: Այդ մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել 3-րդ աղյուսակից<sup>18</sup>:

<sup>11</sup> М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении в XIX в., Е., 1957, с. 353.

<sup>12</sup> С. Заваров, Опыт исследования сельскохозяйственного хлебородного района Эриванской губернии и Карсской области. Тифлис, 1899, с. 285.

<sup>13</sup> М. А. Адонц, նշված աշխ., էջ 355:

<sup>14</sup> Обзор Эриванской губернии за 1891 г., с. 14.

<sup>15</sup> С. Заваров, նշված աշխ., էջ 293:

<sup>16</sup> С. Заваров, նշված աշխ., էջ 283:

<sup>17</sup> Обзор Эриванской губернии за 1898 г., с. 8.

<sup>18</sup> Обзор Эриванской губернии за 1901 г., 11, за 1912 г., с. 14, за 1913 г., с. 16, «Լրագրք», 1985, № 8, էջ 28.



Գավառներ	1901 թ.	1912 թ.	1913 թ.
Երևանի Էջմիածնի	տեղեկություն չկա »	1959 4606	2588 7661
Սուրմալուի	»	1721	1903
Նոր Բայազետի	5000 մարդ	10451	13198
Ալեքսանդրապոլի	3200 »	9573	14000
Շարուր-Դարալագյազի	2200 »	2305	2397
Նախիջևանի	3000 »	6418	6781
<b>Ընդամենը</b>	<b>13400</b>	<b>36633</b>	<b>48742</b>

Աղյուսակից երևում է, որ 1901—1913 թթ., այսինքն՝ 12 տարվա ընթացքում արտագնացների թիվը աճել է՝ 13,400-ից հասնելով 48742-ի: Արտագնացությունը մեծ էր հատկապես երկրի լեռնային շրջաններում՝ Նոր Բայազետի ու Ալեքսանդրապոլի գավառներում և համեմատաբար փոքր՝ հարթավայրային շրջաններում՝ Երևանի, Նախիջևանի, Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի գավառներում: Դա բացատրվում էր նրանով, որ հողի բարեբերությունը և գյուղատնտեսության ճյուղերի բազմազանության շնորհիվ այդ գավառների ընչազուրկ գյուղացիները կարողանում էին մի կերպ յուրազանց կամ աշխատանք գտնել տեղում, մինչդեռ առաջիններում հողի ւակավաբերության և գյուղատնտեսության սահմանափակ ճյուղերի առկայության պայմաններում նրանք ստիպված էին մեկնել այլ վայրեր:

Դարասկզբին արտագնացների թիվն աճեց նաև Կարսի մարզում: 1907 թ. այն կազմում էր 2448 մարդ, 1909 թ.՝ 3243, իսկ 1910 թ.՝ 4081 մարդ<sup>19</sup>: Դրանց մեծամասնությունը Կարսի օկրուգից էր: Բավական է նշել, որ 1910 թ. այդ օկրուգից մեկնել է 2035 մարդ, մինչդեռ Կաղզվանի օկրուգից 884, Արդահանի օկրուգից՝ 1006, Օլթիի օկրուգից՝ 156 մարդ<sup>20</sup>:

Ուր էին մեկնում արտագնացները: Այդ հարցին որոշակի պատասխան են տալիս 1912 թ. վերաբերող աղյուսակ 4-ի տվյալները<sup>21</sup>:

<sup>19</sup> Обзор Каресской области, за 1907. с. 19, за 1909, с. 53, за 1910, с. 53. տե՛ս նաև «Լրաբեր», 1985, № 8, էջ 26.

<sup>20</sup> Обзор Каресской области за 1910, с. 53.

<sup>21</sup> Обзор Эриванской губернии за 1912, с. 14.

Գավառներ	Այն գյուղերի թիվը, որտեղից մեկնել են	Մեկնողների թվաքանակը (մարդ)			Տարածված գյուղացիների թիվը
		Երևանի նահանգի սահմաններում	Երևանի նահանգի սահմաններից դուրս	արտասահման	
Երևանի	79	1758	195	6	36230
Էջմիածնի	120	3121	1157	328	373565
Սուրմալուի	136	820	751	150	151410
Նոր Բայազետի	132	3049	7361	41	873780
Ալեքսանդրապոլի	148	3821	5237	515	832460
Շարուր-Դարալագյազի	96	554	1750	1	88950
Նախիջևանի	127	1424	3917	1077	350285
<b>Ընդամենը</b>	<b>828</b>	<b>14547</b>	<b>20368</b>	<b>2118</b>	<b>2706680</b>

Աղյուսակից երևում է, որ արտագնացների մեծամասնությունը մեկնում էր փոքր վաստակելու Երևանի նահանգի սահմաններից դուրս: Նրանք գնում էին ամենից առաջ Կովկասի առևտրաարդյունաբերական նրանք գնում էին ամենից առաջ Կովկասի առևտրաարդյունաբերական կենտրոնները, առավելապես՝ Բաքու: Գյուղագիր Սողոմոն Մելիք-Շահկենտրոնները, առավելապես՝ Բաքու: Գյուղագիր Սողոմոն Մելիք-Շահնազարյանը գրում էր. «...Բաքուն դեռևս շտեմնողները, նորա ծարավով տոշրվողները գնացին և դեռ շարունակ շաբաթ չի անցնում, որ Բաքու տանող ճանապարհի վրա սկին շտա պանդուխտ գնացողների խումբը կուռնկներին նման, որոնք շվում են ուրախությամբ դեպի տաք երկրներ. իսկ տեսնողները գյուղում երկար շմնացին, չկարողացան գյուղական կյանքը տանել, պանդուխտի պարկերը շալակներն առնելով՝ շտապեցին դեպի Բաքու...»<sup>22</sup>:

Արտագնացները մեկնում էին նաև Կովկասից հեռու՝ դեպի Միջին Ասիա, Սիբիր, Հեռավոր Արևելք, եվրոպական Ռուսաստան, անգամ՝ արտասահման: 1913 թ. Պ. Պետրովիչը գրում էր, որ Երևանի նահանգից գնում են Բաքու, Տուրքեստան (նավահանգստի կառուցման վրա աշխատելու), Քուրթասի նահանգի մարզանցի հանքերը, Թուրքեստան, Ամուր, մեկնում են սայլերով Կախեթ, Եվլախի ճանապարհի վրա բանելու և նույնիսկ Պարսկաստան... ընդհուպ մինչև Ուրմիա: Այս շարունակում էր, որ հայ արտագնացները մեկնում էին նաև Ամերիկա,

<sup>22</sup> «Հայ գյուղագիրներ», Ե., 1950, էջ 483:

հաստատվելով «եսաղաղ օվկիանոսի ափերին, Լոս-Անջելոս քաղաքում ու նրա շրջակայքում»<sup>23</sup>:

Համարյա նույն ուղղութիւններով էին շարժվում նաև Կարսի մարզի արտադրանքները: 1905 թ. նահանգապետը գրում էր, որ մարզի «հիմնական բնակիչների մի մասը գնում են դատումների Անդրկովկասի առևտրական ու արդյունաբերական կենտրոնները, Ռուսաստանի ներքին նահանգները և նույնիսկ Պարսկաստան: Հուլիները, որպես հիանալի քարտաշներ, իրենց համար օգտավետ զբաղմունք են գտնում երկաթուղային շինարարութիւնում և պետական կառույցներում, իսկ մյուս տեղացիները, ինչպես օրինակ, հայերն ու թուրքերը, մեկնում են դատումների, բացառիկ դեպքերում, որպես հասարակ սևագործ բանվորներ: Ռուս վերաբնակիչները—աղանդավորները—գերադասում են զբաղվել իրենց իսկական արհեստագործութիւնները—սալապանութիւններ, որի համար նրանք ունեն բավականաչափ ձիեր ու սալներ»<sup>24</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ արտադրանքների մասին բերվող տվյալները չեն կարող այդ պրոցեսի ամբողջական պատկերը տալ, որովհետև այդ թվերը վերաբերում են լոկ այն տարադրանքներին, որոնք վերցրել էին ուղևորման անձնագրեր: Մինչդեռ հազարավոր տարագիրներ մեկնում էին առանց անձնագրերի: Ժամանակի հայկական մամուլը ողբում էր տեսնելով նահապետական գյուղի քայքայումը:

«Ո՞ւր բարով այդպես,—գյուղացիներին է դիմում վշտահար հայ մտավորականը,—ո՞ւր ես թողել հողդ ու շուրդ, հանդդ ու արտդ, բախտդ ու այգիդ և պանդուխտի մախաղը մեջքիդ կապած, գավազանը ձեռքիդ վազում հայ գյուղացի...»

Միթե դու կարծում ես, թե հեռուն, այնտեղ սարերի և ծովերի ետևում մեծ-մեծ քաղաքների ու գործարանների մեջ ոսկին և արծաթը փռած են ու դու գնալով այնտեղ փեշով պիտի հավաքես...

Դարձեք այդ կորստաբեր ճանապարհից»<sup>25</sup>:

Սակայն ոչ մի ուժ չէր կարողանում ետ պահել արտադրանքների «կորստաբեր» ճանապարհից: Ընդհանրապես գնալով նրանց թիվը ավելանում էր:

Արտադրանքների մի հոսանք էլ այլ վայրերից աշխատելու էր գա-

<sup>23</sup> Итоги урожая и состояние скотоводства в Закавказье в 1913 г. Тифлис 1914, с. 22—23.

<sup>24</sup> Обзор Карсской области за 1905 г., с. 16, տե՛ս նաև «Լրաբեր», 1905, № 8, էջ 28.

<sup>25</sup> «Մշակ», 1912, № 80.

լիս Արևելյան Հայաստան: Սեզոնային բանվորական ուժի հիմնական մատակարարողները Թուրքիան և Պարսկաստանն էին: Ավելի քիչ աշխատող ձեռքեր էին գալիս Անդրկովկասի այլ նահանգներից և Ռուսաստանից: Ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների, Երևանի նահանգում աշխատում էր ուրիշ վայրերից եկած 5116 մարդ: Դրանց 11,6%-ն Անդրկովկասի այլ նահանգներից էին, 6,7%-ը՝ Ռուսաստանից, 5,8%-ը՝ եվրոպական երկրներից, 43,4%-ը՝ Թուրքիայից, 30,6%-ը ասիական այլ երկրներից (գլխավորապես Պարսկաստանից)<sup>26</sup>:

Այդ նույն մարդահամարի տվյալներով Կարսի մարզում այլ տեղերից աշխատելու էր եկել 5862 մարդ, որոնց 24,8%-ն Անդրկովկասի այլ նահանգներից, 4,8%-ը՝ Ռուսաստանից, 62,3%-ը՝ Թուրքիայից և 7,6%-ը՝ ասիական այլ երկրներից (հիմնականում՝ Պարսկաստանից) և այլն<sup>27</sup>:

Թուրքիայից եկածները ճնշող մեծամասնութիւնը՝ հարստահարված, աղքատացման եզրին հասած հայեր էին: Քիչ չէին նրանց մեջ այնպիսիները, որոնք շղիմանալով թուրք բռնակալների վայրենի կեղեքումներին, թողնում էին Արևմտյան Հայաստանում իրենց հարազատ վայրերը և մշտական բնակություն հաստատում Ռուսական կայսրությունում (հատկապես Կովկասում): Այսպես օրինակ, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Արևմտյան Հայաստանից Երևանի նահանգ մշտական բնակության գաղթեց երկու հազար հայ ընտանիք<sup>28</sup>:

Օսմանյան լուծը հատկապես անտանելի դարձավ անցած դարի 80-ական թթ. սկսած: 1894—1896 թթ. թուրքական իշխանութիւնները Թուրքիայում հայերի ահավոր ջարդ կազմակերպեցին, որի ընթացքում զոհ գնաց ավելի քան 300 հազար հայ: Այդ ջարդից փախածների մի զգալի մասը, թվով 100 000 մարդ, վերաբնակություն հաստատեց Ռուսաստանում: Արևմտահայ տարագիրների հոսքը դեպի կայսրություն շարունակվեց նաև XX դարի սկզբին:

Արևմտյան Հայաստան եկած արտադրանքներն աշխատում էին

<sup>26</sup> Распределение рабочих и прислуги по группам занятий и по месту рождения на основании данных Первой всеобщей переписи населения Российской империи 28 января 1897 года. Табл. II.

<sup>27</sup> նույն տեղում:

<sup>28</sup> «Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении», Тифлис, 1915, с. 1—2.

գյուղատնտեսության բնագավառում, պղնձի արդյունաբերության մեջ, երկաթուղիների շինարարության վրա:

Ապրանքային արտադրության զարգացման հետևանքով XIX դ. երկրորդ կեսին, հատկապես վերջին սոցիալական շերտավորում է առաջանում նաև արհեստավորների ու առևտրականների մեջ: Նրանց մի մասը, գլխավորապես վարպետները, օգտագործելով իրենց դիրքը և ձեռք բերած հարստությունը, դիմում են վարձու աշխատանքի, շահագործելով ոչ միայն ենթավարպետներին կամ բանվորներին, այլև աշակերտներին: Այսպես. 1893 թ. Երևանի նահանգում ուսումնասիրված 1049 արհեստավորներից 519—վարպետներ էին, 99 ենթավարպետներ և 431 աշակերտներ: Այդ վարպետներից 453-ը (87,3%) շունք բանվոր կամ ենթավարպետ, 52-ը (10,0%) ուներ 1-ական, 6-ը (1,1%)՝ 2-ական, 1-ը (0,2%)՝ 3-ական, 5-ը՝ (1,0%)՝ 4-ական և 2-ը (0,4)՝ 5-ական և ավելի բանվորներ<sup>29</sup>:

Պատկերը զգալիորեն փոխվում է, երբ դիտում ենք աշակերտների վերաբերյալ տվյալները: Պարզվում է, որ 519 վարպետներից աշակերտներ շունք 166-ը (32,0%), 293-ը (56,4%) ուներ 1-ական, 59-ը (11,4%)՝ 2—4-ական և միայն 1-ը (0,2%)՝ 5 և ավելի աշակերտ<sup>30</sup>:

Այդ տվյալները ցույց են տալիս, որ վարպետների 12,7%-ը արդեն վարձում էր բանվորներ, իսկ 68%-ը՝ աշակերտներ, պահելով 1—5 և խիստ բացառիկ դեպքում՝ 5-ից ավելի մարդ: Վարպետները, ելնելով իրենց համեստ միջոցներից վարձում էին ոչ այնքան բանվորներ, որքան ցածր վարձագնով աշակերտներ: Տնտեսապես քայքայված արհեստավորները համալրում էին պրոլետարիատի շարքերը տեղում կամ հեռավոր վայրերում: Սակայն արհեստավորների զգալի մասը դեռ կարողանում էր դիմանալ կապիտալիստական խոշոր արտադրության մրցակցությանը և ֆարքիկագործարանային բանվորների շարքերն էր անցնում դանդաղ տեմպերով:

Մի քանի խոսք բանվորական ընտանիքի դերի մասին՝ որպես պրոլետարիատի շարքերը համալրող գործոնի:

Մինչև սովետական կարգերի հաստատումն այդ դերն Արևելյան Հայաստանում չափազանց աննշան էր: Դա ամենից առաջ բացատրվում էր կապիտալիստական արդյունաբերության և, մասնավորապես, ֆարքիկագործարանային արտադրության համեմատաբար ուշ զարգա-

<sup>29</sup> «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 2—3, էջ 200:

<sup>30</sup> Նույն տեղում:

ցումով: Ընտանեկան ավանդույթների պահպանումն ու սերնդից սերունդ փոխանցումը, որ լայն տարածում ուներ արհեստավորության շրջանում, բնորոշ էր Արևելյան Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատող բանվորական կադրերին:

Անդրկովկասի արդյունաբերության մեջ լայնորեն տարածված արտագնացության անմիջական արդյունքը եղավ այսպես կոչված «հողաբաժնով բանվորների» առաջացումը, որոնց Վ. Ի. Լենինը շատ դիպուկ անվանել է «բանվոր-գյուղացիներ»<sup>31</sup>: Այդ բանվորների կապը գյուղի հետ դեռևս ամուր էր: «Բանվոր-գյուղացիները» հիմնականում սեզոնային բանվորներ լինելով, մեծ հոսունություն ունեին: Օրինակ, Ալա-նային բանվորներ լինելով, մեծ հորժաններում աշխատում էին վերդու և Զանգեզուրի հանքերում ու գործարաններում աշխատում էին շրջակա գյուղերի բնակիչները, որոնք դեռ ամուր կապված էին գյուղի հետ. դրանց մեծամասնությունը ամառվա սամիսներին հեռանում էր և գնում գյուղատնտեսական աշխատանքների<sup>32</sup>:

«Հողաբաժնով բանվորների» մեջ կային և այնպիսիները (թեև քիչ թվով), որոնք ձեռնարկներն էին կապված գյուղին և այդ կապը տնտեսական բնույթ չունեին: Նրանք արդեն դարձել կամ էլ դառնում էին մշտական բանվորական կադրեր: Այսպես, նախահեղափոխական հետադրոտող Մ. Շոստակը նշում էր, որ Զանգեզուրի պղնձաձուլական գործարաններում բանվորների համար կացարանների խիստ կարիք էր զգացվում<sup>33</sup>: Պարզ է, որ խոսքը գնում էր այն բանվորների մասին, զգացվում էր մոտակա գյուղերից չէին և հիմնականում կտրված էին գյուղատնտեսությունից:

Նման բանվորական կադրերի թիվը համեմատաբար մեծ էր Ալա-վերդիում: Արխիվներում պահպանվել են 1917 թ. Ալավերդու այն բանվորների ցուցակները, որոնք ձեռնարկատերերի կողմից ապահովվել են բնակարաններով: Այդ ցուցակներում բերված են նաև 86 բանվորների պղնձահանքերում ու գործարաններում աշխատած տարիների թիվը: Ըստ այդ տվյալների այդ 86 հոգուց 31,4%-ն ուներ մինչև 5 տարվա, 30,2%-ը՝ 6—9, 32,6%-ը՝ 10—15 տարվա և 5,8%-ը՝ 15

<sup>31</sup> Վ. Ի. Լենին, Նժժ, հ. 4, էջ 301:

<sup>32</sup> А. М. Аргутинский-Долгоруков, В. П. Бочкарев, Р. И. Данилович, Район Тифлисской—Карско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях. Тифлис, 1897, с. 154, М. Шостак Современное состояние медных рудников и заводов в Зангезурском уезде Елизаветпольской губернии. Тифлис, 1904, с. 16.

<sup>33</sup> М. Шостак, Современное состояние ..., с. 16.

տարուց ավելի աշխատանքային ստաժ<sup>34</sup>: Ինչպես տեսնում ենք, Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը անմիջապես նախորդող տարիներին Ալավերդում արդեն կային զուտ բանվորական, մշտական պրոլետարական կադրեր:

Գյուղատնտեսությունից փաստորեն կտրված էին նաև Արևելյան Հայաստանի աղահանքերում աշխատող շատ բանվորներ: Օրինակ, Կողբի աղահանքերին մոտ գտնվող գյուղերի բնակիչների զգալի մասի համար, հողի խիստ պակասի պայմաններում, ապրուստի միակ միջոցն աղահանքերում աշխատելն էր<sup>35</sup>:

Մշտական բանվորական կադրերի թվաքանակն ավելի քիչ էր Արևելյան Հայաստանի վերամշակող արդյունաբերության մեջ: Գյուղատնտեսական աշխատանքների եռուն պահին այս բնագավառի ձեռնարկությունները զաղարեցնում կամ զգալիորեն կրճատում էին արտադրությունը, որովհետև բանվորների որոշակի մասն աշխատանքը թողնում, հեռանում էր:

«Հողաբաժնով բանվորների» թիվը մեծ էր հատկապես Արևելյան Հայաստանի երկաթուղային տրանսպորտում:

Այսպիսով, ետոեֆորմյան շրջանում Արևելյան Հայաստանում բարենպաստ պայմաններ էին ստեղծվել բանվորական ուժի՝ մասսայալուսն: մասշտաբով ապրանքի վերածման համար: Պրոլետարական կադրերի կազմավորման հիմնական աղբյուրը դարձավ գյուղացիական արտադնացությունը: Առաջացած «հողաբաժնով բանվորները» միջանկյալ տեղ էին գրավում գյուղի կիսապրոլետարական մասսաների և քաղաքի արդյունաբերական մշտական բանվորական կադրերի միջև: Պրոլետարիատի ձևավորման պրոցեսը հետզհետե որոշակի պարզություն էր մտցնում Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կազմում: Արդյունաբերական պրոլետարիատի կազմավորումը և մասնավորապես ազգային բանվորական կադրերի առաջացումը նշանակալից երևույթ էր հայ ժողովրդի կյանքում:

Արևելյան Հայաստանի պրոլետարիատը կազմավորվեց և զարգացավ որպես Անդրկովկասի պրոլետարիատի և ամբողջ Ռուսաստանի բանվոր դասակարգի օրգանական մասը:

Խոսելով Ռուսաստանում վարձու աշխատանքի գործադրման և տարածման աստիճանի մասին, Վ. Ի. Լենինը երկրի ամբողջ բանվորու-

թյանը տարակարգեց հինգ խմբի. 1. գյուղատնտեսական վարձու բանվորներ, 2. ֆաբրիկա-գործարանային, հանքագործ ու երկաթուղային բանվորներ, 3. շինարարական բանվորներ, 4. բանվորներ, որոնք ինդուստրիալ կենտրոններում զբաղված են անտառագործություն մեջ, հոդուստրիալ կենտրոններում, երկաթուղիների կառուցման, ապրանքներ դրային աշխատանքներում, երկաթուղիներում և ընդհանրապես ամեն տեբեռնելու և դատարկելու աշխատանքներում և ընդհանրապես ամեն տեսակի «սև» աշխատանքների մեջ, 5. բանվորներ, որոնք տանն են աշխատում կապիտալիստների համար, ինչպես և նրանք, ովքեր վարձով աշխատում են «ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությանը» շվեյքարված վերամշակող արդյունաբերության մեջ<sup>36</sup>:

Արևելյան Հայաստանի պրոլետարիատի առաջավոր, ամենահեղափոխական և կազմակերպված ջոկատը պղնձարդյունաբերության մեջ աշխատող բանվորներն էին, որոնք առանձնանում էին նաև իրենց թվաքանակով: Նրանց մեծ մասը աշխատում էր պղնձահանքերում: Այսպես, Ալավերդու հանքերում 1890 թ. աշխատում էր 48, 1897 թ.՝ 144, 1901 թ.՝ 520, 1909 թ.՝ 933, 1913 թ.՝ 1459, 1915 թ.՝ 983 բանվոր: Ղաթարի բոլոր հանքերում միասին վերցրած 1890 թ. աշխատում էր 330, 1897 թ.՝ 290, 1904 թ.՝ 650, իսկ 1910 թ.՝ 336 բանվոր: Բարաթումի հանքում 1905 թ. աշխատում էր 126, 1910 թ.՝ 260, 1913 թ.՝ 192 և 1915 թ.՝ 276 բանվոր<sup>37</sup>:

Արևելյան Հայաստանի բոլոր պղնձահանքերի թվաքանակի դինամիկան 1888—1916 թթ. տրված է Հավելված 1-ի աղյուսակ 1-ում<sup>38</sup>: Ինչպես երևում է այդ աղյուսակից, պղնձահանքերի բանվորների քանակն անընդհատ տատանվել է, սակայն առկա է աճի ընդհանուր միտումը: Այն լավ է նկատվում 1906 թ. սկսած, երբ բանվորների թիվն աճելով՝ 1913 թ. հասավ 4034-ի: Առաջին համաշխարհային պատերազ-

<sup>36</sup> Վ. Ի. Լենին, ԵՆԺ, հ. 3, էջ 739:

<sup>37</sup> Сборник статистических сведений о горнозаводской промышленности России: в 1890 году. СПб., 1892. отд. II, с. 135; в 1897 заводском году. СПб., 1899, с. 194, 195; в 1901 заводском году. СПб., 1904, с. 235—236; в 1904 году. СПб., 1907, с. 248, 250; в 1905 году. СПб., 1908, с. 234, 236; в 1909 году. СПб., 1912, с. 264, 266; в 1910 году. СПб., 1913, с. 223—224; *Վոսթ. ՍՍՀ 499Ա*, ֆ. 264, . 1, գ. 4991, ֆ. 37, 144, 145, գ. 5330, ֆ. 15, 16, 55:

<sup>38</sup> Այս և պղնձարդյունաբերությանը վերաբերող հայրող աղյուսակներում Բորչալուի, Ալեքսանդրապոլի և Ղաղախի գավառների հանքերն ու գործարանները մեր կողմից դասված են Հյուսիսային Հայաստանի հանքերի ու գործարանների, իսկ Զանգեզուրի և Նախիջևանի գավառների հանքերն ու գործարանները՝ Հարավային Հայաստանի հանքերի և գործարանների շարքին:

<sup>34</sup> ՉՍՍՀ 499Ա, ֆ. 195, ց. 1, գ. 682, քք. 7—16:

<sup>35</sup> Մ. Զախարյանց, Կողբի աղահանքերում, «Մուրճ», 1896, № 2, էջ 286:

մի հետևանքով բանվորների թվաքանակը կրճատվեց, որ նույնպես երևում է վերոհիշյալ աղյուսակից:

Իրենց քանակով, պղնձահանքերի բանվորներին զգալիորեն զիջում էին պղնձաձուլական գործարաններում աշխատող բանվորները:

Ալավերդու գործարաններում, օրինակ, 1888 թ. աշխատում էր ընդամենը 33 բանվոր: 1897 թ. այդ թիվը հասավ 96-ի, 1905 թ.՝ 882-ի, 1910 թ.՝ 1037-ի, 1913 թ. իջավ 938-ի, իսկ 1915 թ. պատերազմի հետևանքով էլ ավելի պակասեց և հասավ 830-ի<sup>39</sup>:

Զանգեզուրի ամենամեծ՝ «Այունիք» գործարանի բանվորների թվաքանակն ավելի քիչ էր, քան Ալավերդու գործարաններինը: Այսպես, 1897 թ. այստեղ աշխատում էր ընդամենը 60, 1905, թ.՝ 70, 1913 թ.՝ 127, 1916 թ. 173 բանվոր<sup>40</sup>:

Արևելյան Հայաստանի բոլոր պղնձաձուլական գործարանների բանվորների թվաքանակը բերված է Հավելված 1-ի աղյուսակ 2-ում: Ինչպես երևում է աղյուսակից, պղնձաձուլական գործարաններում աշխատող բանվորների թիվը ևս մշտապես փոփոխվում էր՝ իր ամենաբարձր կետին հասնելով 1910-ին (1304 բանվոր), հետո նորից պակասում է:

Արևելյան Հայաստանի ողջ պղնձարդյունաբերության բանվորների թվաքանակի դինամիկան 1869—1916 թթ. բերված Հավելված 1-ի աղյուսակ 3-ում: Այդ աղյուսակի տվյալներով, պղնձարդյունաբերության մեջ բանվորների թվաքանակի մեծ աճ մինչև 1887 թ. տեղի չի ունեցել (եթե չհաշվենք 1870-ին վերաբերող տվյալները): Բանվորների թվաքանակը շեշտակի մեծացել է XIX դ. 90-ական թթ. սկզբներին, սակայն դարավերջին այն խիստ նվազել է, որը պետք է բացատրել պղնձարդյունաբերության վերակառուցումով: 1901 թ. սկսված պղնձարդյունաբերության աշխուժացման շնորհիվ, բնականաբար, բանվորների քանակը, նախորդ տարիների համեմատ, նորից աճեց և ենթարկվելով մի շարք տատանումների, իր բարձրակետին հասավ 1913-ին:

<sup>39</sup> Сборник статистических сведений о горнозаводской промышленности России: в 1888 году. СПб., 1891, отд. II, с. 170—171; в 1897 заводском году. СПб., 1899, с. 196—197, в 1905 году. СПб., 1908, с. 240—241; в 1910 году. СПб., 1913, с. 228—229; *Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ*, ֆ. 264, ց. 1, գ. 4991, թ. 146, 147, գ. 5330, թ. 17, 18:

<sup>40</sup> Сборник статических сведений о горнозаводской промышленности: в 1897 году, с. 196—197; в 1905 году, с. 240—241, *Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ*, ֆ. 264, ց. 1, գ. 4991, թ. 35, 36, գ. 5328, թ. 207, 208:

վերահաս պատերազմի հետևանքով պղնձարդյունաբերության բանվորների թվաքանակը նորից սկսեց նվազել, սակայն այդ պրոցեսն ընթացավ ավելի դանդաղ, քան կարելի էր սպասել: Դրա պատճառներից մեկը մասնավորապես այն էր, որ նկատի առնելով արդյունաբերության մի շարք ճյուղերի, այդ թվում պղնձարդյունաբերության կարևոր ռազմական նշանակությունը, ցարական կառավարությունը 1914 թ. սեպտեմբերին օրենք հրապարակեց այդ ճյուղերի զինապարտ բանվորների տարեկետումների մասին: Ըստ այդ օրենքի, դրանցում աշխատող բանվորների 10—25% -ը՝ կախված ձեռնարկության նշանակությունից, ազատվում էր գործող բանակ կանչվելուց<sup>41</sup>: Պարզ է, որ այս օրենքից ձեռնարկատերերը չհապաղեցին օգտվել:

Իրենց թվաքանակով պղնձարդյունաբերության բանվորներին զգալիորեն զիջում էին Արևելյան Հայաստանի աղահանքերի բանվորները, որն ակնառու երևում է Հավելված 1-ի աղյուսակ 4-ի տվյալներից: Ընդ որում Երևանի նահանգի աղահանքերի բանվորների թիվը, բացառությամբ 1888-ից, միշտ ավել է եղել Կարսի մարզի աղահանքերից: Սա կայն ընդհանուր առմամբ, Արևելյան Հայաստանի աղահանքերի բանվորների թիվը անցած դարի 90-ական թվականներից սկսած, փոքր վերապահումներով, զնալով կրճատվել է: Իրան մեծապես նպաստել է վերապահումներով, զնալով կրճատվել է: Իրան մեծապես նպաստել է նաև առաջին համաշխարհային պատերազմը, որի սկսվելուց հետո Արևելյան Հայաստանի աղահանքերը հայտնվեցին ճակատային գոտում:

Բացի լեռնահանքային արդյունաբերության վերը նշված երկու ճյուղերից, Արևելյան Հայաստանում կային շատ ավելի պակաս նշանակություն ունեցող նաև այլ ճյուղեր: Այսպես, 1900 թ. Ալեքսանդրապոլի գավառի Տանձուտ կոչված վայրում բացված ծծմբաքարի հանքերում 1904 թ. զբաղված էր 30, 1913 թ.՝ 48, 1914 թ.՝ 31, իսկ 1916 թ.՝ 114 բանվոր<sup>42</sup>:

Որոշակի թվով բանվոր էին աշխատում արծաթ-կապարի, ցինկի, մկնդեղի, քարածխի փոքր հանքերում: 1887 թ. Ախթալայի արծաթ-

<sup>41</sup> Հ. Պետրոսյան, Անդրկովկասի բանվոր դասակարգը և բոլշևիկյան կազմակերպությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914—1917 փետրվար), Ե., 1977, էջ 93—94:

<sup>42</sup> Сборник статистических сведений о горнозаводской промышленности России в 1904 заводском году, с. 550, *Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ*, ֆ. 264, ց. 1, գ. 4991, թ. 39, 173, 177, գ. 5329, թ. 21, 69, 70, գ. 5328, թ. 206, 207:

կապարի երկու հանքերում աշխատում էր 27 բանվոր, 1910 թ.<sup>43</sup> Բորչալուի գավառի Մարցի ցինկի հանքավայրերում՝ 12 բանվոր, 1916 թ. Գլումուշ Մաղարայի նույնպիսի հանքավայրում՝ 8 բանվոր: 1916 թ. Շարուր-Գարալագյազի Գլումուշուղ վայրում 46 բանվոր աշխատում էր կապարի հանքում: 1913 թ. Կարսի մարզում արդյունահանվել է մկնդեղի հանքաքար և այդ աշխատանքներում զբաղված է եղել 6 մարդ: Դարձյալ Կարսի մարզում, 1914-ից սկսած շահագործվել է քարածխի մի հանքավայր, որտեղ նույն թվականին աշխատել է 28, իսկ հաջորդ՝ 1915 թ.<sup>44</sup> 10 բանվոր<sup>45</sup>:

Զգալի բանակությամբ բանվորական ուժ կար Արևելյան Հայաստանի քարհանքերում, հրակայուն կավի, կվարցի և կվարցիտի հանքավայրերում (վերջին երեքն անհրաժեշտ էին հոսկայուն աղյուս պատրաստելու համար):

Երևանի նահանգի, Կարսի մարզի և Բորչալուի գավառի քարհանքերում աշխատում էին՝ 1888 թ. 365, իսկ 1890 թ. 454 բանվոր<sup>46</sup>: 1891 թ. Երևանի նահանգի քարհանքերում աշխատում էին 1413 բանվոր<sup>47</sup>: Երևանի նահանգում և Կարսի մարզում աշխատում էին՝ 1892 թ.<sup>48</sup> 293, 1893 թ.<sup>49</sup> 1297, 1894 թ.<sup>50</sup> 1335, 1895 թ.<sup>51</sup> 369 քարհատ բանվորներ<sup>52</sup>: Ինչպես երևում է բերված տվյալներից, քարհատ բանվորների թիվը մշտապես տատանվել է: Դա պետք է բացատրել առաջին հերթին քարի նկատմամբ եղած պահանջարկի փոփոխմամբ: Հետագա տարիներին այդ պահանջարկը ըստ երևույթի իհաստ նվազել է, որովհետև աղբյուրներում բերված բանվորների թվաքանակին վերաբերող տվյալները հենց այդ են վկայում: Օրինակ, 1898 թ. Երևանի նահանգում հաշվառվել էին 16 քարհատ բանվոր, 1900 թ. Կարսի մարզում՝ 15,

<sup>43</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 58, գ. 827, թ. 173, 175, Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 4580, թ. 69, 70, գ. 4991, թ. 38, գ. 5328, թ. 206, 207, 208, Сборник статических сведений о горнозаводской промышленности России в 1887 году. СПб., 1890. отд. II, с. 139.

<sup>44</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 1658, թ. 63, 219, գ. 5746, թ. 50, 106, 303, 304, Сборник статических сведений о горнозаводской промышленности России в 1890 году. СПб., 1892. с. 276.

<sup>45</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 5858, թ. 206.

<sup>46</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 2144, թ. 33—34, գ. 2143, թ. 212, 218, Сборник статических сведений о горнозаводской промышленности России в 1892 году. СПб., 1895, с. 315—316, тоже в 1893 году. СПб., 1896, с. 349—350; тоже в 1894 году. СПб., 1896, с. 390—391; тоже в 1895 году. СПб., 1897, с. 397.

1904 թ. Բորչալուի գավառում նույնպես 15, 1907 թ. Ալեքսանդրապոլի և Բորչալուի գավառներում՝ 128 քարհատ բանվոր<sup>47</sup>: 1913 թ. Երևանի նահանգում և Կարսի մարզում կային 314 քարհատ բանվորներ, 1914 թ. Երևանի նահանգում, Կարսի մարզում, Բորչալուի և Ղազախի գավառներում՝ 195, իսկ 1915 թ. Երևանի նահանգում, Բորչալուի և Զանգեզուրի գավառներում՝ 45 քարհատ բանվոր<sup>48</sup>: Ինչպես տեսնում ենք, Արևելյան Հայաստանում քարհանքերի շահագործումը կրել է միանգամայն պատահական բնույթ:

Լեռնահանքային արդյունաբերության բանվորների շոկատն իր թվաքանակով առաջնակարգ տեղ էր զբաղում Արևելյան Հայաստանի պրոլետարիատի կազմում: 1888 թ. այն կազմում էր 1,3 հազ., 1890 թ.<sup>49</sup> 1,9 հազ., 1895 թ.<sup>50</sup> 1,8 հազ., 1900 թ.<sup>51</sup> 0,9 հազ., 1904 թ.<sup>52</sup> 3,1 հազ., 1910 թ.<sup>53</sup> 4,0 հազ., 1913 թ.<sup>54</sup> 5,7 հազ., 1915 թ.<sup>55</sup> 4,5 հազ.<sup>56</sup>:

Արևելյան Հայաստանի վերամշակող արդյունաբերության մեջ ևս մեծ թվով բանվորներ էին զբաղված: Անշուշտ, նրանց վերաբերյալ տրված լայնորդ բազմազան են ու իրարամերժ: Դրա պատճառները մի քանիսն լայնորդ բազմազան են ու իրարամերժ: Դրա պատճառները մի քանիսն են: Աղբյուրների մեծ մասում լրիվ չի տրվում վերամշակող արդյունաբերության այս կամ այն ճյուղին պատկանող ձեռնարկութունների քանակը: Այդ աղբյուրներում արհեստանոցային տիպի, մանր կապիտալիստական ձեռնարկութունները և նրանցում զբաղված բանվորները նախկին թվում են մանուֆակտուրային և ֆաբրիկագործարանային ձեռնարկութունների և բանվորների հետ միասին, առանց միմյանցից անջատելու: Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ Անդրկովկասի և մասնավորապես, Արևելյան Հայաստանի վերամշակող արդյունաբերությանը վերաբերող տվյալները (չհաշված նահանգապետների հաշվետվութունները) այս կամ այն ճյուղերի դինամիկայի մասին հատուկ պատկերացում չեն տալիս: Եվ վերջապես, ցարական Ռուսաստանում չկար վիճակագրական տեղեկութունների հավաքման միասնական սկզբունք:

<sup>47</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 2670, թ. 101, Сборник статических сведений о горнозаводской промышленности России в 1898 году. СПб., 1900, с. 417; в 1900 году. СПб., 1903, с. 492; в 1907 году. СПб., 1910, с. 617, 618.

<sup>48</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 4991, թ. 41, գ. 5329, թ. 25, 79, 80, գ. 5330, թ. 45, 46, 60:

<sup>49</sup> Հաշվարկված է սույն աշխատության 29, 30, 31 և 32 էջերի, ինչպես նաև հավելված № 1-ի 3-րդ և 4-րդ աղյուսակների տվյալների հիման վրա:

Դա վերաբերում է առանձնապես ոգելից խմիչքների արտադրությանը: Ինչպես արդեն նշվեց, գինու-կոնյակի և օղու արդյունաբերության համար Արևելյան Հայաստանն ուներ լավ հումքային բազա, որը մի շարք ձեռնարկությունների հնարավորություն ընձեռեց XIX դ. վերջին—XX դ. սկզբին՝ նոր տեխնոլոգիայի և մեքենաների ներդրման հետևանքով ընդլայնել արտադրությունը: Դրան հակառակ գնալով կրթականը (թեև դանդաղ) մանր ձեռնարկությունների թիվը, որն ընդհանուր առմամբ հասցրեց արդյունաբերության այս ճյուղում աշխատող բանվորների թվաքանակի կրճատմանը: Այդ են վկայում Հավելված 1-ի աղյուսակ 5-ի տվյալները:

Երևանի նահանգի արդյունաբերական ձեռնարկությունների մեջ թե իր տեխնիկական զինվածությամբ և թե բանվորների թվով աչքի էր ընկնում Շուստովի կոնյակի գործարանը: 1902 թ. այստեղ աշխատում էր 50, իսկ 1913 թ.՝ 120 բանվոր<sup>50</sup>: Գինու-կոնյակի և օղու մյուս ձեռնարկությունների բանվորների թիվը զգալիորեն զիջում էր Շուստովի գործարանում աշխատողների թվին և չէր անցնում 10—12-ից: Այսպես, նույն 1902 թ. Երևանի գավառում (առանց Երևանի) գործում էին նման 99 ձեռնարկություն 709 բանվորներով, որոնցից ամենամեծում՝ սպիրտի մաքրման «գործարանում», աշխատում էր 12 բանվոր<sup>51</sup>: 1913 թ. Երևանում բացի Շուստովի կոնյակի գործարանից կային գինու-կոնյակի և օղու թվով 17 ձեռնարկություն, որոնցում աշխատում էր ընդամենը 76 բանվոր<sup>52</sup>: Իրենց մասշտաբներով մեծ չէին նաև գարեջրի «գործարանները»: 1902 թ. Ալեքսանդրապոլի 2 այդպիսի «գործարաններում» աշխատում էին 14 և 19 բանվոր, իսկ 1913 թ. Երևանի 1 «գործարանում» 10, Կարսի 2 «գործարաններում»՝ 6-ական բանվոր<sup>53</sup>:

Արևելյան Հայաստանի վերամշակող արդյունաբերության մեկ այլ ճյուղում ևս XIX դ. վերջին—XX դ. սկզբին զգալի թվով բանվորներ էին աշխատում: Խոսքը Շուշիի և Նախիջևանի գավառներում կենտրոնացած մետաքսաթելի արտադրության մասին է: Այն խիստ կոնյուկտուրային էր, ամբողջովին կախված սպառման շուկայից: Այդ իսկ

<sup>50</sup> ՇՍՄ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2664, ք. 66—67, 69, Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 415, ց. 1, գ. 113, ք. 5:  
<sup>51</sup> ՇՍՄ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2664, ք. 14—29:  
<sup>52</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 415, ց. 1, գ. 113, ք. 5:  
<sup>53</sup> ՇՍՄ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2664, ք. 62—63, Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 415, ց. 1, գ. 113, ք. 5, գ. 132, ք. 5:

պատճառով նրան բնորոշ էր թե արագ զարգացումը և թե արագ անկումը: Ընդ որում օրինաչափությունից զուրկ այդ պրոցեսի հետևանքով խիստ փոփոխման էր ենթարկվում մետաքսաթելի ձեռնարկություններում զբաղված բանվորների թվաքանակը, որի մասին կարելի է դատել Հավելված 1-ի 6-րդ աղյուսակից:

Փոքրաթիվ բանվորներ ունեցող ձեռնարկությունների կողքին այստեղ կային նաև համեմատաբար մեծ գործարաններ, որոնցում աշխատում էին մի քանի տասնյակ բանվորներ (տե՛ս Հավելված 1-ի աղյուսակ 7-ը): Դրանցից մի քանիսն ունեին շոգու ուժով աշխատող մեքենաներ և իսկական կապիտալիստական գործարաններ էին: 1886 թ. Նախիջևանի գավառում այդպիսի մի գործարան կար 59 բանվորով, որը կազմում էր տեղի մետաքսաթելի ձեռնարկությունների բանվորության 23,6%-ը: 1902 թ. արդեն գործարանների թիվը 7-ն էր 257 բանվորներով (տեղի նույնանման ձեռնարկությունների բանվորության 31,8%)<sup>54</sup>:

Արևելյան Հայաստանի վերամշակող արդյունաբերության մյուս ճյուղերում ևս որոշակի թվով բանվորներ կային, որոնք մեծմասամբ մանր ձեռնարկությունների աշխատողներ էին: Օրինակ, 1892 թ. տրվմանը Երևանի նահանգում գործում էին վերամշակող արդյունաբերությանը պատկանող 2758 ձեռնարկություն 3969 բանվորներով (չհաշված ալկոհոլային խմիչքների և մետաքսաթելի արտադրության մեջ եղած ձեռնարկությունները և բանվորներին): Այդ ձեռնարկություններից 2060-ը (74,7%)՝ 2379 բանվորով (60%) ջրաղացներ էին: 1899 թ. այդպիսի 2956 ձեռնարկություններից և նրանցում զբաղված 6133 բանվորներից 2228 ձեռնարկությունը (75,4%)՝ 3064 բանվորով (50%) ջրաղացներ էին<sup>55</sup>:

Մի քանի խոսք Արևելյան Հայաստանի առաջնակարգ քաղաքների՝ Երևանի և Ալեքսանդրապոլի արդյունաբերական բանվորների թվաքանակի մասին: 1887 թ. տվյալներով այդ երկու քաղաքներում կային

<sup>54</sup> ՇՍՄ ԿՊՊԱ, ֆ. 125, ց. 1, գ. 23, ք. 10, ֆ. 94, ց. 1, գ. 2664, ք. 32—35 (այս աղբյուրներում բերված ամփոփիչ տվյալները տարբերվում են աղյուսակ 6-ում բերված նույնանման տվյալներից):  
<sup>55</sup> ՇՍՄ ԿՊՊԱ, ֆ. 101, ց. 1, գ. 134, ք. 25, 27, Исторический вестник. Тбилиси, 1945. № 1, с. 249, Таб. № 1.

համապատասխանաբար 100 և 59 այսպես կոչված «գործարաններ» որոնցում աշխատում էր 449 և 139 բանվոր: 1891 թ. տվյալներով Երևանում կային 142 «գործարան» 676 բանվորով, իսկ Ալեքսանդրապոլում 34 «գործարան» 131 բանվորով: 1894 թ. Երևանի 116 «գործարաններում» աշխատում էր 401, իսկ Ալեքսանդրապոլի 35 «գործարաններում»՝ 81 բանվոր: 1904 թ. Երևանի 85 ձեռնարկություններում աշխատում էր 457, իսկ Ալեքսանդրապոլի 19 ձեռնարկություններում 82 բանվոր: 1913 թ. Երևանի 67 ձեռնարկություններում աշխատում էր 450 բանվոր<sup>56</sup>: Այդ տվյալներից երևում է, որ թե Երևանի և թե Ալեքսանդրապոլի բանվորների քանակը սահմանափակ էր:

XIX դ. 90-ական թթ. Էրզրորդ կեսից Արևելյան Հայաստանում սկսեց ձևավորվել երկաթուղային բանվորների շրկատը, որոնց վ. Ի. Լենինը դասում է կապիտալիստական խոշոր ձեռնարկությունների բանվորների թվին<sup>57</sup>: Ծավալված երկաթուղային շինարարությանը զուգընթաց այդ շրկատը գնալով մեծացավ և առաջնակարգ տեղ գրավեց երկրի բանվորական մյուս շրկատների շարքում: Այդ են վկայում հավելված 1-ի աղյուսակ 8-ի տվյալները, որոնցից պարզ երևում է, որ երկաթուղայինների թվաքանակի դինամիկան Արևելյան Հայաստանում քնդհանուր առմամբ վերելք է ապրել և 1900-ի համեմատությամբ 1912 թ. աճել է ավելի քան 2,9 անգամ:

Երկաթուղայինների որոշ մասն աշխատում էր դեպոներում և արհեստանոցներում: Արևելյան Հայաստանում դեպո-արհեստանոցներ կային Ալեքսանդրապոլում, Նախիջևանում, Սանահինում, Երևանում, Կարսում: 1903 թ. Ալեքսանդրապոլի դեպոյում աշխատում էին մինչև 150<sup>58</sup>, իսկ 1907 թ.՝ 188 բանվորներ: 1907 թ. Սանահինի արհեստանոցում աշխատում էին 27, Կարսի՝ 7, Երևանի՝ 9 բանվորներ<sup>59</sup>: 1909 թ. Ալեքսանդրապոլի դեպոյում աշխատում էին 173, իսկ Նախիջևանի դեպո-արհեստանոցում՝ 31 բանվորներ<sup>60</sup>:

<sup>56</sup> Обзор Эриванской губернии за 1887, ՀՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 101, ց. 1, գ. 133, ք. 51, գ. 135, ք. 22—23, ՍՍՀՄ ԿԳՊԱ, ֆ. 1290, ց. 5, գ. 216, ք. 3, 7, Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 415, ց. 1, գ. 113, ք. 5:

<sup>57</sup> Վ. Ի. Լենին, ՆԺՏ, հ. 3, էջ 680:

<sup>58</sup> ՄԻԻ 2ՄԿԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 224, ք. 7:

<sup>59</sup> ՍՍՀՄ ԿԳՊԱ, ֆ. 273, ց. 12, գ. 527, ք. 7—10:

<sup>60</sup> Список фабрик из заводов Российской Империи. Под ред. Варзара СПб. 1912, с. 265.

Արևելյան Հայաստանում գգալի թվով սեզոնային բանվորներ (հիմնականում գյուղացի արտադնացիներ) էին աշխատում շինարարության և հատկապես երկաթուղային շինարարության մեջ:

Այսպես, 1896 թ. փետրվարի 27-ի դրությամբ Թիֆլիս—Կարս երկաթգծի շինարարությանը Փամբակի կիրճի հատվածում աշխատում էր մինչև 300 մարդ<sup>61</sup>: Երևանի նահանգապետի 1896 թ. հաշվետվության մեջ նշվում էր, որ Թիֆլիս—Կարս երկաթգծի շինարարությունում աշխատում էին մոտավորապես 1000 մարդ<sup>62</sup>: 1898 թ. սեպտեմբերի 25-ի տվյալներով նույն շինարարության 3-րդ տեղամասում աշխատում էին 700—800 մարդ, իսկ ԼՅԵ դրան ավելացնելու լինելից կապալառուների մոտ աշխատողներին, ապա բանվորների թիվն այստեղ հասնում էր 1000—1200-ի<sup>63</sup>: Շինարարության 4-րդ տեղամասում, համաձայն եղած տեղեկությունների, սպասվում էր, որ 1898 թ. նոյեմբերից պետք է աշխատեն 300—400 բանվոր, որոնց թիվը 1899 թ. գարնանը պետք է հասնեն 1000-ի<sup>64</sup>: Ալեքսանդրապոլ—Երևան երկաթգծի շինարարության վրա 1900 թ. դարնան աշխատում էին 200-ից մինչև 300 մարդ<sup>65</sup>:

1911 թ. ցարական կառավարությունը, ելնելով ռազմական նկատառումներից, ձեռնարկեց Կարս—Սարիղամիշ—Կարաուրգան երկաթուղային շինարարությունը: 1915 թ. մարտի վերջին—ապրիլի սկզբին նրա վրա աշխատելու համար էջմիածնի գավառից Կարսի մարզ բերվեց 2981 բանվոր<sup>66</sup>: Նույն թվականի աշնանն այս երկաթգծի շինարարության վրա աշխատելու համար Արդահան բերվեց ևս 171 բանվոր<sup>67</sup>: էջմիածնի գավառից եկած բանվորների մի ստվար խումբ էլ զբաղված էր ռազմաշինարարական աշխատանքներում: 1915 թ. մարտի 30-ից մինչև ապրիլի 11-ը Կարսի մարզում տարվող նման աշխատանքներին մասնակցելու համար այստեղ եկան 2984 վարձու բանվորներ<sup>68</sup>: Վարձու աշխատանքը լայնորեն կիրառվում էր նաև Արևելյան

<sup>61</sup> ՄՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 133, ց. 1, գ. 5691, ք. 54, Баликян О. С. Из истории формирования рабочего класса на строительстве дорог в Восточной Армении «Լրագր», 1975, № 3, էջ 89:

<sup>62</sup> Обзор Эриванской губернии за 1896. Эривань 1897, с. 19; Баликян О. С. указ. соч., с. 93.

<sup>63</sup> ՄՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 270, ց. 1, գ. 24, ք. 129, Баликян О. С., указ. соч., с. 95.

<sup>64</sup> ՄՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 271, ց. 1, գ. 17, ք. 749, Баликян О. С., указ. соч., с. 95.

<sup>65</sup> ՄՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 102, ց. 2, գ. 180, ք. 40, Баликян О. С., указ. соч. с. 99.

<sup>66</sup> ՄՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 102, ց. 1, գ. 1050, ք. 49:

<sup>67</sup> ՄՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 136, ց. 1, գ. 97, ք. 36:

<sup>68</sup> ՄՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 102, ց. 1, գ. 1050, ք. 53:





Այժմ անցնենք բանվորների սեռա-տարիքային և ազգային կազմին:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումն Անդրկովկասում և, մասնավորապես, Արևելյան Հայաստանում նպաստեց բնակչության լայն խավերի ներգրավմանը վարձու աշխատանքի ոլորտները: Ընդ որում, այդ պրոցեսն ընդգրկեց բնակչության սեռատարիքային բոլոր խմբերը, այդ թվում կանանց և անչափահասներին: Կ. Մարքսը նշում է, որ «...մեքենաները կապիտալի կողմից շահագործվող մարդկային նյութեղենը շատացնում են՝ կանանց ու մանուկների աշխատանքը յուրացնելով...»<sup>73</sup>:

Արդյունաբերության մեջ կապիտալիզմի զարգացման և մեքենաների սփռման ներդրման հետևանքով արտադրական պրոցեսների ընթացքը համեմատաբար հեշտացավ: Դա հասցրեց այն բանին, որ, Ֆ. Էնգելսի խոսքերով ասած, «Ֆիզիկական լարվածություն պահանջող աշխատանքն ավելի ու ավելի է փոխանցվում մեքենայի վրա և մեծահասակ տղամարդկանց աշխատանքներն այսպիսով, հանգում են հասարակ հսկմանը, որն ամբողջովին կարող են իրականացնել և սակավաուժ կինը և երեխան՝ ստանալով դրա համար երկու կամ երեք անգամ քիչ վարձ»<sup>74</sup>: Այսպիսով, ինչպես Վ. Ի. Լենինն է գրում, «Կապիտալիզմը հնարավորություն տվեց տղամարդու ավելի թանկ աշխատանքը փոխարինել կանանց ու երեխաների աշխատանքով»<sup>75</sup>:

Սակայն կանանց աշխատանքի կիրառումն Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում, ամբողջ Ռուսաստանի հետ համեմատած, սահմանափակ բնույթ էր կրում: Բանվոր տղամարդիկ իրենց բացարձակ թվով նկատելիորեն գերազանցում էին կին բանվորների թվին: Ո՞րն էր դրա պատճառը: Նախ այն, որ Անդրկովկասում, ինչպես նաև Արևելյան Հայաստանում, խոշոր կապիտալիստական արդյունաբերության զարգացման մակարդակը ցածր էր, որի պատճառով XIX դ. վերջին—XX դ. սկզբին այն դեռ չէր հասցրել լայնորեն օգտագործել կանանց աշխատանքը: Երկրորդ, երկրամասում դեռ պահպանվում էր աշխատանքի պահեստային մեծ բանակ: Այնուհետև, այստեղ առաջին հերթին զարգանում էին վարձու աշխատանքի կիրառման այնպիսի բնագավառներ (օրինակ՝ լեռնահանքային), որոնցում արտադրության առանձնահատկությունները պահանջում էին հատկապես տղամարդու աշխատանքի օգտագործում: Վերջապես, կնոջ աշխատանքի կիրառման հարցում որոշակի դեր էին խաղում ազգային ավանդույթները, որոնց պատճառով կանանց հասարակական ակտիվությունը ցածր էր:

Բայց, չնայած այդ ամենին, որոշ թվով կին բանվորներ էին աշխատում Արևելյան Հայաստանի արդյունաբերության՝ մասնավորապես սննդի և մետաքսաթելի արտադրության մեջ:

1897 թ. մարդահամարի տվյալներով, Երևանի նահանգում և Կարսի մարզում միասին վերցրած բանվորների ընդհանուր թվում (առանց օրամշակ և սեագործ բանվորների ու սպասավոր ծառաների) կանայք կազմում էին 1,8%-ը, մինչդեռ Անդրկովկասում՝ 2,7%-ը, իսկ ամբողջ Ռուսաստանում՝ 20,2%-ը<sup>76</sup>:

Ի տարբերություն կանանց աշխատանքի, երեխաների աշխատանքի տեսակարար կշիռն Արևելյան Հայաստանում ավելի բարձր էր, քան ամբողջությամբ վերցրած Անդրկովկասում և Ռուսաստանում: Այսպես, 1897 թ. մարդահամարի տվյալներով (առանց սեագործ և ժամանակավոր բանվորների, ծառաների, սպասավորների, ձկնորսների, անտառային և գյուղատնտեսական բանվորների) Երևանի նահանգի և Կարսի մարզի բանվորների ընդհանուր թվի 17,7%-ը կազմում էին մինչև 17 տարեկան երեխաները<sup>77</sup>: Դրանց 8,7%-ը մանկահաս էին (այդ թվում 3,3%-ը՝ 12 տարեկան և ավելի փոքր), իսկ 9,0%-ը՝ դեռահաս: Անդրկովկասում անչափահաս բանվորները կազմում էին 15,7%, որոնց 8,2%-ը մանկահաս էին (այդ թվում 3,8%-ը՝ 12 տարեկան և ավելի փոքր), իսկ 7,5%-ը՝ դեռահասներ:

Ամբողջ Ռուսաստանի մասշտաբով վերցրած երեխաները կազմում էին բանվորների ընդհանուր թվաքանակի 12,7%-ը: Ընդ որում ման-

<sup>76</sup> Численность и состав рабочих в России на основании данных первой всеобщей переписи населения Российской империи 1897 г., т. I. СПб., 1906, с. VIII—X, XVI, табл. I, с. 4—93, Приложение, с. 2—9, то же, т. 2, с. 80—85, 90—99, 107—113, 124—131, 134—139.

<sup>77</sup> Ցարական Ռուսաստանի վիճակագրությունն անչափահաս (մինչև 17 տարեկան) բանվորներին բաժանում էր երկու տարիքային խմբերի՝ փոքրահասակների կամ մանկահասների (մինչև 15 տարեկան երեխաները) և դեռահասների կամ պատանիների (15—17 տարեկան երեխաները):

<sup>73</sup> Կ. Մարքս. Կապիտալ, հ. 1, Ե., 1933, էջ 385.  
<sup>74</sup> Маркс К. и Энгельс Ф. Соц., 2-е изд. т. 2, с. 369.  
<sup>75</sup> Վ. Ի. Լենին, Նժժ, հ. 17, էջ 135.

կահասաները 5,2%-ն էին (այդ թվում 1,3%-ը՝ 12 տարեկան և ավելի փոքր), իսկ դեռահասաները՝ 7,5%<sup>78</sup>:

Ինչ վերաբերում է շափահաս բանվորների թվաքանակին, ապա պետք է ասել հետևյալը. 20—39 տարեկանները Երևանի նահանգում և Կարսի մարզում (միասին վերցրած) 51,7%-ն էին, Անդրկովկասում՝ 56,3%-ը, ամբողջ Ռուսաստանում՝ 53,8%-ը: Տարիքային մնացած խմբերի բանվորները (17—19 տարեկան և 40-ից բարձր տարիք ունեցողները) կազմում էին Երևանի նահանգի ու Կարսի մարզի (միասին վերցրած), Անդրկովկասի և ամբողջ Ռուսաստանի բանվորների ընդհանուր թվաքանակի համապատասխանաբար 30,6%-ը, 28,0%-ը և 33,5%-ը<sup>79</sup>:

Զգալի քանակությամբ փոքրահասակ և դեռահաս բանվորներ էին աշխատում Արևելյան Հայաստանի պղնձի արդյունաբերության մեջ: Առաջինները զբաղված էին օժանդակ աշխատանքներով, մասնավորապես, հանքաքարի տեսակավորմամբ, իսկ երկրորդները՝ ինչպես օժանդակ, այնպես էլ լեռնային աշխատանքներով<sup>80</sup>:

1904 թ. Բորչալուի գավառի պղնձի հանքերում ու գործարաններում աշխատում էին 305 փոքրահասակ և պատանի (բոլոր բանվորների 20,3%-ը), որոնցից 65-ը (4,3%) 12—14 տարեկան էին, իսկ 240-ը՝ 15—16 տարեկան (16,0%-ը)<sup>81</sup>:

1909 թ. Ալավերդու բանվորների 3,9%-ը փոքրահասակ էին, 2,8%-ը՝ դեռահաս<sup>82</sup>: Նույն թվականին Սիսիմադանում աշխատող բանվորների 18,8%-ը դեռահաս էին, Զանգեզուրի հանքերում ու «Սյունիք» գործարանում զբաղված բանվորների 3,8%-ը փոքրահասակ, 35,1%-ը՝ դեռահաս<sup>83</sup>: 1910 թ. Բորչալուի գավառի հանքերի ու գործարանների բանվորների 12,4%-ը փոքրահասակներ և դեռահասներ էին (3,1%-ը փոքրահասակներ և 9,3%-ը դեռահասներ)<sup>84</sup>:

<sup>78</sup> Численность и состав рабочих в России на основании данных первой всеобщей переписи населения Российской империи 1897 г., т. 1. СПб., 1906, с. VIII—X, XVI, табл. I, с. 4—93, Приложение, с. 2—9, то же, т. 2, с. 80—85, 90—99, 107—113, 124—131, 134—139.

<sup>79</sup> Նույն տեղում:

<sup>80</sup> ՉՍՁ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 196, ք. 3, 9, 13, 15, 17, 21, Վրաց. ՍՍՁ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 4580, ք. 64—67, գ. 5330, ք. 15—18, գ. 5328, ք. 22—23:

<sup>81</sup> ՍՍՁ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 58, գ. 328, ք. 188, 189:

<sup>82</sup> ՉՍՁ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 196, ք. 3:

<sup>83</sup> Վրաց. ՍՍՁ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 4602, ք. 4, 7:

<sup>84</sup> Վրաց. ՍՍՁ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 4580, ք. 64—67:

1914 թ. նույն գավառում հանքալեռնագործ բանվորների 7,8%-ը մանկահաս ու պատանի էին (առաջինները 1,0%, իսկ երկրորդները՝ 6,8%)<sup>85</sup>: 1914 թ. հուլիսի 1-ի տվյալներով Կավարս—Բաշքենդի հանքերում աշխատող բանվորների 25,8%-ը դեռահաս էին<sup>86</sup>:

1915 թ. Արևելյան Հայաստանի ԿԱՄԸ բոլոր հանքերում ու գործարաններում աշխատող բանվորների թվում 6,1%-ը 12-ից մինչև 17 տարեկան էին (0,9%-ը՝ մանկահաս, 5,2%-ը՝ դեռահաս), որը կազմում էր ամբողջ Կովկասի պղնձարդյունաբերության մեջ զբաղված նույն տարիքի բանվորների 70,2%-ը (մանկահասները և դեռահասները կազմում էին համապատասխան տարիքի բանվորների 56,8%-ը և 13,4%-ը)<sup>87</sup>:

Արևելյան Հայաստանի արդյունահանող արդյունաբերության մյուս ճյուղերում զբաղված էին միայն շափահաս բանվոր տղամարդիկ:

Մեծ թվով կանայք, մանկահաս և պատանի էին աշխատում Նախիջևանի և Շուշիի գավառների մետաքսաթելի արտադրությունում: Ընդ որում, եթե առաջինում իգական սեռի ներկայացուցիչները թվապես գերում էին արական սեռի ներկայացուցիչներին, ապա երկրորդում աշխատող ուժը համարյա թե ամբողջովին նրանցից էր կազմված: Այսպես, 1886 թ. տվյալներով Նախիջևանի մետաքսաթելի ձեռնարկություններում բանվորների 82,8%-ը տղամարդիկ էին (այդ թվում 28,4%-ը՝ 8—15 տարեկան), իսկ 17,2%-ը՝ կանայք (այդ թվում 5,6%-ը՝ 8—15 տարեկան)<sup>88</sup>:

1897 թ. ամբողջ Ղարաբաղի մետաքսաթելի գործարաններում բանվորների 3,3%-ը շափահաս տղամարդիկ էին, 7,7%-ը՝ շափահաս կանայք, 12,2%-ը և 20,8%-ը՝ դեռահաս տղաներ և աղջիկներ, վերջապես 7,3%-ը և 48,7%-ը՝ փոքրահասակ տղաներ ու աղջիկներ<sup>89</sup>:

1903 թ. Շուշիի գավառում կանայք կազմում էին բանվորների 86,7%-ը<sup>90</sup>: 1908 թ. Նախիջևանի գավառի մետաքսաթելի 7 ձեռնար-

<sup>85</sup> Նույն տեղում, գ. 5329, ք. 42, 44:

<sup>86</sup> ՍՍՁ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 74, գ. 795, ք. 5, 8:

<sup>87</sup> Վրաց. ՍՍՁ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 5328, ք. 22—23, ՍՍՁ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 58, գ. 814, ք. 3:

<sup>88</sup> ՉՍՁ ԿՊՊԱ, ֆ. 125, ց. 1, գ. 23, ք. 10:

<sup>89</sup> Перечень фабрик и заводов. СПб., 1897, с. 122—126; А. С. Сумбатзаде, Промышленность Азербайджана в XIX в. Баку, 1964, с. 459—460.

<sup>90</sup> Бакинские известия, 1903, 10(23) сентября, А. С. Сумбатзаде, указ. соч., с. 474.

կությունների 250 բանվորների 43,2%-ը և 12,0%-ը համապատասխանաբար շափահաս տղամարդիկ և կանայք էին, 41,6%-ը և 3,2%-ը մինչև 17 տարեկան տղաներ և աղջիկներ<sup>91</sup>:

Բերված տվյալներից երևում է, որ հատկապես մեծ էր մանկահաս աղջիկների քանակը, որոնք սկսած 6—8 տարեկանից աշխատում էին մանրաթելի գործարաններում<sup>92</sup>:

Արևելյան Հայաստանի վերամշակող արդյունաբերության մյուս ճյուղերում կանանց, դեռահասների ու փոքրահասակների թիվը համեմատաբար քիչ էր: Օրինակ ոգելից խմիչքների արտադրության մեջ միայն Զանգեզուրում էր, որ մինչև 17 տարեկան արական սեռի ներկայացուցիչները որոշ քանակությամբ էին կազմում<sup>93</sup>:

Աղյուսակ 5-ում բերված են ֆաբրիկագործարանային տեսչության հսկողության տակ գտնվող Երևանի նահանգի արդյունաբերական ձեռնարկությունների բանվորների սեռատարիքային կազմի մասին 1914—1916 թթ. տվյալները (տոկոսային հարաբերությամբ)<sup>94</sup>:

Աղյուսակ 5

Տարեթիվը	Բանվորների ընդհանուր թիվը	Փոքրահասակ		Դեռահասներ		Չափահասներ	
		արական սեռի	իգական սեռի	արական սեռի	իգական սեռի	արական սեռի	իգական սեռի
1914	1410	2,5	—	12,2	2,2	72,4	10,8
1915	1300	12,5	—	6,7	1,7	70,8	8,3
1916	1198	9,6	0,3	6,9	1,4	72,3	9,4

Ինչպես երևում է այդ տվյալներից, բանվորների թվաքանակն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ընդհանուր առմամբ

<sup>91</sup> Статистические сведения по обрабатывающей фабрично-заводской промышленности Российской империи за 1908 год. Часть II, с. 44.

<sup>92</sup> «Бакинские известия», 1903, 10(23) сентября; А. С. Сумбатзаде, указ. соч., с. 472, 475.

<sup>93</sup> Сборник статистических сведений по Закавказскому краю. Тифлис, 1902, с. 197.

<sup>94</sup> Материалы к учету рабочего состава и рабочего рынка, вып. I, Пг, 1916, с. 64—65, вып. II, Пг, 1917, с. 74—75. Հ. Ո. Պետրոսյան, Անդրկովկասի բանվոր դասակարգը և բոլշևիկյան կազմակերպությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914—1917 թթ. փետրվար), Ե. 1977, էջ 66:

առատանվել է և միայն իգական սեռի դեռահասների քանակն է անշեղորեն իջել:

Այդպիսով կին ու անչափահաս բանվորների բացարձակ թվաքանակը թեև չէր հասնում շափահաս բանվոր տղամարդկանց թվին, սակայն այն գնալով ավելանում էր: Նշելով, որ «մեքենաներ գործածելու... հետևանքը կանանց ու երեխաների աշխատանքի լայն կիրառումն է»<sup>95</sup>, Վ. Ի. Լենինը միևնույն ժամանակ ընդգծում է, որ «...կանանց ու անչափահասներին արտադրության մեջ ներգրավելն իր հիմքում առաջադիմական երևույթ է»<sup>96</sup> և այնուհետև ավելացնում, որ «խորտակելով բնակչության այդ խավերի նահապետական ինքնամոտիվածությունը, որոնք առաջ դուրս չէին գալիս տնային, ընտանեկան հարաբերությունների նեղ շրջանակից, նրանց անմիջաբար մասնակից դարձնելով հասարակական արտադրությանը՝ խոշոր մեքենայական ինդուստրիան զարկ է տալիս նրանց զարգացմանը, բարձրացնում է նրանց ինքնուրույնությունը, այսինքն՝ ստեղծում է կյանքի այնպիսի պայմաններ, որոնք անհամեմատ ավելի բարձր են մինչկապիտալիստական հարաբերությունների նահապետական անշարժությունից»<sup>97</sup>:

Լենինի այս մտքերն ամբողջովին վերաբերում են նաև Արևելյան Հայաստանին, որտեղ կապիտալիզմի զարգացման հետևանքով բնակչության լայն շերտերը նույնպես ավելի ու ավելի էին շփման մեջ մտնում ակտիվ սոցիալ-տնտեսական կյանքի հետ:

Անդրկովկասի, այդ թվում Արևելյան Հայաստանի, պրոլետարիատի իր կազմավորման հենց սկզբից բազմազգ էր: XIX դ. վերջում—XX դ. սկզբում երկրամասում ուս-ուսի տված աշխատում էին ավելի քան 40 ազգությունների ներկայացուցիչներ: Պարզ է, որ սոցիալական թառերաբեմում ազգային պրոլետարական կադրերի հանդես գալը շափահանց կարևոր նշանակություն ունեցավ աշխատավոր մասսաների ինտերնացիոնալ գաղափարախոսության կազմավորման և ընդհանրապես տեղի բանվորական շարժման հետագա զարգացման համար:

Ինչո՞վ էր բացատրվում Անդրկովկասի պրոլետարիատի բազմազգ լինելը: Նախ և առաջ երկրամասի բնակչության բազմազգության փաստով և երկարատև միգրացիոն պրոցեսներով, որոնք հատկապես ուժեղացան կապիտալիստական հարաբերությունների զարգացման ընթացքում:

<sup>95</sup> Վ. Ի. Լենին, ԵԺ, հ. 3, էջ 277:

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 694:

<sup>97</sup> Նույն տեղում, էջ 694—695:

Անդրկովկասում, որտեղ հնուց ի վեր հարևանությամբ բազմաթիվ ժողովուրդներ էին ապրում, առևտրաարդյունաբերական կենտրոններն ազատ բանվորական ձեռքերի մեծ մասի (անկախ նրանց ազգային պատկանելությունից) սպառողներն էին դառնում: Այդ նույն կենտրոնները դեպի իրենց էին ձգում նաև սահմանակից երկրների՝ Իրանի և Թուրքիայի աշխատավորների մի հոծ բազմություն, որոնք իրենց երկրում արդյունաբերության թույլ զարգացածության պայմաններում տեղում աշխատանք չէին գտնում:

Արևելյան Հայաստանում իր խայտաբղետ ազգային կազմով աչքի էր ընկնում պղնձարդյունաբերության բանվորությունը: XIX դարի երկրորդ կեսին Բորչալուի գավառի պղնձի հանքերում ու գործարաններում աշխատողների մեծ մասը հույներ էին<sup>98</sup>: 1897 թ. մարդահամարի տրվյալներով այստեղ նրանք կազմում էին 70,2%<sup>99</sup>:

Սակայն XX դարի սկզբին այլազգի և, առաջին հերթին հայ, աղբրբեջանցի, ռուս բանվորների թվաքանակի արագ աճի շնորհիվ հույների տեսակարար կշիռը կրճատվեց: Դրան ավելացնենք նաև այն, որ հույն լեռնագործ բանվորների մի մասը սկսեց աշխատելու դնալ դեպի Քուրթայիսի նահանգի մանգանի հանքերը<sup>100</sup>:

Բորչալուի գավառի հանքերի ու գործարանների բանվորների աշխատավարձի և դժբախտ պատահարներից տուժածների ցուցակների հիման վրա կարելի է եզրակացնել, որ 1899, 1904, 1910—1917 թթ. հիմնական բանվորական ուժը կազմել են հայերը, աղբրբեջանցիներն ու պարսիկները, այնուհետև հույները, ռուսները, վրացիները, օսերը, լեզգիները, ուզբեկները, այլ ազգությունների ներկայացուցիչներ<sup>101</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմին անմիջապես նախորդող տարիներին աղբրբեջանցիների և պարսիկների տեսակարար կշիռը գանազան պատճառներով ընկավ<sup>102</sup>: Իսկ 1914—1917 թթ. նրանց թիվն էլ ավելի կրճատվեց:

<sup>98</sup> С. И. Гулишамбаров, Историко-статистический обзор фабрик и заводов Тифлисской губернии..., с. 176.

<sup>99</sup> Первая всеобщая перепись населения Российской империи, 1897, т. LXIX, Тифлисская губерния. СПб., 1905, табл. XXII, с. 202—205.

<sup>100</sup> Статистика марганцевого дела (за 1901 г.) Кутанси, 1902, с. 38.

<sup>101</sup> ЗУУЗ ԿԳՊԱ, ֆ. 195, ց. 3, 42, ք. 1—61, ֆ. 195, ց. 1, գ. 96, ք. 2—101, գ. 116, ք. 2—290, գ. 235, ք. 2—252, գ. 290, ք. 247—254:

<sup>102</sup> Վրաց. ՍՄԶ ԿԳՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 4089, ք. 175:

Բացի հանքայինագործ բանվորներից, Ալավերդում, Շամլուղում, Շահալի-էլիջարում գործարանները վառելիքով ապահովելու համար (հատկապես մինչև XIX դ. վերջը) անտառահատման աշխատանքներում զբաղված էր շրջակա հայկական գյուղերի բնակչությունը:

1897 թ. մարդահամարի տվյալներով Զանգեզուրի պղնձի հանքերում և գործարաններում աշխատում էին 590 մարդ, որոնց 69,3%-ն աղբրբեջանցիներ էին (անդրկովկասյան և պարսկահայտակ), 26,1%-ը՝ հայեր, 4,6%-ը՝ հույներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ<sup>103</sup>:

Այլ տվյալներով XX դարի սկզբին Զանգեզուրի պղնձարդյունաբերության մեջ բանվորների հիմնական մասը տեղացի հայերն ու աղբրբեջանցիներն էին, ապա պարսկահայտակ աղբրբեջանցիները, պարսիկները, թուրքահայտակ հույները և այլն<sup>104</sup>: 1916 թ. ցարական կառավարությունը հարկադիր աշխատանք կատարելու համար այստեղ փոխադրեց մեծ քանակությամբ ուզբեկներ<sup>105</sup>:

XIX դ. վերջում—XX դ. սկզբում Կողբի աղահանքերում բացառապես հայ բանվորներ էին աշխատում: Նրանք հիմնականում նույն գյուղի բնակիչներ էին<sup>106</sup>: Նախիջևանում և Սուստինում աշխատում էին շրջակա աղբրբեջանական գյուղերի (Սուստի, Զահրի, Պախս և այլն) բնակիչները<sup>107</sup>: Կաղզվանի աղահանքերի բանվորները հիմնականում տեղացի և Արևմտյան Հայաստանից եկած հայեր էին: Օլթիում աղահատները ևս հայեր էին (տեղացի և Կողբից եկած), իսկ սևագործ բանվորները՝ թուրքեր<sup>108</sup>:

Երկու ազգությունների ներկայացուցիչներից՝ հայերից ու աղբրբեջանցիներից էր կազմված Արևելյան Հայաստանի մետաքսաթելի արտադրության ձեռնարկությունների բանվորությունը: Նախիջևանի գավառում նրանք հավասար թիվ էին կազմում: Մինչդեռ Շուշիի գավառում աշխատողների գերակշռող մասը հայեր էին: Այսպես, 1897 թ. մարդահամարի տվյալներով այստեղ բանվորների 76,5%-ը հայեր էին, 23,1

<sup>103</sup> Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г. Елисаветпольская губерния, т. LXIII, табл. XXII, с. 142—143.

<sup>104</sup> Վրաց. ՍՄԶ ԿԳՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 3780, ք. 96, գ. 3901, ք. 76:

Заварян С. Экономические условия Карабага и голод 1906—1907 гг., с. 46.

<sup>105</sup> Հին բուլղարիկների հիշողություններ, գիրք երկրորդ, Ե., 1961, էջ 598:

<sup>106</sup> ЗУУЗ ԿԳՊԱ, ֆ. 272, ց. 1, գ. 6, ք. 1—18, Վրաց. ՍՄԶ ԿԳՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 3901, ք. 79:

<sup>107</sup> Վրաց. ՍՄԶ ԿԳՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 3901, ք. 79, գ. 2912, ք. 85:

<sup>108</sup> նույն տեղում, ինչպես նաև ՍՄԶ ԿԳՊԱ, ֆ. 37, ց. 74, գ. 194, ք. 3:



1897 թ. հունիսի 2-ին ցարական կառավարության կողմից ընդունվեցին «Ֆաբրիկա-գործարանային ձեռնարկություններում աշխատածամանակի բաշխման և տեղորոթյան մասին կանոններ», որոնցով բանվորական օրվա աշխատածամանակը սահմանափակվեց 11,5 ժամով, իսկ տոների նախօրյակին և շաբաթ օրերը՝ 10 ժամով: Կանոններում ընդգծվում էր, որ անընդհատ արտադրություններում երկու օրվա ընթացքում բանվորները չպետք է աշխատեն 24 ժամից, իսկ հերթափոխների բեկման դեպքում՝ 30 ժամից ավելի<sup>117</sup>: «Ֆաբրիկային նոր օրենքի նշանակությունն այն է, — նշում է Վ. Ի. Լենինը, — որ նա... կառավարության հարկադրական զիջումն է, որ այդ օրենքը ուստիականական կառավարությունից նվաճել են միավորված ու գիտակից բանվորները: Այս օրենքի հրատարակումը ցույց է տալիս բանվորական շարժման հաջողությունը Ռուսաստանում, ցույց է տալիս, թե ինչպիսի հսկայական ուժ է պարունակում իր մեջ բանվորական մասսաների գիտակից ու համառ պահանջը<sup>118</sup>: Սակայն «կանոնները» իրականում լրջորեն չէին կարող սահմանափակել աշխատածամանակը: Չէին կարող, որովհետև նրանցում Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, «ոչ մի պատիժ չի սահմանված այդ օրենքը չկատարելու համար»<sup>119</sup>:

Այդ իսկ պատճառով աշխատածամանակի տեղորոթյունը թե ամբողջ Ռուսաստանում և թե, մասնավորապես Արևելյան Հայաստանում շատ դեպքերում փաստորեն ավելին էր, քան սահմանված էր վերոհիշյալ «կանոններով»:

1888 թ. տվյալներով Ալավերդում գոյություն ուներ 10-ժամյա աշխատանքային օր<sup>120</sup>: Նույն դարի 90-ական թթ. Բորչալուի և Զանգեզուրի պղնձարդյունաբերական շրջաններում աշխատանքային օրը հավասար էր 12 ժամի<sup>121</sup>: 1908 թ. տվյալներով Ալավերդում կեսարբային և արտածամյա աշխատածամանակը միասին վերցրած հասնում

էր մինչև 18 ժամի<sup>122</sup>: 1913—1914 թթ. Բորչալուի գավառի հանքերում և գործարաններում դեռահասաների և մանկահասակների համար սահմանված էր 8-ժամյա, իսկ մեծահասակների համար 10-ժամյա (Ախթալայի հանքում 9-ժամյա) աշխատանքային օր: Բանվորների մի մասը (կաթսայագործները, էլեկտրոնիզի բաժնի և Պիբիտիկ-Մանես կարգի բանվորները) աշխատում էր 10,5 ժամից մինչև 12 ժամ<sup>123</sup>: Ալավերդում, Շամլուղում, Ախթալայում լայնորեն կիրառվում էր արտածամյա աշխատանքը և դա հատկապես 1914—1916 թթ.: Այն սովորաբար տևում էր 12, երբեմն էլ ավելի ժամ: Ընդ որում արտածամյա աշխատում էին ոչ միայն մեծահասակ, այլև դեռահաս բանվորներ<sup>124</sup>: Ավելի պակաս էր կեսարբային հանքում այն հավասար էր ընդամենով 1914—1916 թ. Բեյլուր-Չամիի հանքում այն հավասար էր ընդամենը 8 ժամի<sup>125</sup>, թեև պետք է կարծել, որ Զանգեզուրի պղնձարդյունաբերական շրջանում արտածամյա աշխատանքը ևս կիրառություններ:

Անհրաժեշտ է նշել, որ Ալավերդի—Շամլուղում գոյություն ուներ նաև գիշերային աշխատանք: Այսպես, օրինակ, 1914 թ. ապրիլի 9-ի տվյալներով Շամլուղի հանքի բանվորների 35%-ը, Մանեսի բանվորների 35,5%-ը, կապալառուների մոտ աշխատող բանվորների 37%-ը աշխատում էին գիշերային հերթափոխում<sup>126</sup>:

Իսկ ինչքան էր մեկ ամսվա աշխատանքային օրերի քանակը Արևելյան Հայաստանի պղնձի արդյունաբերության մեջ: 1914 թ. հունիս-վելյան Հայաստանի պղնձի արդյունաբերության հանքերի և գործարանների հուլիս ամիսների տվյալներով Ալավերդում հանքերի և գործարանների բանվորներն աշխատել են 30 օր, Բեյլուր-Չամիի հանքի բանվորները՝ 24, իսկ Կավարտ-Բաշքենդի հանքի բանվորները՝ 25 օր: 1916 թ. հունի-

<sup>117</sup> Э. Э. Крузе, Положение рабочего класса России в 1900—1914 гг.; Л., 1976, с. 246; Г. В. Балицкий, Фабричное законодательство в России. М., 1906, с. 80—81.

<sup>118</sup> Վ. Ի. Լենին, ծվժ, հ. 2, էջ 376:

<sup>119</sup> Նույն տեղում, էջ 369:

<sup>120</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 415, ց. 1, գ. 32, ք. 62—63:

<sup>121</sup> ՄՄԻ ՇՄԿԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 340, ք. 6, Մ. Ա. Աձուց, Экономическое раз-

витие Во то-ной А. М. Н. с. 57

<sup>122</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 153, ց. 1, գ. 1107, ք. 39, Արդյունաբերության վիճակը և բանվոր դասակարգի ձևավորումը Արևելյան Հայաստանում (1803—1920): Փաստաթղթերի ժողովածու (խմբագրությամբ Ա. Զ. Հարությունյանի, Ա. Կ. Գրիգորյանի) — Բանբեր Հայաստանի արխիվների, 1984, հ. 1, էջ 141:

<sup>123</sup> ՍՍՀՄ ԿԳՊԱ, ֆ. 37, ց. 67, գ. 630, ք. 1—2, 4—5, ՉՍՍՀ, ԿԳՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 358, ք. 1—2, 3—4, գ. 878, ք. 1—2:

<sup>124</sup> ՍՍՀՄ ԿԳՊԱ, ֆ. 37, ց. 67, գ. 630, ք. 1, 4—5, 12, 15—16, 52—53, 55—56, 58—59, 79—80, 88—89:

<sup>125</sup> ՍՍՀՄ ԿԳՊԱ, ֆ. 37, ց. 67, գ. 689, ք. 4—5, 8—9, 12—13, 15—16:

<sup>126</sup> ՉՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 288, ք. 96, 98—99, 100:

սին բանվորները Բեյուր-Չամիի հանքում աշխատել են դարձյալ 24 օր, իսկ Կավարտ-Բաշքենդի հանքերում՝ 26 օր<sup>127</sup>:

Եթե Ալավերդում 30 օր տևած աշխատանքային ամիսը բացառությամբ համարենք, ապա դարձյալ պետք է ընդգծենք այն փաստը, որ այստեղ ձեռնարկատերերը անհրաժեշտություն դեպքում բանվորներին կարող էին զրկել հանգստյան օրերից, մի բան, որ նույնիսկ գոյություն ունեցող խիստ թերի ֆաբրիկագործարանային օրենսդրության խախտում էր հանդիսանում:

Երկար էր աշխատաժամանակը աղահանքերում: XIX դարի 90-ական թթ. Կողբում աշխատանքները սկսվում էին արևածագից առաջ և ավարտվում մութն ընկնելուց հետո, հաճախ շարունակվում նաև գիշերը<sup>128</sup>: Նշված ժամանակաշրջանում ամսվա աշխատանքային օրերի քանակը Կողբի աղահանքերում հասնում էր 25-ի<sup>129</sup>:

Խիստ տատանվող էր աշխատօրը Շուշիի և Նախիջևանի գավառների մետաքսաթելի արդյունաբերության ձեռնարկություններում: Օրինակ, XIX դարի 80-ական թթ. Նախիջևանի գավառում մանկահաս բանվորների մաքուր աշխատաժամանակը կազմում էր 6—10 ժամ<sup>130</sup>: 90-ական թթ. այս գավառի մետաքսաթելի արդյունաբերության բանվորների մաքուր աշխատաժամանակը հավասար էր 8 ժամի<sup>131</sup>: Շուշիի գավառի նույնանման ձեռնարկություններում աշխատանքային օրը ձմռանը հավասար էր 8—10 ժամի, իսկ ամռանը հասնում էր մինչև 12—15 և նույնիսկ 16 ժամի<sup>132</sup>, եվ դա այն դեպքում, երբ աշխատուժի մեծ մասը կանաչք և մանկահաս աղջիկներ էին:

Դրությունն աննշան չափով փոխվեց XX դ. սկզբին: Այս ժամանակաշրջանում Շուշիի գավառի մետաքսաթելի արդյունաբերության բան-

<sup>127</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 67, գ. 630, թ. 1, 4—5, գ. 689, թ. 4, 15—16, ֆ. 37, ց. 74, գ. 795, թ. 2, 15:

<sup>128</sup> Մ. Ջախրյանց, Կողբի աղահանքերում, «Մուրճ», 1896, № 2, էջ 286—287:

<sup>129</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 5746, թ. 17:

<sup>130</sup> ՆՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 125, ց. 1, գ. 23, թ. 10:

<sup>131</sup> Свод данных о фабрично-заводской промышленности России в 1892 году. СПб., 1894, с. 174—175.

<sup>132</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 20, ց. 2, գ. 327, թ. 2, 3, 4, 5, 7, Н. Шавров Описание кавказского шелководства. Тифлис, 1891, с. 107; С. И. Гулишамбаров. Обзор фабрик и заводов Закавказского края. Тифлис, 1894, с. 324; В. П. Литвинов-Фалинский. Шелковая промышленность в России. СПб., 1902, с. 44; А. С. Сумбатзаде Социально-экономические предпосылки победы Советской власти в Азербайджане, с. 181.

վորներն աշխատում էին օրական 10—14 ժամ (2 կեսօրյա ընդմիջումներով)<sup>133</sup>: Իհարկե, ձմռանն աշխատօրն ավելի քիչ էր, քան ամռանը: Միայն Շուշիի երկու ձեռնարկություններում էր, որ անշափահաս բանվորների աշխատօրը մեծահասակների աշխատօրից պակաս էր (9 ժամ): Մնացած ձեռնարկություններում անշափահասներին զիջումներ չէին արվում<sup>134</sup>:

Արևելյան Հայաստանի վերամշակող արդյունաբերության մի շարք այլ ճյուղերում աշխատաժամանակը՝ համեմատած մետաքսաթելի արտադրության բանվորների աշխատաժամանակի հետ, ավելի կարճատև էր: Այսպես, Երևանի նահանգի կենդանական նյութերի վերամշակման ձեռնարկություններում XIX դ. 90-ական թթ. առաջին կեսին բանվորներն աշխատում էին 10—12 ժամ<sup>135</sup>: Նահանգի աղյուսի պատրաստման ձեռնարկություններում XIX դ. վերջին և XX դ. սկզբին մաքուր աշխատօրը հավասար էր 9—10 ժամի<sup>136</sup>:

Նոր Բայազետի գավառի մանր արհեստանոցային տիպի ձեռնարկություններում բանվորների աշխատօրը ամռանը հավասար էր 9 ժամի, իսկ ձմռանը՝ 6 ժամի:

Իսկ ինչպիսի՞ն էր տարեկան աշխատանքային շրջանն Արևելյան Հայաստանի արդյունահանող և վերամշակող արդյունաբերության մեջ: 1889 թ. Շամլուղի հանքն աշխատել է 150 օր, իսկ 1891 թ. նույն հանքը և գործարանը համապատասխանաբար 190 և 110 օր: Նույն տարիներին Ալավերդու հանքերն ու գործարանը, Ախթալայի հանքն աշխատել են 300 օր<sup>137</sup>:

1890—1891 թթ. Չանգեզուրի և Սիսիմադաի պղնձի հանքերում տարեկան աշխատաժամանակը տևել է 9 ամիս<sup>138</sup>: 1892 թ. Ալավերդու հանքում աշխատել են 212 օր, իսկ գործարանում՝ 240 օր: Նույն թվականին Շամլուղի հանքն աշխատել է ընդամենը 29 օր<sup>139</sup>: 1893 թ. Ալավերդու

<sup>133</sup> «Бакинские известия», 1903, 10(23) сентября.

<sup>134</sup> Малюженко Д. М. Санитарно-экономическое состояние шелкомотальных заводов в Елисаветпольской губернии.—Вестник общественной гигиены, судебной и практической медицины, 1905, № 1, с. 59.

<sup>135</sup> Свод данных... в 1892 году, с. 174—175.

<sup>136</sup> Ц. П. Агаян, К вопросу формирования рабочего класса в Закавказье. «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 3, էջ 82—83:

<sup>137</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 1908, թ. 223, 226—227, գ. 5858, թ. 108, 113:

<sup>138</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 5746, թ. 13, գ. 5858, թ. 6, 7, 8, 9:

<sup>139</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 2078, թ. 12, 13, 15, 16:



վերդու հանքն աշխատել է 280 օր, Շամլուղի հանքը՝ 360 օր, իսկ Ալավերդու գործարանը 240 օր<sup>140</sup>: Ինչպես տեսնում ենք, պղնձի արդյունաբերության մեջ տարեկան աշխատածամանակը XIX դ. 80—90-ական թթ. հաճախ տատանվել է, թեև որոշ հանքերում ու գործարաններում այն հաստատուն է եղել:

Արևելյան Հայաստանի պղնձի արդյունաբերության մեջ տարեկան աշխատածամանակի նմանօրինակ տատանումները պահպանվեցին նաև XX դարի սկզբին: Այսպես, 1909 թ. աշխատանքային տարին Ախթալայում և Ալավերդում տևել է 260 օր<sup>141</sup>, 1911 թ. Շահալիում՝ մինչև 360 օր (ծամանակավոր բանվորներն այստեղ աշխատել են 145 և 275 օր, օժանդակ բանվորները՝ 300 օր, հանքագործները՝ 355 օր, հանքաքարը տեսակավորողներն ու հարստացնողները՝ այդ թվում նաև անչափահասները՝ 325 օր, գործարանի բանվորները՝ 360 օր, վարպետները՝ 358 օր)<sup>142</sup>:

1912 թ. տվյալներով Ալավերդում և Ախթալայում տարեկան աշխատածամանակը կազմել է 260—300 օր, մինչդեռ Մանես և Պիրիտիկ գործարանների մեխանիկական և շինարարական բաժիններում՝ 360 օր<sup>143</sup>: 1913 թ. Բորչալուի գավառի պղնձի հանքերում աշխատանքային տարին 300 օր էր<sup>144</sup>: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նշված հանքերի և գործարանների տարեկան աշխատածամանակը՝ նախորդ տարիների համեմատ կրճատվեց: 1914 և 1915 թթ. այն կազմեց 250 օր<sup>145</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ հատկապես XX դարի սկզբին, վերոհիշյալ հանքերում ու գործարաններում, և առաջին հերթին Ալավերդում, բանվորները հաճախ աշխատում էին նաև տոն օրերին<sup>146</sup>:

Բայց մյուս կողմից պետք է նշել, որ Զանգեզուրի պղնձի հանքերում ու գործարաններում գյուղատնտեսական աշխատանքների լարված

<sup>140</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 2143, ք. 105, 106, 107, 216—218—219.

<sup>141</sup> ՄՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 196, ք. 1, 3:

<sup>142</sup> Նույն տեղում, ք. 11:

<sup>143</sup> Նույն տեղում, ք. 15, 17, 19, 21, գ. 288, ք. 132, 134:

<sup>144</sup> Նույն տեղում, գ. 196, ք. 23, գ. 858, ք. 1, 2, 3, 4, գ. 878, ք. 1:

<sup>145</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 5329, ք. 42—43, 44, 45, գ. 5330, ք. 15—18:

<sup>146</sup> ՄՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 464, ք. 7—16:

ըրջանում՝ հունիսի սկզբներից մինչև սեպտեմբերի կեսերը, աշխատանքները, որպես կանոն, ժամանակավորապես դադարեցվում էին<sup>147</sup>:

Գյուղատնտեսական աշխատանքների եռուն պահին թողնում և հեռանում էր նաև Արևելյան Հայաստանի աղահանքերի բանվորության մի զգալի մասը<sup>148</sup>: Այդ իսկ պատճառով աղահանքերում ևս աշխատանքային տարին խիստ փոփոխական էր: XIX դարի 80-ական թթ. թուրք աղահանքերում այն տևել է 120-ից մինչև 270 օր (120, 143, 150, 180, 250, 270 օր՝ նայած հանքին ու տարվան)<sup>149</sup>:

1890 թ. Արևելյան Հայաստանի աղահանքերից յուրաքանչյուրը միջին հաշվով աշխատել է 6 ամիս<sup>150</sup>: Հարկ է նշել, սակայն, որ աղահանքերի կազմը աշխատանքային տարվա ընթացքում մի քանի անգամ փոփոխվում էր: Այսպես, 80-ական թթ. վերջին Օլթիի աղահանքի բանվորներն աշխատում էին առավելագույնը երկու ամիս: Նրանք բոլորն էլ հողագործներ կամ անասնապահներ էին և աղահանքում աշխատելը նրանց կողմնակի զբաղմունքն էր<sup>151</sup>:

Աշխատանքային տարին զգալիորեն տատանվում էր Արևելյան Հայաստանի վերամշակող արդյունաբերության մեջ: Գրա հիմնական պատճառն այն էր, որ այստեղ ձեռնարկությունների մեծ մասը սահմանափակ քանակությամբ գյուղատնտեսական հումք վերամշակող, սեզոնային «գործարաններ» էին: Օրինակ, 1897 թ. Շուշիի գավառի մետաքսաթելի գործարաններն աշխատել են 125 օրից մինչև 290 օր, իսկ նախիջևանի գավառի գործարանները՝ 100—140 օր<sup>152</sup>: 1901—1902 թթ. նախիջևանի գավառի գործարանների աշխատանքային տարին տևել է 45-ից մինչև 180 օր<sup>153</sup>: 1901 թ. 257 օր է աշխատել Շուստովի կոնյակի գործարանը, 284 օր՝ Գրիգորյանցին պատկանող Երևանի տպագրատունը<sup>154</sup>:

<sup>147</sup> ՍՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 58, գ. 316, ք. 113, М. Шостак Современное состояние медных рудников и заводов... с. 16.

<sup>148</sup> ՄՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 272, ց. 1, գ. 154, ք. 7:

<sup>149</sup> ՍՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 70, գ. 636, ք. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, ֆ. 37, ց. 74, գ. 194, ք. 1, Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 1658, ք. 24, 25:

<sup>150</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 5746, ք. 17:

<sup>151</sup> ՍՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 74, գ. 194, ք. 3:

<sup>152</sup> Перечень фабрик и заводов. СПб., 1897, с. 122—126.

<sup>153</sup> ՍՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 22, ց. 2, գ. 2928, ք. 23, 27, 31, 39, 47, 51, 55, 59, 63:

<sup>154</sup> Նույն տեղում, ք. 11, 71:

Չափազանց կարճ աշխատանքային տարի ունեին բամբակազտիչ և բամբակամամլիչ ձեռնարկությունները: Երևանի նահանգում 1901 թ. դրանցից մեկը գործել է ընդամենը 19 օր, մյուսը՝ 90 օր<sup>155</sup>:

Արևելյան Հայաստանում աշխատանքային օրվա տևողությունը արտանմանում էին պղնձաքարի արդյունահանման և մշակման, աղի արդյունահանման, մետաքսաթելի արտադրության ձեռնարկությունները: Մյուս բնագավառներում բանվորական օրվա տևողությունը համեմատաբար կարճ էր: Աշխատանքային տարին նույնպես ավելի տևական էր հիմնականում պղնձարդյունաբերության մեջ, աղի հանքերում և մետաքսաթելի մշակման ձեռնարկություններում:

Անդրադառնալով բանվորների աշխատավարձին, պետք է նշել, որ այն անմիջականորեն որոշում է բանվորի կենսամակարդակը: Աշխատավարձը համարվում է այն ամենակարևոր տարրերից մեկը, առանց որի հնարավոր չէ ներկայացնել պրոլետարիատի սոցիալ-տնտեսական կյանքի ողջ պատկերը:

Արևելյան Հայաստանում աշխատավարձի ամենատարածված ձևը օրավարձն էր: Դրա հետ մեկտեղ կիրառվում էր նաև ամսավճարը և գործարքային աշխատավարձը: Շատ բանվորներ ստանում էին խառը աշխատավարձ:

Գյուղատնտեսական աշխատանքների եռուն ամիսներին աշխատավարձի չափը, որպես կանոն, ավելի բարձր էր: Այդ աշխատանքների ավարտից հետո բանվորների մի շարք կատեգորիաների համար (օրավարձու, սեպորթ և այլն) աշխատավարձի իջեցման միտում էր նկատվում: Դա բացատրվում էր ոչ այնքան աշխատող ձեռքերի քանակի ավելացմամբ, որք եզակի դեպքերում կարճ ժամանակով կարող էր ստեղծել աշխատուժի ավելցուկ, որքան այն փաստով, որ գյուղատնտեսական աշխատանքներից վերադարձած բանվորների ճնշող մեծամասնությունը «հողակտորով բանվորներ» էին: Նրանք քաղաքականապես վատ էին կազմակերպված, պակաս գիտակից էին, սոցիալական տեսակետից ավելի պասսիվ, քան մշտական բանվորները: Այդ իսկ պատճառով ձեռնարկատերերի համար ավելի դյուրին էր նրանց թելադրել սեփական պայմանները, հեշտ էր ստիպել բավարարվել ցածր աշխատավարձով: Վ. Ի. Լենինը նշում էր, որ «Աշխատավարձի (և ընդհանրապես արդյունաբերական վաստակի) իջեցումը, երբ բանվորը (կամ մանր արդյունաբերողը) մի կտոր հող ունի, բոլոր կապիտալիստական երկրների համար ընդհանուր մի երևույթ է, որը շատ լավ հայտնի է բոլոր ձեռնարկատերերին, որոնք վաղուց ի վեր գնահատել են հողի հետ կապված բանվորների հակայական «առավելությունները»<sup>156</sup>:

Նախ հետազոտենք Արևելյան Հայաստանի բանվորների անվանական (նոմինալ) աշխատավարձը:

1820 թ. տվյալներով Ալավերդու հանքերին և գործարաններին կցված գյուղացիները ստանում էին 15—16 կոպ. օրավարձ արծաթով<sup>157</sup>:

1888 թ. Ալավերդում միջին օրավարձը 50—60 կոպ. էր<sup>158</sup>: 1899 թ. ապրիլ ամսվա տվյալներով Ալավերդում հանքափորները ստանում էին 80 կոպեկից մինչև 1,25 ռուբլի (մեծ մասը 1,20 ռուբլի), ամրակորդները՝ 80 կոպեկից մինչև 1,20 ռուբլի (մեծ մասը 80—90 կոպ.), տեսակավորիչները՝ 30 կոպեկից մինչև 1,20 ռուբլի (մեծ մասը 40—70 կոպ.), սեպորթները 60—74 կոպ., հանքաքար տեղափոխողները՝ մեկ տոննայի համար 25—40 կոպ.<sup>159</sup>: XIX դ. 90-ական թթ. վերջին և XX դ. սկզբին Զանգեզուրի հանքերում և գործարաններում միջին օրավարձը 40-ից մինչև 80 կոպ. էր<sup>160</sup>: XX դ. սկզբին պղնձարդյունաբերության մեջ աշխատող բանվորների աշխատավարձը գրեթե չփոխվեց: Կարելի է ասել, որ այն 90-ական թթ. հետ համեմատած որոշ դեպքերում նույնիսկ ընկավ: 1904—1905 թթ. Զանգեզուրի հանքերում ու գործարաններում նվազագույն օրավարձը 30 կոպ. էր, իսկ առավելագույնը՝ 1 ռուբլի<sup>161</sup>:

1907 թ. տվյալներով Ալավերդում ԿԱՄԸ-ի կապալառուները բանվորներին վճարում էին 50 կոպեկից մինչև 1 ռուբ. 25 կոպ.<sup>162</sup>: Առավել ցածր էին վարձատրվում Ալավերդում աշխատող պարսկահայտակ սեվագործ բանվորները: 1908 թ. նրանք ստանում էին 60—70 կոպ. օրա-

<sup>156</sup> Վ. Ի. Լենին, *Նժժ*, հ. 2, էջ 454:

<sup>157</sup> ՍՄՇՄ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 3, գ. 288, թ. 7, «Արդյունաբերության վիճակը և բանվոր դասակարգի ձևավորումը Արևելյան Հայաստանում (1803—1920)»: Փաստաթղթերի ժողովածու, էջ 32:

<sup>158</sup> Վրաց. ՍՄՇ ԿՊՊԱ, ֆ. 415, ց. 1, գ. 32, թ. 62—63:

<sup>159</sup> ՍՄՇ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 3, գ. 42, թթ. 1—13:

<sup>160</sup> Վրաց. ՍՄՇ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 2912, թ. 81, գ. 3308, թ. 94:

М. Шостак, Современное состояние медных рудников и заводов... с. 16.

<sup>161</sup> Վրաց. ՍՄՇ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 3780, թ. 97, գ. 3901, թ. 76:

<sup>162</sup> ՍՄՇ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 155, թթ. 2—18, 20—26, 28—34, 36—45, 47, 49—58, 60—61, 63—72, 74—76, 78—88, 90—98, 100—101, 103—113, 115—118:

վարձ, մինչդեռ ֆրանսիացի բանվորները նույն աշխատանքի համար ստանում էին ամսական 80—90 ուրլի (2,58—3 ուրլի օրական)<sup>163</sup>:

Արևելյան Հայաստանի պղնձի արդյունաբերության մեջ աշխատող բանվորների 1914 և 1916 թթ. անվանական աշխատավարձի մասին տվյալներ են բերված Հավելված 1-ի աղյուսակ 9-ում: Ըստ այդ տվյալների, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ալավերդու և Զանգեզուրի բանվորների օրավարձը շարունակում էր մնալ ցածր: Նրանց ճնշող մեծամասնությունը ստանում էր 75 կոպեկից մինչև 1 ուրլ. 50 կոպ., որն, իհարկե, պատերազմական պայմաններում անբավարար էր, թեև պետք է նկատել, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին պղնձարդյունաբերության մեջ կիրառվող օրավարձի համեմատությամբ 1914—1916 թթ. անվանական աշխատավարձը մի փոքր աճել էր:

Ցածր էր աշխատավարձը Արևելյան Հայաստանի նաև աղահանքերում: 1850 թ. Կողբում աղահատները յուրաքանչյուր փութ առաջին տեսակի աղակտորների համար ստանում էին 2 կոպեկ արծաթով<sup>164</sup>: 70-ական թթ. նույնի համար բանվորները ստանում էին 3 կոպեկ, իսկ մանր աղի մեկ փթի համար՝ 1 կոպեկ<sup>165</sup>: XIX դ. 80-ական թթ. Կողբում քլունգով աշխատող բանվորը ստանում էր 60 կոպեկ, աղահատը՝ 45 կոպ., հողափորը՝ 40 կոպ., հորատողը՝ 50 կոպ. օրավարձ<sup>166</sup>: Նույն տարիներին Կաղզվանում պայթեցնող բանվորները ստանում էին 1 ուրլ., հորատողները և աղահատները՝ 70 կոպ., սևագործները՝ 50 կոպ., Օլթիի աղահատները՝ 1—1,50 ուրլ., սևագործները՝ 50 կոպեկ<sup>167</sup>:

Ցավոք, մեր ձեռքի տակ չունենք XX դարի սկզբին վերաբերող կոնկրետ տվյալներ աղահանքերի բանվորների օրավարձի մասին, բայց նշենք, որ նույն ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի աղահանքերում օրավարձի պաշտոնապես սահմանված նվազագույն չափը 25—60 կոպ. էր (նայած բանվորների տարիքին)<sup>168</sup>: Իհարկե աղահատների զգալի մասն ավելի բարձր օրավարձ էր ստանում:

Մետաքսաթելի մշակման ձեռնարկություններում աշխատող բանվորները 80-ական թթ. սկզբներին Շուշիի գավառում ստանում էին

<sup>163</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 153, ց. 1, գ. 1107, ք. 39, «Արդյունաբերության վիճակը և բանվոր դասակարգի ձևավորումը...», էջ 141:

<sup>164</sup> ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 272, ց. 1, գ. 6, ք. 1—3:

<sup>165</sup> Նույն տեղում, գ. 154, ք. 5:

<sup>166</sup> ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 37, ց. 70, գ. 636, ք. 1, 8:

<sup>167</sup> ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 37, ց. 74, գ. 194, ք. 1, 2:

<sup>168</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 265, ց. 1, գ. 61, ք. 14:

ամիսը 7—12 ուրլ., Նախիջևանի գավառում՝ 8—20 ուրլ., մինչդեռ Ելիզավետպոլի նահանգի Նուխիի գավառում՝ 15—25 ուրլ.<sup>169</sup>: Հավանական է, որ այդ թվերը չափազանցված են (հատկապես Նախիջևանի գավառի ձեռնարկություններին վերաբերողները), որովհետև ըստ այլ աղբյուրի 1886 թ. Նախիջևանի գավառի մետաքսաթելի մշակման գործարաններում օրավարձը սովորաբար 10—30 կոպ. էր<sup>170</sup>: Շուշիի գավառի նույնատիպ ձեռնարկություններում 80—90-ական թթ. տղամարդիկ ստանում էին 20—80 կոպ., կանայք՝ 10—35 կոպ. օրավարձ<sup>171</sup>: 1900-ական թթ. սկզբներին Շուշիի գավառում աշխատանքի ընդունված մանկահաս բանվորները, որոնց մեծ մասը աղջիկներ էին, սկզբում ստանում էին 5—7 կոպ. օրավարձ: Հետագայում օրավարձի չափը հասնում էր 20—30 կոպեկի: Մեծահասակ բանվորները ստանում էին 20—40 կոպ., ընդ որում 40 կոպ. օրավարձը առավելագույնն էր ամբողջ գավառում: Այսպիսով, 1900-ական թթ. սկզբներին, 1890-ական թվականների համեմատությամբ Շուշիի գավառի մետաքսաթելի մշակման ձեռնարկություններում օրավարձի չափը նվազել էր<sup>172</sup>: Ըստ երևույթին, դա պետք է բացատրել արտադրության այս ճյուղի անկմամբ: Համեմատաբար բարձր էր օրավարձը 1900-ական թթ. սկզբներին Նախիջևանի գավառում (միջինը 40—60 կոպ.)<sup>173</sup>:

1901—1902 թթ. Երևանի գարեջրի և օդու գործարաններում օրավարձը 40 կոպ. էր, իսկ գինու և կոնյակի ձեռնարկություններում՝ 70 կոպ.: Էջմիածնի և Երևանի գավառների օդու գործարաններում ամսական աշխատավարձը մանկահաս և դեռահաս բանվորների համար մինչև 30 ուրլի էր, իսկ մեծահասակներինը՝ 24—36 ուրլի: Նույն գավառների սպիրտի մաքրման և գինու ձեռնարկություններում օրավարձը 1901—1902 թթ. հասնում էր 1—1,5 ուրլու<sup>174</sup>:

Բանվորների անվանական աշխատավարձը ցածր էր նաև Երևանի նահանգի մանր, արհեստանոցային տիպի ձեռնարկություններում: Այս-

<sup>169</sup> «Արձագանք», 1882, 1 օգոստոսի:

<sup>170</sup> ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 125, ց. 1, գ. 23, ք. 10:

<sup>171</sup> ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 20, ց. 2, գ. 327, ք. 2—5, 7, А. С. Сумбатзаде, Промышленность Азербайдана в XIX в., с 91. \*68—470.

<sup>172</sup> ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 97, ց. 1, գ. 1, ք. 12, «Бакинские известия», 1903, 10(23) сентября, С. Заварян, Экономические условия Карабага и голод 1906—1907 гг., с. 50.

<sup>173</sup> ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 94, ց. 1, գ. 1, գ. 2664, ք. 33—36:

<sup>174</sup> Նույն տեղում, ք. 14—29, 66—67, ֆ. 125, ց. 1, գ. 35, ք. 1—11.

պես, XIX դարի 80-ական թթ. Նոր Բայազետի գավառի նման «գործարաններում» բանվորները ստանում էին. ամռանը՝ 40—50 կոպ., ձմռանը՝ 25—30 կոպ., իսկ Երևանում՝ 15—20 կոպ. օրավարձ<sup>175</sup>: 1898 թ. Շարուր—Դարալագյազի գավառի բամբակագործիչ ձեռնարկություններում բանվորներն ամիսը ստանում էին ընդամենը 4—5 ուրբլի<sup>176</sup>: 1900-ական թթ. սկզբին Երևանի նահանգի կաշվի մաքրման, աղյուսի պատրաստման, կրի և բրուտագործական ձեռնարկություններում օրավարձի չափը 30—60 կոպ. էր, իսկ տարեկան աշխատավարձը ընդամենը 20—50 ուրբլի, որովհետև տարվա մի մասն այդ ձեռնարկությունները չէին աշխատում<sup>177</sup>:

Աշխատավարձի քիչ թե շատ միասնական սխառն գոյություն ունեցող Ռուսաստանի երկաթուղային տրանսպորտի բանվորների համար: Այն կախված չէր երկաթուղիների աշխարհագրական տեղաբաշխումից: Երկրի երկաթուղայինների մի մասը (այդ թվում և Անդրկովկասում) համեմատաբար բարձր աշխատավարձ էր ստանում՝ 30 և ավելի ուրբլի: Դրանք առավել բարձր որակավորում կամ համապատասխան կրթություն ունեցող երկաթուղայիններն էին: Ինչ վերաբերում է երկաթուղային բանվորների հիմնական մասսային, ապա դրանց աշխատավարձը ցածր էր: Անդրկովկասի, այդ թվում Արևելյան Հայաստանի երկաթուղային մշտական բանվորների աշխատավարձի մասին տվյալներ են բերված Հավելված 1-ի աղյուսակ 10-ում: Ինչպես երևում է աղյուսակից համեմատաբար բարձր էին վճարվում ուղեվարպետները, թուներկային և կամրջային վարպետները, փականագործները, դարբինները, մոնտյորները, մեքենավարները, գնացք կազմողները: Ցածր աշխատավարձ էին ստանում գծային և գծանցային պահակները վերանորոգող բանվորները, թուներկային և կամրջային պահակները, մուրճահարները, վագոն մաքրողները և այլն: Ըստ աղյուսակի տվյալների, երկաթուղային բանվորներից ոմանց աշխատավարձը 1906 թ. 1900—1904 թթ. համեմատ իջել է (չրհանների մեքենավարների և նրանց օգնականների նվազագույն և առավելագույն, կամրջային պահակների և ջրից բանվորների առավելագույն աշխատավարձի չափերը): Բայց 1900—1910 թթ. ընթացքում, ամբողջությամբ վերցրած, բոլոր երկա-

թուղային բանվորների անվանական աշխատավարձը մնացել է նույնը, կամ էլ մեծմասամբ աճել: Երկաթուղայինների աշխատավարձի բարձրացումը, անշուշտ, պետք է բացատրել նրանց համեմատաբար բարձր գասակարգային գիտակցությամբ և հեղափոխական ակտիվ պայքարով:

Հատուկ պետք է ընդգծել, որ մշտական երկաթուղային բանվորների մեծ մասն աշխատավարձից բացի ստանում էր նաև այսպես կոչված «բնակարանային փող», որը հատկացվում էր նրանց բնակարան վարձելու համար: Օրինակ՝ պահակները, ջրից բանվորները, վառարանագործները, յուղիչները, բարապանները, սլաքավարները, մշտական բանվորները, լամպավառները ստանում էին տարեկան 42—75 ուրբ. բնակարանային փող, մուրճահարները՝ 60 ուրբ., ազդանշորդները՝ 60—90 ուրբ., շոգեքարշ վագոնները՝ 75—105 ուրբ., կամրջային վարպետները, փականագործները, դարբինները, հյուաններն ու ատաղձագործները. ուղեվարպետները, գնացք կազմողները՝ 105—150 ուրբ. և այլն<sup>178</sup>:

Հիմնականում օրավարձ կամ գործարքային աշխատավարձ էին ստանում Արևելյան Հայաստանի երկաթուղային շինարարության բանվորները: XIX դ. 90-ական թթ. վերջին Քիֆլիս—Կարս երկաթուղու շինարարությունում 1 խորանարդ սաժեն բնահող հանելու համար բանվորները ստանում էին 1,3—1,5 ուրբ., իսկ նույնքան լեռնային ապառ հանելու համար՝ 6—6,5 ուրբ.: Մեկ խորանարդ սաժեն կոպտատաշված քար հանելու, մշակելու և աշխատանքների վայրը տեղափոխելու համար բանվորները ստանում էին 55—65 ուրբ.: Առունքի փորող օրավարձու բանվորները ստանում էին 60—70 կոպ<sup>179</sup>: 65—80 կոպ. օրավարձ էին ստանում հորատողները, 60 կոպ.՝ սևագործները: 18-ից մինչև 40 ուրբ. (ավելի հաճախ՝ 18—25 ուրբ.) ամսական աշխատավարձ էին ստանում ավագ բանվորները, իսկ 16—20 ուրբ.՝ պահեստ-

<sup>178</sup> Ведомости штатного содержания, квартирного довольствия и лично-присвоенного содержания служащих казенных железных дорог на 1900 г. Ведомости, Ведомость № 2, с. 3, 9, 21, 27, 33, 39, 45, 51, 57, 63, 69, 75. То же на 1904 г. Ведомости, ведомость № 2, с. 221, 225, 235, 237, 243, 249, 255, 261, 267, 279, 291, 297, Ведомость о числе и содержании штатных служащих казенных железных дорог в 1906 г., с. 242—243, 248—249, 254—255, 266—267, 278—279, 284—285.

<sup>179</sup> «Новое обозрение», 1896, 22 июня, ч. Ավետիսյան. Մի էջ Հայաստանի բանվորական շարժմանի պատմությունից (1898—1900), 1961, էջ 88—89.

<sup>175</sup> ՉՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 125, ց. 1, գ. 23, թթ. 4, 8:

<sup>176</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 415, ց. 1, գ. 44, թ. 1—5:

<sup>177</sup> ՉՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2664, թ. 35—37, 67—69, 86, 90, 93, 96, 119—123:

ների պահակները<sup>180</sup>։ Մեր ձեռքի տակ ունենք նաև տվյալներ Երևանի նահանգի և Կարսի մարզի երկաթուղային շինարարության բանվորների 1914 և 1915 թթ. աշխատավարձերի մասին։ Ըստ այդ տվյալների 1914 թ. Կարսի մարզում բանվորները ստանում էին 1,65 ուրբ., օրավարձ, հյուաններն ու բետոնագործները՝ 3 ուրբ.։ Երևանի նահանգում բանվորները ստանում էին 1 ուրբ., հողափորները՝ 1,2 ուրբ., հյուանները՝ 2 ուրբ. օրավարձ<sup>181</sup>։ Կարս—Սարիղամիշ—Կարաուրզան երկաթգծի շինարարության վրա աշխատող բանվորները 1915 թ. սեպտեմբերից սկսած ամիսը ստանում էին. սեպտեմբերը՝ 40 ուրբ., հողափորները՝ 45 ուրբ., որակյալ հյուանները՝ 85 ուրբ., ավագ բանվորները՝ 60 ուրբ.<sup>182</sup>։

Բացի երկաթուղիների կառուցման վրա աշխատող շինարարներից Արևելյան Հայաստանում կային շինարարական մասնագիտություններ ունեցող արհեստավորներ, որոնք հիմնականում աշխատում էին անհատական պատվիրատուի համար։ Նրանց մեծ մասը կենտրոնացած էր Արևելյան Հայաստանի նահանգային և գավառային կենտրոններում։ Հավելված 1-ի աղյուսակ 11-ում տվյալներ են բերված Երևանի շինարար-արհեստավորների աշխատավարձի շափի մասին։ Ինչպես երևում է այդ տվյալներից, մի շարք շինարարների աշխատավարձը 1900 թ. նախորդ տարիների համեմատ նվազել էր։

Աղքատիկ աշխատավարձ էին ստանում սեպտեմբեր-օրամշակները, տնային ծառայողներն ու սպասավորները։ Այդ են վկայում Հավելված 1-ի 12 և 13 աղյուսակների տվյալները։ Ըստ այդ տվյալների տղամարդիկ կանանց համեմատ ավելի բարձր էին վարձատրվում, իսկ մանկահասակներն ու դեռահասները ստանում էին ավելի քիչ, քան մեծահասակները։ Ընդ որում աղյուսակ 13-ում բերված է Երևանի նահանգում սեպտեմբեր բանվորների պաշտոնապես հաստատված 1909—1911 թթ. օրավարձի շափը։

Հարկ է նշել, որ բանվորները ավելի քիչ էին ստանում, քան նրշված է պաշտոնական աղբյուրներում, որովհետև լայնորեն կիրառվում

<sup>180</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 310, ց. 1, գ. 28, ք. 24, ֆ. 313, ց. 1, գ. 3, ք. 64, 70, 84, 85, 132, 186, 199, գ. 7, ք. 22, 24, 31, 289, 563.

<sup>181</sup> ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1521, ք. 3, «Արդյունաբերության վիճակը և բանվոր դասակարգի ձևավորումը», էջ 160—161.

<sup>182</sup> ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 136, ց. 1, գ. 97, ք. 45, «Արդյունաբերության վիճակը և բանվոր դասակարգի ձևավորումը», էջ 169.

էին աշխատավարձի իջեցման բազմաթիվ բացահայտ և թաքնված եղանակներ, որոնք Արևելյան Հայաստանում ավելի պակաս շափով էին տարածված, քան Խուսաստանի արդյունաբերական զարգացած շրջաններում, սակայն ձեռնարկատերերի կողմից կենսագործվում էին ամենափոքր իսկ առիթով։ Աշխատավարձի իջեցման ամենամասսայական ձևերից էին տուգանքները։ «Տուգանքները,—նշում էր վ. Ի. Լենինը,— լույս աշխարհ են եկել ոչ շատ վաղուց, այլ խոշոր ֆաբրիկաների ու գործարանների հետ միասին, խոշոր կապիտալիզմի հետ միասին, հարուստ-գործատերերի ու բոքիկ բանվորների լիակատար պառակտման հետ միասին։ Տուգանքները կապիտալիզմի լիակատար զարգացման և բանվորի լիակատար ստրկացման հետևանքը եղան»<sup>183</sup>։ Ընդ որում վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ «տուգանելով բանվորին կապիտալիստն իր վրա է վերցնում դատավորի դերը։ Այդ պատճառով էլ տուգանքների հետ մշտապես կապված է առանձնապես շատ կամայականություն բանվորների նկատմամբ, իսկ երբեմն էլ՝ ուղղակի ծաղրուծանակ բանվորների հասցեին»<sup>184</sup>։

Տուգանքների պրակտիկան լայնորեն կիրառվում էր պղնձաբուրդանաբերության մեջ։ Այստեղ ձեռնարկատերերը բանվորների համար տուգանային կապիտալների գրքույկներ էին պահում<sup>185</sup>։ Արևելյան Հայաստանում կիրառվում էին աշխատավարձի իջեցման նաև այլ եղանակներ։

Ալավերդու հանքերի և գործարանների վարչությունը խիստ անկանոն և ուշացումով էր վճարում բանվորների աշխատավարձը, կամ էլ վճարում էր ոչ լրիվ<sup>186</sup>։ Աշխատավարձի իջեցման նպատակով Կողբի աղահանքերի կապալառուները դիմում էին լոկալուտներին, շանտաժի՝ դրանով բանվորներին ստիպում համաձայնվել իրենց առաջարկած ծանր պայմաններին<sup>187</sup>։ Դրամաշրթումների և կաշառակերության համար բարենպաստ պայմաններ էին ստեղծվել Թիֆլիս—Կարս երկաթու-

<sup>183</sup> վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 2, էջ 71.

<sup>184</sup> Նույն տեղում, հ. 23, էջ 527.

<sup>185</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 7937, ք. 19, ֆ. 264, ց. 1, գ. 2912, ք. 81, «Արդյունաբերության վիճակը և բանվոր դասակարգի ձևավորումը...», էջ 141—142.

<sup>186</sup> Նույն տեղում, ֆ. 153, ց. 1, գ. 1107, ք. 39, «Արդյունաբերության վիճակը և բանվոր դասակարգի ձևավորումը...», էջ 141—142.

<sup>187</sup> «Մուրճ», 1895, № 3—4, էջ 414.

դու շինարարությունում: Կապալառուները բանվորներին վճարում էին շինվարչության կողմից այս կամ այն աշխատանքների վճարման համար բաց թողած գումարների 3/4-ից մինչև կեսը միայն<sup>188</sup>, Թիֆլիս—Կարս և Կարս—Կարաուրգան երկաթուղիների շինարարության ժամանակ բանվորները հաճախ (երբեմն մի քանի ամիս) ուշացումով էին ստանում աշխատավարձը<sup>189</sup>:

Բանվորների աշխատավարձը փաստորեն կողոպտվում էր նաև ֆարբիկագործարանային կրպակների միջոցով: XIX դ. 90-ական թթ. վերջերին Շամլուղի հանքերի բանվորները մշտապես դժգոհում էին այն բանից, որ իրենց աշխատավարձն անամոթաբար յուրացնում էին կրքպակատերերը, որոնք վատորակ մթերքները եռակի թանկ գներով էին վաճառում: Նրանք զեղծումներ էին անում նաև ապահովի գրքույկներում<sup>190</sup>: Սահմանվածից բարձր գներով էին վաճառվում մթերքները նաև Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարության կրպակներում<sup>191</sup>:

4. Մարքսը և Ֆ. էնգելսը, անդրադառնալով անվանական և իրական (ոեալ) աշխատավարձերին, նրանցից առաջինի տակ հասկանում էին «...փողի այն գումարը, որով բանվորն իրեն վաճառում է կապիտալիստին...», իսկ երկրորդի տակ՝ «ապրանքների այն քանակը, որ բանվորը կարող է գնել այդ փողով»<sup>192</sup>: Այնուհետև նրանք ընդգծում էին, որ աշխատավարձի այս երկու տեսակները շեն համընկնում իրար հետ<sup>193</sup>: «Այդ պատճառով,—շարունակում էին Կ. Մարքսն ու Ֆ. էնգելսը,—երբ խոսում ենք աշխատավարձի բարձրացման կամ իջեցման մասին, պետք է նկատի ունենանք ոչ միայն աշխատանքի փողային գինը, ոչ միայն անվանական աշխատավարձը»<sup>194</sup>:

<sup>188</sup> „Новое обозрение“. 1898. 11 марта, ч. II, в. 107—108.

<sup>189</sup> ЗУУЗ Կողմ, ֆ. 136, ց. 1, գ. 97, ք. 10, ֆ. 270, ց. 1, գ. 2, ք. 32 գ. 4, ք. 280, վրաց. ՍՄԷ Կողմ, ֆ. 39, ց. 1, գ. 126, ք. 1, „Новое обозрение“, 1896, 29 марта, то же, 1930, 6 декабря, О. С. Баликян, Из истории положения рабочих...», с. 90—91, 93: «Առդյունարբրության վեճակը և բանվոր դասակարգի ձևավորումը...» էջ 172, Վ. Ավետիսյան, Մի էջ...», էջ 47, 82—83, 116:

<sup>190</sup> Մի շաշկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 4033, ց. 2, գ. 65, ք. 7—8:

<sup>191</sup> ЗУУЗ Կողմ, ֆ. 270, ց. 1, գ. 4, ք. 249:

<sup>192</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч. 2-е изд., т. 6, с. 447—448.

<sup>193</sup> Նույն տեղում, էջ 447:

<sup>194</sup> Նույն տեղում:

Նրանցով մարքսիզմի կլասիկների այս դրույթներից հետագոտենք Արևելյան Հայաստանի բանվորների իրական աշխատավարձը<sup>195</sup>:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին իջեցման տենդենց ուներ Երևանի նահանգի շատ բանվորների ոեալ աշխատավարձը, որովհետև մթերքների շուկայական գները նույն ժամանակաշրջանում բարձրացել էին, իսկ աշխատավարձը մնացել էր անփոփոխ կամ էլ իջել էր: XX դ. սկզբին, 80-ական թթ. համեմատությամբ շուկայական գները Երևանում բարձրացել էին՝ մեկ փուլ հացահատիկինը՝ 36, ալյուրինը՝ 56,3, մեկ ֆունտ հացինը՝ 25, մսինը՝ 38,5, կարագինը՝ 55,2, քունջուլի ձեթինը՝ 22% -ով<sup>196</sup>: Նույն ժամանակաշրջանում շինարարական շատ բանվորների օրավարձը կրճատվել էր՝ քարտաշներինը՝ 40% -ով, ներկարարներինը՝ 33,3%, շարողներինը և ծեփագործներինը՝ 25, հյուաններինը՝ 20% -ով, ապակեգործներինը մնացել էր անփոփոխ<sup>197</sup>:

XIX դ. 80-ական թթ. 1 ֆունտ հացի, կես ֆունտ մսի և 0,1 ֆունտ կարագի համար (1 մարդու օրական նորման ըստ Ա. Լիբերմանի) քարտաշը և հյուանը պետք է ծախսեին իրեն օրավարձի 1,1 և 1,3 տոկոսը,

<sup>195</sup> 1905 թ. «Вестник фабричного законодательства и профессиональной гигиены» ամսագրում լույս տեսավ Ա. Ա. Լիբերմանի «Հանքագործ բանվորների աշխատանքի պայմանները Դոնեցկի պլավանում» հոդվածը, որտեղ հեղինակը մասնավորապես կանգ է առնում բանվորների իրական աշխատավարձի հարցի վրա: Հենվելով պրոֆեսոր Ֆոյտի ուսումնասիրությունների վրա, Լիբերմանը որոշեց Ռուսաստանի բանվորների պահանջմունքների շրջանակները, հաշվարկեց մթերքի, հագուստի, վառելիքի, անձնական հիգիենայի վրա ծախսվող դրամական միջոցների նվազագույն նորման: Ըստ Լիբերմանի յուրաքանչյուր մեծահասակ բանվոր օրվա մեջ սպառում էր մի ֆունտ հաց, 0,5 ֆունտ միս, 0,3 ֆունտ ալյուր, 0,05 ֆունտ ճարպ, 0,3 ֆունտ կարտոֆիլ, 0,2 շտոֆ կաթ, 0,1 ֆունտ կարագ, 0,05-ական ֆունտ շաքար և աղ: Այնուհետև Լիբերմանը գտնում է, որ հագուստի, վացքի, օձառի, վառելիքի վրա բանվորը ծախսում էր տարեկան անվազն 96 ռուբլի: Դիտարկելով իրական աշխատավարձի պրոբլեմը և համեմատության մեջ դնելով բանվորների անվանական աշխատավարձը նրանց պահանջմունքների հետ, մենք որպես հիմք ընդունելու ենք Լիբերմանի հաշվարկները Լիբերման Ա. Ա., Условия труда горнорабочих в Донецком бассейне.—Вестник фабричного законодательства и профессиональной гигиены, 1905, № 1, с. 16—17. Բանվորների աշխատավարձի հարցը, 1884, № 3, 5, 6, 9, 11, 14—21, 26—30, <sup>196</sup> «Երևանյան հայտարարություններ», 1884, № 3, 5, 6, 9, 11, 14—21, 26—30, ЗУУЗ Կողմ, ֆ. 117, ց. 1, գ. 121, ք. 10—14, ց. 1, գ. 149, ք. 2—4, գ. 484, ք. 13—43, 65 (հաշվարկները մերն են), Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը, էջ 137:

<sup>197</sup> ЗУУЗ Կողմ, ֆ. 11, ց. 1, գ. 149, ք. 6, գ. 227, ք. 7, 10, գ. 458, ք. 10 (հաշվումները մերն են), Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը, (1879—1917 թթ.), Երևան, 1963, էջ 90:

ատաղձագործը, շարող ծեփագործը ծախսում էին համապատասխանաբար 1,4, 1,7 և 1,6% -ը, ներկարարները և ապակեգործները՝ համապատասխանաբար իրենց օրավարձի՝ 1,9, 2,2, և 1,9% -ը<sup>198</sup>։

1900-ական թթ. սկզբներին քարտաշը, շարողը, ծեփագործը, ապակեգործը հիշյալ մթերքների նույն քանակի վրա ծախսում էին օրավարձի համապատասխանաբար՝ 2,3, 3,0, 3,0% -ը, հյուանը՝ 1,8, 2,3, 2,3% -ը, ատաղձագործը՝ 2,2, 2,8, 2,8% -ը, ներկարարը 3,5, 4,5, 4,5% -ը<sup>199</sup>։ Այսպիսով առկա էր ունի օրավարձի նվազման փաստը։

Բերենք շուկայական գների և բանվորների աշխատավարձի մի համեմատություն ևս։ Այն իր արտահայտությունն է գտել Հավելված 1-ի աղյուսակ 14-ում։ Ըստ աղյուսակի տվյալների, 1913 թ. Բորչալուի գավառի պղնձարդյունաբերության բանվորները ալյուրի, մսի, կարագի և շաքարի՝ մեկ մարդու հասնող նորմայի վրա ծախսում էին իրենց օրավարձի 13,6—17,3% -ը։ Եթե նկատի ունենանք, որ բանվորներից շատերն ամուսնացած էին և հաճախ իրենց բազմամարդ ընտանիքի միակ կամ հիմնական կերակրողն էին, ապա պարզ կդառնա, որ նրանց աշխատավարձի մեծ մասը, նորմալ ձևով սնվելու դեպքում, պետք է ծախսվեր մթերքներ գնելու նպատակով։ Բանվորների աշխատավարձը կարելի է համեմատել ևս մեկ բաղադրիչի՝ բնակավարձի հետ։ Սակայն Արևելյան Հայաստանի պայմաններում այդ համեմատությունը ձևական բնույթ կկրի, որովհետև բանվորների ճնշող մեծամասնությունն այստեղ բնակվում էր կամ ձեռնարկատերերի կողմից ձրի հատկացված կացարաններում, կամ էլ սեփական տներում, այսինքն՝ բնակարան վարձելու համար փող չէր ծախսում։

Այժմ համառոտակի հարաբերական աշխատավարձի մասին։

4. Մարքսը և Ֆ. էնգելսը նշում են, որ «...հարաբերական աշխատավարձն արտահայտում է անմիջական աշխատանքի գինը կուտակված աշխատանքի գնի նկատմամբ, վարձու աշխատանքի և կապիտալի հարաբերական արժեքը, կապիտալիստի և բանվորի փոխադարձ արժեքը»<sup>200</sup>։

Այնուհետև 4. Մարքսն ու Ֆ. էնգելսը գրում են, որ կապիտալիզմի հետագա զարգացմամբ «կապիտալի արժեքն աշխատանքի արժեքի հա-

մեմատ բարձրացել է» և որ «հասարակական հարստության բաշխումը կապիտալի և աշխատանքի միջև էլ ավելի անհավասարաչափ է դարձել»<sup>201</sup>։

Ցավոք, մեր ձեռքի տակ չունենք Արևելյան Հայաստանի ձեռնարկատերերի շահույթների դինամիկայի մասին տվյալներ։ Սակայն կասեմք դուրս է, որ այդ շահույթները XIX դ. վերջին և XX դ. սկզբին գնալով աճում էին և, հետևաբար, իջնում էր բանվորների համեմատական աշխատավարձի չափը, մանավանդ, որ նրանցից շատերի մոտ իջնում էր նաև անվանական և ունի աշխատավարձը։ Այսպիսով, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, բանվորը ոչ միայն «աղքատանում է բացարձակապես, այսինքն՝ նա առաջվանից պարզապես ավելի է աղքատանում, ստիպված է ավելի վատ ապրել, ավելի վատ սնվել, ավելի քիչ ուտել, պատասպարվել նկուղներում ու ձեղնահարկերում» այլ և տեղի էր ունենում «...բանվորների հարաբերական աղքատացումը, այն է՝ նրանց բաժնի նվազումը հասարակական եկամտի մեջ։ Բանվորների համեմատական բաժինը, արագ հարստացող կապիտալիստական հասարակության մեջ գնալով ավելի է նվազում, որովհետև գնալով ավելի արագ են հարստանում միլիոնատերերը»<sup>202</sup>։

Լենինը նշում էր, որ «աշխատավարձը մուսաստանում պահպանվում է ճորտային ցածր մակարդակի վրա»<sup>203</sup>, Լենինյան այդ խոսքերը վերաբերում են նաև Անդրկովկասին ու Արևելյան Հայաստանին, որտեղ աշխատավարձի մակարդակը հատկապես ցածր էր՝ մանավանդ մանր կապիտալիստական արտադրության մեջ։

Արևելյան Հայաստանում, ինչպես ամենուր, համեմատաբար բարձր աշխատավարձ էին ստանում խոշոր կապիտալիստական արտադրության (հատկապես պղնձարդյունաբերության) բանվորները։ Ամենացածրը վարձատրվում էին մանր, արհեստանոցային տիպի ձեռնարկությունների բանվորները։ Աշխատավարձի չափն ուղղակիորեն կախված էր նաև բանվորների որակավորումից։ Ցածր որակավորում ունեցող բանվորները ստանում էին ավելի ցածր աշխատավարձ «...Արդյունաբերական բանվորների աշխատավարձը միջին հաշվով ավելի բարձր է, — նշում է Ֆ. էնգելսը, — քան հասարակ բեռնակիրների, օրամշակների և այլ բանվորների... աշխատավարձը»<sup>204</sup>։

<sup>198</sup> Հաշվարկված է վեր բերված տվյալների հիման վրա։

<sup>199</sup> Նույն տեղում։

<sup>200</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., 2-ое изд., т. 6, с. 448.

<sup>201</sup> Նույն տեղում, էջ 448—449։

<sup>202</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 22, էջ 268։

<sup>203</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 23, էջ 208։

<sup>204</sup> Ֆ. էնգելս, Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում, Ե., 1934, էջ 146։

Զգալի էր տարբերությունը տղամարդկանց և կանանց, մեծահասակների և փոքրահասակների աշխատավարձի չափերի միջև, թեև երբեմն փոքրահասակները նույնքան ժամանակ էին աշխատում ինչքան մեծահասակները: Բանվորների աշխատավարձի զգալի մասը ծախսվում էր սննդամթերք գնելու նպատակով: Միայն բարձր վարձատրվող բանվորները կարող էին որոշ գումարներ ծախսել իրենց ժամանցի վրա կամ խնայողություններ անել: Բանվորների հիմնական մասսան դրանից համարյա զրկված էր:

\*  
\*  
\*

Անցնենք բանվորների աշխատանքային պայմանների և դժբախտ պատահարների բնութագրմանը:

Անդրկովկասի արդյունաբերությանը բնորոշ էին բանվորների ծանրը, հաճախ անտանելի աշխատանքային պայմանները: Արտադրության տարբեր ճյուղերի ծայր աստիճան հակասանիտարական վիճակին հաճախ գումարվում էին շանտաժի դեպքերը, բանվորների ծեծը վերակացուների, կապալառուների, ավագ վարպետների և այլոց կողմից և այլն: Նման շարաշահումները խիստ բնորոշ էին հատկապես Բաքվին և երկրամասի արդյունաբերական մյուս կենտրոններին: Ձեռնարկատերերի կամայականությունները շատ հաճախ տարածվում էին աշխատանքային օրենսդրության վրա: Անդրկովկասի ձեռնարկություններում չէին կիրառվում աշխատանքային անվտանգության կանոններից շատերը: Արևելյան Հայաստանում այս առումով «աչքի էին ընկնում» պղնձի հանքերն ու գործարանները: Ա. Կախոյանի վկայությամբ, Ալավերդու հանքերում հաճախ էին լինում փլուզման դեպքեր, որոնց ժամանակ հողի տակ ողջ-ողջ թաղվում էին բանվորները: Գործարաններում պղինձ հալող վառարանների մոտ աշխատողները հաճախ էին այրվածքներ ստանում, որոնք երբեմն բանվորների մահվան պատճառ էին դառնում<sup>205</sup>:

Ձեռնարկատերերի կողմից աշխատանքային անվտանգության կանոնների անտեսման մասին ստիպված էին խոստովանել նույնիսկ Կովկասի Լեռնային վարչության պաշտոնյաները: Այսպես, 1914—1915 թթ. Ալավերդում կատարած մի քանի ստուգումների մասին գրած զեկու-

ցագրերում Կովկասյան լեռնային վարչության օկրուգային ինժեներ Ա. Գ. Ցելյալինը նշում էր, որ Ալավերդու հանքի հորանցքով ձգվում էին լեկուպացված էլեկտրալարեր, որոնք կարող էին դժբախտ պատահարների պատճառ հանդիսանալ: Հորանցքի ջերմաստիճանը բարձր էր նորմայից, բանվորների ճանապարհն այստեղ անբարեկարգ էր և վտանգավոր, հանքերում շկար բավարար օդափոխություն: Այնուհետև Ցելյալինը ավելացնում էր, որ այստեղ անփույթ ձևով էին պահվում պայթուցիկ նյութերը, պղնձաձուլական վառարանների մոտ աշխատող բանվորները չէին կրում պաշտպանիչ ակնոցներ<sup>206</sup>: Աշխատանքային անվտանգության կանոններն անտեսվում էին նաև աղահանքերում<sup>207</sup>, ինչպես և երկրի արդյունաբերության մյուս ճյուղերում: Ձեռնարկատերերի նմանօրինակ վերաբերմունքն էլ հենց հանդիսանում էր արտադրության մեջ դժբախտ պատահարների գլխավոր պատճառը:

Հարկ է նշել, որ արտադրության մեջ տեղի ունեցող դժբախտ պատահարներին վերաբերող նախահեղափոխական վիճակագրական նյութերը ունեն խոշոր թերություններ: Ամենացայտուն թերությունն այն է, որ ոչ բոլոր դժբախտ պատահարներն էին հաշվառվում: Մինչև 1900-ական թթ. հաճախ չէր արձանագրվում թեթև վնասվածքների մեծ մասը: Արևելյան Հայաստանի արդյունաբերության մեջ տեղի ունեցող դժբախտ պատահարների ճնշող մեծամասնությունն ընկնում էր լեռնահանքային արդյունաբերությանը: Համեմատաբար թույլ զարգացած վերամշակող արդյունաբերության մեջ դրանք փոքր թիվ էին կազմում և հաճախ անտեսվում էին վիճակագրության կողմից: Այդ բանին նպաստում էր ֆաբրիկագործարանային տեսչության բացակայության փաստը: Նման հանգամանքից ելնելով մենք հիմնականում կանգ կառնենք արդյունահանող արդյունաբերության մեջ տեղի ունեցող դժբախտ պատահարների հարցի վրա:

1885—1893 թթ. պաշտոնական տվյալներով Արևելյան Հայաստանի պղնձի արդյունաբերությունում, աղի և քարի հանքերում դժբախտ պատահարների են ենթարկվել 52 մարդ, որոնցից 35-ը մահացել են

<sup>205</sup> ՆՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 417, թ. 2, 4, 5, 6, «Արդյունաբերության վիճակը և բանվոր գառակարգի ձևավորումը Արևելյան Հայաստանում (1803—1920)», էջ 156—160, 165—166:

<sup>207</sup> А. М. Марголюс, Соляные промыслы Закавказья: Их прошлое, современное состояние и возможное будущее, Тифлис, 1906, с. 31—32.

<sup>205</sup> ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 4033, ց. 6, գ. 340, թ. 6:



(21 հոգի 1888 թվականին): 1896—1902 թթ. տուժածների թիվը հասել է 63 մարդու, որոնցից 15-ը մահացել են<sup>208</sup>:

1900—ական թթ. սկզբներից դժբախտ պատահարների հաշվառումը պղնձարդյունաբերության մեջ (հատկապես Ալավերդու) ավելի սխտեմատիկ և մանրամասն բնույթ կրեց: Դա երևում է Հավելված 1-ի №15 աղյուսակից (փակագծերի մեջ բերված են նույն թվականին վերաբերող աղբյուրներում հանդիպող այլ տվյալներ): Ինչպես երևում է աղյուսակից, Արևելյան Հայաստանի պղնձարդյունաբերության մեջ դժբախտ պատահարներից տուժած բանվորները զգալի թիվ էին կազմում: Քիչ չէր զոհվածների թվաքանակը:

Պղնձարդյունաբերության համեմատության մեջ, աննշան էր դժբախտ պատահարներից տուժածների թիվը աղի հանքերում: 1901 թ. այստեղ վնասվածք են ստացել 4 մարդ, 1907 թ. 1 բանվոր զոհվել է, իսկ 1909 թ. 2 բանվոր նույնպես վնասվածքներ են ստացել<sup>209</sup>: Անհրաժեշտ է նշել, որ դժբախտ պատահարներից տուժած բանվորներից ոմանք այս կամ այն չափով կորցնում էին աշխատունակությունը: Օրինակ, 1906 թ. Ալավերդում անաշխատունակ են դարձել վիրավորված բանվորների 5,7%-ը, 1908 թ. Զանգեզուրում նման բանվորների 5%-ը դարձել են լրիվ, իսկ 30 %-ը մասնակի անաշխատունակ<sup>210</sup>: 1910—1912 թթ. Արևելյան Հայաստանի պղնձի և աղի արդյունաբերության մեջ դժբախտ պատահարների ժամանակ վիրավորված բանվորների 25,3 %-ը մասնակիորեն էին կորցրել աշխատունակությունը, իսկ 0,3 %-ը՝ լրիվ<sup>211</sup>: 1915—1916 թթ. Ալավերդու պղնձարդյունաբերական շրջանում 127

<sup>208</sup> Վրաց. ՍՍՄ ԿոմգԱ, ֆ. 264, ց. 1, գ. 1453, թ. 145, գ. 1542, թ. 15, 179—182, գ. 1658, թ. 27—28, 29—30, 282—283, գ. 1908, թ. 25—26, գ. 2143, թ. 143, 217, գ. 2144, թ. 31, գ. 2511, թ. 24, գ. 2670, թ. 40, 102, գ. 2671, թ. 139—140, գ. 2673, թ. 146, 147, գ. 2912, թ. 85, գ. 2913, թ. 108, 141, գ. 3308, թ. 118—119, 194, 226, 227, գ. 3531, թ. 360—361, գ. 5660, թ. 71, գ. 5732, թ. 43, գ. 5737, թ. 97, գ. 5746, թ. 9—10, 18, գ. 5858, թ. 17—18, 181:

<sup>209</sup> Վրաց. ՍՍՄ ԿոմգԱ, ֆ. 264, ց. 1, գ. 3308, թ. 118—119, 194, գ. 4602, թ. 4—5, Сборник статистических сведений о горнозаводской промышленности России в 1907 году, с. 698.

<sup>210</sup> Վրաց. ՍՍՄ ԿոմգԱ, ֆ. 264, ց. 1, գ. 4100, թ. 45—46, գ. 4602, թ. 24—25:

<sup>211</sup> Վրաց. ՍՍՄ ԿոմգԱ, ֆ. 264, ց. 1, գ. 4602, թ. 118—119, 165—166, 172—173, 188—189, 193—194, 203—204, 211—212, 218—219:

վիրավորված բանվորների 19,7 %-ը ևս այս կամ այն չափով կորցրել էր աշխատունակությունը<sup>212</sup>:

Դժբախտ պատահարները բանվորների մշտական ուղեկիցն էին Քիֆլիս—Կարս երկաթուղու շինարարությունում: Ռուսաստանի հաղորդակցության ճանապարհների մինիստրը ցարին ուղղված 1897 թ. սեպտեմբերի 30-ի զեկուցագրում խոստովանում էր, որ Քիֆլիս—Կարս երկաթուղու շինարարությունում դժբախտ պատահարների թիվը թույլատրելի նորմայից շատ էր<sup>213</sup>: Ալեքսանդրապոլ—Երևան երկաթուղու կառուցման հաշվետվության մեջ նշվում էր, որ 1900—1902 թթ. ընթացքում 1224 բանվոր բուժվել են արտադրական պատահարների պատճառով ստացած վնասվածքներից<sup>214</sup>:

Բարձր էր դժբախտ պատահարների տոկոսն Անդրկովկասի երկաթուղայինների շրջանում: Այդ չափանիշով Անդրերկաթուղին, ամբողջ Ռուսաստանի մասշտաբով վերցրած, համարյա ամեն տարի գրավում էր երկրորդ տեղը՝ զիջելով միայն Հարավ-Արևմտյան երկաթուղուն:

Իսկ ինչ վիճակում էր տուժած բանվորների նյութական ապահովման գործն Արևելյան Հայաստանում:

Բանվորների դժբախտ պատահարներից ապահովագրումը Ռուսաստանում սկսեց կիրառվել շատ ավելի ուշ, քան ժամանակի զարգացած արդյունաբերական երկրներում: Դա պետք է բացատրել ձեռնարկատերերի չկամությամբ: Նախահեղափոխական հետազոտող և այս պրոբլեմի մասնագետ Ա. Ա. Պրեսսի վկայությամբ «դժբախտ պատահարների հսկայական քանակությունը... վերագրվում էր իրենց՝ բանվորների մեղքին, այսինքն նրանց անզգուշությանն ու անհոգությանը»<sup>215</sup>: Իրականում այդպես չէր:

Խոսելով ցարական կառավարության և ձեռնարկատերերի այն պնդումների մասին, թե դժբախտ պատահարների մեղավորները միշտ էլ բանվորներն են եղել, Վ. Բ. Լենինը նշում էր, որ «բանվորները մեքենաների տակ են ընկնում ոչ թե հոժարակամ, այլ միշտ էլ անզգուշության պատճառով, բայց բանն այն է, որ անկարելի է զգույշ լինել, երբ 10—11 ժամ աշխատում ես վատ շրջափակված մեքենաների միջև, վատ լուսավորված արհեստանոցում, աղմուկ ու դղրդոցի մեջ, աշխատում»:

<sup>212</sup> ՍՍՄ ԿոմգԱ, ֆ. 195, ց. 1, գ. 290, թ. 249—254:

<sup>213</sup> Всеподданнейшие доклады Министра путей сообщения 1895—1905 гг. СПб., 1906, с. 116.

<sup>214</sup> О. С. Баликян, Из истории формирования рабочего класса..., с. 91.

<sup>215</sup> А. А. Пресс, Страхование рабочих в России. СПб., 1900. с. 4—5.

տանքից բթացած ուշադրութեամբ, ուժից վեր լարումից գրգռված նյարդերով»<sup>216</sup>; Այնուհետև Վ. Ի. Լենինը շարունակում էր. «նման պայմաններում խեղձած բանվորներին կոպիտ անզգուշության համար վարձատրությունից զրկելը նշանակում է բանվորին պատժել հատկապես նաև նրա համար, որ նա թույլ է տալիս կապիտալիստներին անխղճորեն շահագործել իրեն»<sup>217</sup>: Ռուսաստանի կենտրոնական արդյունաբերական շրջանների համեմատությամբ Անդրկովկասում էլ ավելի ուշ սկսեց կիրառվել բանվորների ապահովագրումը դժբախտ պատահարներից: Նույնիսկ Բաքվում, ընդհուպ մինչև XIX դ. 90-ական թթ., նավթագործ բանվորներին ապահովագրում էին հատուկ նստ ֆիրմաներ<sup>218</sup>:

XX դ. սկզբից Ռուսաստանում որոշ տեղաշարժեր նկատվեցին դժբախտ պատահարներից տուժած բանվորների ապահովագրման գործում: Մասնավորապես 1903 թ. հուլիսի 2-ին հրապարակվեց «Կանոններ ֆաբրիկագործարանային, հանքային և հանքագործարանային արդյունաբերության ձեռնարկությունների՝ դժբախտ պատահարներից տուժած բանվորներին ու ծառայողներին և, հավասարապես, նրանց ընտանիքների անդամներին վարձատրելու մասին» օրենքը, իսկ 1912 թ. հունիսի 23-ին «Դժբախտ պատահարներից բանվորներին ապահովագրելու մասին» օրենքը:

Նոսելով 1903 թ. հուլիսի 2-ի օրենքի մասին Վ. Ի. Լենինը նշում էր, որ այն Ռուսաստանի բանվոր դասակարգի՝ ինքնակալության դեմ մղվող պայքարի արդյունքը հանդիսացավ<sup>219</sup>: Այս օրենքը, սակայն, չէր տարածվում գյուղական արհեստավորների, շինարար բանվորների, տնայնագործների, մի շարք ալլ կատեգորիայի բանվորների վրա<sup>220</sup>: Վ. Ի. Լենինը այդ փաստը բացատրում էր նրանով, որ նշված կատեգորիաների բանվորների հեղափոխական շարժումը դեռ այն մակարդակի վրա չէր, որպեսզի կառավարությանը ստիպեր նրանց համար զիջումների գնալու<sup>221</sup>:

1903 թ. հուլիսի 2-ի օրենքի կիրառման վերահսկումը դրվում էր ֆաբրիկագործարանային տեսչությունների վրա, իսկ այն վայրերում,

որտեղ այդպիսիք չկային, (Սրեանի, Սլիզավետպոլի նահանգներում, Կարսի մարզում) այդ պարտականությունը պետք է կատարեին նահանգային ու մարզային մեխանիկները կամ Հանքագործարանային գործերի ատյանները<sup>222</sup>:

Օրենքը դժբախտ պատահարներից տուժած բանվորների վարձատրման պարտականությունը դնում էր ձեռնարկատերերի վրա<sup>223</sup>: Սակայն վերջիններս կարող էին ազատվել դրանից, եթե ապացուցեին, որ դժբախտ պատահարը տուժածի շար դիտավորության կամ էլ կոպիտ անզգուշության հետևանք էր<sup>224</sup>: Ինչպես տեսնում ենք, ցարիզմը ձեռնարկատերերին սողանք էր թողնում նյութական պատասխանատվությունից խուսափելու համար: «Այս լրացումը, — նշում է Վ. Ի. Լենինը, — նշանակալի շահով խափանում է իսկապես պատասխանատվության սահմանումը, իսկ, — եթե նկատի ունենանք այն հայտնի բանը, որ մեր դատարանները կազմված են շինովնիկներից, կարիերիստներից և բուրժուական պեղանտներից, — կարող է նաև բուրժուական խափանել օրենքի կիրառումը»<sup>225</sup>: Այնուհետև Վ. Ի. Լենինը գրում է. «Ի՞նչ է նշանակում «կոպիտ անզգուշություն», — դա միանգամայն անորոշ է և անորոշելի: Թե ի՞նչ պայմաններ և ի՞նչ սահմաններում են արդարացիում կոպիտ անզգուշությունը և ինչպիսիք՝ ո՛չ, — այդ մասին դատելը ամբողջովին թողնված է շինովնիկների հայեցողությանը: Կապիտալիստները բանվորի ամեն մի «անզգուշություն» միշտ էլ համարում են և հհամարեն կոպիտ ու շարդարացվող, — շարունակում է Վ. Ի. Լենինը, — և այդ կարծիքն ապացուցելու համար կապիտալիստը տասն անգամ ավելի շատ վկաներ ու «գիտուն» պաշտպաններ... կգտնի, քան բանվորները»<sup>226</sup>:

1903 թ. հուլիսի 2-ի օրենքը սահմանում էր նաև խեղձած բանվորներին տրվելիք վարձատրության չափերը, ընդ որում սահմանում էր ոչ նրանց օգտին: Նշելով այդ մասին Վ. Ի. Լենինը գրում է. «Վարձատրության չափը որոշվում է տուժածի տարեկան ոտճիկի այս կամ այն մասով, այսինքն՝ կենսաթոշակը պետք է լինի տուժածի տարեկան

216 Վ. Ի. Լենին, ԵԺԺ, հ. 7, էջ 407—408:

217 Նույն տեղում, էջ 408:

218 Ю. Гессен, История горнорабочих СССР, т. II, М., 1929, с. 167.

219 Վ. Ի. Լենին, ԵԺԺ, հ. 7, էջ 404:

220 Նույն տեղում, էջ 405:

221 Նույն տեղում:

222 ՆՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 3, գ. 811, ք. 5, Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 265, ց. 1, գ. 61, ք. 6:

223 Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 265, ց. 1, գ. 61, ք. 6:

224 Նույն տեղում, ք. 6:

225 Վ. Ի. Լենին, ԵԺԺ, հ. 7, էջ 407:

226 Նույն տեղում:

ռոճիկի 2/3-ից ոչ ավելի (մասվան կամ աշխատունակությունը լիովին կորցնելու դեպքում): Իսկ տարեկան ռոճիկը որոշվում է օրական միջին վաստակի (կամ սևագործ բանվորին տրվող միջին օրավարձի) հիման վրա՝ բազմապատկած 260-ով<sup>227</sup>: Այդ որոշումը բանվորների իրավունքների կոպիտ ոտնահարում էր, որովհետև «նախ, եթե նույնիսկ բանվորն աշխատել է տարվա մեջ 300 օր, նրա տարեկան ռոճիկը կրճատվում է մինչև 260 օր,—կրճատվում է առանց որևէ հիմքի, պարզապես այն պատճառով, որ օրենքը հրամայում է կրճատել: Երկրորդ,—շարունակում է Վ. Ի. Լենինը,—եթե նույնիսկ բանվորն ավելի լավ վաստակ է ստացել, քան սևագործ բանվորը, միևնույն է, հաշվարկի հիմք է վերցվում,—օրինակ, ոչ ամբողջ տարին գործող ձեռնարկություններում աշխատելու դեպքում,—միայն սևագործ բանվորի վաստակը»<sup>228</sup>: Եվ, վերջապես, բանվորները կողոպտվում էին նաև այն պարզ պատճառով, որ «սևագործ բանվորին տրված օրավարձի միջին չափը յուրաքանչյուր եռամսյակի (!) համար որոշում են գործարանային և հանքագործարանային գործերի ատյանները, ինքնին հասկանալի է, առանց բանվորների որևէ մասնակցության»<sup>229</sup>:

Այսպիսով 1903 թ. հուլիսի 2-ի օրենքը կիսատ-պոստ մի ակտ էր, որը չէր կարող լրջորեն բարելավել խեղձած բանվորների վարձատրման հարցը: Գրությունը հօգուտ բանվորի մի քիչ փոխեց 1912 թ. հունիսի 23-ի օրենքը: Ըստ այդ նոր օրենքի, ձեռնարկատերերն ազատվեցին խեղձած բանվորներին վարձատրելու պարտականությունից: Այն դրվեց ապահովագրական ընկերությունների վրա: Ձեռնարկատերերից պահանջվում էր միայն իրենց հաշվին ապահովագրել բանվորներին<sup>230</sup>: Սա նախորդ օրենքի համեմատ իհարկե մի քայլ առաջ էր:

Խարխուլ հիմքերի վրա էր դրված դժբախտ պատահարներից բանվորների ապահովագրման հարցն Արևելյան Հայաստանում, ուր, բացառությամբ Լոռուց, գոյություն չունեին ֆաբրիկագործարանային տեսչություն: Այդ իսկ պատճառով, վերոհիշյալ օրենքների կիրառումը հաճախ հանդիպում էր բազմաթիվ խոչընդոտների, իսկ երբեմն էլ դառնում՝ անհնար: Գործը դժվարանում էր նաև նրանով, որ մանր ձեռնարկություններից շատերում դժբախտ պատահարների հաշվառում չէր կատարվում:

<sup>227</sup> Նույն տեղում, էջ 408:

<sup>228</sup> Նույն տեղում:

<sup>229</sup> Նույն տեղում, էջ 409:

<sup>230</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 75, գ. 62, թ. 197:

Մինչև 1903 թ. օրենքի հրապարակումը Ձանգեզուրում ձեռնարկատերերը հիմնականում միանվագ նպաստ էին վճարում, այն էլ հիմնականում բանվորների զոհվելու դեպքում<sup>231</sup>: Այսպես, օրինակ, 1890—1894 թթ. Ձանգեզուրի պղնձի հանքերում և Լազարևի գործարանում 1210 ուրբու 11 նպաստ է վճարվել զոհվածների և 100 ուրբու 1 նրպաստ՝ խեղձած, բայց կենդանի մնացած բանվորի համար<sup>232</sup>: Իրավիճակը Ձանգեզուրում չլավացավ նաև 1903 թ. հետո, քանի որ դժբախտ պատահարներից տուժած բանվորների վարձատրումը շարունակում էր կախված մնալ ձեռնարկատիրոջ հայեցողությունից<sup>233</sup>:

Գրությունը զգալիորեն փոխվեց Ձանգեզուրի պղնձարդյունաբերության մեջ ԿԱՄԸ ներթափանցելուց հետո: 1912 թ. սովյալներով Ղաթարի գործարանների բանվորներն ապահովագրվում էին և դժբախտ պատահարներից տուժելու դեպքում՝ վարձատրվում: Նպաստները վճարվում էին աշխատունակությունը կորցնելու ամբողջ ընթացքում՝ ռոճիկի կեսի չափ: (1912 թ. վճարվել էր 257 ո. 08 կոպ.): Խեղձած բանվորները ստանում էին նաև միանվագ նպաստներ (1912 թ. վճարվել է 290 ո. 90 կոպ.)<sup>234</sup>:

Անմխիթար վիճակում էր դժբախտ պատահարներից տուժած բանվորների վարձատրման գործն աղահանքերում<sup>235</sup>: Օրինակ Կաղզվանի աղահանքում բանվորներն ընդհանրապես չէին ապահովագրվում<sup>236</sup>: Միանգամայն այլ էր դրությունը Բորչալուի գավառի պղնձարդյունաբերության մեջ: Այստեղ ի տարբերություն Ձանգեզուրի գավառի, Կարսի մարզի և Երևանի նահանգի, XX դ. սկզբից ֆաբրիկագործարանային տեսչություն կար, որն ինչ-որ չափով վերահսկում էր խեղձած բանվորների վարձատրման գործը: Ալավերդում մինչև 1903 թ. բանվորներին արդեն ապահովագրում էին դժբախտ պատահարներից: Բացառիկ դեպքերում Լեռնային օկրուգի ինժեների թույլտվությամբ խեղձած բանվորներին հատկացվում էր միանվագ նպաստ<sup>237</sup>:

<sup>231</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 5908, թ. 3, 4, 5:

<sup>232</sup> Նույն տեղում, թ. 4, 5:

<sup>233</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 58, գ. 401, թ. 44:

<sup>234</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 288, թ. 89, «Արդյունաբերության վիճակը և բանվոր դասակարգի զարգացումը...» էջ 147:

<sup>235</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 58, գ. 401, թ. 44:

<sup>236</sup> Նույն տեղում, ց. 74, գ. 194, թ. 1:

<sup>237</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 3531, թ. 74, գ. 3694, թ. 268:

1903 թ. հուլիսի 2-ի օրենքի կիրառումը Ալավերդի-Շամլուղում դրված էր քիչ թե շատ կազմակերպված հիմքերի վրա: Դժբախտ պատահարներից տուժած բանվորներին այստեղ ԿԱՄԸ վճարում էր միանվագ նպաստներ, թոշակներ և օրանպաստ օրավարձի կեսի շափ<sup>238</sup>: Հավելված 1-ի աղյուսակ 16-ում տվյալներ են բերված ԿԱՄԸ Բորչալուի և Զանգեզուրի գավառների ձեռնարկություններում դժբախտ պատահարներից տուժած բանվորների վարձատրման մասին:

1903 թ. հուլիսի 2-ի օրենքը տարածվում էր նաև Երևանի նահանգի ձեռնարկությունների վրա: 1910 թ. տվյալներով դրանք 97-ն էին (Սարաջևի և Շուստովի կոնյակի գործարանները, Ղամարլուի կոնյակի և ռեկտիֆիկացիոն՝ թվով 6 ձեռնարկությունները, Նախիջևանի գավառի 10 մետաքսաթելի մշակման գործարանները և նահանգի 78 բամբակազտիչ ձեռնարկությունները): Մի քանի տասնյակ մանր գործանոցներ այդ հաշվից դուրս էին մնացել<sup>239</sup>:

Այլ բանվորների հետ համեմատած, նպաստներով և թոշակներով բավականին լավ էին ապահովված երկաթուղային բանվորները: Դա պետք է բացատրել այն հանգամանքով, որ XIX դ. 90-ական թթ. սկզբած Ռուսաստանի բոլոր երկաթուղիներում կենտրոնացված ձևով հիմնրվել էին թոշակների և խնայողական-փոխօգնության բազմաթիվ դրամարկղներ, որոնց վրա էլ դրված էր խեղձած երկաթուղայինների վարձատրման պարտականությունը: Այսպիսով արտադրական վնասվածքները տարածված երևույթ էին ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում: Դժբախտ պատահարների ճնշող մեծամասնությունը տեղի էր ունենում լեռնային արդյունաբերության մեջ և հիմնականում շնորհիվ այն բանի, որ ձեռնարկատերերն անտեսում էին աշխատանքային անվտանգության կանոնները, ավելի ինտենսիվ դարձնում բանվորական ուժի շահագործումը:

Ինչ վերաբերում է Արևելյան Հայաստանում խեղձած բանվորներին ցույց տրվող նյութական օգնության հարցին, ապա ընայած այդ ուղղությամբ տարվող մի շարք միջոցառումներին, այն դեռևս շատ հեռու էր լուծված լինելուց, մանավանդ, երբ համեմատում ենք Ռուսաստանի կենտրոնական արդյունաբերական շրջանների հետ:

<sup>238</sup> ՇՄՍՀ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 288, ք. 94, 102, գ. 290, ք. 2—246, գ. 496, ք. 2—226, «Արդյունաբերության վիճակը և բանվոր դասակարգի ձևավորումը...» էջ 157:

<sup>239</sup> ՇՄՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 3, գ. 811, ք. 6—11:

Ձեռնարկատերերի ակտիվ դիմադրությունը, կառավարական օրգանների կողմից համապատասխան, առանց այն էլ խիստ թերի, օրենքների կենսագործման նկատմամբ տարվելիք վերահսկողության անարդյունավետ լինելը հնարավորություն չէին ընձեռում խեղձած բանվորներին լուրջ, բավարար չափով նյութական օգնություն ստանալու:

Պրոլետարիատի շահագործման հետևանքներից էր պրոֆեսիոնալ հիվանդությունների լայն տարածումը: Ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասի արդյունաբերական շատ կենտրոններում բանվորական մասսաները խիստ տառապում էին այդ հիվանդություններից:

«Բոլորին հայտնի է,—նշում է Վ. Ի. Լենինը,—թե բանվորների ինչպիսի մեծ զանգված աշխատունակությունը կորցնում է ոչ թե միայն դժբախտ պատահարներից, ոչ թե մարմնական վնասվածքից, այլ արտադրության վնասակար պայմանների հետևանքով առաջացած հիվանդություններից»<sup>240</sup>:

Պրոֆեսիոնալ հիվանդությունները մի իսկական պատուհաս էին դարձել Բաքվի նավթարդյունաբերության բանվորների համար:

Սակայն Արևելյան Հայաստանում կապիտալիստական արդյունաբերության համեմատաբար թույլ զարգացումը, ինչպես նաև արտադրության վնասակար ճյուղերի սակավությունը պայմանավորեցին բանվորների շրջանում պրոֆեսիոնալ հիվանդությունների սահմանափակ չափով տարածումը: Միայն մետաքսաթելի արտադրության մեջ էին դրանք զգալի:

Ինչ վերաբերում է ընդհանրապես հիվանդություններին, ապա Արևելյան Հայաստանի ողջ բնակչությունը, այդ թվում բանվորությունը խիստ տուժում էին պարբերաբար սկսվող համաճարակներից: Դրանց արագ տարածման գլխավոր պատճառները շրջապատի աղտոտումն էր ու բժշկասանիտարական ծառայությունների չափազանց վատ աշխատանքը:

Երևանում, օրինակ, օդն ու ջուրը խիստ ապակալում էին Զանգազի ափին կառուցված կաշվի մշակման ձեռնարկությունները<sup>241</sup>: Չափազանց

<sup>240</sup> Վ. Ի. Լենին, ԵՆԺ, հ. 7, էջ 406:

<sup>241</sup> ՇՄՍՀ ԿՊՊԱ, ֆ. 117, ց. 1, գ. 777, ք. 2:

կեղտոտ ու անբարեկարգ էին Երևանի փողոցները: Այդ են վկայում քաղաքի ոստիկանապետի պաշտոնակատարի 1894 թ. մարտ-ապրիլ ամիսների զեկուցագրերը<sup>242</sup>:

1911 թ. հունիսի 9-ին Ալեքսանդրապոլի քաղաքային սանիտարական-գործադիր հանձնաժողովի նիստում քաղաքագլուխը ստիպված նշում էր, որ Ալեքսանդրապոլի սանիտարական վիճակը բարենպաստ պայմաններ է ստեղծում ժանտախտի, խոլերայի և այլ սուր վարակիչ հիվանդությունների տարածման համար<sup>243</sup>:

Խոլերայի համաճարակի բռնկման բազմաթիվ դեպքեր են արձանագրվել Երևանի նահանգում: 1892 թ. օգոստոսի 1-ի տվյալներով, Երևանում խոլերայով հիվանդացել էին 24 մարդ<sup>244</sup>, 1904 թ. նահանգում՝ 4615 մարդ, որոնց 79,7% -ը (3679 մարդ) մահացել է<sup>245</sup>: Խոլերայի մի նոր համաճարակ բռնկվեց 1910 թ.: Երևանի նահանգում խոլերայով հիվանդացան 1210 մարդ (մահացան 767-ը), Կարսի մարզում՝ 1419 մարդ (մահացան 649-ը), Բորչալուի, Ղազախի, Շուշիի գավառներում՝ 198 մարդ (մահացան 121-ը), Ախալքալաքի և Ախալցխայի գավառներում՝ 305 մարդ (մահացան 166-ը)<sup>246</sup>:

Խոլերայի և բժավոր տիֆի ուժեղ համաճարակ սկսվեց Երևանում 1915 թ.<sup>247</sup>, թեև ձեռնարկվեցին մի շարք միջոցներ, մասնավորապես կառուցվեց սուր վարակիչ հիվանդների բարաք, սակայն պաշարն այդ հիվանդությունների դեմ ցանկալի արդյունք չտվեց, որովհետև այն չէր կրում բազմակողմանի, էֆեկտիվ բնույթ<sup>248</sup>:

Տիֆի համաճարակներ հաճախ էին բռնկվում նաև Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարության տեղամասերում<sup>249</sup>:

Անդրկովկասի ողջ բնակչության և, մասնավորապես, երկրամասի արդյունաբերական մասսաների բուժսպասարկման գործը գտնվում էր հետամանց վիճակում: Համեմատաբար բարվոք էր այն փոխաբայու-

թյան վարչական կենտրոնում՝ Թիֆլիսում: Ինչ վերաբերում է երկրամասի արդյունաբերական ամենամեծ քաղաքին՝ Բաքվին, ապա այստեղ, մանավանդ հանքագործարանային շրջանում, առողջապահության հարցերի դրվածքը ծայրաստիճան բարձիթողի վիճակում էր:

Նույնպիսի պատկեր էր ներկայացնում բուժսպասարկման գործն Արևելյան Հայաստանում: Դրա մասին են վկայում աղյուսակ 17-ի տվյալները: Ինչպես երևում է այդ տվյալներից, Երևանի նահանգում և Կարսի մարզում թե հիվանդանոցների և բուժընդունարանների, նրանցում եղած մահճակալների և թե բուժող անձնակազմի քանակը բոլորովին չէր բավարարում բնակչությանը: Հատկապես վատ էր վիճակը գյուղական շրջաններում: Օրինակ, Երևանի նահանգի գյուղերում 1904 թ. ընդամենը 7 բժիշկ կար, մինչդեռ տարրական պահանջները բավարարելու համար պետք էին ամենաքիչը 42 բժիշկներ<sup>250</sup>:

1905 թ. տվյալներով Ղազախի և Զանգեզուրի գավառներում գործում էին մեկական բանտային և մեկական գյուղական հիվանդանոց՝ 6-ական մահճակալներով<sup>251</sup>:

Ամբողջ Արևելյան Հայաստանի տարածքում համարյա չկային ֆարբիկագործարանային բուժկետեր և ֆարբիկագործարանային բժիշկներ ու բուժակներ: Այդպիսիք չկային, մասնավորապես, Երևանի նահանգում և Կարսի մարզում<sup>252</sup>: Ինչ խոսք, որ դրանից խիստ տուժում էր տեղի բանվորների բուժսպասարկման գործը: Այնուամենայնիվ, մի շարք կատեգորիաների բանվորներ այս կամ այն չափով բուժօգնություն ստանում էին: Առաջին հերթին պետք է նշել արդյունահանող արդյունաբերության աշխատողներին:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Անդրկովկասի լեռնահանքային արդյունաբերության բանվորներին ցույց տրվող բժշկական օգնությունը կարգավորվում էր 1897 թ. հուլիսի 17-ի «Բանվորների բժշկական օգնության մասին պարտադիր որոշումներով» և Կովկասի լեռնային վարչությանը կից Հանքագործարանային գործերով ատյանի համա-

<sup>242</sup> Նույն տեղում, գ. 396, թ. 16, 23:

<sup>243</sup> ՀՍՍՀ Կողմ, ֆ. 105, ց. 1, գ. 2111, թ. 1:

<sup>244</sup> ՀՍՍՀ Կողմ, ֆ. 117, ց. 1, գ. 835, թ. 24:

<sup>245</sup> Отчет о состоянии народного здоровья и организации врачебной помощи в России за 1904 год. СПб., 1906, отд. I, с. 95.

<sup>246</sup> То же за 1910 год. СПб., 1912, отд. I, с. 70—73.

<sup>247</sup> ՀՍՍՀ Կողմ, ֆ. 117, ց. 1, գ. 1765, թ. 14, գ. 1811, թ. 25:

<sup>248</sup> Նույն տեղում, գ. 1765, թ. 47, գ. 1811, թ. 33:

<sup>249</sup> Նույն տեղում, ֆ. 270, ց. 1, գ. 4, թ. 255—256, Օ. С. Баллякин Из истории положения..., с. 92.

<sup>250</sup> Отчет о состоянии народного здоровья и организации врачебной помощи в России за 1904 г., отд. I, с. 117.

<sup>251</sup> Отчет о состоянии народного здоровья и организации врачебной помощи в России за 1905 г., СПб., 1907, Приложение, с. 22, 26.

<sup>252</sup> То же за 1902 г., СПб., 1904, отд. III, с. 218—219, то же за 1903 г., СПб., 1905, отд. III, с. 180—181, то же за 1904 г., СПб., 1906, отд. III, с. 187, то же за 1905 г., СПб., 1907, отд. III, с. 181, то же за 1907 г., СПб., 1909, отд. III, с. 203.

պատասխան «լրացումներով»<sup>253</sup>, Դրանցում նշվում էր, որ նավթի, մանգանի և այն հանքավայրերում, որտեղ աշխատում էին 25-ից ոչ պակաս մշտական բանվորներ, պարտադիր կերպով պետք է գործեն հիվանդանոցներ, իսկ նավթի, մանգանի հանքերում և լեռնային գործարաններում ամբուլատորիաներ և առաջին օգնության բուժընդունաբաններ<sup>254</sup>, Այն ձեռնարկատերերը, որոնց հանքավայրերում հիվանդանոցներ չկային, պարտավոր էին հիվանդ բանվորներին իրենց հաշվին բուժել մոտակա հիվանդանոցներում<sup>255</sup>, Հանքավայրերում և լեռնային գործարաններում հիմնված բոլոր հիվանդանոցները յուրաքանչյուր 100 մշտական բանվորների համար պետք է ունենային մեկ մահճակալ<sup>256</sup>:

Այսպիսով, վերոհիշյալ որոշումներն ինչ-որ չափով կարգավորում էին լեռնահանքային բանվորների բուժօգնության գործն Անդրկովկասում: Բայց դրանք հաճախ չէին կենսագործվում: Օրինակ, 1905 թ. տրվյալներով Երևանի նահանգում, Կարսի մարզում, Ելիզավետպոլի նահանգի Ղազախի, Չանգեզուրի և Ելիզավետպոլի գավառներում լեռնահանքային և լեռնագործարանային արդյունաբերության 1515 բանվորներին ընկնում էր ընդամենը մեկ հիվանդանոց՝ 16 մահճակալով (Կետաբեկում), 1436 բանվորներին՝ մեկ ամբուլատորիա, իսկ 52 բանվորներ կարող էին բուժվել մոտակա քաղաքներից որևէ մեկի հիվանդանոցում կամ մասնավոր ընդունարաններում<sup>257</sup>:

1912 թ. հունիսի 23-ին ընդունվեց մեկ այլ օրենք՝ «Բանվորներին հիվանդության դեպքում ապահովելու մասին», որը տարածվում էր Ծվրոպական Ռուսաստանի և Կովկասի վրա: Օրենքը վերաբերում էր այն ձեռնարկություններին, որոնցում զբաղված էին 20-ից ոչ պակաս մշտական բանվորներ և կիրառվում էին շոգու, ջրի, գազի, էլեկտրականության կամ կենդանիների ուժով աշխատող մեքենաներ կամ եթե նման մեքենաներ չկային, ապա բանվորների թիվը 30-ից պակաս չէր<sup>258</sup>:

<sup>253</sup> Г. Ф. Тигранов, С. П. Гусятников, Врачебная помощь рабочим на горных заводах и промыслах. СПб., 1907, с. 62.

<sup>254</sup> Նույն տեղում, էջ 62, 65:

<sup>255</sup> Նույն տեղում, էջ 66:

<sup>256</sup> Նույն տեղում, էջ 68:

<sup>257</sup> Նույն տեղում, էջ 69:

<sup>258</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 75, գ. 62, ք. 177:

Այդ ձեռնարկությունների բանվորներին ցույց էր տրվում բուժօգնություն ձեռնարկատիրոջ հաշվին և որոշակի ժամանակով նպաստ էր հատկացվում հիվանդանոցային դրամարկղների կողմից<sup>259</sup>: Այդ դրամարկղները նպաստ էին հատկացնում նաև բանվորների այն հիվանդ հարազատներին, որոնք գտնվում էին նրանց խնամքի տակ<sup>260</sup>: Սույն օրենքն ավելի էր կոնկրետացնում այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ էին բանվորներին բուժօգնություն ցույց տալու համար:

Արևելյան Հայաստանում համեմատաբար կազմակերպված բուժօգնություն էր ցույց տրվում հանքալեռնային արդյունաբերության և մասնավորապես, Ալավերդու պղնձարդյունաբերության բանվորներին:

XIX դ. վերջին Ալավերդում դեռ հիվանդանոց չկար<sup>261</sup>: Սակայն 1900-ական թթ. սկզբին (1901—1904 թթ.) այստեղ արդեն գործում էր 20 մահճակալանոց հիվանդանոց, որն ուներ վիրահատարան և առանձին սենյակ սուր վարակիչ հիվանդների համար: Բացի հիվանդանոցից այստեղ կային նաև ամբուլատորիա, բուժընդունարաններ, դեղատուն: Անձնակազմը բաղկացած էր բժշկից, երկու բուժակներից և մեկերկու բուժծառայողներից: Բուժումը և դեղերի բացթողումը ձրի էր ոչ միայն տեղի բանվորների և նրանց ընտանիքների անդամների, այլև Ախթալայի և Շամլուղի բանվորների համար<sup>262</sup>:

1909 թ. Ալավերդում կար 8 մահճակալանոց հիվանդանոց, 1 ամբուլատորիա և դեղատուն: Անձնակազմը բաղկացած էր բժշկից, 2 բուժակներից և 2 այլ բուժծառայողներից: Մանեսում և Խաչիգեղում կային մեկական բուժընդունարաններ՝ 1—2 մահճակալով և մեկական բուժակներով<sup>263</sup>: Լուրջ դեպքերում հիվանդի մոտ լրացուցիչ բժիշկ էին հրավիրում մոտակա երկաթուղային տեղամասից: Սանր հիվանդներին ուղարկում էին Թիֆլիսի հիվանդանոցները<sup>264</sup>:

1913 թ. տվյալներով Ալավերդում կար հիվանդանոց 12 մահճակալով, 1 բուժընդունարան, 1 բժիշկ, 2 բուժակ, 1 մանկաբարձուհի: Բուժսպասարկումը դարձյալ ձրի էր<sup>265</sup>:

<sup>259</sup> Նույն տեղում:

<sup>260</sup> Նույն տեղում, ք. 181:

<sup>261</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 415, ց. 1, գ. 32, ք. 62—63:

<sup>262</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 37, ց. 58, գ. 323, ք. 182—183, Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 3308, ք. 54, գ. 3531, ք. 74, 141:

<sup>263</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 4089, ք. 182:

<sup>264</sup> Նույն տեղում:

<sup>265</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 878, ք. 2:

1913 թ. Այսպիսով անողջապահական նպատակներով ծախսվել է 10 001 ու 35 կոպ., մեկ բանվորի վրա ծախսվել է 4 ու 92 կոպ.<sup>266</sup>:

Նույն թվականին Շամլուղում կար բուժընդունարան մեկ բուժակով: Բացի դրանից այստեղ շաբաթը մեկ այցելության էր գալիս բժիշկը: Բուժումը բանվորների և նրանց ընտանիքի անդամների համար ձրի էր: Մեկ բանվորի բուժածխսը 1913 թ. կազմել է 4 ու 26 կոպ.<sup>267</sup>:

Նույն թվականին Ախթալայում շաբաթը մեկ այցելում էր բժիշկ, որը բանվորներին ու նրանց ընտանիքի անդամներին նույնպես ձրի էր բուժում<sup>268</sup>: Շահալիի բանվորները բուժկետեր չունեին և բուժվում էին Ղարաքիլիսայում<sup>269</sup>: Վիճակը բարվոք չէր Չանգեզուրի պղնձադոլոմենաբերական շրջանում, ուր մինչև 90-ական թթ. կեսերին ոչ մի բժիշկ կամ բուժակ չկար<sup>270</sup>: XX դարի սկզբին այստեղ կար ամբուլատորիա առաջին բուժօգնության համար և մի փոքրիկ դեղատուն, որոնց կից աշխատում էին բժիշկ և բուժակ: Այս ամենը պահվում էր ձեռնարկատերերի հաշվին<sup>271</sup>: Բացի ամբուլատորիայում բուժվելուց, հիվանդ բանվորները բուժվում էին նաև տանը՝ բուժանձնակազմի հսկողության տակ<sup>272</sup>: Ծանր հիվանդներ լինելու դեպքում ամբուլատորիայի մոտ վարձվում էր մահճակալով սենյակ (ձեռնարկատիրոջ հաշվին), որտեղ և պառկեցնում էին հիվանդին<sup>273</sup>:

1913 թ. տվյալներով Չանգեզուրի պղնձադոլոմենաբերական շրջանում ձեռնարկատերերի հաշվին արդեն գործում էին 8 մահճակալանոց հիվանդանոց, ամբուլատորիա և դեղատուն, որոնք սպասարկվում էին 2 բժիշկների և 2 բուժակների կողմից<sup>274</sup>:

Ոչ մի հիվանդանոց կամ բուժընդունարան, բժիշկ կամ բուժակ չկար Արևելյան Հայաստանի աղի հանքերում: Այդ հանքերի բանվորները բուժվում էին մոտակա բուժընդունարաններում (Կողբի բանվորները՝ Իգդիրի, Նախիջևանի և Սուստինի բանվորները՝ Նախիջևանի, Օլ-

թիի բանվորները՝ Օլթիի, Կաղզվանի բանվորները՝ Կաղզվանի բուժընդունարաններում)<sup>275</sup>: Չափազանց վատ վիճակում էր բուժսպասարկումը Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարության տեղամասերում: Այդ մասին ստիպված էին խոստովանել նույնիսկ շինվարչության պաշտոնյաները<sup>276</sup>: Այս շինարարության տեղամասերի երկայնքով հիվանդանոցներ չկային (եթե չհաշվենք Թիֆլիսը), այլ կային երեք բուժընդունարաններ (Սանահինում, Ղարաքիլիսայում, Ալեքսանդրապոլում), որոնք չունեին անհրաժեշտ սարքավորումներ և բուժագործիքներ<sup>277</sup>:

Թեև շինարարական տեղամասերի այս կամ այն վայրում (Ախթալայում) կային մի քանի բժիշկ և բուժակ, սակայն նրանք չէին շրջում: Եվ դա այն դեպքում, երբ այդ վայրերում շատ տարածված էին հիվանդությունները, հատկապես տենդը (մալարիա): Մինչդեռ բուժօգնություն ցույց տալու համար երկաթուղու շինվարչությունը պահում էր բանվորի աշխատավարձի 1% -ը<sup>278</sup>:

Թիֆլիս—Կարս երկաթգծի շինարարության հիվանդ բանվորներին հիվանդանոց ուղարկելու համար ոչ մի տրանսպորտային միջոց չէր հատկացվում: Ծանր հիվանդներին Ղարաքիլիսայի կամ մեկ այլ վայրի բուժընդունարանը կամ հիվանդանոցը ուղարկում էին ոտքով, լավագույն դեպքում ձիով<sup>279</sup>:

Չնայած այդ ամենին, Ռուսաստանի հաղորդակցության ճանապարհների մինիստրն իր 1897 թ. սեպտեմբերի 30-ի ցարին ուղղված գեղուցագրում նշում էր, որ Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարությունում բուժսպասարկումը և սանիտարիան գտնվում էին բարվոք վիճակում<sup>280</sup>:

Համեմատաբար լավ էր կազմակերպված բուժսպասարկումը Անդրրկովկասի երկաթուղային բանվորների համար: 1900 թ. Անդրերկաթուղու ենթակայության տակ կային 3 հիվանդանոց 170 մահճակալով (Բաբվում, Թիֆլիսում, Սուրամում) և 17 բուժընդունարաններ

<sup>266</sup> Նույն տեղում:

<sup>267</sup> Նույն տեղում, գ. 858, թ. 2:

<sup>268</sup> Նույն տեղում, թ. 4:

<sup>269</sup> ՍՍՀՄ Կողմ, գ. 37, ց. 58, գ. 323, թ. 183:

<sup>270</sup> Վրաց. ՍՍՀ Կողմ, գ. 264, ց. 1, գ. 5908, թ. 8:

<sup>271</sup> ՍՍՀՄ Կողմ, գ. 37, ց. 58, գ. 323, թ. 212, Վրաց. ՍՍՀ Կողմ, գ. 264, ց. 1, գ. 3531, թ. 351, գ. 3780, թ. 97, գ. 3901, թ. 77:

<sup>272</sup> ՍՍՀՄ Կողմ, գ. 37, ց. 58, գ. 323, թ. 608:

<sup>273</sup> Նույն տեղում:

<sup>274</sup> Վրաց. ՍՍՀ Կողմ, գ. 264, ց. 1, գ. 4991, թ. 28:

<sup>275</sup> ՍՍՀՄ Կողմ, գ. 37, ց. 58, գ. 323, թ. 213, ց. 70, գ. 636, թ. 1—4, Վրաց. ՍՍՀ Կողմ, գ. 264, ց. 1, գ. 3901, թ. 79, գ. 4991, թ. 31:

<sup>276</sup> ՍՍՀՄ Կողմ, գ. 270, ց. 1, գ. 26, թ. 87:

<sup>277</sup> Նույն տեղում, Օ. Ս. Բալիկյան, Из истории положения... с. 97.

<sup>278</sup> «Новое обозрение», 1897, 18 ноября, в. Ավետիսյան..., էջ 104:

<sup>279</sup> ՍՍՀՄ Կողմ, գ. 270, ց. 1, գ. 4, թ. 220, 227, Օ. Ս. Բալիկյան Из истории положения..., с. 90.

<sup>280</sup> Всеподданнейшие доклады Министра путей сообщения 1895—1905 г. СПб, 1906, с. 116.

34 մահճակալով: Նրանցում աշխատում էին 20 բժիշկ, 53 բուժակ, 6 մանկաբարձուհի, 1 պրովիզոր և 1 պրովիզորի օգնական<sup>281</sup>,

1912 թ. Անդրկովկասում կային 6 երկաթուղային հիվանդանոց 340 մահճակալով (Քիֆլիսում, Բաքվում, Սուրամում, Ցեմիում, Կոբուլեթում, Նախիջևանում) և 4 բարաք սուր վարակիչ հիվանդանոցի համար՝ 50 մահճակալով (Քիֆլիսում, Բաքվում, Ելիզավետպոլում, Ալեքսանդրապոլում): Բացի դրանից կային 22 բուժընդունարաններ 44 մահճակալով և 30 սանիտարական վագոններ: Բուժանձնակազմը բաղկացած էր 32 բժիշկներից, 66 բուժակներից, 62 կոնզուլտոր-բուժակներից, 12 բուժակ-ախտահանողներից, 16 մանկաբարձուհիներից, պրովիզորից, պրովիզորի 4 օգնականներից և 161 հոգի սպասարկող անձնակազմից<sup>282</sup>:

1902 թ. Երևանի նահանգում կար ընդամենը մեկ երկաթուղային բժիշկ, իսկ Կարսի մարզում ընդհանրապես չկար<sup>283</sup>: 1907 թ. Երևանի նահանգում կային արդեն երկաթուղային 5 բժիշկ, 4 բուժակ և 1 մանկաբարձուհի<sup>284</sup>:

Չնայած որոշ տեղաշարժերին, այնուամենայնիվ Անդրկովկասի, մասնավորապես Արևելյան Հայաստանի երկաթուղային բանվորների բուժօգնության գործը վատ էր կազմակերպված: Անբավարար էր թե բուժհիմնարկների և թե բուժաշխատողների քանակը: Բժիշկների օգնությանը ոչ բոլոր բանվորներն ու նրանց ընտանիքի անդամները կարող էին դիմել: Այդ իսկ պատճառով նրանց բուժսպասարկումը շարունակում էր մնալ խիստ ցածր մակարդակի վրա: Բայց խոշոր ձեռնարկություններում բանվորների դասակարգային պայքարի հետևանքով նրանց բուժսպասարկման գործը համեմատաբար կարգավորված էր:

Իր տնտեսական պայքարում Անդրկովկասի պրոլետարիատն այլ պահանջների հետ միասին մշտապես առաջ էր քաշում նաև բնակարանային պայմանների բարելավման խնդիրը: «Այն, ինչ այսօր հաս-

կանում են բնակարանային կարիք ասելով,—նշում է Ց. Էնգելը,—դա բանվորների առանց այն էլ անտանելի պայմանների առանձնակի վատթարացումն է, որը դեպի մեծ քաղաքները բնակչության անակընկալ հոսանքի հետևանքն է. բնակարանային վարձի հսկայական բարձրացում, բնակիչների էլ ավելի սաստիկ կուտակվածություն առանձին տներում, ոմանց համար առհասարակ օթևան գտնելու անհնարինություն»<sup>285</sup>:

Վ. Ի. Լենինը նշում է. «...Բնակարանների վիճակագրությունը յուրաքանչյուր մեծ քաղաքում մեզ ցույց կտա, որ բնակչության ստորին դասակարգերը, բանվորները, մանր առևտրականները, մանր ծառայողները և այլն, ամենից վատ են ապրում, ամենանեղ և ամենավատ բնակարաններն ունեն և ամենից ավելի քանկ են վճարում 1 խորանարդ տոնաշափի համար: Բնակարանային տարածության միավորով հաշված, գործարանային կազմաման կամ որևէ գետնախորշը չբավորության համար ավելի թանկ են, քան նևսկու այս կամ այն մասում գտնվող շքեղ բնակարանները»<sup>286</sup>:

Բնակարանների և կացարանների սուր պակասը, բանվորական խրճիթների ծայրաստիճան հակասանիտարական վիճակը, տարրական հարմարությունների բացակայությունը բնորոշ էին նաև Բաքվին, Քիֆլիսին, Բաթումին: Սակայն Արևելյան Հայաստանում, համեմատած Անդրկովկասի այլ վայրերի հետ, բանվորական բնակարանների և կացարանների հարցը խիստ սրությամբ չէր դրված: Դա պետք է բացատրել առաջին հերթին այստեղ կապիտալիստական արդյունաբերության զարգացման ցածր աստիճանով, բանվորների թվաքանակի համեմատաբար փոքրությամբ և եկվոր բանվորական ձեռքերի քրություն: Սա վերաբերում է մասնավորապես Երևանի նահանգին, որի բանվորությունը, ինչպես ասվեց, բնակվում էր հիմնականում սեփական բնակարաններում: Պատահական չէ, որ Երևանի նահանգի քաղաքներում չկային էժանագին բնակարաններ ու գիշերատներ, որոնցից Ռուսաստանի այլ շրջաններում օգտվում էին հիմնականում եկվոր սևագործ և սեզոնային բանվորները<sup>287</sup>:

Սակայն պետք է նշել, որ բանվորների սեփականություն հանդիսացող բնակարան-կացարանները նույնպես չէին բավարարում նվա-

<sup>285</sup> Կ. Մարքս և Ց. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 2, Ե., 1973, էջ 409—410:

<sup>286</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 19, էջ 422:

<sup>287</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1290, ց. 5, գ. 216, թ. 3, 7, 13, 20, 23:

<sup>281</sup> Отчет о врачебно-санитарном состоянии эксплуатируемых железных дорог за 1900 год. СПб., 1902, с. 16—17.

<sup>282</sup> Там же за 1912 г., СПб., 1915, с. 14—15.

<sup>283</sup> Отчет о состоянии народного здоровья и организации врачебной помощи населению в России за 1902 г., отд. III, с. 218—219.

<sup>284</sup> Отчет о состоянии народного здоровья и организации врачебной помощи в России за 1907 г., отд. III, с. 202—203.



զագույն պահանջները: Նրանք զուրկ էին տարրական հարմարություններից, շունեին կոյուղի: Դրան պետք է ավելացնել նաև այն, որ սարսափելի հակասանիտարական և գարշահոտ վիճակում էին գտնվում այդ տները շրջապատող փողոցներն ու նրբանցքները՝ նույնիսկ Նրեանում և Ալեքսանդրապոլում<sup>288</sup>:

Բորչալուի գավառի պղնձարդյունաբերական շրջանի բանվորների մի մասը ևս ապրում էր սեփական բնակարաններում (1901 թ. տվյալներով բոլոր բանվորների 1/8—1/4 մասը): Դրանք Ալավերդու շրջակա գյուղերի բնակիչներն էին<sup>289</sup>: XX դ. սկզբին եկվոր բանվորները բնակվում էին կամ գործարաններին ու հանքերին կից կացարաններում, կամ սենյակներ էին վարձում դարձյալ շրջակա գյուղերում, կամ էլ ապրում էին իրենց սարքած խղճուկ բարաքներում<sup>290</sup>: Վերջիններս հիմնականում պարսկահայատակ բանվորներն էին<sup>291</sup>:

ԿԱՄԸ-ն իր բանվորների համար այստեղ կառուցում էր թե՛ առանձին բնակարան-բարաքներ, և թե՛ բազմաբնակարանային բարաք-կացարաններ<sup>292</sup>: Առանձին բարաքներն իրենցից ներկայացնում էին 1 սենյակ խոհանոցով, բնակվում էին 2—8 մարդ: Կային մի քանի 2 և 3 սենյականոց բարաքներ<sup>293</sup>: Գոյություն ունեին նաև մասնավոր տերերին պատկանող բանվորական կացարաններ: 1911 թ. տվյալներով Պիրիտիկ գործարանում աշխատող 897 բանվորների 19,6%-ն ապրում էր ԿԱՄԸ բարաքներում (նրանց 0,4%-ը ընտանիքավոր էին), 38,7%-ն իրենց սարքած խրճիթներում ապրող աղբբեջանցի ամուրի բանվորներ էին, 39,0%-ը (դարձյալ ամուրի) ապրում էր գործարանների տարածքում գտնվող մասնավոր կացարաններում: 2,1%-ը սենյակ էր վարձում Ալավերդում (ընտանիքավորներ), իսկ 0,6%-ը (ամուրիներ) ապրում էր այլ տեղերում: Նույն տվյալներով, Մանեսի գործարանի 353 բանվորների 95,2%-ը բնակվում էր ԿԱՄԸ բարաքներում (նրանց 20,7%-ը ընտանիքավոր էին), իսկ 4,8%-ը մասնավոր բարաքներում

(նրանց 3,4%-ն էին ընտանիքավոր)<sup>294</sup>: 1913 թ. տվյալներով, Ալավերդու 80 բանվորներ իրենց ընտանիքներով ապրում էին 59 միսենյականոց, 20 երկուսենյականոց և 1 երեքսենյականոց բնակարաններում<sup>295</sup>: Այդ բնակարանները տրվում էին ձրի, ջուրը և վառելիքը նույնպես բանվորները ստանում էին ձեռնարկության հաշվին<sup>296</sup>: Միաժամանակ Ալավերդում 413 բանվորներ բնակվում էին բազմասենյակ բարաքներում: Նրանց մի մասն ապրում էր ընտանիքներով: Այդ բարաքները ևս հատկացվում էին ձրի և ապահովվում ջրով: Դրանք տաքացվում էին թե՛ ձեռնարկատերերի և թե՛ բանվորների միջոցներով<sup>297</sup>:

Նույն՝ 1913 թ. տվյալներով, Ախթալայի հանքերի մոտ կային 8 առանձնատներ 14 բնակարաններով, որոնցից 11-ը մեկ սենյականոց էին, 2-ը՝ 2 սենյականոց և 1-ը՝ 3 սենյականոց: Դրանք ևս տրվում էին ձրի, տաքացվում էին և մատակարարվում ջրով ձեռնարկության հաշվին<sup>298</sup>: Այստեղ կային նաև 19 բազմասենյակ կացարաններ, որտեղ բնակվում էին թե՛ ընտանիքավոր և թե՛ ամուրի բանվորներ: Հանքագործները վճարում էին միայն վառելիքի համար<sup>299</sup>: Շամլուղում բանվորներն ապրում էին 112 տեղանոց 10 կացարաններում, որոնք նախատեսված էին նաև ընտանիքավորների համար: Այդ կացարանները ևս անվճար էին<sup>300</sup>:

Բանվորներին սպասարկելու համար Ալավերդի-Շամլուղում գործում էին հացի փոեր և մթերային կրպակներ: Կար նաև անվճար բաղնիք<sup>301</sup>: Թեև Ալավերդու, Շամլուղի և Ախթալայի բանվորները ապահովված էին կացարաններով, սակայն ընդհանուր առմամբ նրանց բնակարանային պայմանները հեռու էին բավարար լինելուց: Մի շարք կացարաններ կեղտոտ էին, խոնավ, անձրևի դեպքում լցվում էին ջրով<sup>302</sup>: Համարյա բոլոր սենյակներում նեղվածք էր: Ամենավատթար պայմաններում էին ապրում պարսկահայատակ բանվորները:

294 Նույն տեղում, գ. 289, թ. 1, «Արդյունաբերության վիճակը և բանվոր դասակարգի ձևավորումը...», էջ 146—147:

295 Նույն տեղում, գ. 378, թ. 1:

296 Նույն տեղում, թ. 2:

297 Նույն տեղում, թ. 1—2:

298 ՀՄՄՀ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 858, թ. 3—4:

299 Նույն տեղում:

300 Նույն տեղում, թ. 1—2:

301 Նույն տեղում, թ. 2, վրաց. ՄՄՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 3531, թ. 74, գ. 3901, թ. 157—158, գ. 4089, թ. 185:

302 վրաց. ՄՄՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 5138, թ. 65:

288 ՀՄՄՀ ԿՊՊԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2206, թ. 29, ֆ. 117, ց. 1, գ. 944, թ. 10, 18:  
289 ՀՄՄՀ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 289, թ. 1, 9, 10, վրաց. ՄՄՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, 3308, թ. 54, գ. 3531, թ. 71—73, գ. 3694, թ. 367:  
290 Նույն տեղում:  
291 վրաց. ՄՄՀ ԿՊՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 3531, թ. 74:  
292 ՀՄՄՀ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 682, թ. 2—4, 7—16:  
293 Նույն տեղում, ինչպես նաև գ. 878, թ. 1:

Ձանգեզուրի պղնձարդյունաբերության բանվորների մի մասը շերտակա Ղաթար, Կավարտ, Բարաբաթում գյուղերի բնակիչներն էին և բնակվում էին սեփական տներում<sup>303</sup>: Եկվոր բանվորների համար XIX դ. վերջին և XX դ. սկզբին այստեղ կառուցվել կամ կառուցվում էին կացարաններ, որոնք հատկացվում էին բանվորներին անվճար և ապահովվում ձրի վառելիքով<sup>304</sup>: Այդ կացարանները գտնվում էին Ղաթարի, Բեյուր-Չամիի, Դաղդաղան-Դյուզի, Ուլուրչայի, այլ հանքերի ու գործարանների մոտ<sup>305</sup>: Բայց թե՛ քանակով և թե՛ ապրելու պայմաններով դրանք անբավարար էին<sup>306</sup>: Ձանգեզուրի հանքերում ու գործարաններում: բացառությամբ ԿԱՄԸ «Սյունիք» գործարանի, իսպառ բացակայում էին մթերային կրպակները<sup>307</sup>:

Աղահատներն ապրում էին շրջակա գյուղերում գտնվող իրենց սեփական տներում:

1905 թ. սվյալներով, Երևանի նահանգում գտնվող Տանձուտի ծծմբաքարի հանքավայրում բանվորները բնակվում էին երկու կացարաններում, որոնցից մեկն ախոռի հետ նույն տանիքի տակ էր և խիստ անբարեկարգ վիճակում: Այդ կացարանների հատակը ցեմենտից էր, պատերի ծեփը՝ թափված: Միայն մեկն ուներ պատուհան<sup>308</sup>: Իրանք կահավորված էին քնելու համար խիստ անհարմար, գլխատեղեր չունեցող և իրարից շանջատված տախտամածներով (нары)<sup>309</sup>: Տանձուտում շկար բաղնիք, գործում էր մթերային մի կրպակ<sup>310</sup>:

Մետաքսաթելի արտադրության մեջ ձեռնարկատիրոջ կողմից տրամադրված կացարաններում էր ապրում բանվորների զգալի մասը: Այսպես, XX դ. սկզբին Շուշիի գավառի Հաղրութ գյուղի մետաքսաթելի ձեռնարկության 10—15 բանվորներ բնակվում էին «գործարանին» կից մի սենյակում, որտեղ յուրաքանչյուր բանվորին ընկնում էր ընդամենը

<sup>303</sup> Նույն տեղում, գ. 3531, ք. 340, գ. 3780, ք. 97, գ. 3901, ք. 76:

<sup>304</sup> Նույն տեղում, նաև ՍՍՄ ԿԳՊԱ, ֆ. 37, ց. 67, գ. 689, ք. 21, 22, ց. 74, գ. 795, ք. 22:

<sup>305</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 3308, ք. 106, գ. 3901, ք. 74:

<sup>306</sup> М. Шостак, Современное состояние..., с. 16.

<sup>307</sup> ՍՍՄ ԿԳՊԱ, ֆ. 37, ց. 74, գ. 795, ք. 22, Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 4991, ք. 28:

<sup>308</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 264, ց. 1, գ. 3901, ք. 4—5:

<sup>309</sup> Նույն տեղում, ք. 5:

<sup>310</sup> Նույն տեղում, ինչպես նաև գ. 4991, ք. 28:

մեկ խորանարդ սածեն օդ<sup>311</sup>: Մետաքսաթելի արտադրության մեծ թվով բանվորներ, սակայն, ապրում էին իրենց տներում:

Կիսատ-պոստ էին լուծված երկաթուղային բանվորների կենցաղային պայմանները: Ըստ օրենքի երկաթուղայիններից ոմանք ունեին պետության կողմից բնակարան կամ կացարան ստանալու իրավունք: Նրանց իբրև հատուցում վճարվում էր ոռճիկի 1/4 չափով գումար: Այն երկաթուղայինները, որոնք այդ իրավունքից զրկված էին, ստանում էին ոռճիկի 1/5-րդ մասը կազմող լրացուցիչ գումար<sup>312</sup>: Այսպիսով, սեփական տուն չունեցող երկաթուղայինների որոշակի մասը փաստորեն պետք է ապրեր վարձու բնակարաններում:

Շատ անտանելի էին երկաթուղային շինարարության մեջ զբաղված բանվորների կենցաղային պայմանները: Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարությունում նրանք ապրում էին քրքրված, պատառոտված վրաններում, պատուհան չունեցող գետնափոր հյուղերում կամ, լավագույն դեպքում, փայտե նեղլիկ, շտաքացվող բարաքներում<sup>313</sup>: Գետնափոր հյուղերում մի փոքր տարածության մեջ ապրում էին 10—12 մարդ: Իրանք խոնավ էին ու մութ, վատ օդափոխվող և նպաստում էին տարափոխիկ հիվանդությունների առաջացմանն ու տարածմանը<sup>314</sup>: 1895—1897 թթ. Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարության III տեղամասի բանվորները բնակվում էին ահավոր կեղտոտ, խիստ հակասանիտարական վիճակում գտնվող, տախտամածներից զուրկ և շտաքացվող բարաքներում<sup>315</sup>: 1896 թ. սվյալներով, միայն 4 կապալառուների տեղամասերում կային 108 բարաքներ, որոնցից 101-ում ապրում էին 1187 մարդ: Նրանցից ոմանք բնակվում էին մի բարաքում, որը վերածված էր վառողի պահեստի<sup>316</sup>:

Ուլուխանլու—Ջուլֆա երկաթգծի շինարարության բանվորների որոշակի մասը ևս ապրում էր բարաքներում և գետնափոր խրճիթներում:

<sup>311</sup> Д. М. Малюженко, Санитарное и экономическое состояние..., с. 62.

<sup>312</sup> Материалы по обследованию железных дорог. Выпуск 85. Закавказские железные дороги. СПб., 1913, с. 247.

<sup>313</sup> ՄՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 270, ց. 1, գ. 4, ք. 255, ֆ. 271, ց. 1, գ. 1, ք. 3, Новое обозрение, 1896, 22 июня, վ. Ավետիսյան, Մի էջ..., էջ 91:

<sup>314</sup> ՄՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 270, ց. 1, գ. 2, ք. 42, Новое обозрение, 1896, 22 июня, վ. Ավետիսյան, Մի էջ ..., էջ 91—92:

<sup>315</sup> ՄՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 270, ց. 1, գ. 2, ք. 42, 57, գ. 4, ք. 69, О. С. Баликян, Из истории положения..., с. 87, 94.

<sup>316</sup> ՄՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 270, ց. 1, գ. 4, ք. 382—384:

րում: 1904 թ. տվյալներով այդպիսի շահագանց խոնավ, ցւծր, մ․ Բ ու անհարմար մի բարաք կար Շախտախթի (Ղըզլ-վանք) կոչվող վայրում<sup>317</sup>:

Վատ էր կազմակերպված երկաթուղային շինարարների սննդի հարցը<sup>318</sup>: Թիֆլիս—Կարս երկաթգծի շինարարության տեղամասերում կային կապալով բացված մթերային կրպակներ, որոնք բանվորներին մատակարարում էին խիստ ցածրորակ ապրանքներ: Օրինակ, III տեղամասի կրպակներում վաճառվող հացն իր մեջ հաճախ ավազ էր պարունակում: Այն թխվում էր վատորակ ալյուրից, դառնահամ էր ու հում<sup>319</sup>: Թե մթերքի կրպակները, և թե հացի փոերը պահվում էին շափազանց կեղտոտ և հակասանիտարական պայմաններում<sup>320</sup>:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ Արևելյան Հայաստանի պրոլետարիատի բնակարանային-կենցաղային պայմանները բավական ծանր էին: Պատահական չէ, որ այդ պայմանների արմատական բարելավման համար մղվող պայքարը թե՛ Ռուսաստանի ու Անդրկովկասի և թե՛ Արևելյան Հայաստանի պրոլետարիատի հիմնական խնդիրներից էր և մնաց այդպիսին մինչև սովետական իշխանության հաստատումը:

<sup>317</sup> Отчет о состоянии народного здоровья и организации врачебной помощи в России за 1904 г. СПб., 1906, отд. I, с. 121.

<sup>318</sup> ՀՄՄՀ ԿԳԳԱ, ֆ. 133, ց. 1, ք. 5691, Բ. 54, Օ. Ս. Բալիկյան, Из истории положения..., с. 89.

<sup>319</sup> ՀՄՄՀ ԿԳԳԱ, ֆ. 270, ց. 1, ք. 2, Բ. 35, ք. 4, Բ. 247, 255, Վ. Ավետիսյան, Մի էջ..., էջ 75, Օ. Ս. Բալիկյան, Из истории положения..., с. 89.

<sup>320</sup> ՀՄՄՀ ԿԳԳԱ, ֆ. 270, ց. 1, ք. 2, Բ. 35, Բ. 53, Օ. Ս. Բալիկյան, Из истории положения..., с. 91, 94.

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Գյուղական պրոլետարիատի առաջին ներկայացուցիչներն արևելահայ գյուղում երևան են եկել արտադրության կապիտալիստական եղանակի հաստատումից դեռ շատ առաջ: Տարբեր հանգամանքների հետեվանքով անմիջական արտադրողներից ոմանք ունեցրվում էին և շուրեննալով ապրուստի միջոցներ, վաճառքի հանում իրենց աշխատուժը: Դրանց թիվը որոշ շափով աճեց XVII—XVIII դարերում: Սակայն պարսկական ու թուրքական հետամնաց կարգերի պայմաններում անհնարին էր ինչպես բուրժուազիայի, այնպես էլ պրոլետարիատի կազմավորումը: Արտադրության միջոցներից զրկված գյուղացիները հարկադրված էին կամ դիմել կալվածատերերին և շահագործվել կրկին միջնադարյան եղանակներով կամ բռնել արտագաղթի ճամփան:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումից հետո բարենդպաստ պայմաններ ստեղծվեցին ասիական հետամնաց ֆեոդալական հարաբերությունների քայքայման և համեմատաբար առաջավոր կապիտալիստական կարգերի զարգացման համար: Քաղաքում առաջանում են բուրժուական ձեռնարկություններ, իսկ գյուղում տեղի է ունենում գյուղացիության սոցիալական շերտավորում: Վերլուծելով այդ պրոցեսները, Ստ. Շահումյանը 1906 թ. նշում էր, որ եվրոպական կապիտալիզմը թափանցել է նաև հայ իրականության մեջ. «Մենք ունենք արդեն խոշոր... արդյունագործական կենտրոններ...: Մենք ունենք արդեն... քաղաքներում բուրժուազիա և պրոլետարիատ՝ իսկական եվրոպական իմաստով: Եվ կապիտալիզմի ազդեցությունը չի սահմանափակվում, իհարկե, միմիայն քաղաքներով: Ո՛վ չգիտե, որ հայկական գյուղն էլ ենթարկված է արդեն դրամական տնտեսության և կապիտալիստական արդյունագործական հարաբերությունների ազդեցությանը:

Հողի տեղը, որ ամենամեծ ուժն էր գյուղացու կյանքում, որ անսահման իշխում էր գյուղացու վրա, բռնել է այժմ փողը:

Գյուղական մանր տնտեսությունը քայքայվում է. գյուղացիությունը բնական անհրաժեշտությունը բաժանվում է երկու մասի. մի կողմից ծնունդ է առնում գյուղական մանր բուրժուազիան, որ հետզհետե հարստանում, կենտրոնացնում է իր ձեռքին հողը, մյուս կողմից՝ գյուղացիության մեծամասնությունը զրկվում է հողից ու արտադրության միջոցներից, ստվարացնում պրոլետարիատի շարքերը...»<sup>1</sup>

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացման հետևանքով Արևելյան Հայաստանում կիսապրոլետարական ու պրոլետարական զանգվածներն աճում են թե պետական, թե կալվածատիրական և թե վանքապատկան գյուղում: Փորձենք որոշել այդ զանգվածների քանակը նրանց մեջ առանձին-առանձին:

Սկսենք պետական գյուղացիներից, որոնք կազմում էին Արևելյան Հայաստանի ամբողջ գյուղացիության մեծամասնությունը՝ շուրջ 72 տոկոսը: Նրանց չբավոր շերտերի թվաքանակը որոշելու համար նախ վերցնենք հողաբաժինների վերաբերյալ տվյալները: Վ. Ի. Լենինը ցույց է տալիս, որ «Հողը, անկասկած, արտադրության գլխավոր միջոց է գյուղացիության մեջ, ուստի և հողի քանակով կարելի է առավել ճիշտ դատել տնտեսության տարբեր շափերի, հետևաբար, նաև նրա տիպի մասին»<sup>2</sup>:

1884 թ. Երևանի նահանգում պետական գյուղացիների հողատիրությունը հետևյալ պատկերն էր ներկայացնում<sup>3</sup>:

Ա Ղ յ ո ս ա կ 6

Վարելահողերի տարածքը	Տնտեսությունների թիվը
Հողագուրդ	144
Մինչև 1 դես.	606
1—2 »	1482
2—3 »	1988
3—5 »	11154
5—7 »	9756
7—10 »	13436
10—15 »	9438
15—25 »	2641
25—40 »	270
40 և ավել »	190

Ընդամենը 51105 տնտես.

Վ. Ի. Լենինը, վերլուծելով եվրոպական Ռուսաստանի գյուղացիության սոցիալական շերտավորումը, չբավորների շարքին էր դասում այն տնտեսությունները, որոնք ունեին մինչև 8 դես. ներառյալ վարելահող, համարելով դա «հողի մի քանակություն, որն ընդհանուր և միջին առումով, անկասկած անբավարար է ընտանիք պահելու համար»<sup>4</sup>: Այս շարունակում էր, որ մինչև 15 դես. ներառյալ ունեցողը «գյուղացիական երկրագործական տեխնիկայի տվյալ մակարդակի պայմաններում կանգնած է կիսաքաղց գոյության սահմանին»<sup>5</sup>: Կիսաքաղց միջակ գյուղացի էր համարում 15—30 դես. ունեցողներին, իսկ «Հարուստներ կարելի է անվանել միայն 30 դես. ավելի ունեցողներին»<sup>6</sup>:

Թերևս ճիշտ չէր լինի, եթե Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական շերտավորման պատկերը որոշելիս, հիմք ընդունեինք եվրոպական Ռուսաստանի շափանիշները: Բանն այն է, որ Արևելյան Հայաստանի գյուղացիությունը հատկանշվում էր սակավահողությամբ և բնականաբար նրա շերտավորման հարցերը լուծելիս, պետք է վերցնել համեմատաբար փոքր միավորներ: Այդպիսի միավորներ մեզ հաղորդում են Անդրկովկասի պետական գյուղացիների տնտեսական դրությունն ուսումնասիրողները: Հետազոտելով Արևելյան Հայաստանի գյուղացիների բյուջեները, նրանք չբավոր էին համարում այն տնտեսությունները, որոնք ունեին մինչև 5 դես. վարելահող, միջակ՝ այն տնտեսությունները, որոնք ունեին 5—15 դես. և, վերջապես, հարուստ՝ այն տնտեսությունները, որոնք ունեին 15 և ավելի դես. վարելահող<sup>7</sup>: Հիմք ընդունելով այդ տվյալները, տեսնում ենք, որ Երևանի նահանգում վերոհիշյալ 51105 պետական գյուղացիական տնտեսություններից չբավորներ էին 15374-ը կամ 30,0%:

Չբավորների թվաքանակը կարելի է որոշել նաև գյուղացիների բանող կամ քաշող անասունների վերաբերյալ տվյալներով: Պետական գյուղացիների տնտեսական դրությունն ուսումնասիրողների տեղեկություններով, 1880-ական թվականներին նոր Բայազետի և Շարուր-

<sup>4</sup> Վ. Ի. Լենին, ԵԺ, հ. 16, էջ 242:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. I, Тифлис, 1886, с. 66—76, 350—362, 577—584, т. II, вып. III, Тифлис, 1886, с. 220—233 т. III, ч. I, Тифлис, 1886, с. 125—130, 339—346, 346—353, т. IV, ч. I, Тифлис, 1887, с. 125—143. Այսուհետև՝ Материалы...

<sup>1</sup> Ստ. Եանուվյան, ԵԺ, հ. 1, էջ 152—153:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, ԵԺ, հ. 19, էջ 402:

<sup>3</sup> ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 396, ց. 2, գ. 1160:

Դարալագյազի գավառների 141 գյուղերում բնակվող 7648 տնտեսութուններից 1428-ը շուներ բանող անասուն, 676-ը ուներ 1-ական, 1505-ը՝ 2-ական, 2304-ը՝ 3—4-ական և, վերջապես, 1741-ը՝ 5 և ավելի գլուխ բանող անասուն<sup>8</sup>: Եթե չբավոր համարենք առաջին երկու խմբերը և երրորդ խմբի 3/4-ը<sup>9</sup>, կտեսնենք, որ պետական գյուղում կիսապրուկտարական ու պրուկտարական զանգվածները կազմում էին 3227 տնտեսություն կամ հիշատակված բոլոր տնտեսությունների 42,4% -ը:

XIX դ. երկրորդ կեսին պրուկտարիատը ձևավորվում էր նաև կալվածատիրական գյուղում: Ըստ մեր ունեցած տեղեկությունների, 60-ական թվականներին միայն հողագործ կալվածատիրական գյուղացիներ հաշվվում էին՝ էջմիածնի գավառում 800 մարդ (հավանաբար տղամարդ), Նախիջևանի գավառում 400 ընտանիք, իսկ Երևանի գավառում՝ կալվածատիրական գյուղացիության 1/3-ը<sup>10</sup>: Եթե ընդունենք, որ գյուղացիական ընտանիքը բաղկացած էր առավել 5 հոգուց, կտեսնենք, որ Նախիջևանի գավառում հողագործները կազմում էին 2000 մարդ: Յավոթ, մեզ անհայտ է, թե 1860-ական թվականներին ինչքան էին բոլոր կալվածատիրական գյուղացիները Երևանի գավառում: Բայց գիտենք, որ 1876 թ. 3189 տնտեսություն էին<sup>11</sup>: Պայմանականորեն ընդունելով, որ նրանք այդքան էին նաև 1860-ական թվականներին (7—10 տարվա ընթացքում հողագործների բնական աճը պիտի որ մեծ չլիներ), կտեսնենք, որ Երևանի գավառում հողագործները կազմում էին 1063 ընտանիք, կամ հաշվելով ամեն մի ընտանիքում 5 մարդ՝ 5315 մարդ: Դժբախտաբար, աղբյուրը հնարավորություն չի տալիս իմանալու, թե էջմիածնի գավառի 800 հողագործները ընտանիք ունեին, թե ոչ: Բայց մենք ընդունենք, որ նրանցից ոչ մեկը չունի ընտանիք (թեև դա անհնարին է): Ի մի բերելով այդ տվյալները, կտեսնենք, որ նշված գավառների կալվածատիրական տիրույթներում 60-ական թվականներին հաշվվում էր 8115 հողագործ գյուղացի: Մեր

<sup>8</sup> Նույն տեղում, մ. II, էջ 40, 136—137.

<sup>9</sup> Վ. Ի. Լենինը, խոսելով ուսական գյուղի սոցիալական շերտավորման մասին, 1 ձի ունեցողների 3/4-ին դասում էր շրջանների շարքը (տե՛ս Վ. Ի. Լենին, ՆԺժ, հ. 3, էջ 116): Ռուսական զեմսովային վիճակագրությունը 2 եր ունեցող գյուղացիների դասում էր 1 ձի ունեցողների շարքը (տե՛ս Վ. Ի. Լենին, ՆԺժ, հ. 3, էջ 114):

<sup>10</sup> С. Эсадоэ, Историческая записка об управлении Кавказом, т. I, Тифлис, 1907, с. 558—559.

<sup>11</sup> УУЗУ-ԿԳՊԱ, ֆ. 1268, ց. 19, գ. 62, Բ. 75—78.

ձեռքի տակ եղած տվյալները հաղորդում են, որ 1866 թ. ամբողջ Երևանի նահանգում (այսինքն՝ նշված գավառներից զատ նաև Շարուր-Դարալագյազի և Նոր Բայազետի գավառներում) կալվածատիրական գյուղացիները կազմում էին 14.000 ընտանիք<sup>12</sup> կամ 70.000 մարդ: Եթե անգամ ընդունենք, որ Շարուր-Դարալագյազի ու Նոր Բայազետի գավառներում չեն եղել հողագործներ և համադրենք այդ 70.000-ը վերոհիշյալ 8115-ի հետ, կտեսնենք, որ կալվածատիրական գյուղում հողագործ գյուղացիները կազմել են բոլոր գյուղացիների 11,6 տոկոսը: Բայց դա նվազագույնն է, իրականում նրանց տոկոսն ավելի բարձր էր: 1870-ական թվականների գյուղացիական ռեֆորմներով նրանք իրավունք չունեին հող ստանալու և շտապան: Հավանական է, ոմանք բռնեցին երկրամասի արդյունաբերական կենտրոնների ճամփան, իսկ մյուսները դարձան տեղական հարուստների մշակները կամ բատրակները:

Բացի հողագործներից, կալվածատիրական գյուղում կային նաև սակավահող գյուղացիներ, որոնց մեծ մասը, ըստ էության, նույնպես շրջաններ կամ գյուղական կիսապրուկտարներ ու պրուկտարներ էին: Դրանց թվաքանակի մասին որոշ պատկերացում կարելի է կազմել, կանոնագրերի տեղեկություններով: Այդ կանոնագրերը կազմվել են հիմնականում 1872—1873 թթ.՝ գյուղացիական ռեֆորմի կամ 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրության կենսագործման համար: Անշուշտ, դրանք ունեն լուրջ թերություններ. չեն ընդգրկում կալվածատիրական բոլոր գյուղերը, մի շարք տեղերում բաց են թողնում գյուղացիական տնտեսությունների ցուցակներն ու նրանց ունեցած բաժնեհողերի շափերը, այլ տեղերում, ներկայացնելով այդ տվյալները, լուրում են գյուղի անձանց թվաքանակի մասին, իբրև կանոն արձանագրում են միայն տղամարդկանց թիվը, հաճախ նշում են գյուղացիների հողատարածքները ոչ թե բարեխիղճ շափումների, այլ հողատերերի կամ գյուղացիների բանավոր հաղորդումների հիման վրա, որոշ դեպքերում տեղական շափերը ուսականի կամ միջազգայինի վերածելիս, թույլ են տալիս սխալներ և այլն:

Այդուհանդերձ կանոնագրերի տվյալներով կարելի է որոշ գաղափար կազմել կալվածատիրական գյուղի սոցիալական շերտավորման մասին: Մենք ուսումնասիրեցինք 30 բարձր դասին պատկանող հողատերերի և 4 այդ դասին չպատկանող հողատերերի գյուղերի և 2 պե-

<sup>12</sup> УУЗУ-ԿԳՊԱ, ֆ. 1268, ց. 13, գ. 1, Բ. 353.

աական-մուքադարական, ընդամենը՝ 36 գյուղերի տեղեկությունները: Նրանցում բնակվում էին 1405 տնտեսություն կամ 6006 տղամարդ<sup>13</sup>: Պարզվեց, որ 1405 տնտեսություններից հողազուրկ էին 7 տնտեսություն:

մինչև 1 դես. ունեին 142 տնտեսություն

1—2 դես.	»	146	»
2—3 »	»	162	»
3—5 »	»	247	»
5—7 »	»	154	»
7—10 »	»	254	»
10—15 »	»	192	»
15—30 »	»	90	»
30 և ավելի »	»	11	»

Եթե մինչև 5 դես. վարելահող ունեցող տնտեսությունները համարենք չբավորներ, ապա կտեսնենք, որ ուսումնասիրված գյուղերում դեռ 1870-ական թվականների սկզբներին սակավահող ու հողազուրկ զանգվածները կազմել են 704 տնտեսություն կամ բոլոր տնտեսությունների 50,0%-ը: Ըստ երևույթին կարվածատիրական գյուղում չբավորների թվաքանակն ավելի մեծ էր, քան պետականում:

Վանքապատկան գյուղում չբավորների տոկոսը կարվածատիրական գյուղից պակաս էր: Այսպես. Վաղարշապատում 1883 թ. հաշվվում էր 225 տնտեսություն, որոնցից մինչև 1 սոմար<sup>14</sup> հող, ավելի ճիշտ՝ այգի, ուներ 2 տնտեսություն, 1—2 սոմար՝ 45, 2—3 սոմար՝ 50, 3—5 սոմար՝ 58 տնտեսություն և այլն<sup>15</sup>: Եթե մինչև 3 սոմար, այսինքն՝ կես

<sup>13</sup> ՉՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 91, ց. 1, գ. 4, թ. 9—10, գ. 13, թ. 28—34, գ. 16, թ. 9—10, գ. 24, թ. 20, գ. 36 թ. 10—11, գ. 26 թ. 53—74, գ. 22 թ. 40—50, գ. 17 թ. 90, գ. 48 թ. 14—15, գ. 55 թ. 23—27, գ. 54 թ. 34—41, գ. 30 թ. 7—8, գ. 70 թ. 22—27, գ. 69 թ. 13—17, գ. 67, թ. 22—26, գ. 63 թ. 19—24, գ. 64 թ. 23—26, գ. 50, թ. 7, գ. 53, թ. 4—8, գ. 84 թ. 6, գ. 80, թ. 18—20, գ. 88 թ. 11—12, գ. 14, թ. 8—10, գ. 35 թ. 19—25, գ. 45 թ. 4, գ. 59, թ. 16—20, գ. 56, թ. 27—36, գ. 65, թ. 5, գ. 79 թ. 13—15, գ. 78, թ. 15—16, 34—103, գ. 86, թ. 70—91, գ. 95 թ. 47—78, գ. 104, թ. 27—85, գ. 108, թ. 56, գ. 91 թ. 11—37, գ. 128, թ. 27—29, գ. 16 թ. 13:

<sup>14</sup> 5 սոմարը հավասար է մեկ դեսյատինի:

<sup>15</sup> ՉՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 6, գ. 76, թ. 50—55:

դեսյատին ունեցող այգետերերին համարենք չբավորներ, կտեսնենք, որ նրանք կազմում էին 43,1 տոկոսը:

Ինչ վերաբերում է սեփականատեր-գյուղացիներին, ապա նրանց մոտ չբավորության տոկոսը բոլորից բարձր էր: 1872 թ. Նախիջևանի գավառի Բանանիյար գյուղում կային 222 տնտեսություն, որոնցից 19-ը, կամ 86,3%-ն, ուներ մինչև 5 դես. բաժնեհող<sup>16</sup>:

Թեև սովյալներ շունենք ցույց տալու համար գյուղական չբավորության աճը պետական, կարվածատիրական և այլ կարգի գյուղերում առանձին-առանձին, սակայն ուղղակի և անուղղակի փաստերը հավաստում են, որ այն 1880—1890-ական թվականներին մեծանում էր, օրինակ՝ 1884 թ. Երևանի նահանգում հաշվվում էր 1389, իսկ 1895 թ.՝ 5211 հողազուրկ գյուղացի<sup>17</sup>:

Նոր Բայազետի գավառի հյուսիս-արևմտյան մասում 1884 թ. բանող անասուն շունենք գյուղացիների 7,5, իսկ 1894 թ.՝ 22,2 տոկոսը: Քանաքեռում հինգ տարվա ընթացքում (1887—1892) չբավորների տոկոսը 52-ից բարձրացավ 60-ի<sup>18</sup>: 1894 թ. բանող անասուն շունեցողները կազմում էին՝ Ալեքսանդրապոլի գավառում գյուղացիության 16 տոկոսը, Նոր Բայազետի գավառում՝ 29, էջմիածնի գավառի լեռնային մասում՝ 42, Երևանի գավառի լեռնային մասում՝ 37, Կարսի մարզում՝ 28 տոկոսը<sup>19</sup>: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ շրջաններում բանող անասուն շունեցողների կողքին կային նաև բազմաթիվ տնտեսություններ, որոնք ունեին 1-ական, 2-ական բանող անասուններ, որոնց մեծ մասը նույնպես չբավորներ էին:

XX դ. սկզբին ցարական կառավարության վարած գաղութային, հողային ու հարկային քաղաքականության և տեղական զոռքաների հափշտակումների ու շարաշահումների, ինչպես նաև բնակչության բնական աճի հետևանքով Արևելյան Հայաստանում ավելի մեծացավ չբավորների թիվը: Դա երևում է՝ մասամբ այն բանից, որ դարասկզբին համարյա ամենուրեք գյուղացիները գանգատվում էին սակավահողությունից: Այսպես. Ղափանում «սակավահողությունն այնքան լայն շափեր է բնդունել, որ հնարավորություն չունեն հողի մի մասին գոնե

<sup>16</sup> Նույն տեղում, ֆ. 91, ց. 1, գ. 16, թ. 13:

<sup>17</sup> О. Сѣмин, Великая годовщина, Киев, 1911, с. 26—27.

<sup>18</sup> «Материалы по вопросу о распространении действий крестьянского земельного банка на Закавказский край», СПб., 1904, с. 262.

<sup>19</sup> Նույն տեղում:

մի տարի հանգիստ տալու: Նույն հողերն ամեն տարի վարելով բերքը հասցրել են նվազագույն չափերի»<sup>20</sup>:

Սուրմալուի գավառում «ժողովուրդը հողից զուրկ է. եթե բաժանենք ընդհանուր համայնքի վրա, յուրաքանչյուր մեկ նաֆարին (2ընչին) կընկնի 1400 քառ. սաժեն հող (այսինքն կես դեսյատին)..., ուժասպառ հողերը աղքատ դասակարգի ձեռքին է»<sup>21</sup>:

Կարսի մարզում շատ գյուղեր, ունենալով հողի կարիք, սկսեցին դիմել խնդրագրերով, որ իրենց հողաբաժիններն ավելացնեն տակավին ազատ մնացած պետական հողամասերի հաշվին<sup>22</sup>:

Ղազախի գավառի վերին Աղզան գյուղում բնակիչները «չափազանց ճնշված են հողի քչությունից»<sup>23</sup>:

Դարասկզբին աշխատավոր գյուղացիությունը հողի հետ միասին գրկվում էր նաև անասուններից, որի հետևանքով աճում էր նաև անասնազուրկ կամ սակավանասուն տնտեսությունների թիվը:

1903 թ. Ղարաբաղի 12 գյուղերի 2981 տնտեսություններից 290-ը կամ մոտ 10 տոկոսը շուներ բանող անասուն, իսկ երեք տարի անց՝ 1906 թ. նրանց թիվը հասավ 600-ի, այսինքն՝ կրկնապատկվեց, կազմելով մի շարք գյուղերում բնակչության նույնիսկ կեսը<sup>24</sup>:

Կարսի մարզում բանող անասուն չունեցող տնտեսությունների քանակը 1903—1910 թթ. 5937-ից հասավ 7542-ի<sup>25</sup>:

Գյուղացիության համար կործանարար էին բնական աղետները, անբերրիությունն ու սովը: Դրանցից մեկը եղել է 1879—1880 թթ.: Երևանի նահանգի գյուղացիների դրությունն ուսումնասիրող Ա. Գ. Գեկոնսկին գրում էր, որ այդ տարիներին շատերը «թողեցին իրենց տները ու հողերը և, վաճառելով կահ-կարասիքը, մեկնեցին այլ նահանգներ ու գավառներ ապրուստ գտնելու համար»<sup>26</sup>:

Աշխատավոր գյուղացիների վրա ծանր նստեցին նաև 1892—1894 թթ. անբերրիությունն ու սովը: Նրանց ցանքատարածությունները

կրճատվեցին 31,6—50,0 տոկոսով, իսկ անասունների գլխաքանակը՝ 1/5—2/3-ով<sup>27</sup>:

Բայց ավելի սոսկալի էին 1907—1908 թվականները: Անասելի մեծացավ կարիքավորների թիվը: Նոր Բայազետի գավառում պաշտոնական շրջանների կողմից 1894 թ. ուսումնասիրված 52.143 մարդուց սերմի և ուտելիքի կարիք ուներ 24.566 մարդ, իսկ 1907 թ. 49.638 մարդուց՝ 41.476 մարդ<sup>28</sup>: Այլ կերպ ասած՝ եթե 1894 թ. կարիքավորները կազմում էին գավառի ուսումնասիրված բնակչության 47,1 ապա 1907 թ.՝ 83,5 տոկոսը: Դրա հետ միասին պետք է նշել, որ 1892—1894 թթ. սովի ժամանակ երկրի որոշ շրջաններ կարողացան յուրաքանչյուր սեփական միջոցներով, առանց կառավարության օժանդակության, սակայն 1907—1908 թթ. արդեն չկար մի շրջան, որ օգնության կարիք չզգար: Հստ պաշտոնական տվյալների, 1907 թ. Ալեքսանդրապոլի, նոր Բայազետի, Ջանգեզուրի գավառներում, Ղազախի գավառի հայկական մասում և Լոռու գավառամասում 225.653 մարդուց ապահովված էին միայն 41.576-ը, մնացած 184.077-ը կարիքավորներ էին. ընդ որում դրանցից 89.046-ը միայն սերմի կարիք ուներ, իսկ 95031-ը՝ նաև ուտելիքի, այն էլ ոչ թե մի քանի օրվա, այլ 7 ամսվա<sup>29</sup>: Բայց դա միայն նվազագույնն էր, քանի որ պաշտոնյաները կարիքավորների թվաքանակը իրականից ավելի ցածր էին ցույց տվել: 1908 թ. «Մշակի» թղթակիցը գրում էր. «Որքան էլ հաստատ ու ցերեկվա արևի լույսի պես պարզ է, որ հայկական (լեռնային) բոլոր գյուղերում անխտիր հացի սաստիկ կարիք կա, դարձյալ լսում ենք, որ Ղազախի գավառի (կառավարության նշանակած) կոմիսիան կարիքավորների ցուցակից հանել է 20-ից ավելի հայ գյուղեր»<sup>30</sup>: Համենայն դեպս, եթե միայն ուտելիքի կարիք ունեցողներին համարել չբավորներ, կտեսնենք, որ հետազոտված անձանց 42,1 տոկոսը ըստ էության արդեն պրոլետարների էին<sup>31</sup>:

<sup>27</sup> С. Заваров, Опыт и исследования сельскохозяйственного хлеборобного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899, с. 264—265, 313.

<sup>28</sup> ՄՍՄ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 5, գ. 161, ք. 4—9, ՎՍՄ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 3, գ. 2291:

<sup>29</sup> ՎՍՄ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 3, գ. 2291:

<sup>30</sup> «Մշակ», 1908, № 44:

<sup>31</sup> 1907—1908 թթ. անբերրիության ու սովի տարիներին գյուղացիության ճնշող մեծամասնությունն ընկավ կարիքի ու աղքատության մեջ: Թղթակիցներն այդ օրերին հազորում էին. «Բանաստեղծական երևակայությամբ նկարագրած մեր դրախտանման գյուղերը այժմ դժոխքի են վերափոխվել: Սովի դաժան ուրվականը արդեն գյուղացու

<sup>20</sup> «Մշակ», 1910, № 62:

<sup>21</sup> «Գյուղատնտես», 1910, № 22, էջ 346:

<sup>22</sup> Обзор Карсской области, за 1910 г., с. 22.

<sup>23</sup> «Գյուղատնտես», 1910, № 4, էջ 38:

<sup>24</sup> С. Заварян, Экономические условия Карабаха и голод 1906—1907 гг. СПб., 1907, с. 37—38.

<sup>25</sup> Обзор Карсской области за 1903 и за 1910 гг.

<sup>26</sup> «Материалы...», т. I, вып. V, с. 651.

Իհարկե անբերրիությունն ու սովը կարող են լինել նաև բնական արհաժիրքների հետևանքներ, բայց դրանք առաջին հերթին սոցիալ-տնտեսական որոշակի հարաբերությունների արգասիքներ էին: Հասարակական այդ աղետները հազարավոր ու տասնյակ հազարավոր մարդկանց էին զրկում արտադրական միջոցներից: Վ. Ի. Լենինը նշում է. «Յուրաքանչյուր անբերրիություն միջակ գյուղացիության մասսաներին շարտում է պրոլետարիատի շարքերը»<sup>32</sup>:

Գյուղական բնակչության դրությունն ավելի վատթարացավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ ցարիզմը, վարելով անարդարացի, նվաճողական պատերազմ, անասելի ուժեղացրեց աշխատավոր զանգվածների հարստահարումներն ու կեղեքումները: Երիտասարդության մեծ մասը մեկնեց ռազմաճակատ, բանակի կարիքների համար վերցվեցին նաև բանող անասունները: Գյուղում մնացին գերազանցապես կանայք, անչափահասներն ու ծերերը, որոնք շատ հաճախ չէին կարողանում հայթայթել իրենց ապրուստը: Թանկացան պարենային ու արդյունաբերական ապրանքների գները, երկրում վերստին մոլեգնեց սովը: Այդ տարիներին թղթակիցները հաղորդում էին. Լոռիում «գյուղացիները այսօր բառի բուն նշանակությամբ ուտելու հաց չունեն»: Նրանց առջև չոքած են «սովի ուրվականն ու խարջ-բեգարը»<sup>33</sup>:

Խրճիթի մեջ է. գյուղում կենդանություն չի երևում. գյուղացին ամեն բան մոռացել է... այժմ ծախելու ոչինչ չունի, իսկ տանը հաց են պահանջում...» («Մշակ», 1907, № 43):

Աուրմալուի գավառի Գյուլիշա գյուղից գրում էին, որ սովն ու կարիքը ամեր գյուղը ձգել են ամենադժբախտ և ամենաթշվառ վիճակի մեջ... Գյուղիս շատ տներ ուտելու հաց չունեն...» («Մշակ» 1909, № 141):

Նոր Բայազետից հաղորդում էին. «Գյուղական ժողովուրդը... կանգնած է թշվառության անդունդի ծայրին: Նա անցնում է իր սև ու սուգ օրը սովի ճիրաններում զեզերելով, ցերեկներ է անցկացնում քաղցած, քնում է անճրագ, անկրակ, նրա օջախը մարել է, ծուխը կորվել, ընտանեկան իդիլան վերացել միանգամայն... Այդ, հայ գյուղացու դրությունը այն չէ, ինչ տասնյակ տարիներ առաջ...» («Մշակ», 1909, № 144):

Ալեքսանդրապոլի գավառից գրում էին. «Գյուղացիք բառի բուն իմաստով աղքատ են...»: Նրանք «վաճառել են իրենց եզները, կովերը, կարպետն ու գորգը, սալլ ու գութան... և տվել այլուրի ու կերել... 18 գյուղ շրջեցինք և միայն մի տեղ մածան տեսանք. մեր կերածը ցամաք հացն էր... «Թողություն էրեք, աղա ջան, ըման գալ, երթալ չէր եղնի, հմա եղավ, մեր հալը ձեզի այն է»: Այսպիսի բառերով ներողություն է խնդրում աղքատ գյուղացին իր հյուրերից... Գյուղը աղքատության մեջ թաղված է...» («Մշակ», 1909, № 165):

<sup>32</sup> Վ. Ի. Լենին, ԵՂԺ, Կ. 3, էջ 207:

<sup>33</sup> «Պայթար», 1916, № 9:

Ղազարի գավառում տիրում է սաստիկ թանկություն. «Ամբողջ գավառի աշխատող ուժերը վաղուց արդեն գտնվում են կովի դաշտում, իսկ գյուղում մնացել են «ջուխտ ու կենտ» ծերունիները»<sup>34</sup>:

Իրերի նման պայմաններում, ինչ խոսք, որ պետք է ավելի մեծանար գյուղական չքավորների թվաքանակը, որոնք չունենալով ապրուստի այլ միջոց, ստիպված էին վաճառել իրենց աշխատուժը և համալրել գյուղական պրոլետարիատի բանակը:

Արևելյան Հայաստանում չքավորներ և վարձու աշխատողներ եղել են նաև պատմական անցյալում, բայց չեն ձևավորվել իբրև ինքնուրույն դասակարգ: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում նրանք արդեն ստվարանում են և դառնում հասարակության առանձին խումբ, նյութական բարիքներ արտադրողների որոշակի զանգված, կազմում են գյուղական պրոլետարիատի բանակը:

Արևելահայ գյուղում վարձու աշխատանքի կիրառումը սկսեց նկատելի դառնալ XVII—XVIII դդ., հատկապես էջմիածնի վանական տրնտեսության մեջ: Մասնագետները նշում են, որ 1750 թ. վանքի փաստաթղթերում արձանագրվել է 8219, իսկ 1800 թ. մինչև 10.000 օրավարձու աշխատողների աշխատանքային օր: XIX դ. առաջին քառորդին այդ թիվը հասել է 20.000-ի<sup>35</sup>: Բանվորները հավաքագրվում էին գերազանցապես հարևան գյուղերից և վարձատրվում մի դեպքում փողով, մյուսում՝ բնավճարով, իսկ երրորդում՝ թե մեկով և թե մյուսով: Նրանք աշխատում էին վանական տնտեսության բոլոր ճյուղերում՝ բացում էին այգիները, ծերատում էին, փորում էին, թաղում էին դրանք, վարում էին վարելահողերը, ցանում էին հացահատիկ, բամբակ և այլ կուլտուրաներ, քաղհանում ու մաքրում էին դաշտերը, հավաքում էին բերքը, բանում էին անասնապահության բնագավառում և կատարում այլ հանձնարարություններ<sup>36</sup>: էջմիածինը իր ծախսերի մի

<sup>34</sup> Նույն տեղում, № 47:

<sup>35</sup> Б. М. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940, с. 62.

<sup>36</sup> «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության (հոգվածների ժողովածու)», Ե., 1971, էջ 165—166:



մասը որպես աշխատավարձ հատկացնում էր այդ մշակներին ու ծառայողներին:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումից հետո որոշակի պայմաններ են ստեղծվում վարձու աշխատանքի զարգացման համար: Այն սկսում է արմատավորվել գյուղի հարուստ տնտեսություններում, որի հետևանքով հանդես են գալիս կապիտալիստական կամ «բուրժուական հարաբերությունների տարրերը, իհարկե, հնի, ֆեոդալականի տիրապետության մթնոլորտում»<sup>37</sup>:

Գարակեսին նրանք արդեն նկատելի են դառնում երկրի առանձին շրջաններում: Գյուղատնտես Ի. Սերբերյակովի վկայությամբ, 1850-ական թվականներին Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառում, որի մեջ մտնում էին նաև Իջևանի ու Շամշադինի շրջանները, ընչազուրկ գյուղացիները վարձվում էին իրենց հարուստ համագյուղացիների տնտեսություններում: Նրանք դեռ չէին հեռանում իրենց գյուղից կամ շրջանից, քանի որ հույս ունեին, թե կվերականգնեն կորցրած ունեցվածքը: Վարձու աշխատողների թիվը մեծանում էր բերքահավաքի ամիսներին, հատկապես ցածրագիր շրջաններում, ուր տեղացիների հետ միասին աշխատում էին նաև լեռնային գյուղերից եկածները: Ի. Սերբերյակովը նշում էր, որ իրենց ամուսինների և հարազատների հետ սկսել են վարձու աշխատանքի դիմել նաև կանայք: Այդ երևույթը դեռ հազվադեպ է, բայց հավանական է, որ «վաղ թե ուշ կդառնա համընդհանուր»<sup>38</sup>:

Օրավարձուները կամ բատրակները աշխատում էին առավելագույն դաշտամշակության, այգեգործության և անասնապահության մեջ: Մեկ տարով վարձվողները ստանում էին 20—25 ռուբլի, սնվելով տիրոջ հաշվին: Սեզոնով վարձվողները հարթավայրում ստանում էին բերքի 1/5-ը կամ օրական 1,5—3 ռուբլի, իսկ լեռնային շրջաններում՝ բերքի 1/8-ը, կամ օրական 50 կոպ.: Օրավարձու բատրակները, ապրելով նույնպես տիրոջ հաշվին, ստանում էին 15—60 կոպ.: Սակայն այլապի բարձր աշխատավարձ նրանք ստանում էին տարվա մեջ 7—8 օր: Իսկ ընդհանրապես մշակը միջին հաշվով ստանում էր օրական 10 կոպեկից ոչ ավելի<sup>39</sup>:

<sup>37</sup> Վ. Հ. Ռոտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, հ. Ա. Ե, 1960, էջ 211:

<sup>38</sup> И. Серебряков, Сельское хозяйство в Елисаветпольском уезде, Тифлис, 1862, с. 81.

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 87:

Նույն հեղինակի վկայությամբ, Շամշադինում և Իջևանում վարձու աշխատանքով ապրողները, կազմում էին բնակչության շուրջ 5 տոկոսը<sup>40</sup>:

Բացի այդ շրջաններից, վարձու աշխատանքը նկատելի էր դառնում երկրի նաև մյուս վայրերում: 1860-ական թվականներին օրավարձու մշակը խաղողագործության և այգեգործության մեջ միջին հաշվով ստանում էր Երևանի գավառում— 50—70 կոպ., էջմիածնի գավառում՝ 25—40 կոպ., Նախիջևանի գավառում՝ 30—50 կոպ.<sup>41</sup>, իսկ Երևանի նահանգի դաշտավարության մեջ՝ 30—50 կոպ.<sup>42</sup>:

Գարակեսին էջմիածնի տնտեսության մեջ այգիների մշակումը կատարվում էր գերազանցապես մշակների ուժերով: Նրանք իրենց աշխատավարձն ստանում էին հիմնականում դրամով: Հարկադիր աշխատանքը մղվում է ետին պլան<sup>43</sup>: 1860—1870-ական թվականներին վարձու աշխատանքն էջմիածնում ավելի է ծավալվում: Ըստ մեր ձեռքի տակ եղած աղբյուրների, 1875 թ. վանքի Ղոբի այգում աշխատել է 244 մարդ, Օղազի այգում՝ 26, Վերին այգում՝ 47, Լուսարի այգում՝ 50, Շողակաթի այգում՝ 43, Թումանի այգում՝ 370 մարդ: Նրանք մշակում էին դաշտ ու անտառ, այգի ու բանջարանոց, հնձում էին հացահատիկ ու խոտաբույս, հավաքում էին ցորեն ու գարի, հատապտուղներ ու մրգեր, բրինձ ու բամբակ, լոբի ու սիսեռ, մաքրում էին արտեր ու գոմեր, կրում էին ցախ ու քթոց, ծեծում էին ձավար, կտրում էին բասմա, հանում էին աթար, բանում էին ջինով, կառուցում էին տներ ու եկեղեցիներ և կատարում էին բազմաթիվ այլ աշխատանքներ: Ամենաբարձր վարձատրությունը հնձվորներինն էր (օրական 40—50 կոպ.), հացահատիկ ու խոտ հավաքողները և էտողները օրական ստանում էին 35 կոպ., այնուհետև մարգոսավորները, ձավար ծեծողները, այգի թաղողները՝ օրական 30 կոպ., իսկ ամենաքիչը ստանում էին խաղող քաղողները՝ օրական 10 կոպ.<sup>44</sup>:

<sup>40</sup> Նույն տեղում:  
<sup>41</sup> Сборник сведений о Кавказе, т. III, Тифлис, 1875, с. 262, 267.  
<sup>42</sup> Сборник сведений о Кавказе, т. II, Тифлис, 1872, с. 190.  
<sup>43</sup> С. Х. Алексанян, Эчмиадзинское монастырское хозяйство и эчмиадзинское крестьянство в первой половине 19-ого в. (автореферат), Ереван, 1971, с. 13.  
<sup>44</sup> Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, էջմիածնի սինոդի տնտեսական մաս, թղթապանակ 96, վավերագիր 71, թղթապանակ 84, վավերագիր 15:

Բայց վարձու աշխատանքի կիրառումը արևելահայ գյուղում ծավալվում է հատկապես XIX դ. 80—90-ական թվականներից: Պետական գյուղացիների տնտեսական դրուժյունն ուսումնասիրողները 1884—1886 թթ. արձանագրում էին, որ Նոր Բայազետի գավառի 31 գյուղերից տարբեր ուղղությամբ արտադնացություն էին դիմում աշխատունակ 6400 տղամարդկանցից 2060—2230-ը (32,18—34,84%) և 5652 կանանցից՝ 40-ը (0,70%)<sup>45</sup>: Այդ նույն գավառի մի այլ շրջանի 77 գյուղերից դատումների էին գնում 5065 տղամարդ<sup>46</sup>: Նշելով, որ այդ գյուղերի բոլոր տարիքի տղամարդկանց քանակը կազմում է 23791, ցավոք, հեղինակը ցույց չի տալիս աշխատունակների թիվը: Այնուամենայնիվ, եթե համադրենք արտադնացողների թիվը անգամ բոլոր տղամարդկանց քանակին, կտեսնենք, որ այն կազմում էր ավելի քան 21%-ը:

Շարուր-Դարալագյազի գավառում վարձու աշխատանքով էր զբաղվում աշխատունակ տղամարդկանց շուրջ 10%-ը<sup>47</sup>:

Պետական գյուղացիների տնտեսական դրուժյունն ուսումնասիրող Ս. Պ. Զելինսկին Ալեքսանդրապոլի գավառի մասին գրում էր. «Երևելի է, որ հայերի մեջ ընդհանրապես քիչ են լինում աղքատներ, բայց այստեղ նրանց հանդիպում ես ամեն քայլափոխում, և այն հարցին, թե ինչո՞վ ես ապրում, ստանում ես պատասխան. «մուրացկանությամբ», իսկ ավելի հաճախ. «զբաղվում եմ օրավարձու աշխատանքով»<sup>48</sup>:

Օրդուբադի գավառի Դանակերտ գյուղից ազատավարձու աշխատանքի էր դիմում շափահաս տղամարդկանց 4/5-ը<sup>49</sup>:

Մշակները վարձվում էին գյուղատնտեսական տարբեր բնագավառներում: Նրանք աշխատում էին հացահատիկի մշակման մեջ: Նոր Բայազետի գավառի պետական գյուղացիների տնտեսական դրուժյունը ուսումնասիրող Ա. Վ. Պարվիցկու վկայությամբ, 1880-ական թվականների կեսերին գավառի մի շարք գյուղերում բատրակները հացահատիկի դաշտերի մշակման ժամանակ ստանում էին օրական 20—30 կոպ., ընդ որում 20 կոպ. ստանում էին այն դեպքում, երբ կերակրվում էին տիրոջ հաշվին: Բերքահավաքի ժամանակ նրանք ավելի շատ էին վաստակում՝ օրական 50 կոպ. եթե սնվում էին իրենց

հաշվին<sup>50</sup>: Այդ գավառի այլ գյուղերում մշակները ստանում էին օրական 30—70 կոպ., իսկ ամսական՝ 10—20 ռուբլի, սնվելով իրենց հաշվին<sup>51</sup>.

Երևանի գավառի պետական գյուղացիների տնտեսական դրուժյունը ուսումնասիրող Ֆ. Տ. Մարկովը 1885 թ. նշում էր, որ գավառի նախալեռնային վայրերում մշակները, ապրելով իրենց միջոցներով, օրական ստանում էին 40—50 կոպ., իսկ ցածրադիր կամ հարթավայրային շրջաններում՝ կրկնակին և եռակին: Այդ տարբերությունը պայմանավորված էր նրանով, որ հարթավայրային շրջաններում կլիմայական պայմանները ծանր էին, տերերը շտապում էին շուտ հավաքել բերքը<sup>52</sup>:

Ս. Պ. Զելինսկին 1885 թ. գրում էր, որ Ալեքսանդրապոլի գավառում հարուստները վարձելով մշակին մեկ տարով, վճարում են 30—35 ռուբլի, պարտավորվելով տալ նաև հագուստ, ուտելիք, ինչպես և վարել նրա արտերը՝ 2—3 դեսյատինի սահմաններում<sup>53</sup>: Այդ հեղինակը չի նշում, թե ինչքան էր հարուստը վճարում բատրակին, երբ նրան վարձում էր ամսով կամ օրով: Սակայն 1897 թ. Մ. Բեժանովը հաղորդում էր, որ նա ամսով վարձելիս տալիս էր մշակին 5 ռուբլի, իսկ օրով վարձելիս՝ 50 կոպ.<sup>54</sup>:

1884 թ. Շարուր-Դարալագյազի գավառի պետական գյուղացիների տնտեսական դրուժյունը ուսումնասիրող Ա. Գ. Դեկոնսկին հաղորդում էր, որ գավառի արևմտյան մասում մեկ տարով վարձվողները ապրելով տիրոջ հաշվին, ստանում են 40—50 ռուբլի, իսկ 1 ամսով վարձվողները՝ 20 ռուբլի, ընդ որում այս վերջինները, եթե վարձվում են մինչև բերքահավաքը կամ բերքահավաքից հետո, ստանում են 6—10 ռուբլի<sup>55</sup>: Հատկանշական է, որ այս գավառի ցածրադիր շրջաններում գալիս էին աշխատելու նաև Պարսկաստանից<sup>56</sup>: Ա. Վ. Պարվիցկին հաստատում է, որ նույն երևույթը գոյություն ունի նաև գավառի հյուսիս-արևմտյան մասում<sup>57</sup>:

<sup>45</sup> «Материалы...», т. I, с. 345.

<sup>46</sup> «Материалы...», т. IV, ч. II, с. 49.

<sup>47</sup> «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края» т. IV, с. 462—463.

<sup>48</sup> «Материалы...», т. I, с. 35.

<sup>49</sup> «Кавказское сельское хозяйство», 1897, № 174.

<sup>50</sup> «Материалы...», т. I, вып. V, с. 696.

<sup>51</sup> նույն տեղում, էջ 687:

<sup>52</sup> «Материалы...», IV, ч. II, с. 140.

<sup>45</sup> «Материалы...», т. I, с. 345.

<sup>46</sup> «Материалы...», т. IV, ч. II, с. 49.

<sup>47</sup> նույն տեղում, էջ 140:

<sup>48</sup> «Материалы...», т. I, с. 45.

<sup>49</sup> «Материалы...», т. I, вып. V, с. 635.

1884 թ. Նախիջևանի գավառի պետական գյուղացիների տնտեսական դրույթունը ուսումնասիրող Ն. Կ. Նիկիֆորովը վկայում էր, որ գավառում մահմեդական սեկտորը բանվորը, ապրելով տիրոջ միջոցներով, ստանում է օրական 35—40, իսկ հայ բանվորը՝ 25—35 կոպ.<sup>58</sup>: Այդ տարբերությունը պայմանավորված էր նրանով, որ վարձողները մահմեդականներ էին: Ուշագրավ է, որ պարսկահայատակները գալիս վարձվում էին նաև Հայաստանի այս մասում և սնվելով տիրոջ հաշվին, ստանում են օրական 25—30 կոպ.<sup>59</sup>:

1892 թ. Կարսի մարզում մշակը հացահատիկի ու խոտի հնձի ժամանակ ստանում էր օրական 89—90 կոպ., իսկ այլ դեպքերում՝ 40—50 կոպ.: Եթե նա վարձվում էր մեկ տարով, ստանում էր 70—80 ուրբլի<sup>60</sup>: Հետաքրքիր է, որ Կարսի մարզի գյուղերում աշխատանք էին գտնում ոչ միայն տեղացիները, այլև Բաթումի մարզից և Պարսկաստանից եկած օրավարձու բանվորները<sup>61</sup>:

Լոռիում կալվածատերերն ու հարուստ գյուղացիները բերքահավաքի ժամանակ, վարձելով մշակներ, պահում էին նրանց իրենց հաշվին ու տալիս տեղացիներին օրական մինչև 1,50 ուրբ., իսկ Պարսկաստանից եկածներին՝ 1—1,20 ուրբ.<sup>62</sup>: Թղթակից Ս. Բունյաթովը նշում էր. «Վարձատրումը լավ է, բայց աշխատանքն էլ տաժանելի է»: Ակամայից համոզվում ես, որ «միայն սարսափելի կարիքն է ստիպում համաշարիներին (այսինքն՝ պարսիկ օրավարձու բանվորներին—Ա. Հ.) դիմելու այդ աշխատանքներին...»<sup>63</sup>:

Բացի հացահատիկի շրջաններից մշակները վարձվում էին նաև բրնձի պլանտացիաներում: Տերերը նրանց վերցնում էին առավելապես բրնձի բերքահավաքի ու մաքրման սեզոնին, բայց վերցնում էին նաև ցանքի ժամանակ: Մի դեպքում նրանք վճարում էին բնավճարով՝ հավաքածի 1/20-ը (Շարուր-Դարալագյազի գավառում), իսկ մի այլ դեպքում՝ դրամով՝ երեք ամսվա աշխատանքի համար (մարտ-մայիս) 25—27 ուրբ. (Երևանի գավառում): Մշակները ցանքի ժամանակ պար-

տավոր էին դաշտը վարել, տափանել, մաքրել ոչ պիտանի առարկաներից, իսկ բերքահավաքի ժամանակ՝ հնձել, շալթուկը տեղափոխել ու մաքրել<sup>64</sup>:

Բատրակները վարձվում էին նաև այգեգործության ու խաղողագործության մեջ և կատարում տարբեր աշխատանքներ: 80-ական թվականների կեսերին Տ. Տ. Մարկովը գրում էր, որ Երևանի գավառում ոչ քիչ թվով գյուղացիներ տարվա բոլոր եղանակներին աշխատում էին մեծահարուստների այգիներում: Նրանց օրավարձը «մի քիչ ցածր է հացահատիկի և խոտի բերքահավաքին վարձվողների օրավարձից»<sup>65</sup>: 90-ական թվականների կեսերին խաղողագործության մասնագետ Ի. Զ. Անդրեևիկովը նշում էր, որ Արարատյան դաշտում խաղողաքաղի ժամանակ համարյա ոչ մի ընտանիք չէր կարող յուր գնալ առանց մշակների: Սովորաբար մշակը ստանում էր հավաքած խաղողի 1/4—1/6-ը, իսկ օրավարձու աշխատողը՝ գարնանը՝ 45—60 կոպ., բերքահավաքին՝ 30—35 կոպ., ապրելով իր միջոցներով<sup>66</sup>: 1883 թ. Վաղարշապատում հաշվվում էին 135 վերաբնակիչներ, որոնց մեծ մասը ապրում էր վարձու աշխատանքով, բանում վանքի և մերձակա գյուղերի այգիներում, ստանալով օրական 30—40 կոպ.<sup>67</sup>:

Վարձու աշխատանքը շատ էր օգտագործվում նաև բամբակագործության մեջ: Երևանի նահանգապետը 1900 թ. իր հաշվետվության մեջ գրում էր, որ բամբակի պլանտացիաների ու խաղողի այգիների 2/3-ը մշակվում է սեփական, իսկ 1/3-ը՝ վարձու աշխատանքով, մինչդեռ գյուղատնտեսության մյուս ճյուղերում այն չունի այդչափ տարածում<sup>68</sup>:

Մեկ դեսյատինից բամբակ հավաքելու համար անհրաժեշտ էր առնվազն 50 մարդ: Տեղացիները չէին կարող տրամադրել այդքան աշխատուժ: Ուստի ունեւորները վարձում էին նաև այլ շրջաններից եկածներին: 1909 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «...Բամբակի շրջանները սպասարկվում են Երևանի, էջմիածնի ու Նոր Բայազետի գավառների լեռնային գոտիների աշխատող ձեռքերով: Աշնանը, հենց որ ավարտվում են գյուղատնտեսական աշխատանքները, այդ վայրերից

<sup>58</sup> «Материалы...», т. I, вып. V, с. 571.

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 563:

<sup>60</sup> Всеподданнейший отчет о состоянии Карсской области, за 1892 г., с. 7—8.

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>62</sup> «Кавказское сельское хозяйство», 1897, № 158.

<sup>63</sup> Նույն տեղում:

<sup>64</sup> «Свод материалов...», т. IV, с. 484—485.

<sup>65</sup> «Материалы...», т. III, ч. I с. 113.

<sup>66</sup> «Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе». Вып. VI, с. 70.

<sup>67</sup> Մատենադարան, Սինոդի տնտեսական մաս, Թղթապանակ 104, վավերագիր 42, էջ 21—58:

<sup>68</sup> Обзор Эриванской губернии за 1900 г., с. 3.

բնակիչներն ամբողջ խմբերով ուղղվում են դեպի Երևանի նահանգի ցածրադիր շրջանները, որ աշխատեն հատկապես բամբակի պլանտացիաներում և մնում են մինչև բերքի հավաքման ավարտը»<sup>69</sup>։ Արևելյան Հայաստանի բամբակի պլանտացիաներում աշխատում էին նաև Պարսկաստանից եկածները։ Սակայն նրանք քիչ էին։ Բամբակագործության մասնագետ Պ. Պետրովիչը, հենվելով 1912 թ. հավաքած անկետային տվյալների վրա, նշում էր, որ Երևանի նահանգի բամբակի դաշտերում բանող մշակների միայն 9 տոկոսն էր համարվում գրսից եկածներ, մնացածները տեղացիներ էին<sup>70</sup>։

Բատրակները վարձատրվում էին դրամով կամ բնավճարով և ստանում օրական 20 կոպ.-ից ոչ ավելի կամ հավաքած բերքի 1/12-ը<sup>71</sup>։ Տղամարդկանց հետ միասին վարձվում էին նաև կանայք։

Արևելյան Հայաստանում վարձու աշխատանքը զգալիորեն տարածված էր նաև անասնապահության մեջ։ Ս. Պ. Զելինսկու վկայությամբ Ալեքսանդրապոլի գավառում հարուստ տնտեսությունները վարձում էին հովիվներ մարտի 9-ից մինչև սեպտեմբերի 15-ը, այնուհետև՝ նորից՝ մինչև մարտի 9-ը՝ յուրաքանչյուր ոչխարի համար վճարելով 5 կոպ.<sup>72</sup>։ Նրանք բանող անասուններ արածացնելու համար վարձում էին նաև 10—12 տարեկան պատանիներ<sup>73</sup>։ Հեղինակը բավարար տեղեկություններ չի տալիս հովիվների ու հոտաղների աշխատավարձի մասին։ Սակայն հայտնի է, որ Նոր Բայազետի գավառում այդ նույն տարիներին հովիվ վարձելիս վճարում էին բացառապես բնավճարով՝ յուրաքանչյուր խոշոր եղջերավոր անասունի համար՝ 7—12 գրվանքա (1 գրվանքան=409 գրամի) ցորեն, այդքան էլ գարի, յուրաքանչյուր ձիու համար՝ 6—15 արշին (1 արշինը=0,711 մետրի) կտավ, մի գույգ տրեխ, լավաշ, յուրաքանչյուր 20 գլուխ ոչխարի ու այծի համար՝ 1 գառ, որոշակի քանակությամբ կաթ, պանիր, բուրդ, լավաշ, կտավ և այլն<sup>74</sup>։ Հավանաբար հովիվներին այդչափ էին վարձատրում նաև Ալեքսանդրապոլի գավառում։

<sup>69</sup> Труды съезда хлопкоробов в гор. Тифлисе 1—6 ноября 1912, т. 2, ч. II, Тифлис, 1914, с. 76.

<sup>70</sup> П. Петрович, Хлопководство в Закавказье, Тифлис, 1912, с. 14.

<sup>71</sup> Район Тифлиско-Карско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях, исследования А. М. Аргутинского-Долгорукого, В. П. Бочкарева и Р. И. Даниловича, Тифлис 1897, с. 660.

<sup>72</sup> «Материалы...», т. I, с. 48.

<sup>73</sup> Նույն տեղում, էջ 46։

<sup>74</sup> Նույն տեղում, էջ 341—342։

Լոռիում 1900 թ. կաթնամշակման ձեռնարկատիրոջ հովիվն ստանում էր տարեկան 80 ուրլի, իսկ նրա կովկիթ կինը՝ ամսական 1,5 ուրլի կամ օրական 5 կոպ.<sup>75</sup>։ Նրանք ազգությամբ հայեր, քրդեր և ադրբեջանցիներ էին, ընդ որում հայերն ու քրդերը վարձվում էին գերազանցապես հայերի, իսկ ադրբեջանցիները՝ ադրբեջանցիների մոտ։ Իացի երկրագործությունից գյուղացիները վարձվում էին նաև զանազան շինարարական աշխատանքներում։ Նրանք մասնակցում էին եկեղեցիների ու տների կառուցմանը, այգիների ու բանջարանոցների ցանկապատմանը, ջրանցքների ու առուների բացմանը և կատարում այլ գործեր։ Իբրև կանոն որակյալ մասնագետները համարյա ամենուրեք բարձր էին ստանում։ Այսպես, 1895 թ. եկեղեցիներից մեկի կառուցման ժամանակ որմնադիրն օրական ստանում էր 1 ուրլ. 60 կոպ., քարտաշը՝ 1 ուրլ. 20 կոպ., իսկ մշակը՝ 40 կոպ., երբեմն 10—20 կոպ.<sup>76</sup>։

Անհրաժեշտ է նշել, որ գյուղացիները որոշ դեպքերում վարձու աշխատանքով զբաղվում էին նաև իրենց քաշող անասուններով ու արտադրական կամ փոխարական միջոցներով։ Երկրի տարբեր շրջաններում և տարբեր ժամանակներում նրանք ստանում էին տարբեր աշխատավարձ։ Երևանի նահանգում, օրինակ, 1877 թ. մշակը միայն ինքը վարձվելիս, ստանում էր օրական 40—60 կոպ., եզներով՝ 1—1,25 ուրլ., ձիերով՝ 1—1,40 ուրլ.<sup>77</sup>։ Շարուր-Գարալապյազի գավառում 1885 թ. օրավարձուն իր եզներով, գոմեշներով կամ ձիերով վարձվելիս, ստանում էր օրական 80 կոպեկից մինչև 1 ուրլի<sup>78</sup>։ Կարսի մարզում 1892 թ. նա ստանում էր 80—90 կոպ., իսկ եզներով վարձվելիս՝ 2—2,5 ուրլի և այլն<sup>79</sup>։ Մի շարք դեպքերում մշակը դրամի փոխարեն ստանում էր բնամթերք, հաճախ էլ՝ թե մեկը և թե մյուսը։

Վարձու աշխատանքով զբաղվում էին գյուղական բնակչության տարբեր խավերը, բայց ամենից շատ՝ պրոլետարական ու կոսապրոլետարական զանգվածները։ Եթե ունևոր շերտերը երբեմն դիմում էին վարձու աշխատանքի իրենց տնտեսություններն ավելի ընդարձակելու

<sup>75</sup> «Кавказское сельское хозяйство», 1902, № 417.

<sup>76</sup> ՉՍՄ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 7, գ. 63, թ. 31—36։

<sup>77</sup> «Кавказский календарь», на 1877, с. 13, ՉՍՄ ԿՊՊԱ, ֆ. 5, ց. 3, գ. 61, 5206, թ. 32։

<sup>78</sup> «Свод материалов», т. IV, с. 473.

<sup>79</sup> «Всеподданнейший отчет о состоянии Карсской области», за 1892 г., с. 7—8.

և բարեկարգելու, միջակ տնտեսությունները՝ իրենց հարկերն ու պարտքերը վճարելու կամ ծայրը ծայրին հասցնելու, ապա կիսապրոլետարական ու պրոլետարական խավերը՝ ապրելու կամ իրենց գոյությունը քարշ. տալու համար: Գյուղական վերնաշերտերի համար վարձու աշխատանքը բացառություն էր, մինչդեռ ներքնաշերտերի համար՝ կանոն, սովորական բան: Արևելյան Հայաստանի գյուղական պրոլետարիատի ամենատիպիկ ներկայացուցիչը աննշան հողաբաժին կամ տնտեսություն ունեցող բատրակներն էին:

Տղամարդկանց հետ միասին երբեմն դատումների էին գնում նաև կանայք ու պատանիները, սակայն ստանում էին նրանցից պակաս աշխատավարձ:

Գյուղական բուրժուազիան բատրակներին շատ հաճախ վճարում էր բնավճարով, որը վկայում էր դրամական տնտեսության ոչ լիակատար գերիշխման մասին:

Բերված այդ փաստերը ցույց են տալիս, որ բատրակները վարձվում էին երկրի համարյա բոլոր շրջաններում, բայց ավելի շատ՝ Արարատյան դաշտում ու Լոռիում, այսինքն՝ այն վայրերում, ուր ապրանքադրամական հարաբերությունները համեմատաբար զարգացած էին:

Նրանք աշխատում էին գյուղատնտեսության բոլոր բնագավառներում, սակայն ամենից շատ՝ հացահատիկային: տնտեսության և անասնապահության մեջ: Իրավ է, երկրագործության այդ ճյուղերը համեմատաբար թույլ էին ներքաված շուկայական հարաբերությունների մեջ, քան խաղողագործությունը կամ բամբակագործությունը, բայց նրանք կազմում էին բնակչության հիմնական զբաղմունքը, կարող էին ավելի շատ աշխատուժ կլանել, քան հողագործության մյուս բնագավառները:

Բատրակները վարձվում էին թե՛ կալվածատիրական և թե՛ կուլակային, բայց ավելի շատ՝ կուլակային տնտեսություններում, որովհետև կալվածատերերի մեծ մասը չէր վարում բուրժուական տնտեսություն: Ճիշտ է, կային կալվածատերեր, որոնք վարձում էին հարյուրավոր մշակներ. օրինակ՝ Լոռիում Խանաղյանը, ըստ Սմբատ Լոռվարդի վկայության, XX դ. սկզբին իր 920 դեսյատին հողերի վրա տարեկան աշխատեցնում էր 500 տղամարդ և 100 կին<sup>80</sup>: Սակայն այդպիսի կալվածատերերը սակավաթիվ էին: Դրա դիմաց կային շատ ունևոր գյուղացիներ, որոնք վարձում էին տասնյակ ու հարյուրավոր բատրակներ:

<sup>80</sup> Մ. Ա. Խոնդկարյան, Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների պատմությունից, (XIX դ. վերջ XX դ. սկզբ), Ե., 1974, էջ 106:

«Հորիզոնի» թղթակիցը հաղորդում էր, որ գարնանը, երբ սկսվում էին դաշտային աշխատանքները, Պարսկաստանից գալիս էին հազարավոր մշակներ և բանում Զանգիբասարի ու Գառնիբասարի դաշտերում: Միայն Թազագյուղում 1911 թ. աշխատում էին 1000-ից ավելի տեղացի ու եկվոր բատրակներ<sup>81</sup>:

Արևելյան Հայաստանի գյուղական պրոլետարների ճնշող մեծամասնությունը տեղացիներ էին, իսկ փոքրամասնությունը՝ եկվորներ: Վերջիններս գալիս էին գլխավորապես Պարսկաստանից ու Թուրքիայից, հաճախ Անդրկովկասի այլ շրջաններից, երբեմն նաև եվրոպական Ռուսաստանից: Մի ուսումնասիրություն մեջ ասվում էր, որ «Թուրքիայի ու Պարսկաստանի եկվորներով սպասարկվում է գլխավորապես Անդրկովկասի (այդ թվում նաև Արևելյան Հայաստանի—Ա. Հ.) իսկ եվրոպական Ռուսաստանի նահանգների եկվորներով՝ Հյուսիսային Կովկասի շուկան»<sup>82</sup>:

Վերջապես, բերված փաստերը ցույց են տալիս, որ բատրակները վարձվում էին տարբեր ժամկետներով՝ սկսած մեկ ժամից կամ մեկ օրից, վերջացրած մեկ և ավելի տարիներով: Հավանական է, որ մեծամասնությունը վարձվում էր օրերով ու սեզոնով: Սակայն մեկ և ավելի տարիներով վարձվողները արդեն կազմում էին զգալի թիվ:

Աղյուսակ 7-ի տվյալները ցույց են տալիս, որ Արևելյան Հայաստանում 1897 թ. հունվարի 28-ին, այսինքն՝ մարդահամարի անցկացման օրը եղել է երկարաժամկետ վարձվող ավելի քան 9 հազար բատրակ, որոնք աշխատում էին գյուղական հարուստների տնտեսություններում, կատարելով ամենատարբեր աշխատանքներ<sup>83</sup>: Այդ բատրակների քանակը համեմատաբար մեծ էր Արարատյան դաշտում (Նրևանի, էջմիածնի, Սուրմալուի ու Նախիջևանի գավառների ցածրադիր վայրերում), Լոռիում (Բորչալուի գավառ) և Կարսի մարզում, այսինքն՝ այն շրջաններում, ուր, ինչպես արդեն ասվեց, ապրանքադրամական հարաբերությունները համեմատաբար զարգացած էին: Անշուշտ, երկարաժամկետ վարձվողների թիվը փոքր էր սեզոնային մշակները քանակից,

<sup>81</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>82</sup> «Движение сезонных рабочих на Кавказе в 1912, 1913 и 1914 гг.» Составил Дм. Мерхалев, Тифлис 1915, с. 22.

<sup>83</sup> Первая всероссийская перепись населения Российской империи 1897 г., LXXI, Эриванская губерния, СПб, 1905, с. 4—5, LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904, с. 4—5, LXIX, Тифлисская губерния, СПб, 1905, с. 7, LXIV, Карсская область, СПб, 1900, с. 5.

բայց և այնպես ցույց էր տալիս գյուղական պրոլետարիատի արգեն կայուն զանգվածի առկայությունը Արևելյան Հայաստանում:

Գյուղական պրոլետարիատի դրուժյունը շափազանց ծանր էր: Պարսկական տիրապետության շրջանում նա հաճախ ենթարկվում էր այնպիսի բռնությունների, որ հատուկ էր ֆեոդալական հասարակարգին: Տերերը մշակներին անգամ ծեծում էին, պահում սարսափի մեջ, բնակեցնում մութ ու խոնավ անկյուններում կամ գոմերում, վճարում շնչին աշխատավարձ: Բ. Մ. Հարությունյանի բերած տվյալներով, էջմիածնի վանքապատկան տնտեսության մեջ 1743 թ. գյուղական բան-

**Աղյուսակ 7**

Երկարածամկետ մշակներ կամ ծառաներ պահող տնտեսությունների թիվը (ըստ 1897 թ. հունվարի 28-ի մարդահամարի տվյալների)

Փավտոնները	Գյուղացիական բոլոր տնտեսութ.	Տնտեսություններ, որոնք ունեն վարձու մշակներ կամ ծառաներ				
		1 մարդ	2 և 3 մարդ	4 և 5 մարդ	6 և 10 մարդ	11 և ավելի մարդ
Երևանի	17.774	839	83	3	2	—
Ալեքսանդրապոլի	16.189	211	33	4	1	1
Նախիջևանի	15.060	395	45	7	—	—
Նոր Բայազետի	13.127	202	30	4	—	—
Սուրմալուի	12.521	212	42	5	—	—
Շարուր-Գարայազարի	11.161	319	43	6	1	—
Էջմիածնի	17.463	807	77	5	3	—
Ջանդեղուրի	22041	191	36	4	—	—
Ղազախի <sup>84</sup>	14.371	304	111	16	10	—
Շուշիի	19.132	288	62	14	4	1
Բորչալուի	16578	734	196	14	6	1
Կարսի օկրուգ	14580	791	128	10	1	—
Արզահանի օկրուգ	8021	294	56	4	1	—
Կազգվանի օկրուգ	6149	286	79	4	3	—
Օլթիի օկրուգ	4609	98	10	1	2	—

վորը օրական ստանում էր 40—45 դինար, որով կարող էր գնել 2,5 կգ ցորեն կամ 5 կգ գարի կամ 1,5 մետր կտավ<sup>85</sup>: 1800 թ. նոսրինալ աշ-

<sup>84</sup> Մենք ստիպված ենք եղել վերցնել Բորչալուի, Ղազախի և Շուշիի գավառներին վերաբերող բոլոր տեղեկությունները, քանի որ աղբյուրները հնարավորություն չեն տալիս անչափսու պատմական Հայաստանի կազմում շմտող նրանց տարածքները:

<sup>85</sup> Ե. Մ. Արսուկյան, նշված աշխ., էջ 65:

խատավարձը թեև բարձրանում է, սակայն ռեալ աշխատավարձը առաջադիմում է խիստ դանդաղ: Բոլոր դեպքերում նա ստանում էր այնքան, որ կարողանում էր մի կերպ պահել միայն իրեն<sup>86</sup>:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումից հետո գյուղական բանվորի դրուժյունը ինչ-որ չափով բարելավվեց. 1886 թ. նրա օրական աշխատավարձը կազմում էր միջին հաշվով 27 կոպ., որով կարող էր գնել շուրջ 10 կգ ցորեն կամ 16 կգ գարի, կամ 6—7 կգ բրինձ և այլն<sup>87</sup>: Սակայն դա բարելավվում էր պարսկական տիրապետության համեմատությամբ, իսկ ընդհանուր առմամբ մշակի դրուժյունը ծանր էր նաև ռուսական տիրապետության պայմաններում: Նրա աշխատավարձը չէր բավարարում ընտանիքի գոյության համար: Նոր Բայազետի գավառի գյուղացիների տնտեսական դրուժյունն ուսումնասիրողն արձանագրում էր, որ 1885 թ. Ղուլալի գյուղում չբավորի տարեկան եկամուտը կազմում էր 60 ռուբ., իսկ ծախսը՝ 64 ռուբ. 94 կոպ.<sup>88</sup>:

Բատրակի կացությունը ծանրանում էր նաև նրանով, որ նրա աշխատավարձն ավելի դանդաղ էր աճում, քան գյուղատնտեսական մթերքների գները (տես աղյուսակ 8)<sup>89</sup>:

**Աղյուսակ 8**

Տարեթիվը	Մշակի 1 օրվա աշխատանքի համարյալը	Գյուղատնտ. մթերքների գները (1 վոլթը)						
		ցորեն	գարի	բրինձ	խազող	յուղ	պանիր	միս
1886	27 կ.	51 կ.	27 կ.	65 կ.	30 կ.	8ռ.	4ռ.	2ռ.
1897	34 կ.	75 կ.	45 կ.	80 կ.	51 կ.	12ռ.	4ռ.	2ռ 50կ.

Աղյուսակ 8-ը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական մթերքների գներն ավելի արագ են բարձրանում, քան բատրակների աշխատավարձը: Միայն պանրի դինն է անփոփոխ մնացել:

XX դարի սկզբին հեղափոխական շարժումների ազդեցության տակ ինչպես կայսրության այլ շրջաններում, այնպես էլ Արևելյան Հայաստանում բատրակի աշխատավարձը բարձրացավ, որի մասին կարելի

<sup>86</sup> Նույն տեղում, էջ 66:

<sup>87</sup> А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1920), Ереван, 1959, с. 135.

<sup>88</sup> «Материалы...», т. I, с. 350—351.

<sup>89</sup> А. С. Амбарян, նշված աշխ., էջ 135:

է պատկերացում կազմել 9-րդ աղյուսակի տվյալներից (մշակի 1 տարվա աշխատավարձը ուրբիներով)<sup>90</sup>:

Աղյուսակ 9

Շրջան՝ երբ	1900 թ.			1905 թ.			1910 թ.		
	բանվորին	բանվորուհուն	պատանուն	բանվորին	բանվորուհուն	պատանուն	բանվորին	բանվորուհուն	պատանուն
Երևանի նահանգում	36	20	15	47	27	21	66	36	32
Կարսի մարզում	39	27	15	53	31	21	73	46	29

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ մշակի աշխատավարձը թե՛ Երևանի նահանգում և թե՛ Կարսի մարզում անշեղորեն աճում էր և 10 տարվա ընթացքում գրեթե կրկնապատկվում, ընդ որում Կարսի մարզում այն ավելի բարձր էր: Դա պայմանավորված էր նրանով, որ Երեվանի նահանգում, ագրարային գերբնակչության առկայության պայմաններում, աշխատուժը համեմատաբար հեշտ էր ձեռք բերվում:

Սակայն աշխատավարձի բարձրացման հետ միասին աճում էին նաև պարենամթերքների գները: 1897—1910 թթ. Երևանի նահանգում աշխատավարձի և գյուղատնտեսական մթերքների գների փոխհարաբերությունը արտահայտվել է հետևյալ համամասնությամբ<sup>91</sup>:

Աղյուսակ 10

Տարեթվերը	մշակի 1 տարվա աշխատավ. (ուրբ.)	Գյուղատնտեսական մթերքների գները (1 փուլը կուպեկներով)					
		ցորեն	գարի	բրինձ	խաղող	պանիր	միս
1797	36	75	45	90	51	400	250
1910	66	124	73	265	284	600	516

<sup>90</sup> «Сельскохозяйственный обзор по Закавказью за 1910 гг», Тифлис, 1911, с. 162—165.

<sup>91</sup> «Сельскохозяйственный обзор по Закавказью за 1910 г.», с. 99—149. «Кавказ в сельскохозяйственном отношении», 1900, с. 37, 44.

Աղյուսակ 10-ից երևում է, որ 13 տարվա ընթացքում պարենամթերքների գներն ավելի են բարձրացել, քան բատրակների աշխատավարձը:

Տերը բատրակին հատուցում էր նաև բնավճարով, որը կազմում էր նրա աշխատավարձի մի զգալի մասը: Բնավճարը նատուրալ տնտեսության մնացորդն էր: Այն քողարկում էր բատրակի էժան շահագործումը կուլակի կողմից:

Գյուղական պրոլետարի աշխատավարձի չափերը պետության կողմից չէին սահմանված: Պետության կողմից չէին սահմանված նաև նրա աշխատանքային ժամերը: Այդ երկուսն էլ կախված էին տիրոջ կամքից, որը շարաշահելով մշակների անգործությունը, անելանելի վիճակը, կարիքն ու խեղճությունը, աշխատեցնում ու վճարում էր այնքան, որքան ցանկանում էր:

Մեր ձեռքի տակ եղած նյութերը հետևյալ տեղեկություններն են տալիս բատրակի աշխատաժամերի մասին: «Մշակի» թղթակիցը գրում էր, որ Օրդուբադի տեղամասի Ազուլիս գյուղում բատրակի աշխատանքը սկսվում էր առավոտյան 6-ին և ավարտվում էր երեկոյան 5-ին, այսինքն՝ տևում էր 11 ժամ<sup>92</sup>:

Ս. Պ. Զելինսկին նշում էր, որ Ալեքսանդրապոլի գավառում մշակման ժամկալը սկսում էր վարել գիշերվա ժամը 2—3-ից մինչև 11—12, ապա մի երկու ժամ ընդմիջումից հետո շարունակում էր գործը և ավարտում մայրամուտին, այսինքն՝ օրական բանում էր 11—12 ժամ<sup>93</sup>: Ս. Զավարյանը ցույց էր տալիս, որ երկրի այլ շրջաններում մշակման ժամկալը աշխատում էր ավելի երկար՝ սկսում էր բանել դեռ լույսը չբացված և ավարտում ուշ երեկոյան<sup>94</sup>:

Սանր էին նաև մշակի աշխատանքային ու բնակարանային պայմանները: Ականատեսներից մեկը 1897 թ. հաղորդում էր, որ իրենում նա աշխատում էր մոծակներով լեցուն խոնավ ու ճահճոտ տեղերում: Շատերը հիվանդանում էին, ումանք երիտասարդ հասակում իջնում գերեզման, իսկ մյուսները կմախքացած կամ դեղնած մուսիաների կերպարանքով տուն էին վերադառնում<sup>95</sup>:

1908 թ. «Ձանգակի» թղթակիցը գրում էր, որ Շարուրի գավա-

<sup>92</sup> «Մշակ», 1872, № 35:

<sup>93</sup> «Материалы...», т. I, с. 36.

<sup>94</sup> С. Заваров, Опыт исследования... с. 190.

<sup>95</sup> «Кавказское сельское хозяйство», 1897, № 158.

ուամասի բրնձի դաշտերում բատրակները «մինչև ծնկներն ու արմունկները քշտված, տասնյակներով մտնում են ճահիճը և աշխատում... 2—3 օր աշխատելուց հետո հիվանդանում են: Եթե այդ՝ բանվորի համար անտանելի պայմանների վրա ավելացնենք և այն, որ նրանք օրավարձ են ստանում 40—50 կոպ. առանց կերակրի—այն ժամանակ միայն ընթերցողի առաջ կպարզվի շաթուկի քաղհանիչների շահագործելու աստիճանը մեր շրջանում»<sup>96</sup>:

Թղթակիցը այնուհետև շարունակում էր. «Նախանձելի պայմաններով չեն աշխատում և բամբակի քաղհանիչը, որոնց թիվը մենակ մեր գյուղում (իմա՝ Խանլուխլար—Ա. Ն) 200-ից վեր է»: Նրանք մեծ մասամբ կանայք են և գալիս են գլխավորապես Աջեյրան ու Փսիան գյուղերից: Այդ քաղհանիչները օրական ստանում են 30—35 կոպեկ, կերակրվելով իրենց հաշվին: Տերերից շատերը, համարելով դա բարձր վարձատրություն, «2—5 կոպ. էլ կտրում են»: Նրանք աշխատում են օրական 14—15 ժամ, տալով ճաշի համար միայն 1 ժամ ընդմիջում»<sup>97</sup>:

Վերջապես թղթակիցը նշում էր, որ աննախանձելի է նաև ցորենի ու գարու հնձվորների վիճակը: Նրանց յուրաքանչյուրի օրական աշխատավարձը կազմում է 50—70 կոպ.: «Հնձվորների թիվը մեր շրջանում 300-ից անցնում է, բոլորն էլ դարալազյազցիներ են»: Տեղական վաճառականները ամենատարբեր առիթներով խաբում են նրանց»<sup>98</sup>:

Այդ նույն թերթի մի այլ թղթակից 1908 թ. Ագուլիսից հաղորդում էր, որ իրենց մոտ դաշտային աշխատանքները կատարում են Օնիս գյուղի թուրքերը: Նրանց օրավարձը թեև 40—50 կոպեկից բարձրացել է 60—70 կոպեկի, բայց ապրուստի ու աշխատանքի պայմանները մնացել են անտանելի: «...մտեք մեր այգիներն ու արտերը,—շարունակում էր նա,—և ձեր աչքին միայն թուրքի կանայք ու երեխաներ կերևան, ցնցոտիներով պատած, արևավառ դեմքերով ու կիսաքաղց...»<sup>99</sup>:

Հայ գյուղագիրները հաղորդում էին բազմաթիվ տեղեկություններ բատրակների դժնդակ կյանքի մասին<sup>100</sup>: Նրանց շարքաշ դրույթունը գեղարվեստորեն նկարագրված է հատկապես Հ. Ճուղուրյանի «Չաթոյի բախտի անիվը» հանրահայտ պատմվածքում:

<sup>96</sup> «Ձանգակ», 1908, հուլիսի 11, № 5:

<sup>97</sup> Նույն տեղում:

<sup>98</sup> Նույն տեղում:

<sup>99</sup> «Ձանգակ», 1908, օգոստոսի 2, № 23:

<sup>100</sup> «Հայ գյուղագիրներ», Ե., 1950:

Երբ համեմատում ենք Արևելյան Հայաստանի գյուղական պրոլետարիատի դրույթունը եվրոպական Ռուսաստանի գյուղական պրոլետարիատի հետ, տեսնում ենք որոշակի տարբերություններ: Արևելահայ գյուղում պրոլետարիատը թույլ էր զարգացած և ուներ ավելի ցածր կենսամակարդակ, քան եվրոպական Ռուսաստանում: Չնայած ցրան, նրանց երկուսի վիճակն էլ բնութագրվում էր կյանքի ու աշխատանքի անտանելի պայմաններով, երկար ու ձիգ աշխատօրով, չնչին աշխատավարձով. աղքատությանը ու խեղճությանը, կենսական պահանջների ոտնահարմամբ, մի խոսքով՝ դաժան ճնշմամբ ու շահագործմամբ:

Կայսրության ինչպես այլ շրջաններում, այնպես էլ Արևելյան Հայաստանում գյուղի կիսապրոլետարական ու պրոլետարական զանգվածները ակտիվ ու պասսիվ ձևերով պայքարում էին իրենց ճնշողների ու կեղեքողների դեմ: Բայց ի տարբերություն եվրոպական Ռուսաստանի, որի մի շարք վայրերում տեղի էին ունենում զուտ պրոլետարիատի՝ արտադրության միջոցներից զուրկ միայն վարձու աշխատանքով ապրողների ելույթներ, Արևելյան Հայաստանում այդպիսի ելույթներ չեն եղել: Դա բացատրվում է նրանով, որ այստեղ կապիտալիզմի թույլ զարգացման պատճառով բատրակները կամ մշակները ցրված էին առանձին գյուղերում կամ տնտեսություններում և պայքարում էին գյուղացիության մյուս զանգվածների հետ միասին:

Մեր պատմագիտությանը հայտնի գյուղացիական առաջին քիչ թե շատ նշանավոր ելույթը բռնկվել է 1832 թ. Սարդարապատի մահալում և ուղղված է եղել ցարական պաշտոնյաների բռնությունների ու հարստահարումների դեմ: Սարդարապատցիների բողոքը մնացել է ապարդյուն<sup>101</sup>:

Գյուղացիների ընդվզումները ցարական իշխանությունների դեմ ավելի լայնորեն արտահայտվեցին 1837 թ. աշնանը, երբ Նիկոլայ I-ը գտնվում էր Արևելյան Հայաստանում: Օգտագործելով նրան դիմավորելու առիթը, գյուղացիները ներկայացնում են բազմաթիվ դիմումներ, որոնց մեջ նկարագրելով իրենց դժնդակ վիճակը, խնդրում են կայսեր

<sup>101</sup> М. А. Адоны, Экономическое развитие Восточной Армении в XIX в. Ереван, 1957, с. 243.



միջամտությունը: Բայց նրանք չեն ստանում օգնություն, ումանք նույնիսկ պատժվում են թագավորին դիմելու համար<sup>102</sup>:

Սակայն պաշտոնյաների այդ դաժանությունները չեն ընկճում գյուղացիներին: Ընդհակառակը՝ նրանք նոր ուժով են ծառայում ցարական կառավարության հարկային ծանր քաղաքականության, տեղական պաշտոնյաների ու գյուղական տանտերների բռնությունների և կամայականությունների դեմ: Գյուղացիական շարժումն սկսվեց Փամբակ—Շորագյալից՝ 1837 թ. դեկտեմբերին և ծավալվելով՝ իր մեջ վերցրեց նոր Բայազետի գավառը, ավելի ճիշտ՝ Սևանի ավազանը, և ավարտվեց 1838 թ. գարնանը՝ մարտ-ապրիլ ամիսներին<sup>103</sup>:

Կառավարչապետ Ռոզենը կարգադրում է Հայկական մարզի պետ՝ իշխան Բեհրուժովին, մեկնել նոր Բայազետ, քննել հարցը և տեղում լուծել այն: Նրա կարգադրությունը կատարվում է: Բայց գյուղացիները մնացին անդրդվելի: Ցարական կառավարությունը դաժանորեն ճնշեց նրանց ելույթը:

Արևելյան Հայաստանի գյուղացիները մասսայաբար ըմբոստացան նաև 1860-ական թվականներին: Նշանավոր էին հատկապես 1863 թ. էջմիածնի գավառի Ապարանի 24 գյուղերի և 1866 թ. Ալեքսանդրապոլի գավառի 20 գյուղերի ելույթները: Նկարագրելով էջմիածնի գավառապետի հարկային հարստահարումներն ու պաշտոնական դիրքի շարաշահումները, ապարանցիները պահանջում էին փոխարքայից՝ «ազատել իրենց նրա ճնշումներից»<sup>104</sup>: Իսկ Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիները, բնութագրելով ցարական պաշտոնյաներից մեկի դաժանությունները, գրում էին փոխարքային. «ավելի լավ է ավազակների ձեռքն ընկնել, քան նրա մոտ գնալ»<sup>105</sup>: Համառ պայքարի շնորհիվ ապարանցիները հասան այն բանին, որ ցարական կառավարությունը ստիպված եղավ պաշտոնանկ անել էջմիածնի գավառապետին:

<sup>102</sup> Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր..., հ. Ա, էջ 137:

<sup>103</sup> Այդ շարժումները հանգամանորեն վերլուծված ու նրանց փաստաթղթերը հրատարակված են Վ. Հ. Ռշտունու կողմից (Хрестыянское движение в Армении в XIX в. Сост. проф. В. Рштуни, при участии К. Степаняна, Ереван, 1948, с 24—35). Նույնի Ուրվագծեր..., հ. Ա, էջ 125—151): Տե՛ս նաև Պարսամյան Վ. Ա., Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Ե., 1967, էջ 137—144: Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Ե., 1982, էջ 334—351:

<sup>104</sup> Վրաց. ՍՍՀ Կոմպ, ֆ. 9, գ. 4277, թ. 417, (ՊՐՀ, 1963, № 1, էջ 45):

<sup>105</sup> Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր..., հ. Ա, էջ 293:

XIX դարի Արևելյան Հայաստանում ցարական իշխանությունների դեմ ծավալված գյուղացիական մասսայական շարժումներից անհրաժեշտ է հիշատակել նաև 1886—1887 թթ. դեպքերը: Դրանց իսկական պատճառը, անշուշտ, ինքնակալության կողմից հայ բնակչության նկատմամբ 80-ական թվականների առաջին կեսերին իրագործվող ազգային ու սոցիալական ճնշումների ուժեղացումն էր, բայց առիթը՝ համընդհանուր զինվորական պարհակի տարածումն էր Անդրկովկասի քրիստոնյա, այդ թվում նաև հայ բնակչության վրա: Երբ ցարական պաշտոնյաները սկսեցին կազմել զորակոչիկների ցուցակները, կատարելով զանազան խարդախություններ, մի շարք վայրերում գյուղացիները ոչ միայն համառորեն դիմադրեցին, այլև վճռեցին նրանց: 1886 թ. հուլիսին Կարսի նահանգապետը նշում էր, որ զինակոչիկների ցուցակները կազմելիս Կարսի մարզի Կաղզվան ու Նախիջևան տեղամասերում «տեղի ունեցան մեծ անկարգություններ»: Ուշագրավ է, որ այդ վայրերում հայ ու քուրդ գյուղացիները համատեղ էին գործում իշխանությունների դեմ: 1887 թ. ցարական զորակոչի առիթով ելույթներ եղան նաև նոր Բայազետի գավառի Գյոզալդարա, Ալեքսանդրապոլի գավառի Ջաշուռ, էջմիածնի գավառի Սարդարապատ և մի շարք այլ տեղերում: Իշխանությունները կարողացան ճնշել այդ ելույթները միայն զորքի օգնությամբ<sup>106</sup>:

Արևելյան Հայաստանի գյուղացիները ծառայում էին նաև կալվածատերերի հարստահարությունների ու բռնությունների դեմ: Նրանց այդ շարժումը ավելի շոշափելի դարձավ XIX դ. 40-ական թվականներից, երբ ցարական կառավարությունը, իր սոցիալական հենարանը ամրապնդելու նպատակով, հողատերերին շնորհում էր զանազան արտոնություններ և համալրում նրանց շարքերը նոր մարդկանցով: Գյուղացիները ձգտում էին ազատվել կալվածատերերի ճիրաններից և անցնել պետական գյուղացիների շարքը: Այդպիսի մի պայքարով հանդես եկան նոր Բայազետի կամ Գյոկչայի գյուղերի բնակիչները աղալարների դեմ: Նրանք այդ պայքարը սկսեցին 1840-ական թվականներից, ընդհատումներով շարունակեցին մինչև 1870 թվականների վերջերը և ավարտեցին այն իրենց ազատագրումով կալվածատիրական կախումից<sup>107</sup>:

<sup>106</sup> «Հայ ժողովրդի պատմություն» հ. 6, էջ 206:

<sup>107</sup> Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր... հ. Ա, էջ 266: Խ. Հ. Ավգարեզյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Ե., 1959, էջ 120—138:

1840-ական թվականներից կալվածատիրական ճնշումներից ազատագրվելու պայքարով հանդես եկան նաև Զանգեզուրի գավառի Բանագուր և Տեղ գյուղերի բնակիչները: Նրանց պայքարը շարունակվեց ավելի քան 10 տարի, ավարտվեց պարտութամբ: Իշխանությունները բոլոր բողոքները համարելով անհիմն, պատժիչ արշավախմբեր էին ուղարկում և հնազանդեցնում գյուղացիներին<sup>108</sup>:

Կալվածատիրական լծից ազատվելու և պետական հողերի վրա տեղափոխվելու համար ըմբոստացան նաև Նոր Բայազետի Բջնի գյուղի բնակիչները: Նրանց ելույթը սկսվեց 1850-ական թվականների սկզբներին և շարունակվեց հետագա տասնամյակներին: Գյուղացիները հայտարարում էին, որ իրենք «պատրաստ են ամեն մի պատիժ կրել», միայն թե ատելի թիուղար-կալվածատեր «Գեղամովին ենթակա չլինեն»<sup>109</sup>, «որովհետև մեր թիուլիստ պ. Գեղամովը մեզ հետ վարվում է խզճի և օրենքի հակառակ»<sup>110</sup>: Սակայն ցարական իշխանությունների բռնած դիրքի հետևանքով բջնեցիների ելույթը նույնպես մատնվում է անհաջողության:

Գյուղացիական ռեֆորմը ինչպես Ռուսաստանի այլ շրջաններում, այնպես էլ Արևելյան Հայաստանում շուտեց հողային հարցը: Ընդհակառակը՝ ավելի սրեց այն: Ուստի կալվածատիրական գյուղացիների պայքարը ետոեֆորմյան շրջանում ծավալվեց նոր ուժով: 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրության հրատարակումից հետո գյուղացիները չէին ուզում ընդունել այն: Նրանք հայտարարում էին, որ իրենց հողերը պետական են և, հետևաբար, այդ կանոնադրությունը չպետք է տարածել նրանց վրա: Երևանի նահանգում մուլքադարական գյուղացիության 42,6%-ը հրաժարվեց կանոնագրերի կնքումից: Այդպիսի գյուղացիների տոկոսը մեծ էր հատկապես Էջմիածնի գավառում (75,6%)<sup>111</sup>: Երկրի մի շարք շրջաններում գյուղացիները, վկայակոչելով 1870 թ. կանոնադրությունը, ըստ որի յուրաքանչյուր արական շունչ պետք է ստանա 5 դես. հող, պահանջում էին պակասը լրացնել կալվածատիրական հողերի հաշվին: Բավարարություն չստանալով, գյուղացիները անցնում էին պայքարի ակտիվ եղանակներին և բռնագրավում էին կալվածատերերի հողերը:

<sup>108</sup> Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր... հ. Ա, էջ 270—271:

<sup>109</sup> Նույն տեղում, էջ 274:

<sup>110</sup> Նույն տեղում, էջ 278:

<sup>111</sup> P. A. Мелик-Саркисян, Проведение в жизнь крестьянской реформы 1970 г. в Армении, Ереван 1969 г., с. 244, (рукопись диссертации).

Միաժամանակ գյուղացիները ըմբոստանում էին կալվածատերերի հարկային հարստահարումների դեմ: Նրանք հրաժարվում էին տերերի օգտին վճարումներից, իսկ որոշ տեղերում նույնիսկ վճարում էին: Այդպես վարվեցին, օրինակ. 1872 թ. Էջմիածնի գավառի Զանֆիդա, 1881 թ. Երևանի գավառի Պտղնի, Նեջրլու և այլ գյուղերի բնակիչները<sup>112</sup>:

Գյուղացիների ելույթներից ահաբեկված կալվածատերերը դիմում էին տեղական ու նահանգական իշխանություններին, խնդրում, որ պաշտպանեն իրենց շահերը: 1884 թ. Երևանի նահանգի 45 մուլքադարներ ահազանգում են կառավարչապետին, որ նահանգում ոչ միայն առանձին գյուղացիներ, այլև ամբողջ համայնքներ տարիներ շարունակ չեն վճարում մուլք, որ նրանք սկսել են չհարգել օրենքները, հրաժարվել իշխանությունների կարգադրությունները կատարելուց և վճարել մուլքադարներին իրենց կալվածքներից: Մուլքադարներն առաջարկում էին ձեռնարկել խիստ միջոցներ, «որպեսզի գյուղացիների կամայական հրաժարումն իրենց պարտավորություններից չհասնի՝ նահանգական ընդհանուր ապստամբության, ագրարային հանցագործությունների, որոնց 56 տարի է անձանութ ենք»<sup>113</sup>:

Արևելյան Հայաստանի գյուղացիները ըմբոստանում էին նաև վանքերի ու եկեղեցիների հարստահարությունների դեմ: 1892 թ. մարտի 19-ին Վաղարշապատի բնակիչները գրում էին սինոդին, որ իրենց «ես տրվի վարելահող», որ կարողանան պահել իրենց «ընտանիքը և երեխայքը»<sup>114</sup>: Իսկ 1896 թ. նրանք ջանում էին ապացուցել, որ իրենց գյուղի հողերի իսկական տերերը իրենք են և ոչ թե սինոդը: Գոհացում չստանալով գավառապետից, վաղարշապատցիները դիմում են նահանգապետին, որը, սակայն, պաշտպանում է սինոդի շահերը<sup>115</sup>:

Գյուղացիները հրաժարվում էին վանքերի և եկեղեցիների օգտին սահմանված տուրքերից: Այդպես վարվեցին, օրինակ 1898—1899 թթ. Մեհրաբ—Քյուրդբենդ, Մեհրաբ—Բանաբաշ, Մեհրաբլու, Գոմաձոր, Ցամաքաբերդ և այլ գյուղերի բնակիչները: Հարկահաշվաք-հոգևորականները հայցում էին նահանգական իշխանությունների կամ սինոդի աջակցությունը, խնդրելով «շուտափույթ օգնություն», այլապես կկոր-

<sup>112</sup> «Крестьянское движение в Армении...», с. 179—180, 300—301, 331—354:

<sup>113</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 12, ց. 10, գ. 38/50, ք. 3—4:

<sup>114</sup> ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 6, գ. 114, ք. 32—33:

<sup>115</sup> Նույն տեղում:

լի «սուրբ աթոռի արդյունքը»<sup>116</sup>։ Սակայն նրանց միջամտությունը հաճախ չէր օգնում գործին<sup>117</sup>։

Գյուղացիական ելույթները ընդդեմ ցարական կառավարության, կալվածատերերի և հողերը հաստատությունների, ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում ըստ էության ֆեոդալական կարգերի դեմ մղվող սոցիալական հիմնական պատերազմն էր։

\*  
\*  
\*

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով թե՛ կայսրության այլ շրջաններում և թե՛ արևելահայ գյուղում ծավալվում էր նաև սոցիալական երկրորդ պատերազմը։ Այն տեղի էր ունենում գյուղացիության երկու հակամարտ խմբերի՝ կուլակության և կիսապրոլետարական ու պրոլետարական զանգվածների միջև։ Այդ պայքարն արտահայտվում էր տարբեր ձևերով, որոնցից մեկը վարելահողերի վերաբաժանման պահանջն էր։ Գյուղի հարուստները զանազան ճանապարհներով իրենց ձեռքում կենտրոնացնելով համայնքի հողերի մեծ մասը, հողագրկել էին նրա անգամներից շատերին, իսկ մյուսների ունեցած տարածքները հասցրել աննշանի։ Եվ աղքատացած այդ զանգվածները պահանջում էին վերաբաժանում, հույս ունենալով, որ կատանան վարելահող կամ լրացուցիչ հանդակներ։

XIX դ. կեսերին գյուղացիների այդպիսի պահանջների մենք քիչ ենք հանդիպում, բայց դարի վերջին՝ համեմատաբար շատ։ 1866 թ. Ալեքսանդրապոլի գավառի 20 գյուղերի բնակիչներ, հանդես գալով ցարական իշխանությունների զանազան շարաշահումների դեմ, մատնանշում էին նաև հարուստների կողմից համայնական հողերի հափըտակման փաստը և պահանջում էին վերաբաժանումներ։ Գյուղացիների այդ պահանջը սակայն անուշադրության է մատնվում պաշտոնյաների կողմից<sup>118</sup>։

Պետական գյուղացիները վերաբաժանումների համար ավելի լայն ու գործուն պայքար ծավալեցին հետագա տասնամյակներին։ 1890-

<sup>116</sup> Մատենադարան, էջմիածնի սինոդի տնտեսական մաս, թղթ. 130, վազ. 18, թ. 12։

<sup>117</sup> Արևելյան Հայաստանի XIX դ. 80—90-ական թվականների գյուղացիական շարժումների մասին հանգամանորեն տե՛ս Վ. Խ. Հովակիմյան, Գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում (1880—1890-ական թվականներ), Ե., 1984։

<sup>118</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Ե., 1972, էջ 233։

ական թվականներին նման պահանջով հանդես եկան Ալեքսանդրապոլի գավառի Ավդիբեկ (1898), Հաջի-Նազար-Ղուլի (1898), Զոլյար (1898), Արմուտի (1899—1900), Սվանվերդի (1897), Չոթուր (1897—1898), Իլխիարի (1898), Նոր Բայազետի գավառի Երանոս (1898), Նորաշեն (1898), Երևանի գավառի Ավան (1899), Արդաշար (1895—1896), էջմիածնի գավառի Շիրադալա (1898), Շարուր—Գարալագյազի գավառի Մալիշկա—Քեշիշքենդ (1895), Սուրմալուի գավառի Կուր (1895) և բազմաթիվ այլ գյուղերի սակավահող զանգվածներ։ Իշխանությունները սովորաբար մերժում էին նրանց<sup>119</sup>։ Որոշ դեպքերում գյուղացիները՝ շնորհիվ իրենց համատեղյան ու հետևողականության, հասնում էին հաջողության։ Սակայն հողաբաժանարարները, ընտրված լինելով հարուստներից, սովորաբար շարաշահում էին իրենց իրավունքները և, զրկելով տնտեսապես սակավազորներին ու ընչազուրկներին, հողերի բարեբեր ու ընդարձակ մասն իրենք էին վերցնում կամ տալիս հարուստներին։ Գրա հետևանքով գյուղում պայքարը վերստին շարունակվում էր, ընդունելով ավելի կատաղի բնույթ։ Այսպես, Շարուր—Գարալագյազի գավառի Խաչիկ գյուղի բնակիչները 1888 թ. պահանջեցին վարելահողերի վերաբաժանում, սակայն գավառապետը մերժեց։ 1892 թ. նրանք կրկին բարձրացրին այդ հարցը, բայց վերստին մերժվեցին։ Վերջապես 1894 թ. նրանք հասան իրենց նպատակին։ Սակայն պարզվեց, որ հողաբաժանարարները խարդախումներ են կատարել։ Ուստի 1895 թ. գյուղացիները դիմեցին Կովկասի կառավարչապետին, խնդրելով անցկացնել իրենց գյուղում նոր և արդար վերաբաժանում։ Ըավարարում շատանալով, 1896 թ. նրանք դիմեցին նահանգապետին, պահանջելով «սահմանել գյուղում կարգ... այսպես այժմյան անկարգությունները կհասնեն արյունահեղության»<sup>120</sup>։ Նահանգապետը անուշադրության մատնեց նրանց սպառնալիքը։

Հողի վերաբաժանման համար մղվող պայքարը համարյա այդպիսի վախճան ունեցավ նաև Ալեքսանդրապոլի գավառի Թոմարտաշ գյուղում։ Երբ պարզվեց, որ հողաբաժանարարները զբաղվել են զեղծարարությամբ, 1895—96 թթ. բնակիչները մի շարք բողոքագրեր ուղարկեցին իշխանություններին, որոնցից մեկում նշում էին, թե հողաբա-

<sup>119</sup> ՇՄՄ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 5, գ. 402, թ. 9—10, 19—21, գ. 674, թ. 8, գ. 61, թ. 58, գ. 107, թ. 48, գ. 191, թ. 4, 8, գ. 832, 833, 837, 847, 876, 1068, 270, 300, 341, 390, 674, 574, 589, 599, 1054, 92։

<sup>120</sup> ՇՄՄ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 5, գ. 61, թ. 58։

ժանարար ն. Գասպարյանը «իր համար վերցրել է մեծ հողամասեր», «ամբողջ գյուղը խառնում է իրար», «չի ենթարկվում համայնքի որոշումներին»: Ապա խնդիր էին դնում՝ ազատել իրենց «նիկոլայ Գասպարովի ավերիչ ճիրաններից, որը մեր գյուղի բնակչությանը այնպես է տիրում, ինչպես նորին կայսերական մեծութունը ամբողջ Ռուսաստանում»<sup>121</sup>: Նրանք պայքարը շարունակեցին նաև հետագայում, բայց ապարդյուն:

Վարելահողերի վերաբաժանման պահանջներով հանդես եկան նաև կալվածատիրական կամ տերունական գյուղացիները: 1877 թ. մարտի 3-ին Երևանի գավառի Աղամզալու գյուղի բնակիչները առաջարկեցին հաշտարար միջնորդին՝ անցկացնել վերաբաժանում՝ ըստ յուրաքանչյուր ընտանիքում եղած մարդկանց քանակի: Նրանք նշում էին, որ այդպիսի վերաբաժանում ցանկանում են գյուղի 50 տնտեսությունից 40-ը, դեմ են միայն 10 հարուստ ընտանիքներ<sup>122</sup>: Սակայն հաշտարար միջնորդը գյուղացիների պահանջը թողեց անհետևանք, պատճառաբանելով, որ այլևս չի կարելի վերանայել նրանց հողաբաժինների մասին արդեն կնքված կանոնագիրը: 1877 թ. ապրիլին աղամզալուցիները նորից դիմեցին նույն խնդրով հաշտարար միջնորդին: Բայց դարձյալ չհասան արդյունքի<sup>123</sup>:

1877 թ. մայիսին նման պահանջով հանդես եկան նաև Երևանի գավառի կալվածատիրական Բեկջղազու գյուղի գյուղացիները, որոնք սակայն նույնպես մնացին անպատասխան<sup>124</sup>: Ուշագրավ է, որ գյուղի հարուստները, իմանալով չքավորների դիմումների մասին, հաճախ հաշտարար միջնորդին ուղարկում էին նրանց հակառակ դիմումներ և տապալում չքավորների ձեռնարկումները<sup>125</sup>:

Վարելահողերի վերաբաժանման համար պայքարն իր ոլորտի մեջ վերցրեց նաև վանքապատկան գյուղը: 1896 թ. Եղվարդի բնակիչները, նշելով, որ իրենց մոտ երկար ժամանակ չի եղել վերաբաժանում, իսկ հարուստները դրա հետևանքով տիրացել են համայնքի հողերի մեծ մասին, պահանջում էին վերաբաժանում: Գյուղացիների պահանջն այնքան հրամայական էր ու սպառնալից, որ էջմիածնի սինոդի հարկա-

հավաքը ստիպված էր խնդրել իր վերադասին՝ հատուկ մարդիկ ուղարկել սպասվող ընդհարումները կանխելու և կարգը պահպանելու համար<sup>126</sup>:

Գյուղացիության ներքնաշերտերի ելույթներն հարուստների ու կուլակների դեմ ընթանում էին նաև հրկիզումների եղանակով: Պայքարի այդ ձևը տարածված էր համարյա ամենուր: Երևանի նահանգում 1871—1898 թթ. հրկիզումների թիվը համարյա տասնապատկվեց<sup>127</sup>: Հրկիզումներ շատ էին լինում էջմիածնի ու Երևանի գավառներում, այսինքն՝ կալվածատիրական հողատիրության հիմնական շրջաններում, բայց քիչ չէին պատահում նաև Ալեքսանդրապոլի գավառում ու Կարսի մարզում, ուր չկար կալվածատիրական հողատիրություն: Հասկանալի է, որ այդ շրջաններում պայքարը գնում էր գյուղացիության հարուստ խավերի դեմ: Կարսի մարզում 1884—1900 թթ. հրկիզումների դեպքերը 5-ից հասան 70-ի, այսինքն՝ 16 տարվա ընթացքում աճեցին 14 անգամ<sup>128</sup>: 1896 թ. Կարսի նահանգապետը գրում էր. «Հրկիզում են գերազանցապես հացահատիկի և խոտի դեղերը, իսկ հանցագործները մեծ մասամբ չեն հայտնաբերվում»<sup>129</sup>: Այդ «հանցագործներին» գտնելու համար նա վերականգնեց թուրքական տիրապետության տարիներին գոյություն ունեցող այն օրենքը, որի համաձայն մեղավորը չգտնվելու դեպքում վնասը հատուցում է գյուղը: Սակայն վեց տարի հետո ստիպված եղավ հրաժարվել այդ պրակտիկայից, հայտարարելով, որ այն «չտվեց ցանկալի արդյունք»<sup>130</sup>:

Հարկավ, հրկիզումները դասակարգային հակասությունների հետևանք էին, թեև կատարվում էին նաև անձնական թշնամության պատճառով: Ֆ. Էնգելսը, խոսելով հրկիզումների մասին Անգլիայում XIX դ. 40-ական թվականներին, նշում է. «Մի՞թե դա սոցիալական պատերազմ չէ»<sup>131</sup>:

<sup>126</sup> Մատենադարան, էջմիածնի սինոդի տնտեսական մաս, թղթ. 125, վավ. 39, թ. 56:

<sup>127</sup> «Сборник сведений о Кавказе», т. IV, Тифлис, 1878, с. 48—49, 94—97, 158—159, 218—219, 284—285, 346—347, «Сборник статистических сведений по Закавказскому краю», под ред. Е. Кондратенко, Тифлис, 1902, с. 88—93.

<sup>128</sup> «Всепоподданнейший отчет о состоянии Карской области за 1884 г.», «Обзор Карсской области за 1900 г.» (отд. «Преступления»).

<sup>129</sup> «Обзор Карсской области за 1896 г.», с. 44.

<sup>130</sup> «Обзор Карсской области за 1902 г.», с. 33.

<sup>131</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 2, с. 488.

<sup>121</sup> Նույն տեղում, գ. 107, թ. 48:

<sup>122</sup> «Крестьянское движение в Армени...» с. 249—251.

<sup>123</sup> Նույն տեղում, էջ 251—253:

<sup>124</sup> Նույն տեղում:

<sup>125</sup> Նույն տեղում:

XX դ. սկզբին գյուղացիական շարժումներն Արևելյան Հայաստանում ծավալվեցին նոր ուժով: Դա պայմանավորված էր ոչ միայն գյուղացիության սոցիալական շերտավորման խորացումով և դասակարգային հակասությունների ավելի որոշակի դրսևորումով, այլև նրանով, որ լենինյան իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, հիմնվելով գյուղերում, գյուղացիության մեջ տանում էին մասսայական հեղափոխական աշխատանք և նպաստում նրա դասակարգային պայքարի վերելքին:

Երկրի տարբեր շրջաններում գյուղացիները պահանջում էին հող, հրաժարվում էին վճարել հարկերն ու տուրքերը, դիմագրավում էին ցարական պաշտոնյաներին:

Ամենանշանավորը Հաղպատի գյուղացիների ելույթն էր, որը բռնկվեց 1903 թ. նախ մայիսին, ապա վերսկսվեց նույն թվականի նոյեմբերին: Այն ուղղված էր կալվածատիրոջ հարստահարումների ու կեղեքումների, բռնությունների ու սանձարձակությունների դեմ: Գյուղացիները փորձեցին թոթափել իշխան Բարաթովի լուծը: Ցարական սատրապները օգնության եկան կալվածատիրոջը: Եղան ընդհարումներ, որոնց հետևանքով սպանվեց 3 և վիրավորվեց 5 հոգի: Իշխանությունները ձերբակալեցին 34 մարդ, իսկ մնացած ապստամբների հետ դաժան հաշվեհարդար տեսան<sup>132</sup>: Գյուղացիական ելույթներն ավելի մասսայական ու ակտիվ բնույթ ընդունեցին 1903 թ. ամռանն ու աշնանը, երբ ցարական կառավարությունը հունիսի 12-ի օրենքով բռնագրավեց հայոց եկեղեցապատկան գույքը և հայ կուլտուր-կրթական հաստատությունները գրկեց նյութական միջոցներից: Ամբողջ հայ ժողովուրդը ոտքի ելավ ինքնակալության դեմ: Բ. Կնունյանցն այդ օրերին լենինյան «Իսկրայում» հրապարակված իր «Նոր թալան» հոդվածում գրում էր. «Ամենախուլ վայրերից լուրեր են գալիս կառավարության հետ զինված ընդհարումների մասին, մասսայական ցույցերի, միտինգների և այլնի մասին...»<sup>133</sup>: Կառավարության կողմից ձեռնարկվող այդ

<sup>132</sup> «Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XIX в.», составил проф. В. Рштуни при участии К. Степаняна, Ереван, 1951, с. 191—195. 2. Ս. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ուսուցիչները շարժումները Լոռում, Ե. 1957:

<sup>133</sup> Բ. Կնունյանց, Ընտիր երկեր, Ե., 1978, էջ 75:

թալանը նկատելի դարձրեց «խուլ գյուղերում անգամ ինքնակալության նկատմամբ անհաշտ թշնամական տրամադրություն»<sup>134</sup>: Իշխանությունները հրով ու սրով ճնշեցին այդ շարժումները և կենսագործեցին հունիսի 12-ի օրենքը:

Բայց կառավարությունը չկարողացավ ընկճել նրանց ըմբոստ ոգին: 1905 թ. հայ զանգվածները կրկին ոտքի կանգնեցին և կայսրության բազմամիլիոն աշխատավորության հետ միասին պայքարելով բռնակալության դեմ, ետ բերեցին իրենց գույքը:

Ռուսաստանի բուրժուադեմոկրատական առաջին հեղափոխությունը նոր լիցք հաղորդեց Արևելյան Հայաստանի աշխատավորների ելույթներին: Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, բոլշևիկյան կուսակցությունը մեծ աշխատանք կատարեց նրանց ելույթները կազմակերպելու և ճիշտ հունի մեջ դնելու համար:

Փորձելով կապել գյուղացիական ելույթները պրոլետարական պայքարի հետ, ՌՍԴԲԿ կովկասյան միությունը 1905 թ. մարտին հրապարակեց մի կոչ, որի մեջ, բացատրելով, որ գյուղի աղքատության ու իրավազրկության պատճառը տիրապետող տնտեսական ու քաղաքական կարգերն են, որ այդ կացությունից կարելի է դուրս գալ նրանց տապալման և դեմոկրատական հանրապետության ստեղծման ճանապարհով, ասվում էր. «Ուրեմն առաջ հայ գյուղացիներ միացած քաղաքացի բանվորների հետ դիմենք դեպի դեմոկրատական հասարակապետություն, արմատախիլ անենք զզվելի օրենքը և ստոր բռնակալությունը, որպեսզի ճանապարհ բանանք դեպի հավասար և համակրելի կյանքը, դեպի սոցիալական օրենքներն ու կարգերը, որոնց այնքան տենչանքով դիմում են քաղաքի բանվորները և աղքատացած գեղջուկը: Տապալվի ստրկական լուծը, կորչի ցարի կառավարությունը: Կեցցե ժողովրդի ընտրական ժողովը»<sup>135</sup>:

Ս. Սպանդարյանը 1906 թ. սեպտեմբերին հանդես եկավ «Մեր դեբը գյուղում» հոդվածով, որի մեջ հանգամանորեն շարադրում էր բուլշևիկների անելիքները հայկական գյուղում: Նա ցույց էր տալիս, որ սոցիալ-դեմոկրատիայի գլխավոր նպատակն է «կազմակերպել գյուղի պրո-

<sup>134</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>135</sup> «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում ուսական առաջին ուսուցիչների (հոդվածների ժողովածու)», Ե., 1955, էջ 146:

լետարական կամ կիսապրոլետարական մասսան՝ գյուղական բանվորներին, հողազուրկներին»<sup>136</sup>։ Այն պիտի ներարկի դրանց մեջ դասակարգային գիտակցություն և հաստատի «գաղափարական կուս գյուղի և քաղաքի բանվորության մեջ»<sup>137</sup>։ Սոցիալ-դեմոկրատիան պիտի մերկացնի բուրժուական կուսակցությունների, հատկապես դաշնակցության վնասակար գործունեությունը և ազատի նրանց «ազդեցությունից գյուղական պրոլետարիատը»։ Նա պետք է հեղափոխականացնի գյուղը, ազդի ողջ գյուղացիության վրա, «տալով նրան մեր լուզունգը՝ «ամբողջ հողը և ամբողջ ազատությունը»<sup>138</sup>։

Ս. Սպանդարյանը խնդիր էր դնում, որ գյուղում պետք է գոյություն ունենան երկու զուգընթաց կազմակերպություններ. սոցիալ-դեմոկրատական և անկուսակցական դեմոկրատական<sup>139</sup>։ Սոցիալ-դեմոկրատները պետք է աջակցեն անկուսակցական գյուղացիական դեմոկրատական կազմակերպությունների ստեղծմանը, որովհետև նրանք «մեծ օգուտ կբերեն հեղափոխության զարգացման և նրան իր հաղթական վերջին հասցնելու գործում»։ Նրանք «կստվորեցնեն գյուղացիությանը ինքնավարության, քաղաքական գործունեության և կդարձնեն այդ կազմակերպությունները պատվարներ այն մոմենտում, երբ հին կառավարությունից ժողովուրդը կխլի իշխանությունը։ Այդպիսի գյուղացիական միությունները կկարողանան կազմակերպել և զուտ ուսուցանողական տեղական կառավարություններ, մի կողմ գցելով հին, փտած բյուրոկրատական ուժերը»<sup>140</sup>։

Ս. Սպանդարյանի այդ հոգվածը կարևոր նշանակություն ունեցավ գյուղացիական շարժումներն ակտիվացնելու և ճիշտ հունի մեջ դնելու համար։

Ելնելով Վ. Ի. Լենինի և նրա զինակիցների ցուցումներից, հայ բուլշեիկները 1906—1907 թթ. հայկական գյուղերում ստեղծեցին սոցիալ-դեմոկրատական և անկուսակցական դեմոկրատական կազմակերպություններ, որոնք պայքարելով բուրժուական կուսակցությունների վնասակար գործունեության դեմ, զգալիորեն աշխուժացրին գյուղացիական շարժումները։ Շնորհիվ նրանց ջանքերի գյուղացիները մի

136 Ս. Սպանդարյան, Ընտիր երկեր, Ե., 1982, էջ 91։  
137 Նույն տեղում։  
138 Նույն տեղում, էջ 92։  
139 Նույն տեղում, էջ 98։  
140 Նույն տեղում, էջ 97։

շարք դեպքերում հասան հաջողության։ Այսպես, 1906 թ. հունիսին հաղպատցիները հավաքվելով ժողովի, որոշեցին. հեռացնել գյուղից ցարական պահանջներին, ընթացիկ տարում ոչինչ չտալ հողատիրոջը, քանի որ կարկուտը տարել է բերքը, կտրել կալվածատիրական անտառից այնքան փայտ, որքան պետք է գյուղացիներին։ Հողատիրը ստիպված ընդունեց այդ պայմանները։ Հատկանշական է, որ դաշնակցականները, գործելով հողատիրոջ օգտին, երբ փորձեցին համոզել գյուղացիներին, որ վճարեն բերքի գոնե 1/8-ը, հաղպատցիները ոչ միայն չսեցին, այլև վոնդեցին նրանց<sup>141</sup>։

Բացի Հաղպատից, բուլշեիկները գյուղացիների պայքարը կազմակերպեցին և հաջողության հասցրին նաև այլ գյուղերում։ Նրանց ղեկավարությամբ 1907 թ. կալվածատերերի օգտին կատարվելիք վճարումները կրճատվեցին նաև Ղաչաղան, Մղարթ, Ծաթեր, Կուրթան, Աքորի և այլ գյուղերում<sup>142</sup>։

Այդ կազմակերպված ելույթների հետ միասին Արևելյան Հայաստանում ծավալվում էին նաև գյուղացիների անկազմակերպ, տարերային ընդվզումները։ Այսպես, 1906 թ. մարտ-ապրիլ ամիսներին Ղազախ—Շամշադինում գյուղացիները բռնագրավեցին կալվածատիրական հողերը, որի հետևանքով տեղի ունեցան զինված ընդհարումներ։ Շատ գյուղացիներ ենթարկվեցին ծեծի ու քստորի։

Այդ նույն թվականի մայիսի վերջերին Ալեքսանդրապոլի գավառի Միրաք գյուղի բնակիչները վերստին պահանջեցին վտարել աղալարներին իրենց գյուղից, պնդելով, որ այլևս չեն կարող ապրել նրանց հետ։ Համառ պայքարի հետևանքով գյուղացիները, վերջապես, հասան այն բանին, որ իշխանությունները 1912 թ. ստիպված եղան աղալարներին հատկացնել առանձին հողամաս<sup>143</sup>։

1907 թ. հուլիսին Երևանի գավառի Զառ գյուղի բնակիչները ոչ միայն հրաժարվեցին վարձակալի վճարումներից, այլև սպառնացին նրան, թե «կխփեն և կհրկիզեն հողատիրոջն այնպես, ինչպես Թուսաստանում»<sup>144</sup>։ Վարձակալը մեծ դժվարությամբ կարողացավ հավաքել մուլքը, բայց ոչ այնքան, որքան ուզում էր<sup>145</sup>։ 1907 թ. մարտ-ապրիլ

141 «Կայծ», 1906, № 37, 44։  
142 «Թեոլոլոցիոն շարժումները Հայաստանում...», էջ 154։  
143 Վրաց. ՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 207, թ. 2։  
144 Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, գ. 22, թ. 2։  
145 Նույն տեղում։

ամիսներին Մեծ Ղարաքիլիսայի 60 հողազուրկ գյուղացիական ընտանիքներ դիմեցին փոխարքային, պահանջելով հող և հետևողական պայքարի շնորհիվ հասան իրենց նպատակին<sup>148</sup>:

Վ. Ի. Լենինը խոսելով 1905 թ. հեղափոխության ժամանակաշրջանի գյուղացիական շարժումների մասին Ռուսաստանում, գրում էր. «Մեր հեղափոխության մեջ գյուղացիության ավելի փոքր մասն է իրոք պայքարել, գոնե փոքր-ինչ կազմակերպելով այդ նպատակի համար, և բոլորովին փոքր մասն է զենքը ձեռքին ոտքի ելել իր թշնամիներին բնաջնջելու, ցարական ծառաներին ու կալվածատերերի պաշտոնյաներին ոչնչացնելու համար: Գյուղացիության մեծ մասը լաց էր լինում ու աղոթում, խրատաբանում էր ու երազում, խնդրագրեր էր գրում և «խնդրարկուններ» ուղարկում...»<sup>147</sup>:

Պատկերը համարյա այդպիսին էր նաև Արևելյան Հայաստանում, մի տարբերությամբ, սակայն, որ գյուղացիական շարժումներն այստեղ ավելի տկար էին, քան կենտրոնական Ռուսաստանի և Անդրկովկասի մի շարք շրջաններում: Դա պայմանավորված էր ոչ միայն գյուղացիության սոցիալական համեմատաբար թույլ շերտավորմամբ, այլև ինքնակալության կողմից կազմակերպած հայ-աղբբջանական կռիվներով և տեղական բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունների վարած ազգայնական քաղաքականությամբ:



Ռեակցիայի տարիներին ցարական կառավարությունը ձգտում էր ճնշել ու արմատախիլ անել գյուղացիական ամեն մի շարժում: Անդրկովկասը հայտարարվեց պաշարողական դրության մեջ, ստեղծվեց «կովկասյան շրջանային պահնորդական բաժանմունք»:

Իշխանությունները պատժիչ արշավախմբեր էին ուղարկում Արևելյան Հայաստանի գյուղերը, որոնք անողոք դատաստան էին տեսնում բնակիչների հետ: Բանտերը լցվեցին «կասկածելի մարդկանցով»: Նույնիսկ պաշտոնական նվազեցված տվյալներով, Երևանի նահանգում 1908—1910 թթ. ձերբակալվածների թիվը 5151 մարդուց հասավ 6909 մարդու<sup>148</sup>:

<sup>146</sup> «Аграрная политика царизма...», с. 230—232.

<sup>147</sup> Վ. Ի. Լենին, *ՆԺԺ*, հ. 17, էջ 254.

<sup>148</sup> «Обзор Эриванской губернии» за 1908, 1910 гг.

Ռեակցիայի տարիներին դասակարգային պայքարը հայկական գյուղում թուլացավ, բայց չդադարեց: Գյուղացիները տեղ-տեղ առաջվա նման բռնագրավում էին պետական, կալվածատիրական և վանքապատկան հողերը, հրաժարվում էին հարկերի ու տուրքերի վճարումներից, հրկիզում էին աղաների ու կուլակների ունեցվածքը, պահանջում վերաբաժանումներ և այլն:

1907 թ. օգոստոսին Երևանի գավառի Գյուլբիլիսա գյուղի բնակիչները հրաժարվեցին կալվածատիրոջ մուլքի վճարումից և վճռեցին նրա հարկահավաքին, ասելով, որ այլևս չերևա իրանց աչքին, այլապես կենթարկվի դաժան պատժի: Այդ նույն ժամանակ Նոր Բայազետի գավառի մի շարք գյուղերի բնակիչներ զինված դիմադրեցին պետական հարկերը հավաքելու նպատակով իրենց մոտ եկած ոստիկաններին<sup>149</sup>:

1908—1909 թթ. կալվածատիրական վճարումներից հրաժարվեցին նաև Երևանի գավառի Ելզովան, Զոհրաբուլու և այլ գյուղերի գյուղացիները: Նրանք նույնպես վճռեցին հարկահավաքներին<sup>150</sup>:

Մի շարք տեղերում (Ղուլբիլիսայ, Ներքին Աղբաշ, Մեծ Ղարաքիլիսա, Բեկլյարխաթուն, Կելանի և այլ գյուղերում) գյուղացիները սկսեցին ինքնակամ վարել ու ցանել պետական ու կալվածատիրական հողերը<sup>151</sup>:

Ռեակցիայի տարիներին բոլշևիկյան կազմակերպությունների մի մասը ջախջախվել էր, սակայն մյուս մասը անցել էր ընդհատակ և ղեկավարում էր բանվորական ու գյուղացիական շարժումները: Այդ տարիներին ընդհատակյա բոլշևիկյան խմբեր ու կազմակերպություններ կային Հաղպատում, Սանահինում, Իգդիրում և այլ վայրերում:



Հեղափոխության նոր վերելքի տարիներին գյուղացիական ելույթները Արևելյան Հայաստանում նկատելիորեն աշխուժացան<sup>152</sup>: Երկրի տարբեր շրջաններում գյուղացիները առաջվա նման հրաժարվում էին հարկերը վճարելուց, պահահաներ կատարելուց, մուլքի, թիուլի հատու-

<sup>149</sup> «Аграрная политика царизма...», с. 221, 247.

<sup>150</sup> «Մշակ», 1908, № 59:

<sup>151</sup> ЗУУЗ ԿՊՊԱ, ֆ. 56, գ. 635, ք. 131, ֆ. 133, գ. 4762, ք. 1, գ. 4722: ք. 13, գ. 1735, ք. 311, գ. 4860, ք. 143:

<sup>152</sup> Գյուղացիական շարժումների 1910—1914 թթ. հատվածը շարադրված է մեր և Գ. Ա. Մուրադյանի կողմից—Ա. Հ.:

ցումից, պահանջում էին հողերի վերաբաժանում, կատարում էին ինքնակամ անտառահատումներ: Հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն աշխատում էին կազմակերպված բնույթ տալ նրանց շարժումներին:

1910 թ. և հետագա տարիներին շարունակվում էր տակավին 1907 թվականից բռնկված Երևանի գավառի Եղովան և Գյուլբիլիսա գյուղերի բնակիչների պայքարն իրենց կալվածատերերի դեմ: Գյուղացիները հրաժարվում էին ոչ միայն մուլք և թիուլ վճարելուց, այլև վոնդում էին կալվածատիրոջ հարկավահաքներին:

Էջմիածնի գավառում 1910 թ. կալվածատերերի դեմ ընդվզեցին Հախս, Ագաբակ, Նազիրվան և Թալին գյուղերը: Հախս գյուղում բնակիչները հրդեհեցին կալվածատիրոջ դեղերը, կտրատեցին ծառերը, իսկ Նազիրվանում գյուղացիների և կալվածատիրոջ ու նրա մարդկանց միջև հրաձգություն տեղի ունեցավ:

1911 թ. ընդվզում են Բջնի գյուղի բնակիչները, հրաժարվելով վճարել վանքի օգտին գանձվող մուլքը: Բջնի են գալիս գավառական իշխանության ներկայացուցիչները՝ հաշտարար միջնորդի գլխավորությամբ, սակայն հանդիպելով բնակիչների կատաղի դիմադրությանը, ձեռնունայն ետ են վերադառնում<sup>153</sup>:

1911 թ. ելույթ փնեցան Նոր Բայազետի գավառի Զոդ գյուղի բնակիչները: Նրանք գրավեցին կալվածատիրոջ արտադրանքները և միայն գավառական իշխանությունների կողմից հրավիրված ոստիկանական ուժերով հաջողվեց «կարգ հաստատել»։ բանտարկվեց 14 մարդ<sup>154</sup>:

1911 թ. Երևանի գավառի Յուվա և Ղարադաղու գյուղերի բնակիչները հրաժարվում են կալվածատիրոջ օգտին մուլք վճարել: Կալվածատերը դիմում է գավառական իշխանություններին, խնդրելով ոստիկանական միջամտություն<sup>155</sup>: 1912 թ. ոստիկանական իշխանություններին տեղեկացնում են, որ Ղազախի գավառի Աշաջուր գյուղի բնակիչները կտրել են կալվածատեր Մելիք-Ստեփանովին պատկանող անտառամասի ծառերը:

1912 թ. հետո գյուղացիական շարժման մեջ նկատվում է մի ուշագրավ երևույթ: Գյուղացիները կալվածատիրական հողերի ինքնա-

<sup>153</sup> Մ. Ա. Խոնդկարյան, նշված աշխ., էջ 198—203:

<sup>154</sup> Амбарян А. С., նշված աշխ., էջ 245—246:

<sup>155</sup> ЗУУЗ ԿՊՊԱ, ֆ. 70/70, գ. 254, թ. 6—7:

կամ վարումը և ընդհանուր արտադրանքից կալվածատերերին բռնաբերում էին օրինական, քանի որ իրենց մեկնաբանությամբ 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը գյուղացիների շահերի պաշտպանությանն էր ուղղված: Այսպես, էջմիածնի գավառի Խոջայարու գյուղի բնակիչները արգելել էին կալվածատիրոջն օգտվելու ընդհանուր արտադրանքից: Լուր ստանալով այդ մասին, Երևանի նահանգապետը 1913 թ. սեպտեմբերին կարգադրում է կտրուկ միջոցների դիմել խոջայարուցիների «ինքնագործունեությանը» վերջ տալու համար, չկանգնելով անգամ տանուտերին պաշտոնադրելու և ձեռքազրկելու առաջ, եթե վերջինս հարկավոր եռանդ չցուցաբերի գյուղացիներին «զսպելու» գործում:

1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը հօգուտ իրենց մեկնաբանելու փորձ են կատարում նաև Ելիզավետպոլի նահանգի մի շարք հայկական գյուղերի բնակիչները, ձգտելով իրենց հողաբաժինները ընդարձակել ի հաշիվ կալվածատիրական հողերի: «Մի քանի գյուղերում գյուղացիներն այս կամայական գործողություններին դիմեցին տեղական պարագուսների սաղրանքով, որոնք ետգնման վերոհիշյալ օրենքի՝ իրենց խեղաթյուրված մեկնաբանությամբ կարողացել էին համոզել գյուղացիներին, որ նրանց ձգտումը ճիշտ է և խմբովին ելույթը՝ անվտանգ»— 1914 թ. հունիսին Ելիզավետպոլի նահանգապետը զեկուցում էր Կովկասի փոխարքայությանը<sup>156</sup>:

Հանդես գալով ցարական իշխանությունների ու կալվածատերերի դեմ, Արևելյան Հայաստանի գյուղի աշխատավորները հեղափոխությանն արթնալու արարիներին շարունակում էին պայքարել նաև գյուղական բուրժուազիայի դեմ: Նրանք պահանջում էին անցկացնել վարելահողերի նոր վերաբաժանումներ, նշելով, որ գյուղի հարուստները զանազան ուղիներով իրենց ձեռքն են կենտրոնացրել համայնական հողերի մեծ մասը և իրենց գրկել ապրուստի միջոցից: 1911 թ. դեկտեմբերին այդպիսի պահանջ ներկայացրին էջմիածնի գավառի Շարիֆաբատ (Ն. Կարխուն) գյուղի շքավորները: Երևանի նահանգապետին հղած իրենց բողոքագրում նրանք նշում էին, որ իրենց գյուղում արդեն 18 տարի է չի եղել վերաբաժանում, որի ընթացքում հարուստները զավթել են համարյա բոլոր տարածքները, մյուսներին մատնելով ծայրահեղ աղքատության: Կան այնպիսի ընտանիքներ, որոնք բաղկացած լինելով 3—4 հոգուց, տիրում են 10—12 մարդու բաժնի, և այնպիսի ընտանիք-

<sup>156</sup> Մ. Ա. Խոնդկարյան, նշված աշխ., էջ 171, 202—203:



ներ, որոնք կազմված են 8—10 հոգուց, բայց ունեն 2—3 մարդու բաժին: «Այդ անհավասարության հետևանքով,—շարունակում էին չբավորները,—գյուղացիների աղքատ մասը սովահար է լինում, շունենալով իրենց երեխաների համար մի կտոր հաց, իսկ հարուստ դասակարգն արդեն տոնում է»<sup>157</sup>: Նահանգական իշխանություններն անհետևանք թողեցին նրանց պահանջը:

Նույն առաջարկությամբ 1912 թ. հունվարին հանդես եկան Սրբվանի գավառի Շոպու—Դեմուրչի<sup>158</sup>, Չիվանդարա, Նոր Բայազետի գավառի ներքին Կարանլուխ, Բասարգեչար, Բաբաբեշի<sup>159</sup>, Ալեքսանդրապոլի գավառի Վարդանլի, Գոգորան և այլ գյուղերի բնակիչները<sup>160</sup>: Սակայն ցարական իշխանությունները նրանց պահանջները նույնպես թողեցին անհետևանք:

Հեղափոխության նոր վերելքի տարիներին գյուղացիության կիսապրոլետարական և պրոլետարական խավերի պայքարը ցայտուն արտահայտվեց նաև «Արագդայան» ակցիոներական ընկերության տընտեսությունում: Այդ գյուղացիները եկել էին զանազան վայրերից և հաստատվել Արագդայանում դեռ 1870-ական թվականների սկզբներին, երբ գեներալ Կախանովը վերցնելով այն կապալով, ձեռնամուխ եղավ բամբակի արտադրության գործին: Նրա մահից հետո «Արագդայան» կալվածքն անցավ գեներալ-լեյտենանտ Շերեմետևին, ապա՝ նրա որդիներին: Այդ ձեռնարկատերերը գյուղացիներին հատկացրել էին հողաբաժին մշտական օգտագործման համար, պայմանով, որ մշակեն նաև իրենց տնօրինման տակ մնացած տարածքները: Գյուղացիները քրտնաջան աշխատանքով փորեցին ջրանցքը, բացեցին առուներ, մաքրեցին հողը քարերից ու ճահիճներից, աղուտներից ու թփերից, երկրագործության համար ոչ պիտանի տարածքները դարձրեցին պիտանի:

1913 թ. ակցիոներական ընկերությունը, վերցնելով Արագդայանը Շերեմետևի որդիներից, գյուղացիներին առաջարկեց հեռանալ կալվածքից կամ ընդունել նոր՝ նրանց համար ավելի ծանր պայմաններ: Սրբ գյուղացիները մերժեցին, ընկերությունը նրանց հողաբաժինները վարձակալությամբ տվեց դրամատերերից մեկին, որը և սկսեց վարել դրանք: Գյուղացիները ցուցաբերեցին համառ դիմադրություն և բահե-

րով ու եղաններով փորձեցին վտարել վարձակալին իրենց տարածքներից: Մի ծերունի պառկեց տրակտորի առաջ, բացականչելով՝ թշեք ինձ վրա, եթե որոշել եք խլել մեր հողերը<sup>161</sup>: Վարձակալը դադարեցրեց գործը և վախենալով իրերի բարդացումից, դիմեց իշխանությունների օգնությանը: Իշխանությունները, իհարկե, շտապեցին օգնության և փորձեցին լռեցնել գյուղացիներին: Բայց դա նրանց չհաջողվեց: Գյուղացիները շարունակեցին պայքարը նաև հետագայում:

Գյուղացիական հուզումները շարունակվեցին նաև առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Առաջվա նման նրանք բռնակցվում էին ամենատարբեր պատճառներով ու առիթներով և ավարտվում հիմնականում պարտություններով: Ալեքսանդրապոլի գավառի Գոգորան պետական գյուղի չբավորները 1914 թ. մարտին խնդիր դրեցին անցկացնել հողերի նոր վերաբաժանում, նշելով, որ հարուստները զավթել են գյուղի տարածությունների մեծ մասը և բնակիչներից շատերին դարձրել սակավահողներ ու հողազուրկներ: Նրանց պայքարը շարունակվեց մինչև 1915 թ. մարտը, այսինքն՝ մեկ տարի և վերջացավ ապարդյուն: Անգամ հաշտարար միջնորդը ստիպված էր խոստովանել, որ մի շարք գյուղերում, այդ թվում նաև Գոգորանում, վերջին 20 տարվա ընթացքում չի եղել վերաբաժանում: 1915 թ. մարտի 27-ին նա գրում էր. «Կուլակները իրենց ձեռքն են գցել մեծ քանակությամբ հող և իրենց ունեկորության շնորհիվ գտնում են ամեն տեսակ հավատարմատարներ, որոնք հողաբաժանությունը հետաձգելու համար բոլորովին անհամոզիչ գանգատներ են տալիս...»<sup>162</sup>:

Սակայն նկատվում էր նաև հակառակ երևույթը՝ երբ կուլակները, օգտվելով այն բանից, որ պատերազմի պատճառով գյուղացիներից շատերը մեկնել էին բանակ, պաշտոնյաների միջոցով անց էին կացնում նոր վերաբաժանումներ և զավթում հողային նոր տարածություններ: Տուժող ընտանիքները բողոքում էին դրա դեմ, բայց ապարդյուն:

Ուշագրավ է, որ գյուղից բացակայող չբավորները, իմանալով կուլակների այդ շարաշահումների մասին, բողոքում էին նրանց դեմ:

<sup>157</sup> «Аграрная политика царизма...», с. 257.

<sup>158</sup> Նույն տեղում, էջ 259:

<sup>159</sup> Նույն տեղում, էջ 260:

<sup>160</sup> Նույն տեղում, էջ 262, 283, 297, 340:

<sup>161</sup> Նույն տեղում, էջ 314:

<sup>162</sup> Վ. Զ. Ռշտունի, Ուրվագծեր..., հ. Բ, 1968, էջ 241:

1915 թ. փետրվարին նույն գավառի Դոմաշեն գյուղի 81 բնակիչներ, որոնք աշխատում էին Բաքվում, Երևանի նահանգական վարչությանը գրում էին, թե իրենց ստացած տեղեկություններով, հարուստները տանուտերի գլխավորությամբ, ձգտում են նոր վերաբաժանում կատարել՝ «ոչ թե արդարության սկզբունքներին համապատասխան, ոչ թե չքավոր, առավել վատ ասրող գյուղացիներին օգնելու, այլ, ընդհակառակը, որոշակի խմբի պատկանող անձնավորությունների ձեռքում ավելի շատ հողեր կենտրոնացնելու նպատակով»։ Ապա նշելով, որ այժմ իրենց գյուղի տղամարդկանց 80% -ը գյուղից բացակայում է, որովհետև մի մասը պատերազմի դաշտում է, իսկ մի մասն էլ աշխատանքի է մեկնել Բաքու և այլ քաղաքներ ու այս պայմաններում հողաբաժանությունը ոչ միայն անօրինական է, այլև հանցագործություն, պահանջում էին կանխել հողաբաժանման փորձերը<sup>163</sup>։ Մեզ անհայտ է, թե ինչպես վերջացավ դոմաշենցիների այս պայքարը։ Սակայն հայտնի է, որ կուլակությունը համարյա ամենուրեք ոտնատակ էր տալիս չքավորության շահերը և հասնում իր նպատակին։ Նրա գիշատիչ գործողությունները հաճախ չէին կարողանում արգելել նույնիսկ պետական մարմինները<sup>164</sup>։

Զգտնելով ուրիշ ելք, սակավահող ու հողազուրկ գյուղացիները մի շարք դեպքերում զավթում էին պետական հողերը և փորձում այդ կերպ բարելավել իրենց վիճակը։ Բայց իշխանությունները արգելակում էին նրանց գործողությունները։ 1915 թ. շրջաբերականներից մեկում Երևանի նահանգի ժանդարմական վարչությունը նահանգի հինգերորդ շրջանի վերակացուին գրում էր, որ Երևանի նահանգում ու Կարսի մարզում տեղի են ունենում պետական հողերի մասսայական զավթումներ և առաջարկում էր՝ «աշխուրջ հսկողություն սահմանել, որպեսզի այդպիսի զավթումներ տեղի չունենան...»<sup>165</sup>։

1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունը չլուծեց գյուղացիական հարցը։ Ժամանակավոր կառավարությունը, պաշտպանելով կալվածատիրության ու բուրժուազիայի շահերը, կայսրության ինչպես այլ շրջաններում, այնպես էլ Անդրկովկասում ու Արևմելյան Հայաստանում համարյա անխախտ թողեց ֆեոդալական ու կա-

պիտալիստական հարաբերությունները։ Բնական է, որ գյուղացիները պետք է շարունակեին իրենց պայքարը նաև նոր կառավարության դեմ։

1917 թ. փետրվար-հոկտեմբեր ամիսներին նշանավոր ելույթներ եղան Արևելյան Հայաստանի Բջնի, Ռնդամալ, Կայա-խարաբա, Քյոյ-քիլիսա, Ողջաբերդ, Շոռ-Ռուլաղ, Զառ, Արագջյանդ, Ճոճկան և բազմաթիվ այլ գյուղերում<sup>166</sup>։ Ամենուրեք գյուղացիները պահանջում էին հող և ազատություն, սոցիալական ու ազգային ճնշումների վերացում։ Բայց իշխանությունները ճնշում էին նրանց ելույթները։

Բուլձեիկները եռանդուն գործունեություն էին ծավալում գյուղում, ակտիվացնում էին գյուղացիական ելույթները, ձգտում էին կապել դրանք պրոլետարական պայքարի հետ։ Նրանք նախապատրաստում էին ժամանակավոր կառավարության տապալումը և սոցիալիստական հեղափոխության հաղթանակը<sup>167</sup>։

<sup>166</sup> «Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении» (сборник документов), Ереван, 1957, с. 20, 21, 55, 57, 62.

<sup>167</sup> Արևելյան Հայաստանի 1907—1917 թթ. գյուղացիական շարժումների մասին հանգամանորեն տես Մ. Վ. Արզումանյան, Բուլձեիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թվականներին, Երևան, 1959։

<sup>163</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, էջ 602։

<sup>164</sup> Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր..., հ. Բ, էջ 243։

<sup>165</sup> ՀՍՍՀ ԿողԱ, ֆ. 133, գ. 5148, ք. 2։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ  
ՍՈՑԻԱԼ-ԳԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՔԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX Դ. ՎԵՐՋԻՆ—XX Դ. ՍԿԶԲԻՆ

Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման հետևանքով պատմական թատերաբեմ է դուրս գալիս պրոլետարիատը, որը 1890-ական թվականների կեսերից սկսում է գլխավորել աշխատավորական զանգվածների ազատագրական պայքարը:

Այնպիսի բազմազգ պետության մեջ, ինչպիսին Ռուսաստանն էր, բանվոր դասակարգն իր հեղափոխական պայքարի ընթացքում ստիպված էր լուծելու շատ բարդ և կարևոր քաղաքական խնդիրներ: Անհրաժեշտ էր մի միասնական հոսանքի մեջ միավորել երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների հեղափոխական ուժերը: Այդ պատմական առաքելությունն իր վրա կարող էր վերցնել միայն պրոլետարիատի հեղափոխական, առաջավոր տեսությունը զինված մարքսիստական կուսակցությունը: Միայն այդպիսի կուսակցությունն ընդունակ կլիներ գլխավորելու պրոլետարական պայքարը, այդ պայքարին հաղորդելու կազմակերպված, նպատակասլաց բնույթ, պրոլետարիատին բերելու սոցիալիստական հեղափոխության հաղթանակին:

Դեռ 1894 թ. Վ. Ի. Լենինը գրում էր, որ երբ «...բանվորների մեջ կստեղծվեն կուռ կազմակերպություններ, որոնք բանվորների այժմյան անջատ-անջատ տնտեսական պատերազմը կվերածեն գիտակցական դասակարգային պայքարի, այն ժամանակ ուսական ԲԱՆՎՈՐԸ, բոլոր դեմոկրատական տարրերի գլուխ անցած ոտքի ելնելով՝ կտապալի միապետությունը և ՌՈՒՍԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ (ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ պրոլետարիատի հետ կողք կողքի) բացահայտ ֆաղափական պայքարի ուղիղ ճանապարհով կառաջնորդի դեպի ՀԱՂԹԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ»<sup>1</sup>:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 1, էջ 377:

ներգրավելով Ռուսաստանում զարգացող կապիտալիստական հարաբերությունների ոլորտը, Անդրկովկասը և Հայաստանը, բնականաբար, դառնում էին նաև կապիտալիզմի հետևանք հանդիսացող հասարակական բախումների, բանվորական և գյուղացիական շարժումների ասպարեզ:

Արևելյան Հայաստանում բանվորական շարժումները լուսաբանող առաջին փաստերը վերաբերում են XIX դ. 60—70-ական թվականներին՝ Կողքի աղահատների ելույթներին: Մեզ հայտնի այս առաջին գործադուլների պատճառները թե՛ տնտեսական և թե՛ աշխատանքային ծանր պայմանների հետևանք էին:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո կովկասյան իշխանությունները մեծ նշանակություն էին տալիս ժողովրդական տնտեսության համար արգյունաբերության զարգացմանը, ուստի և աղի հանույթը բարձրացնելու նպատակով որոշ արտոնություններ տվեցին Կողքի աղահատներին՝ 1829, ապա՝ 1836 թվականներին (աղահատներում աշխատողների պետական պարտավորությունները և հարկերը մասամբ թեթևացվում էին): Հայտնի է, որ Կովկասյան լեռնային վարչությունը, որի տնօրինության տակ էին գտնվում երկրամասի աղահատները, դրանք կապալով տալիս էր առանձին անձնավորություններին: Համաձայն կապալառուների հետ կնքված պայմանագրի՝ մեծ կտոր մշակված-ձևավորված աղի բեկորը, որը հայք էր կոշվում, գնվում էր փուլը 4 կոպեկով, իսկ մանր աղը՝ 1 կոպեկով:

1868—1869 թվականներին կողբեցիներին տրված պետական արտոնությունների վերացման հետ միաժամանակ իջեցվում էին աղի գնման գները, որը խիստ դժգոհություն առաջացրեց նրանց մոտ և 1869 թ. հունվարի 29-ին աղահատները գործադուլ հայտարարեցին: Գործադուլը տարեբային էր, անկազմակերպ և ի վերջո անհաջողությամբ ավարտվեց<sup>2</sup>:

1875 թ. մայիս-հունիս ամիսներին Կողքի աղահատները նորից ելույթ ունեցան: Աղահատների կառավարչի պաշտոնակատար Կալինկինը 1875 թ. հունիսի 1-ին զեկուցում է Կովկասի լեռնային վարչությանը, որ 1875 թ. մայիսին գործադուլ են հայտարարել աղահատները, նախօրոք պայմանավորվելով ամբողջ համայնքով դուրս չգալ աշ-

<sup>2</sup> Շ. Հարությունյան, Կողքի աղահատների կյանքի ու պայքարի պատմությունից (1860—1870-ական թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, հ. 3, էջ 77—94:

խատանքի, պահանջելով վերականգնել աղի վաճառքի նախկին գները<sup>3</sup>։

Կառավարչի պաշտոնակատարի բանակցությունները մայիսի 30-ին Կողբի աղահատների հետ ոչ մի արդյունք չեն տալիս։

Կովկասյան լեռնային վարչության պետի պաշտոնակատար Լիտովսկին Կալինկինին գրում է, որ Կողբի կապալառու Աղամովը կարող է ստիպել գործադուլավորներին ըստ նոր պայմանագրի կատարելու իրենց պարտավորությունները, իսկ հրաժարվելու դեպքում՝ դիմել դատական օրգաններին և ոստիկանությանը։ Լիտովսկուն ավելի շուտ անհանգստացնում էր այն հարցը, թե արդյոք աղի պետական պաշարները չեն սպառվում, որը կարող է ավելի մեծ թյուրիմացությունների պատճառ դառնալ<sup>4</sup>։

Այս գործադուլն ավարտվում է փոխադարձ համաձայնությամբ, սակայն աղահատներն ավելի շատ են զիջում, քան կապալառուն և բանվորները ստիպված համարյա նույն պայմաններով վերսկսում են աշխատանքները։

1895 թ. հուլիսին Ալեքսանդրապոլում գործադուլ են անում Մալխասյանի տպարանի բանվորները, որոնք ամսական ստանում էին 3—12 ուրբի և աշխատում 14—16 ժամ։ Գործադուլի պատճառը, ինչպես գրել է ժամանակի մամուլը, — «ոռճիկի քրությունը և անկանոն վճարելն է»<sup>5</sup>։

Հայաստանում XIX դ. վերջերին տեղի ունեցած բանվորական շարժման ամենանշանակալից դրվագը Թիֆլիս—Կարս երկաթուղային շինարարության տեղամասերում աշխատող բանվորների ելույթն էր։ Թիֆլիս—Ալեքսանդրապոլ, ապա Կարս ձգվող շուրջ 300 կմ երկարությամբ շինարարության վրա, որն սկսվել էր 1895 թ., աշխատում էին մի քանի հազար բանվորներ։ Բացի տեղացի հայերից, որոնք շրջակա գյուղերից օժանդակ աշխատանքի դուրս եկած բնակիչներ էին, մեծ թիվ էին կազմում նաև արևմտահայերը, ինչպես և վրացիները, աղբրբեջանցիները, ռուսները, պարսիկները և այլն։ Շինարարությունը ղեկավարող երկաթուղային վարչությունը հողային աշխատանքների կատարումը և հսկողությունը ոչ թե անմիջաբար ինքն էր իրականացնում,

<sup>3</sup> Состояние промышленности и формирование рабочего класса Восточной Армении (1803—1920).—(сборник документов) «Բանբեր Հայաստանի արխիվներ» 1982, № 1, էջ 76։

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 77։

<sup>5</sup> Վ. Խ. Հովակիմյան, Գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում, Ե., 1984, էջ 25։

այլ հանձնել էր կապալառուներին, որոնք, զգալով ու տեսնելով խարդախություններ անելու լայն հնարավորությունները, ստվար խմբով Հայաստան էին թափվել երկրի բոլոր անկյուններից և, նույնիսկ, արտասահմանից<sup>6</sup>։

Կապալառուները բանվորներին աշխատացնում էին վաղ առավոտից՝ ուշ երեկո, իսկ նրանց կենցաղային և բնակարանային պայմանների մասին խոսել—նշանակում է արտահայտվել շփոթ բաների մասին։ Նրանք ապրում և քնում էին այնտեղ, որտեղ որ բանում էին, որտեղ որ վերջացնում էին հերթական աշխատանքը՝ մեծ մասամբ բաց երկնքի տակ, կամ կիսախարխուլ գետնախորշերում։ Բանվորներն այս բոլորից դժգոհում էին, տրտնջում։ Անհամեմատ ուժեղանում էր նրանց զայրույթը կապալառուների և երկաթուղային վարչության շարաշահունքներից։ Կաշառք վերցնելը, աշխատավարձ չվճարելը, խաբելն ու յուրացնելը հետզհետե սպառնելով բանվորների համբերությունը՝ շիկացնում էր մթնոլորտը, որը 1896 թ. ճայթեց երկաթուղային վարչության գլխին, որպես տարերային, սակայն զանգվածային մի ելույթ։ Առաջին ազդանշանը տվեցին Ախթալայի տեղամասի բանվորները։ Նրանք ապրիլի 8-ին և 15-ին 400 հոգով ներկայացան կապալառու Բելոբորոգովին և աշխատավարձը լրիվ շտանալով, ջարդեցին գրասենյակի դռները, լուսամուտներն ու ապակիները և ապա ընդհարվելով ոստիկանների հետ, փախուստի մատնեցին վերջիններին։ Նահանգական իշխանությունների կարգադրությամբ, շտապ Ախթալա եկավ Բորչալուի պրիստավը, որը ոստիկանական նոր ուժերի օգնությամբ միայն կարողացավ կոտրել բանվորների դիմադրությունը։

1896 թ. դեկտեմբերի 11-ին բանվորական ընդվզումներ եղան նաև Մեծ Ղարաբաղի մոտ Զամանլուի կամուրջի շինարարության տեղամասում, որի ժամանակ ոստիկանները կրակելով բանվորների վրա՝ վիրավորեցին երեք մարդու<sup>7</sup>։

1897 թ. հոկտեմբերին նոր հուզումներ եղան Կարսի տեղամասի շինարարությունում, որին մասնակցում էին շուրջ 250 բանվորներ։ Չտանալով դրամական հատուցում, բանվորները մեծ խմբով գնացին Թիֆլիս և կառավարչապետի պալատի առջև ցույց կազմակերպեցին։

<sup>6</sup> Վ. Ավետիսյան, Մի էջ Հայաստանի բանվորական շարժումների պատմությունից, Ե., 1961, էջ 15—21։

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 30—31, 39։

Հատկանշական է, որ այդ իրադարձության մասին արձագանքել է ժամանակի պարբերական մամուլը<sup>8</sup>:

Հետագա տարիներին ևս երկաթուղային շինարարության մերթաշուրջ, մերթաշուրջ այն վայրում բռնկվում էին առանձին ելույթներ, դրանք, չնայած թույլ էին, այնուամենայնիվ նախորդ շարժումների հետ միասին, արթնացող պրոլետարիատի առաջին ջղաձգումներն էին և արժանի տեղ են զբաղում Հայաստանի հեղափոխական գոտեմարտերի նախապատմության մեջ:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում զգալի տեղաշարժեր կատարվեցին: Ռուսաստանում առողջացող արտադրողական ուժերն, այլևս չկարող սահմանափակվել միայն կենտրոնական նահանգներով, թափանցեցին նաև ծայրագավառները, այդ թվում Կովկաս և ներգրավեցին նրանց համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ, որը այդ երկրամասերի տրեստեսական զարգացման համար ունեցավ կարևոր նշանակություն:

Կովկասը դեռևս տնտեսապես լրիվ չնվաճված, Ռուսաստանը, աշխարհի գլխավոր կապիտալիստական երկրների հետ, թեև կոխեց զարգացման բարձրագույն ստադիան՝ իմպերիալիզմը: Սակայն Ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների բազմաթիվ մնացորդները, որոնք ցարիզմի սոցիալական բազան էին, պայմանավորում էին Ռուսական իմպերիալիզմի յուրահատկությունը, նրա ռազմաֆեոդալական բնույթը:

Իմպերիալիզմի դարաշրջանում ավելի սաստկացավ աշխատավորական մասսաների շահագործումը: Այն ուժեղ էր հատկապես Ռուսաստանի ծայրագավառներում: Այստեղ բնակվող ոչ-ռուս ժողովուրդների վրա ծանրանում էր թե՛ ցարական միահեծանությունն իր ամբողջ սիստեմով և թե՛ տեղական կալվածատերերի և կապիտալիստների լուծը:

Սոցիալական կեղեքմանը զուգընթաց, տեղական ժողովուրդների վրա ծանրացած էր նաև ազգային-զաղութային ճնշումը: Կյանքի և աշխատանքի ծանր պայմանները, կարիքն ու շահագործումը ազգային հալածանքները ոտքի էին հանում Հայաստանի աշխատավորական մասսաներին, որոնք Ռուսաստանի և Անդրկովկասի պրոլետարիատի

<sup>8</sup> Նույն տեղում, Վ. Խ. Հովակիմյան, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի դեպարտամենտի պայքարը 1890-ական թթ., «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1984, № 1, էջ 39:

հետ միասին հեղափոխական համաժողովրդական ազատագրական պայքարի ելան ցարիզմի և բուրժուազիայի դեմ<sup>9</sup>:

Անդրկովկասի շարժումները սերտորեն կապված են ռուսական հեղափոխական շարժումների և բուլճարի կուսակցության պատմության հետ:

1895 թ. Պետերբուրգում Լենինի ստեղծած «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» օրինակով, որը հանդիսացավ Ռուսաստանում հեղափոխական բանվորական կուսակցության առաջին սաղմը, բանվորական խմբակներ, սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ ստեղծվեցին ամբողջ երկրում:

Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատական շարժումը սկսվեց 90-ական թվականներից: Այստեղ մարքսիզմի տարածմանը մեծ շարժում նպաստեցին Ռուսաստանի արդյունաբերական վայրերից Անդրկովկաս արտադրած ռուս հեղափոխականները և հատկապես Ս. Ալիլուևը, Ֆ. Ա. Աֆանասևը, Վ. Կուռնատովսկին, Մ. Կալինինը, Ն. Կոզերենկոն, Ն. Պոլետաևը, Գ. Ֆրանչեսկին և մյուսները:

Տակավին 1897 թվականին ստեղծվել էր ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն, իսկ 1901, 1902 թվականներին հաջորդաբար հիմնադրվեցին նաև Բաքվի և Բաթումի կոմիտեները: Անդրկովկասի արդյունաբերական երեք ամենամեծ քաղաքներում ստեղծված սոցիալ-դեմոկրատական այս կոմիտեները լենինյան-խսկրայական ուղղությանն էին պատկանում:

1903 թ. մարտի վերջերին Թիֆլիսում տեղի ունեցավ Կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարը, որը հիմք դրեց ՌՍԴԲԿ Կովկասյան Միությանը: Ընտրվեց նաև Կովկասյան Միության ղեկավար օրգան՝ Կովկասյան Միության կոմիտե: ՌՍԴԲԿ Կովկասյան Միության կոմիտեի կազմում տարբեր ժամանակներում ընտրվել են՝ Բ. Կուռնյանցը, Մ. Յիսակյան, Ստ. Շահումյանը, Ալ. Մուկուկիձեն, Ի. Ստալինը, Ա. Զուրաբյանը, Ա. Զափարիձեն, Ֆ. Մախարաձեն, Աշ. Խումարյանը, Ս. Խանոյանը, Վ. Բոբրովսկին, Մ. Բոչորիձեն, Գ. Պոստալովսկին, Մ. Դավիթաշվիլին, Ն. Ալաջալովան և ուրիշներ: Կովկասյան Միությունը ղեկավարում և ուղղություն էր տալիս Անդրկովկասում հեղափոխական շարժման մեջ ընդգրկված բանվորներին և գյուղացիական մասսաներին:

<sup>9</sup> Գ. Ա. Մուրադյան, Հայաստանը ռուսական առաջին ռեվոլյուցիայի տարիներին, Ե. 1964, էջ 84:

ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում պրոլետարիատի կուսակցության ստեղծման ու ամրապնդման, գիտական սոցիալիզմը բանվորական շարժման հետ միացնելու, մարքսիզմի պրոպագանդայի գործում անգնահատելի ծառայություն մատուցեց հեղափոխական-մարքսիստական մամուլը:

Բացառիկ էր այս ուղղությամբ լենինյան «Իսկրա»-ի կատարած դերը: «Իսկրան» սկսեց հրատարակվել 1900 թ. դեկտեմբերից արտասահմանում: Թերթը գաղտնի առաքվում էր Ռուսաստան և արտատրավում տեղական անլեզալ տպարաններում: «Իսկրա»-ի օրինակները բազմացվում էին նաև Բաքվում:

«Իսկրան» ուշադրությամբ հետևում էր Կովկասում հեղափոխական իրադրության զարգացմանը, ղեկավար ցուցումներ էր տալիս տեղերում աշխատող գործիչներին, տպագրում բազմաթիվ հոդվածներ և թղթակցություններ Կովկասի կյանքից:

Լենինյան «Իսկրա»-ի հրատարակությունից հետո, նրա օրինակով և ուղղությամբ Անդրկովկասում ստեղծվեցին մի շարք սոցիալ-դեմոկրատական տեղական անլեզալ օրգաններ:

1902 թ. հոկտեմբերին լույս տեսավ «Պրոլետարիատ» հայերեն առաջին լենինյան-խկրայական ուղղության սոցիալ-դեմոկրատական թերթը, բաղկացած 24 էջից, որը հրատարակվում էր նույն տարում Թիֆլիսում ստեղծված «Հայ-սոցիալ-դեմոկրատների միության» կողմից:

1902 թվականին մի խումբ հայ մարքսիստներ Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Զուրաբյանի ակտիվ մասնակցությամբ, ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի օգնությամբ հիմնադրեցին «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որը հետագայում ձուլվեց Թիֆլիսի կոմիտեի մեջ<sup>10</sup>:

«Պրոլետարիատում» որպես առաջնորդող տպվեց «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը»: «Մանիֆեստում» խոսվում էր «Միության» հանդես գալու պայմանների, նրա հետապնդած նպատակների մասին: «Մեր Միությունը Ռուսիայի ամեն ծայրերում իր ցանցերը տարածող «Ռուսիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության» ճյուղերից մեկը լինելով, միանգամայն համերաշխ է նրա հետ և նրա հետ միասին կռվելու է հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես, և հայկականի՝ մասնավորապես...»<sup>11</sup>:

1903 թ. մարտին տեղի ունեցած Կովկասյան Միության հիմնադիր համագումարի որոշմամբ վրացական «Բրձուլա» և հայկական «Պրոլետարիատ» թերթերը միավորվեցին և ապրիլ-մայիս ամիսներին սկսեց լույս տեսնել «Պրոլետարիատի կոմիլը» անունով հայերեն և վրացերեն, իսկ 1905 թվականից նաև ռուսերեն: Թերթը իր գոյությունը շարունակեց մինչև 1905 թ. հոկտեմբերը: Երեք լեզուներով այն լույս էր տեսնում միևնույն բովանդակությամբ:

Այսպիսով, Անդրկովկասում բանվորական և աշխատավորական մասսաների քաղաքական դաստիարակության, հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծման գործում որպես կոլեկտիվ պրոպագանդիստ, կոլեկտիվ ագիտատոր և կազմակերպիչ մեծ դեր է խաղացել լենինյան իսկրայական մամուլը:

Հայաստանում առաջին մարքսիստական խմբակը կազմակերպվել է 1899 թ. Զալալօղլիում (Ստեփանավան) Ստ. Շահումյանի կողմից:

1902—1904 թթ. ընթացքում սոցիալ-դեմոկրատական բջիջներ և կազմակերպություններ ստեղծվեցին Ալեքսանդրապոլի կայազորում և ղեկընդուրում, Կարսի զորամասում, Նոր-Բայազետում, Իզդիրում և այլ տեղերում: Երևանում այդ տարիներին գոյություն ունեցող կազմակերպություններից ամենաուժեղը՝ երկաթուղային բանվորների կազմակերպությունն էր: Բացի այդ, քաղաքում գործում էին նաև արական և իգական գիմնազիանների ուսուցիչների մարքսիստական խմբակները: 1903 թ. սոցիալ-դեմոկրատական բջիջ հիմնադրվեց Հաղպատ գյուղում: Նույն թվականին հիմնադրվեցին նաև Ալավերդու, Սանահին կայարանի, Հաղպատ կիսակայարանի, Զալալօղլի կազմակերպությունները:

Զալալօղլիում ավելի վաղ կազմակերպված մարքսիստական խմբակը, ընդլայնելով իր գործունեության շրջանակները, զգալի ազդեցություն էր ձեռք բերել նաև հարևան գյուղերի վրա: Կազմակերպություններ իր խմորատիպը, որով գաղտնի կոչեր ու թուղթիկներ էին տպագրվում և տարածվում բնակչության մեջ: Հին բոլշևիկ Անուշավան Թումանյանը հիշում է, որ 1902 թ. Ղազարոս Աղայանի հոբելյանի կապակցությամբ Ստ. Շահումյանի պատրաստած ճառը, որ նրան թույլ շտվեցին արտասանելու խմորատիպ տպագրվել էր Զալալօղլիում<sup>12</sup>:

Ստ. Շահումյանը, խոսելով Հայաստանում սոցիալ-դեմոկրատական շարժման տարածման մասին, 1904 թ. գրում էր. «Հայկական»

<sup>10</sup> «Ասքր» 1902, № 32

<sup>11</sup> «Պրոլետարիատ», 1902, № 1:

<sup>12</sup> «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք առաջին, Ե., 1958, էջ 40:

շատ գյուղերում արդեն կան գյուղական երիտասարդության կազմակերպություններ, որոնք կապված են մեր կոմիտեների հետ, ստանում են մեր գրականությունը և լարված ուշադրությամբ հետևում են հայ և այլազգի բանվորների հերոսական պայքարին»<sup>13</sup>:

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծման և ամրապնդման աշխատանքներն ընթանում էին ՌՍԴԲԿ Կովկասյան Միութենական կոմիտեի և Թիֆլիսի ու Բաքվի կոմիտեների ղեկավարությամբ<sup>14</sup>: Այդ ուղղությամբ կուսակցական-քաղաքական և պրակտիկ-կազմակերպական մեծ աշխատանքներ են կատարել Ստեփան Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը, Սարգիս Խանոյանը, բանվոր-հեղափոխականներ Մելիք Մելիքյանցը (Դեղուշկա) և ուրիշներ:

Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի, կազմակերպությունների բնորոշ գիծը նրանց ինտերնացիոնալ բնույթն էր: Համատեղ աշխատանքի ծանր պայմանները, համատեղ պայքարը հայ, ռուս, վրացի և ադրբեջանցի բանվորներին դաստիարակում էին դասակարգային համերաշխության և ինտերնացիոնալիզմի ոգով: «Մեզ մոտ և Կովկասում, — գրել է Վ. Ի. Լենինը Մաքսիմ Գորկուն ուղարկված նամակում, — ս. դ. վրացիները + հայերը + թաթարները + ռուսները աշխատում էին միասին տասը տարուց ավելի միասնական ս. դ. կազմակերպության մեջ: Դա ֆրազ չէ, այլ ազգային հարցի պրոլետարական լուծում»<sup>15</sup>:

XIX դարի վերջերին եվրոպայում սկսված ընդհանուր արդյունաբերական ճգնաժամը իր ոլորտի մեջ առավ նաև Ռուսաստանը և, XX դարի առաջին տարիներին, ընդգրկեց ռուսական արդյունաբերությունը: Ճգնաժամի տարիներին՝ 1900—1903 թթ. Ռուսաստանում մի քանի հազար ձեռնարկություն փակվեց: Առաջացավ գործազրկություն, արդյունաբերության թերեհունվածություն, կրճատվեց աշխատավարձը: Այս բոլորի հետևանքով էլ ավելի էր վատանում բանվորների դրությունը:

Սակայն բանվորական շարժումը չի դադարում: Ընդհակառակը, հասունացող քաղաքական ճգնաժամի պայմաններում բանվորների պայքարը դառնում է ավելի գիտակցական և հեղափոխական: Շատ հաճախ տնտեսական հողի վրա սկսված դժգոհությունը վերաճում է քաղաքական գործադուլի, խաղաղ ցույցերը՝ զինված ընդհարման:

<sup>13</sup> Ստ. Շահումյան, ԵԺԺ, հ. 1, Ե., 1975, էջ 55:

<sup>14</sup> Г. А. Аветисян, В. И. Ленин и пролетарский интернационализм в революционном молодежном движении, Ереван, 1979, с. 30.

<sup>15</sup> Վ. Ի. Լենին, ԵԺԺ, հ. 48, էջ 200:

Դարի սկիզբը նշանավորող բանվորական խռոչը ելույթը 1901 թ. Պետերբուրգում Օբուխովյան ռազմական գործարանում ծագած մայիս-մեկյան գործադուլն էր, որը պատմության մեջ հայտնի է, որպես «Օբուխովյան պաշտպանություն»: Գործադուլը վերածվեց զինված ընդհարման: Կառավարությանը միայն զորքի միջոցով հաջողվեց ընկճել բանվորների դիմադրությունը, որից հետո նա դաժան դատաստան տեսավ բանվորների հետ:

Չնայած պարտությունը և տված զոհերին, այդ գործադուլը իզուր չանցավ, այն զգալի ազդեցություն ունեցավ Ռուսաստանի բանվորների վրա:

Անդրկովկասի համար պատմական նշանակալից իրադարձություն էր 1901 թ. ապրիլի 22-ի (հին տոմարով) Թիֆլիսում տեղի ունեցած մայիսմեկյան բանվորական ցույցը, որը նույնպես վերջացավ ընդհարումով և բազմաթիվ ձերբակալություններով<sup>16</sup>: Այդ ցույցով բացվում է քաղաքական գործադուլների, հեղափոխական ելույթների մի ամբողջ շրջան:

Թիֆլիսի ցույցի վերաբերյալ Լենինյան «Իսկրան» 1901 թ. № 6-ում տպեց «Մայիսի մեկը Թիֆլիսում» թզթակցությունը<sup>17</sup>:

Այդ տարիներին Հայաստանում տեղի ունեցած հուզումներն իրենց վրա կրում էին Հաղավային Ռուսաստանի և Կովկասի արդյունաբերական քաղաքներում սկսված գործադուլների և քաղաքական ցույցերի ազդեցությունը:

Արևելյան Հայաստանում XX դարի սկզբին առաջին գործադուլը տեղի ունեցավ 1903 թ. ապրիլ-մայիս ամիսներին՝ Ալավերդու հանքարդյունաբերական շրջանի Շամլուղի հանքերում: Արխիվային կցկտուր նյութերը հնարավորություն չեն տալիս վերարտադրելու նրա լրիվ պատկերը, մանրամասնորեն պարզելու գործադուլի ընթացքն ու կազմակերպիչներին: Գրականության մեջ եղած սակավ տեղեկություններից երևում է, որ հանքագործները, Լավրենտի Բիչախչևի ղեկավարությամբ գործադուլ հայտարարելով, պահանջել են ավելացնել աշխատավարձը, վերջ տալ փայտեր-կապալառուների կամայականություններին և հեռացնել բանվորներին ատելի վարձակալ՝ Աբաս Մամադ-օղլուն: Սակայն հանքերի ադմինիստրացիային հաջողվել է խոստում-

<sup>16</sup> Ф. Е. Махарадзе, Г. В. Хачапуридзе, Очерки истории рабочего и крестьянского движения в Грузии. 1932 г., с. 164.

<sup>17</sup> «Искра», 1901, № 6.

ների և խաբեութեան միջոցով ձախողել գործադուր: Բիշախներ և նրա հետ միասին մի խումբ բանվորներ հանքերի վերահսկիչ Պրիխոդսկու պահանջով, հեռացվել են աշխատանքից:

1903 թ. գործադուրներ տեղի ունեցան նաև Կարսի մի քանի մանր ձեռնարկություններում:

Ալավերդում երկրորդ գործադուրը բռնկվել է 1904 թվականի գարնանը, նույնպես պղնձահանքերում: Տնտեսական հողի վրա ծագած այս գործադուրը ևս անհաջողությամբ է վերջացել<sup>18</sup>:

Գործադուրների այսօրինակ վախճանը բացատրվում է Ալավերդու բանվորների անկազմակերպվածությամբ, նրանց քաղաքական գիտակցության ցածր մակարդակով: Դրա պատճառով ադմինիստրացիային և ոստիկանությանը հաջողվում էր բանվորների մեջ երկպառակություն առաջացնել և տապալել գործադուրները:

Այս երևույթի վրա տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը հատուկ ուշադրություն է դարձնում: Առաջավոր բանվորների հեղափոխական գործունեության ու քաղաքական բացատրական աշխատանքների շնորհիվ արդեն հաջորդ տարին տեղի ունեցած գործադուրներն զգալիորեն տարբերվում էին իրենց կազմակերպված բնույթով և ինտերնացիոնալ համերաշխությամբ:

Հայաստանի առանձին քաղաքներում այդ տարիներին տեղի ունեցած գործադուրներից պետք է նշել նաև 1904 թ. ապրիլին Ալեքսանդրապոլում կենցաղային ձեռնարկությունների աշխատողների և տնային ծառայողների հայտարարած գործադուրը:

ՌՍԴԲԿ տեղական կազմակերպությունը որոշել էր ապրիլի վերջերին գործադուր հայտարարել այն հաշվով, որպեսզի գործադուրն ընդգրկի նաև քաղաքի բանվորներին և զուգակցվի մայիսի 1-ի նախապատրաստվող ցույցին: Ապրիլի 29-ին գործադուր հայտարարվեց: Տեղերի հետ բանակցություններ վարելու համար ընտրվեց բյուրո, որը ներկայացրեց հետևյալ պահանջները:

1. Սահմանափակել աշխատանքի ժամերը.
2. Ավելացնել աշխատավարձը.
3. Հաստատել գիշերային հերթապահություն.
4. Հատկացնել հանրակացարան.

<sup>18</sup> 2. Ս. Մեխիջան, Մարքսիստական կազմակերպությունները և ուսուցիչները շարժումները Լոռում, էջ 54—55:

5. Բժշկական ձրի օգնություն.

6. Արձակուրդի ժամանակ պահպանել աշխատավարձը.

7. Քաղաքավարի վերաբերմունք և այլն:

Սակայն ձեռնարկատերերը լսել անգամ չէին ուզում նրանց այս պահանջների մասին: Ապրիլի 30-ին առավոտյան տեղի ունեցավ գործադուրավորների միտինգ, որտեղ նրանք քննարկում էին իրենց անելիքները: Դեռևս միտինգը չվերջացած վրա հասան դաշնակցականները և, խրախուսված ոստիկանական պրիստավի ներկայությամբ, մտրակահար անելով և դազանակներով ու հրացանի կոթերով ջարդելով անգեն մարդկանց, ցրեցին միտինգը: Բանտարկվեցին գործադուրավորների ղեկավարները:

Երեկոյան դաշնակցականները քաղաքի պատերին սպառնալիքներով լի հայտարարություն փակցրին գործադուր վերակսելու փորձ անողների հասցեին և մանավանդ նրանց, ովքեր կփորձեին մայիսի մեկին ցույց կազմակերպել<sup>19</sup>: Այսպես անհաջողությամբ վերջացավ նաև այս գործադուրը:

Վերոհիշյալ գործադուրները, այդ թվում նաև երկաթուղային շինարարության բանվորների ընդվզումները, շնայած թույլ էին, վատ կազմակերպված և հեշտությամբ էլ ճնշվում էին, այնուամենայնիվ հանդիսացան բանվորական շարժման առաջին ծիծեռնակները, որոնք ավետում էին, որ հայ ժողովրդի նոր պատմությունը այսուհետև կապված է Ռուսաստանի հեղափոխական շարժումների և պրոլետարիատի սկսած ազատագրական պայքարի հետ:

1905 թ. հունվարի 9-ին (22-ին) Պետերբուրգում խաղաղ ցույցի ելած բանվորների գնդակահարությամբ սկսվեց Ռուսաստանում բուրժուա-դեմոկրատական առաջին հեղափոխությունը:

Բանվորների նկատմամբ ցարի և նրա կառավարության սարքած արյունահեղ դատաստանը ալեկոծեց ամբողջ երկիրը: Պետերբուրգում սկսված ընդհանուր գործադուրն անմիջական արձագանք գտավ Մոսկվայում, երկրի կենտրոնական-արդյունաբերական շրջաններում, Սիբիրի քաղաքներում:

<sup>19</sup> Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 389 թ. 6:



Պետերբուրգի դեպքերին և հունվարյան գործադուլներին արձագանքեցին նաև ազգային ժայռամասերը՝ Լեհաստանը, Մերձբալթյան երկրները, Անդրկովկասը: Հունվարի 18-ին գործադուլ հայտարարեցին Քիֆլիսի երկաթուղային արհեստանոցների բանվորները, շուտով նրանց միացան նաև ծխախոտի ֆաբրիկաների և տպարանների բանվորները: Գործադուլը դարձավ ընդհանուր: Հունվար-փետրվար ամիսներին անընդհատ գործադուլներ, ցույցեր էին տեղի ունենում նաև Բաքվում:

Փետրվարի վերջերին, մարտի սկզբներին գործադուլային շարժումների մեջ ընդգրկվեց նաև Հայաստանը: Այստեղ բանվորական խոշոր և կազմակերպված առաջին ելույթը Ալավերդու հանքագործների մարտյան գործադուլն էր:

Ինո փետրվարի վերջերին Ալավերդու բանվորների մեջ խուլ խմորումներ էին տեղի ունենում, որոնք հետզհետե աճելով վերածվեցին գործադուլի: Մարտի 5-ին Ալավերդու արհեստանոցների մի խումբ բանվորներ աշխատանքի չներկայացան՝ պահանջելով բարելավել իրենց տնտեսական և կենցաղային պայմանները: Սակայն բանվորներին հաշվի առնող չեղավ:

Մի քանի օր անց, մարտի 8-ին, բանվորների ավելի սովոր խումբ՝ հիմնականում հանքագործներ, կազմակերպված հանդես գալով, գործադուլ հայտարարեցին: Նրանց պայքարը, որին հենց առաջին օրը մասնակցում էր մոտ 1000 մարդ, ընդհատումներով տևեց 12 օր:

Հանկարծակիի գալով բանվորների միահամուռ ելույթից, ֆրանսիական «Ընկերության» Ալավերդու հանքերի և գործարանների դիրեկտոր Պոլմարը նախ փորձեց խաբեության մեջ բանվորներին ջլատել՝ առանձին խմբերի հետ բանակցություններ վարելով, ապա ահաբեկման, սպառնալիքների ու բռնությունների միջոցով ձախողել գործադուլը: Ահա թե ինչ էր գրում նա Փարիզ՝ գործադուլի առաջին օրերին «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերության» վարչությանը մարտի 12-ին թվագրված ֆրանսերեն նամակում<sup>20</sup>:

Հարկ ենք համարում այս նամակը մի քիչ ավելի ընդարձակորեն մեջ բերել, որովհետև այն, գործադուլային անցուղարձի նկարագրությունը տալուց բացի, ցինիզմի հասնող անկեղծության մեջ դրսևորում է

<sup>20</sup> «Революционное движение в Армении в 1905—1907 гг.», (Сборник материалов и документов), Ереван, 1955 г., с. 111—115. հետագայում կնշդի կրճատ ձևով՝ «Революционное движение...»

նրա հեղինակի՝ եվրոպական կապիտալիստի գիշատիչ ու արհամարհական վերաբերմունքը տեղացիների նկատմամբ:

«...Մարտի 5-ին, ժամը 1-ն անց 30 րոպեին հյուաները և մեխանիկական արհեստանոցների աշխատողները գործադուլ հայտարարեցին, պահանջելով ութամյա բանվորական օր, բանվորական կացարանների նորոգում և այլն: Սկզբում ես հրաժարվեցի նրանց լսել: Երբ մեկ ժամ անց նրանք գործի շանցան, անտեսելով պրիստավի և արհեստանոցների պետերի նախազգուշացումները, ես ստիպեցի նրանց մեկ-մեկ արհեստանոց մտնել... Սպառնացի հարվածել հենց առաջինին, որը կփորձի շենթարկվել և, տեղնուտեղը, արձակեցի 13 մարդու: Կարծում եմ, մյուսները չեն համարձակվի գլուխ բարձրացնել:

Երկու օրից հետո, հայերը, որոնց օգտագործում էին որպես սալորդներ, մեր նոր՝ Պիրիտիկ-Մանես ուղու վրա գործադուլ սկսեցին: Մանեսում առավոտյան մոտ 20 մարդ պետք է դուրս գար աշխատանքի: Ես գտնվում էի բանվորների կացարանում, և աշխատանքից նրանց համառոտօրով հրաժարվելը ստիպեց ինձ ծեծի դիմել: Նրանք ինձ ուժեղ դիմադրեցին: Կային այնպիսիները, որոնց ես երեք-չորս անգամ փայտի հարվածներով թշուր էի իրենց ձիերի մոտ և բավական էր որ ես շուռ գայի, որպեսզի անմիջապես թողնեին աշխատանքը: Նրանք չհամարձակվեցին ինձ դիպչել, բայց քիչ մնաց պատառ-պատառ անեին մի շապարի (ստրածնիկ): Հոգնած վերադարձա Ալավերդի: Մի ժամ անց մարդիկ, որոնց դիմադրության ուժը կոտրվել էր այդ տեսարանից, նորից աշխատանքի անցան: Ես պրիստավին և մի հայ սպայի, որը այստեղ էր եկել ուրիշ գործով, և այն հայ բանվորներին, որոնք ավելի լավ պայմաններում են գտնվում, սպառնացի՝ նման անհաճո բաներ կրկնվելու դեպքում աստիճանաբար ազատել «Ընկերությունից» բոլոր հայերին: Պրիստավը և սպան գնացին զրուցելու գործադուլավորների հետ, որոնք խոստացան չվերսկսել գործադուլը, բայց և չցանկացան մատնացույց անել նրանց, որոնք իրենց խորհրդատուներն էին: Ես, այնուամենայնիվ, երեքին, որոնց կասկածում էի, հեռացրի:

Մնում են պարսիկները: Մինչև այսօր նրանք երկու անգամ գործադուլ են արել, բայց ամեն անգամ անմիջապես կանխում էին դժբախտությունը և, նրանք զիջում էին օր ու կեսից հետո: Այժմ անզգուշություն կլինեի թույլ տալ նրանց գործադուլ անել մեկ ու կես օրից ավելի. օրինակը կարող էր վարակիչ լինել:

Չորս օր առաջ, նրանք ուղարկեցին ինձ մոտ իրենց շորս ընկեր-

ներին՝ խնդրելով լսել իրենց պահանջները: Ինչպես և միշտ, ես մերժեցի լսել խմբովին ներկայացված պահանջները: Հետո, համեմատյալ դեպս, ես զրուցեցի շորս պատգամավորների հետ, որոնց պահանջները հանգում էին, Իհարկե, աշխատավարձի ավելացման հարցերին:

Կարճ ասած, վիճակներս ավելի նեղ է դառնում: Հիմա ամեն ինչ հանգիստ է: Ես դաժան եմ իմ բանվորների հետ: Այդ անհրաժեշտ է, քանի որ երկշտուկյան փոքրիկ իսկ նշան, և նրանք կդադարեն աշխատելուց, պահանջելով աշխատավարձի անհանդուրժելի ավելացում:

Երկու ամիս առաջ բարյացակամ մարդիկ զգուշացրին ինձ գիշերները արհեստանոցներ կամ տեղամասեր չգնալ: Ես տպավորվող չեմ և անկեղծ ասած ինձ չի թվում, թե առկա է իսկական վտանգ: Թուրքիայում, հուլուստների ժամանակ, հայտնի օտարերկրացիները ենթարկվում են վտանգի, եթե նրանք մենակ են, քանի որ նրանց վտանգելով առաջացնում են դիվանագիտական բարդություններ կառավարության համար: Կովկասում այդպիսի միտում չի զգացվում, առայժմ այստեղ այլ դրություն է»<sup>21</sup>:

Փարիզ ուղարկած այս ինքնավստահ և իր «հեղինակություն» մասին պարծենկոտ հայտարարություններ պարունակող նամակից մի քանի օր անց, մարտի 17-ին, այդ նույն Պոլմարը մի աղերսական հեռագիր է ուղարկում Քիֆլիսի նահանգապետին այսպիսի բովանդակությամբ. «Բանվոր պարսիկների գործադուլը ընդունում է մեծ չափեր: Թախանձագին խնդրում եմ ուղարկել կազակների ջոկատ»<sup>22</sup>:

Իհարկե, առանց հապաղելու, Ալավերդի ժամանեց կազակային մեկ հարյուրակ: Այստեղ եկան նաև գավառական իշխանության ներկայացուցիչները՝ գավառապետի գլխավորությամբ, ինչպես նաև Քիֆլիսի պարսկական հյուպատոսի քարտուղարը: Այս վերջինը եկել էր մշտական և սեզոնային աշխատանք կատարող պարսկահայատակ բանվորներին, որոնք Ալավերդում զգալի թիվ էին կազմում և ակտիվորեն մասնակցում էին գործադուլին հորդորելու ետ կանգնել Վերենց երկրին չվերաբերող և Ալլահին անհաճո գործերից»: Սակայն ոչ նրա ջանքերը, ոչ էլ գավառապետի սպառնալիքներն ու կազակների ներկայությունը բանվորներին չհամոզեցին և չվախեցրին: Ընդհակառակը, դիմագրավելով նրանց՝ բանվորներին հաջողվեց մարտի 20-ին գործադուլն ավարտել իրենց օգտին:

<sup>21</sup> «Революционное движение...», с. 114.

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 109:

Բանվորների կոնկրետ պահանջների մասին, մենք ստույգ փաստեր չունենք, սակայն դրանք, անշուշտ, արտահայտվել են այն համաձայնագրում, որ գործադուլն ավարտելուց հետո կնքվել է նրանց և դիրեկցիայի միջև<sup>23</sup>:

Դիրեկցիայի և բանվորների փոխհարաբերությունները կարգավորող այդ համաձայնագիր-պայմանագիրը, որը բաղկացած էր 28 կետից, կարելի է բաժանել շորս հիմնական մասերի:

Պահանջների առաջին մասը վերաբերում էր բոլոր կատեգորիաների բանվորների համար աշխատավարձի նախկին չափի վերականգնմանը, որը դիրեկցիան ըստ երևույթին զգալիորեն պակասեցրել էր, իսկ հանքախորշերում և գործարաններում ծանր աշխատանք կատարողների համար հարց էր հարուցվում աշխատավարձը ավելացնել 20 տոկոսով:

Երկրորդ մասը վերաբերում էր աշխատանքային օրը կրճատելու խնդրին, պահանջվում էր այն դարձնել տասնամյա և գործարանի հաշվին բանվորներին մեկ ամիս արձակուրդ տալ:

Երրորդ մասը՝ բանվորներին մթերքներով ապահովելու և կենցաղային տարրական պայմաններ ստեղծելու պահանջներ էր պարունակում:

Համաձայնագրի չորրորդ մասով բանվորները պահանջում էին վերջ տալ վերականգնների կողմից սխտեմատիկաբար կիրառվող ծեծին, ինժեներների կոպտությանը և արհամարհական վերաբերմունքին<sup>24</sup>:

Մեծագույն դժկամությամբ և զսպված ատելությամբ էր դիրեկտորը համաձայնվում բանվորների պահանջները կատարելուն: Այդ մասին լիաբացած զայրույթով նա գրում էր Փարիզի անմիջական պետերին և Քիֆլիսի ֆրանսիական հյուպատոսին: Միաժամանակ խնդրում էր նրանց միջնորդությունը՝ Ալավերդում կազակական մշտական պոստ պահելու մասին, որպեսզի ինքը «գործողությունների կատարյալ ազատություն ունենա»<sup>25</sup> և զինվորների ներկայությամբ ապահովի բանվորների հնազանդությունը:

Մինչդեռ, խոսելով նույն գործադուլի մասին կովկասյան տեղական իշխանությունների հետ, նա փարիսեցիաբար, իր հոգացողությամբ էր

<sup>23</sup> Վրաց. ՍՄԷ կողմ, ք. 34, գ. 1046, ք. 83—88:

<sup>24</sup> Նույն տեղում, ք. 83—86:

<sup>25</sup> «Революционное движение...», с. 118—119.

բացատրում բանվորներին զիջումներ անելը: Այսպես, Թիֆլիսի նահանգապետին ուղարկած նամակում Պոլմարը կրկնում է<sup>26</sup>:

«Ս. թ. մարտի 18-ի և 19-ի գործադուլի ժամանակ բանակցություններից հետո իմ և բանվորների միջև համաձայնություն կայացավ շատ հարցերի շուրջը: Այդ մասին կազմվեց հատուկ արձանագրություն, որի պատճեն հանձնվեց Բորչալուի պ. գավառապետին և Թիֆլիսի պարսկական հյուպատոսարանի քարտուղար պ. Թադի-խանին, որից հետո բանվորների ներկայացուցիչներն իրենց համաձայնությունը հայտնեցին անմիջապես աշխատանքի անցնելու մասին: Չնայած դրան՝ բանվորները նորից գործադուլ արեցին, բռնություն մեծացնելով նրանց ուժերի սկսել էին աշխատել և միայն սպառնալիքներն ու կազակների ահը հանգստացրեց նրանց:

Չնայած բանվորները վերսկսեցին անկարգությունները և այդպիսով խախտեցին նրանց և իմ միջև կայացած համաձայնությունը, ես, այնուամենայնիվ, ցանկանում եմ կատարել բոլոր այն պահանջները, որոնց՝ բավարարումը խոստացել եմ: Իսկ օրենքով «Ընկերությունը» պարտավոր չէ բավարարել այդ պահանջներից և ոչ մեկը:

Բանվորները պահանջում են, օրինակ, անվարձ օգտագործել բնակարանները, բաղնիքը, հացի գների իջեցում կատարել՝ որոնք իմ կողմից արդեն արված են, չնայած նրան, որ «Ընկերությունը» դրամական մեծ զոհաբերություն է կատարում: Բանվորները հարց բարձրացրին որոշ ծառայողների աշխատանքից ազատելու մասին, պահանջներ, որոնք անմիտ են և դրանց բավարարումը «Ընկերության» համար բարոյական զոհաբերություն է: Այդ պահանջները ևս իմ կողմից կատարված են: Բանվորների մյուս պահանջները, որ վերաբերում են կացարաններին, նրանց մոտ ջուր բերելուն և այլն՝ կատարվում են:

Բանվորների ներկայացրած պահանջներից և ոչ մեկը չի կարող համարվել օրինական, մանավանդ որ «Ընկերությունը» բանվորների նկատմամբ մշտապես ելնում է օրենքից: Բարոյական տեսակետից ես պարտավոր չեմ կատարել գործադուլի ժամանակ նրանց տված խոստումները, քանի որ նրանք չկատարեցին իրենց խոստումը և նորից սկսեցին անկարգություններ:

Չնայած դրան՝ դրված բարյացակամությամբ և խաղաղասիրությամբ ես արդեն կատարել եմ կամ արդեն կատարում եմ ս. թ. մարտի 18—19-ի համաձայնագրի բոլոր կետերը<sup>27</sup>:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 121—122:

<sup>27</sup> Նույն տեղում:

Սույն գրագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բանվորներն իսկապես հաղթանակ էին տարել և նրանց պահանջների մեծ մասը բավարարվել էր, կամ համենայն դեպս խոստացված է եղել բավարարել<sup>28</sup>: Դրա մասին մենք ունենք նաև հետևյալ վկայությունը քաղված՝ Բորչալուի գավառապետի գաղտնի զեկուցագրից՝ ուղղված Թիֆլիսի նահանգապետին: Նկարագրելով գործադուլի ընթացքը և ստիպված լինելով խոստովանելու այն դաժան շահագործումը, որին ենթարկվում էին բանվորները, գավառապետը գրում է. «...Համարյա նրանց (բանվորների—Գ. Մ.) բոլոր պահանջներն օրինական են և ենթակա են անմիջական բավարարման, ինչպես խոստացված էր զոհաբերողից հետո Պոլմարի կողմից...» (ընդգծումը մերն է—Գ. Մ.)

«Ավերտող չեմ համարում զեկուցերու ձեռք գերազանցությանը,— շարունակում է գավառապետը,— որ ինչպես ինքը՝ դիրեկտորը, այնպես էլ ծառայողների մեծ մասն այդ գործարանում կոպիտ են վերաբերվում բանվորների հետ»<sup>29</sup>:

Փաստաթղթերի ուշադիր քննությունը պարզում է այն որոշ հակասությունը, որ գոյություն ունեւ Ռուսաստանում և Կովկասում արմատներ գցած օտարերկրյա և «հայրենական» կապիտալի ու կառավարության տեղական ներկայացուցիչների միջև: Կապիտալիստների և հատկապես օտարերկրյա կապիտալիստների շահին անցկացրած շահագործումը երբեմն որոշ դժգոհություն էր առաջացնում տեղական իշխանությունների մոտ: Նրանց մտահոգում էր ոչ թե բանվորների դրությունը բարելավումն, այլ առկա պայմաններում «կարգը պահելու» դժվարությունը: Դրանով պետք է բացատրել դիրեկտոր Պոլմարի դժգոհությունը կովկասյան իշխանությունների վարչական «ապիկարությունից» և վերջիններիս ներկայացուցիչների գաղտնի զեկուցագրերում կապիտալիստների գիշատիչ շահագործման փաստերի մասին երբեմնակի տրվող ճիշտ դատողությունները:

Առերես համաձայնվելով պահանջներին, դիրեկցիան չէր շտապում կատարելու դրանք: Եվ երբ աշխատանքները վերսկսվեցին, կապիտալիստները շարունակեցին հին ձևով շահագործել բանվորներին: Այն բանվորները, որոնք փորձում էին բողոքել կամ հիշեցնել իրենց իրավունքների մասին, անխնա ծեծի էին ենթարկվում և հեռացվում աշխատանքից:

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 34, գ. 1046, ք. 52:

Հաշտվեցի՞ն արդյոք բանվորներն այս դրուժյան հետ: Իհարկե, ոչ: Բայց նրանց պայքարի հետագա ընթացքի մասին մենք կոնկրետ տեղեկություններ չունենք, եթե չհաշվենք մի փաստաթուղթ, որը գործին անուղղակի է վերաբերում: Դա գավառապետի կողմից մայիս ամսին նահանգապետին ուղարկված զեկուցագիրն էր այն մասին, որ դիրեկտոր Պոլմարին սպանելու փորձ է արվել՝ նրա տան մեջ դինամիտ պայթեցնելու միջոցով, որը սակայն ապարդյուն էր անցել<sup>30</sup>:

Հեղափոխության սկզբին Հայաստանի պրոլետարիատի մղած այս անդրանիկ մարտը շնայած շոշափելի արդյունք չտվեց, այնուամենայնիվ բանվորական շարժման հետագա զարգացման համար զգալի նշանակություն ունեցավ:

Բանվորները փորձից համոզվեցին, որ կազմակերպված հանդես գալով, նրանք կարող են ստիպել կապիտալիստներին ընդունելու իրենց առաջարկած պայմանները: Բանվորների համար գործադուլային պայքարը քաղաքական դաստիարակության դպրոց էր: Հետագայում նրանք ավելի համախմբված էին հանդես գալիս և շահամանափակվելով տրեստեսական պահանջներով, առաջադրում էին ավելի արմատական քաղաքական պահանջներ:

Այսպիսով բանվորական հոծ մասսայի և ուժեղ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության առկայությունը պայմանավորում էին նրանց առաջատար դերը Հայաստանի հեղափոխական շարժումների մեջ:

Մարտի 20-ին գործադուլ սկսվեց Ալեքսանդրապոլ—Ղարաբաղի սահմանային երկաթուղային գծամասում, շուտով նրանց միացան նաև Ալեքսանդրապոլի դեպոյի բանվորները<sup>31</sup>:

Երկաթուղայինները պահանջում էին բարձրացնել աշխատավարձը, կրճատել աշխատանքի ժամերը<sup>32</sup>, 13-րդ երկաթուղային տեղամասի պետ Պավլովսկին, որի տնօրինության տակ էր գտնվում այդ տեղամասը, Թիֆլիս ուղարկած հեռագրում հայտնում էր, որ ինքը փորձել է համոզելու, սպառնալիքների և վարչական միջոցներով գործադուլից ետ պահելու բանվորներին, սակայն նրանք մնացել էին անդրդվելի<sup>33</sup>:

<sup>30</sup> Նույն տեղում, թ. 166:

<sup>31</sup> ՄԼԻ վրացական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 2, ք. 137:

<sup>32</sup> Նույն տեղում:

<sup>33</sup> Նույն տեղում:

Գործադուլի ընթացքում գործերի տեղափոխությունը խանգարելու համար բանվորները մի շարք վայրերում հանեցին երկաթուղային գծերը<sup>34</sup>: Գործադուլը այնուամենայնիվ ճնշվեց, և բանվորները վերսկսեցին աշխատանքները:

Ապրիլի սկզբներին Անդրկովկասում սկսվեց երկաթուղային բանվորների ընդհանուր գործադուլը, որին արձագանքեցին նաև Հայաստանի երկաթուղայինները: Ամբողջ երկրամասում դադարեց գնացքների երթևեկությունը: Այդ գործադուլին ակտիվ կերպով մասնակցում էին հատկապես Ալեքսանդրապոլի երկաթուղայինները, որոնք Այսպիսով հանքագործների հետ միասին, ընթանում էին պայքարող բանվորների առաջին շարքերում:

Մասնաճյուղային հանգամանքները Ալեքսանդրապոլի երկաթուղայիններին մշտական շփումների մեջ էին դնում Անդրկովկասին մասնավորապես Թիֆլիսի երկաթուղային հանգույցի բանվորների հետ և վերջիններիս ամեն մի ելույթ արձագանք էր գտնում Հայաստանի երկաթուղիներում: Հեղափոխության տարիներին, մասնավորապես 1905 թ. ընթացքում, երկաթուղայինները Հայաստանում անընդհատ գործադուլներ էին անում:

Ինչպես ամբողջ երկրամասում, այնպես էլ Ալեքսանդրապոլում, գործադուլը ճնշվում է գործի միջամտությամբ<sup>35</sup>:

Ապրիլ ամսին գործադուլներ տեղի ունեցան նաև Երևանում: Տրեստեսական հողի վրա գործադուլ հայտարարեցին Սարաջևի կոնյակի և Շուստովի գինու ու կոնյակի գործարանների բանվորները: Նրանց պահանջները հիմնականում վերաբերում էին աշխատավարձի ավելացման, բանվորական կայուն օր սահմանելուն և աշխատանքի ընդունելու պայմաններին:

Գործադուլը, որ տևեց երկու շաբաթ, վերջացավ բանվորների պահանջների մասնակի բավարարումով: Ապրիլի 22-ին գործադուլ արեցին քաղաքի հասարակական հիմնարկների՝ ռեստորանների ակումբի, հյուրանոցների բանվորներն ու ծառայողները: Նրանք առաջադրեցին իրենց տնտեսական վիճակին վերաբերող 14 կետից բաղկացած պահանջներ: Ձեռնարկատերերը լսել անգամ չէին ուզում, «ինչ որ պահանջների մասին» և փորձեցին սպառնալիքների միջոցով վերսկսել տալ աշխատանք:

<sup>34</sup> «Революция 1905 г. в Закавказье (хроника событий, документы и материалы)», Тифлис, 1926, с. 126, *այսուհետև կնշվի կրճատ ձևով* „Хроника“...

<sup>35</sup> «Революционное движение», с. 117—118.

տանքները, սակայն գործադուլավորները չհնազանդվեցին նրանց և գուրս գալով փողոց ցույց կազմակերպեցին: Ի վերջո այս գործադուլը ևս վերջացավ փոխադարձ համաձայնություններով<sup>36</sup>:

Ապրիլի 18-ին գործադուլ հայտարարեցին և աշխատանքները դադարեցրին Կարս քաղաքի հացի փոների բանվորները: Նրանք ներկայացրին հետևյալ պահանջները. ամառային ամիսներին աշխատավարձն ավելացնել 5 փուլով, դիշերելու համար տալ հարմար բնակարան և այլն: Երբ ձեռնարկատերերի կողմից այս պահանջները մերժվեցին, բանվորները դիմեցին Կարսի ռազմական նահանգապետին, խնդրելով նրա միջամտությունը: Սակայն, ինչպես պետք էր սպասել, նահանգապետը մերժեց նրանց խնդրանքը<sup>37</sup>: Չհասնելով հաջողության, բանվորները ստիպված եղան վերսկսել աշխատանքները:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում մայիս ամսին և ամբողջ ամառվա ընթացքում հեղափոխական շարժումները գնալով խորանում էին: Բաքվում մայիսի մեկը նշանավորվեց քաղաքական հզոր ցույցով: Մայիսի հենց սկզբից Անդրկովկասում դարձյալ երկաթուղայինների գործադուլ բռնկվեց, որը տարածվեց երկրամասի հանգույցներում և գծամասերում: Վրաստանում մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցան բազմաթիվ ցույցեր, ինչպես նաև ընդհարումներ ուստիկանության և զորքերի հետ: Հունիսի 20-ին Թիֆլիսում նորից գործադուլ հայտարարեցին երկաթուղային արհեստանոցների բանվորները: Նրանց միացան նաև քաղաքի գործարանների և ֆաբրիկաների բանվորները, տրամվայի ու ձիաքարշի աշխատողները, խանութների գործակատարներն ու քաղաքային վարչության ծառայողները<sup>38</sup>: Գործադուլը, որ հայտարարված էր որպես բողոք ցարիզմի սևհարյուրակային, ջարդարարական քաղաքականության դեմ, կազմակերպված ձևով ավարտվեց ամսի վերջին:

Հայաստանի աշխատավորները ևս այդ ամիսներին մի շարք ելույթներով արձագանքեցին Ռուսաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի պրոլետարիատի և գյուղացիական հեղափոխական պայքարին:

Ալավերդում բանվորները գուրս եկան մայիսմեկյան ցույցերի: Ստ. Շահումյանը այդ ժամանակ շրջագայում էր Լոռիում, տեղերում կազմակերպում և ամրապնդում էր բուլշևիկյան բջիջները: Փալով Ալա-

վերդի, Մայիսի մեկին նա հանդես եկավ ձառով և նշեց հեղափոխական պայքարի այն խնդիրները, որոնք կուսակցությունը դնում էր բանվորների և գյուղացիների առջև: Միտինգում բարձրացվեց կարմիր դրոշ: Ելույթ ունեցան նաև մի շարք առաջավոր բանվորներ, այդ թվում Սերգո Փիրուզյանը<sup>39</sup>:

1905 թ. մայիսի սկզբներին Հաղպատ, Զալալօղլի, Ուզունլար, Ուրնակ գյուղերի, Ալավերդու գործարանների, Ախթալա և Հաղպատ կիսակայարանների սոցիալ-դեմոկրատական բջիջների ներկայացուցիչների ժողովում, որը փաստորեն կոնֆերանս էր, Ստ. Շահումյանի ղեկավարությամբ ստեղծվեց ՌՍԴԲԿ Բորչալուցի (Լոռու) գավառական կոմիտեն: Լոռու կազմակերպության մեջ աշխատում էին Ս. էվոյանը, Ա. Կախոյանը, Աշոտ Թումանյանը, Անուշավան Թումանյանը, Ս. Փիրուզյանը, Ս. Իսրայելյանը և ուրիշներ<sup>40</sup>: Հաճախակի Հայաստանում լինելով՝ նրանց աշխատանքներին ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս նաև Մելիք Մելիքյանը (Գեղուշկա), ՌՍԴԲԿ Լոռու կոմիտեն, որի ընդհանուր ղեկավարությունը իրականացնում էր Ստ. Շահումյանը, Հայաստանում դարձավ գործող ամենակենսունակ և ամենամարտական կազմակերպություններից մեկը:

Շրջագայելով Հայաստանում, Ստ. Շահումյանը լինում է Մեծ Ղարաքիլիսա (Կիրովական) գյուղաքաղաքում, ուր, օգտագործելով առիթը, ելույթներ է ունենում նաև դաշնակցականների դեմ: Շահումյանը այնուհետև մեկնում է Երևան:

Դեռևս 1902—1904 թթ. Ուլուխանլու—Երևան երկաթուղային տեղամասի բանվորների, քաղաքի արական և իգական գիմնազիաների ուսուցիչ-ուսուցչուհիների, թեմական դպրոցի բարձր դասարանների աշակերտների և փոստ-հեռագրական ծառայողների շրջանում գործում էին սոցիալ-դեմոկրատական մարքսիստական խմբակներ: Սրանց ակտիվ անդամներից էին գիմնազիայի ուսուցիչներից Լաբինսկին, Սավինիլը, ժողովրդական ուսումնարանի դիրեկտորի կին Զիլինաձեն, կանանց գիմնազիայի դասատուներից Վախտինյան, Վորոբյով ամուսինները և ուրիշներ: Առանձին գործող այս խմբակների մեջ ղեկավար դեր էին կատարում Գեորգի Սոկոլովսկին և Ալեքսանդր Մալխասյանցը: Այս խմբակների աշխատանքը կենտրոնացնելու համար Կովկասյան միու-

<sup>36</sup> ՄԼԻ հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 33, գ. 167:

<sup>37</sup> Նույն տեղում:

<sup>38</sup> «Хроника...», с. 53—54.

<sup>39</sup> Զ. Ս. Մելիքյան, նշված աշխ., էջ 107:

<sup>40</sup> «Հին բուլշևիկների հիշողությունները», էջ 47:

թենական կոմիտեի հանձնարարութեամբ տակավին 1904 թ. սեպտեմբերին Երևան էր եկել Ստ. Շահումյանը:

Երկրորդ անգամ Ստ. Շահումյանը Երևանում լինում է արդեն 1905 թ. մայիսին, իր վերոհիշյալ շրջագայութունների ընթացքում: Այստեղ սոցիալ-դեմոկրատական աշխատանքները զգալիորեն առաջադիմել էին. ընդարձակվել էին կազմակերպության կապերը նաև Երեվանի նահանգում գործող առանձին խմբակների հետ: Հասունացել էին պայմանները համաքաղաքային ընդհանուր կազմակերպություն ստեղծելու համար և, 1905 թ. մայիսի 12-ին, Ստ. Շահումյանը հիմնադրեց ՌՍԴԲԿ Երևանի քաղաքային կոմիտեն: «Այդ ժամանակվանից Երևանի կազմակերպությունը, — վերհիշում է Գ. Սոկոլովսկին, — Ստեփանի միջոցով սերտորեն կապվեց Քիֆլիսի կազմակերպության հետ: Ստեփան Շահումյանը դարձավ իմ անձնական բարեկամը և մեր Երևանի կազմակերպության ընկեր-բարեկամը»<sup>41</sup>: Երևանի կոմիտեի ակտիվ անդամներից էին, բացի վերոհիշյալ Գ. Սոկոլովսկուց և Ա. Մալխասյանցից, նաև Կ. Ալավերդովը, Վ. Բարժանսկին, Ն. Նինաշվիլին, Վ. Բաղդասարյանը և ուրիշներ: Հետագայում կազմակերպությունը համալրվեց նոր կարող ուժերով: Երևան փոխադրվեցին՝ Մարտիրոս Միրաքյանը (բանվոր Շանթ), Ասքանազ Մոսվյանը, Լևոն Տեր-Հովսեփյանը, Լևոն Յաղուբյանը<sup>42</sup>:

Հունիս ամսից նորից խմորումներ սկսվեցին Ալավերդու բանվորների մեջ: Հունիսի 14-ին Բորչալուի գավառապետը հայտնում էր, որ դրությունը այնտեղ հանգիստ չէ: Հուլիսի սկզբներին Ալավերդում բռնկեց մի մասնակի գործադուլ որի առաջն առնելու համար գործարանի ադմինիստրացիան և գավառապետը շտապեցին միջոցների դիմել<sup>43</sup>:

Բանվորական գործադուլներն իրենց ազդեցությունն ունեցան գյուղի վրա:

1905 թ. գարնան-ամռան-աշնան ամիսներին, ամբողջ երկրում տեղի ունեցող գյուղացիական շարժումների ընդլայնման և խորացման պայմաններում, Արևելյան Հայաստանում ևս գյուղացիական շարժումներ բռնկվեցին: ՌՍԴԲԿ Կովկասյան միությունը կազմակերպչական

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 101—102:

<sup>42</sup> Խ. Հ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք երկրորդ, Ե., 1975, էջ 67—70:

<sup>43</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 34, գ. 1046, 171—186:

աշխատանքներին զուգահեռ, Հայաստանում մեծ շափով ծավալել էր նաև դրավոր պրոպագանդա, — տարածվում էր անլեզալ գրականություն, Քերթեք, կոշեր և պրոկլամացիաներ: Հենց այդ ժամանակ էր հրատարակվեց Քիֆլիսի կոմիտեի նշանավոր կոշը հայերեն, ուղղված «Բորչալուի գյուղացիներին»:

Այդ կոշում գյուղացիներին բացատրվում էր, որ նրանց բոլոր թշվառությունների պատճառը ցարիզմն է, որն իրեն փրկելու, ժողովրդի ուժերը ջլատելու համար հրահրում և կազմակերպում էր ազգամիջյան ընդհարումներ և հրեական շարժեր: Յույց է տրվում, որ գյուղացիներին հարստահարում են նաև դաշնակցականները, որոնք իրենց «կոմիտեների» միջոցով, ստիպում են վճարել պետական և կալվածատիրական հարկերը, իսկ քաղաքներում ճնշում բանվորական գործադուլները: Հետևապես, ինչո՞ւ էին նրանք լավ պրիստավից, կազակներից ու ստրաժնիկներից, — հարց էր տրվում կոշում: Ակտիվ գործողության, քաղաքական պայքարի մղելով աշխատավոր գյուղացիներին, կոշի հեղինակներն առաջարկում էին երես դարձնել նաև «ազգի շահերի» կեղծ պաշտպաններից և միանալ բանվորներին ու համախըմբված սոցիալ-դեմոկրատիայի շուրջը, տապալել բոլոր շահագործողների լուծք: Կոշը գյուղացիությանն էր ուղղված բանվորների անունից և ստորագրված էր «Հայ բանվոր»<sup>44</sup>:

Երկրում ստեղծված հեղափոխական իրադրությունը տեղաշարժելով հասարակության բոլոր դասակարգերին, ստիպում էր այդ կացությանը համապատասխան մշակել նոր վերաբերմունք, նոր տակտիկա: Հասունացած խնդիրներն անհրաժեշտաբար պահանջում էին, որ պրոլետարիատի ղեկավար կուսակցությունն էլ մշակի իր տակտիկան: Սակայն սոցիալ-դեմոկրատիան, մենշևիկների օպորտունիզմի և տարածայնությունների պատճառով, պառակտված էր երկու ֆրակցիաների, փաստորեն երկու կուսակցությունների:

Միասնական տակտիկա մշակելու համար բոլշևիկները 1905 թ. ապրիլի 25-ին Լոնդոնում հրավիրեցին կուսակցության III համագումարը: Մենշևիկները դեմ էին և հրաժարվելով համագումարին մասնակցելուց, ժնկում հրավիրեցին իրենց կոնֆերանսը:

Կուսակցության III համագումարը ելնում էր նրանից, որ շնայած տեղի ունեցող հեղափոխությունը իր բնույթով բուրժուական է և հաղ-

<sup>44</sup> «Հեղափոխական կոշեր և թուղիկներ», կազմել և խմբագրել է Խ. Հ. Բարսեղյանը, Ե., 1960, էջ 129—131:

Քանակի հետևանքով ստեղծվելու են դեմոկրատական կարգեր, որոնք հնարավորություն կնձեռեն կապիտալիզմի ազատ ու անկաշկանդ զարգացման համար, այնուամենայնիվ նրա հաղթանակով ավելի շահագրգռված էր պրոլետարիատը, քան բուրժուազիան: Դա բացատրվում էր ռուսական հեղափոխության մի շարք առանձնահատկություններով՝ նախ և առաջ կազմակերպված պրոլետարիատի առկայությամբ, որը փխսավորելով հեղափոխությունը հանդես էր գալիս իր սեփական քաղաքական-տնտեսական պահանջներով, և երկրորդ՝ հզոր ազդարային շարժման ու հեղափոխական գյուղացիության առկայությամբ, որը հանդիսանում էր պրոլետարիատի բնական դաշնակիցը:

Իսկ հաղթանակից հետո էլ քաղաքականորեն բարձրացած և ավելի կազմակերպված պրոլետարիատը անցնելու էր հեղափոխության բուրժուա-դեմոկրատական էտապից ավելի բարձր՝ սոցիալիստական հեղափոխության, որի հաղթանակը հանգեցնելու էր պրոլետարիատի դիկտատուրայի հաստատմանը:

Համագումարի առաջին և գլխավոր հարցը գինված ապստամբության հարցն էր: Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս նաև ապստամբության ռազմատեխնիկական կողմի ապահովմանը:

Համագումարը պրոլետարիատին և գյուղացիությանը ապստամբության նախապատրաստելու համար առաջադրեց մի շարք լուղունգներ, այդ թվում՝ մասսայական-քաղաքական գործադուլների անցկացման, 8-ժամյա բանվորական օրվա պահանջի, գյուղացիական հեղափոխական կոմիտեների ստեղծման վերաբերյալ և այլն:

Համագումարը քննարկեց Վ. Ի. Լենինի «Կովկասի իրադարձությունների առթիվ» բանաձևը և ողջույն հղեց Կովկասի մարտնչող պրոլետարիատին և գյուղացիությանը, որոնք իրենց համատեղ պայքարում ցույց էին տալիս, թե ինչպես պետք է իրականացնել բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը<sup>45</sup>:

Համագումարից հետո, 1905 թ. հուլիսին լույս տեսավ Վ. Ի. Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկական դեմոկրատական հեղափոխության մեջ» գիրքը, որի մեջ ամփոփելով համագումարի և կոնֆերանսի արդյունքները, տվեց մենշևիկների տակտիկայի ծավալուն քննադատությունը և բուլշևիկների տակտիկայի փայլուն պաշտպանությունը:

<sup>45</sup> «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», 1 մաս, Ե., 1954, էջ 103—104, Տե՛ս նաև Գ. Բ. Ղափրջանյան, Լենինը և Անդրկովկասը, II (1905—1917) Ե. 1973 էջ 47—52:

Ջախջախելով մենշևիկներին, որոնք ելնելով հեղափոխության բուրժուական բնույթից, նրա հեղեմունը համարում էին լիբերալ բուրժուազիային, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ հեղափոխության առաջնորդը, պետք է լինի պրոլետարիատը, իսկ գյուղացիությունը՝ նրա դաշնակիցը:

Վ. Ի. Լենինի այս աշխատության մեծագույն պատմական նշանակությունն այն է, որ մարքսիզմի գանձարանը հարստացնելով նոր տեսություններ ու տակտիկայով, պրոլետարիատին զինեց հեղափոխության ուսմունքով՝ կապիտալիզմի դեմ վճռական հաղթանակ տանելու համար:

Հոկտեմբերին սկսվեց համառուսաստանյան քաղաքական գործադուլը, որով հեղափոխական շարժումը երկրում թևակոխեց իր զարգացման ավելի բարձր աստիճանը:

Երկաթուղայինների համառուսական միությունը, որ դեռևս 1905 թ. հուլիսից էր նախապատրաստվում այդ գործադուլին, համոզված էր նրա ունենալիք մեծ նշանակության մեջ, և նույնիսկ գերազնահատում էր այն, կարծելով, թե միայն գործադուլով կարելի կլինի հասնել քաղաքական լուրջ նվաճումների:

Գործադուլը սկսեցին Մոսկվայի երկաթուղային բանվորները: Հոկտեմբերի 7-ին դադարեց աշխատանքը Մոսկվա—Կազան գծում: Շուտով երկաթուղայիններին միացան քաղաքի ֆաբրիկաների և գործարանների բանվորները:

Հոկտեմբերի 3-ից Պետերբուրգում գործադուլ էին հայտարարել տպագրիչները, որոնց արձագանքեցին նաև արդյունաբերական ձեռնարկությունների բանվորները: Մի քանի օր անց, Մոսկվայի օրինակով, Պետերբուրգում ևս երկաթուղայինները գործադուլ հայտարարեցին: Հոկտեմբերի 13-ից շարժումների մեջ ընդգրկվեց երկրի մեծ մասը: Երկաթուղայինների հոկտեմբերյան գործադուլը սերտորեն միաձուլված էր ամբողջ երկրում բռնկված արդյունաբերական բանվորների գործադուլների հետ:

Հենց հոկտեմբերյան քաղաքական գործադուլների ժամանակ էլ ամենից ցայտուն երևաց ռուսական հեղափոխության այն առանձնահատուկ բնույթը, այն յուրահատկությունը, որ իր սոցիալ-տնտեսական բովանդակությամբ լինելով բուրժուա-դեմոկրատական, պայքարի միջոցներով պրոլետարական էր: Պրոլետարական պայքարի սպեցիֆիկ

միջոցը գործադուլն էր, որը մասսաների ձեռքին պայքարի գեներ էր և քաղաքական դաստիարակության դպրոց<sup>46</sup>:

Հոկտեմբերյան քաղաքական գործադուլների ալիքը հասավ Անդրդեպարտմենտի, այդ թվում Հայաստան: Այդ շարժումներին ակտիվ մասնակցություն ունեցան հատկապես Ալեքսանդրապոլի երկաթուղայինները:

Անդրդեպարտմենտում ելույթներն սկսվեցին Քիշլիսի երկաթուղային բանվորների հոկտեմբերի 14-ին հայտարարած մասսայական-քաղաքական գործադուլով<sup>47</sup>: Նույն օրը երեկոյան Ալեքսանդրապոլի հանգուցում տեղի ունեցավ ժողով, որի նախագահն էր մեքենավար Ս. Շահբազյանը: Բանվորներն այնտեղ քննության առնելով իրենց անելիքները, որոշեցին միանալ համառուսաստանյան գործադուլին: Գիշերը Ալեքսանդրապոլում և կայարանի շրջակայքում տարածվեցին բազմաթիվ պրոկլամացիաներ, որոնց մեջ կոչ էր արվում ընդհանուր գործադուլ հայտարարել:

Հոկտեմբերի 15-ին, ժամը 6-ին Ալեքսանդրապոլի հանգուցում աշխատանքները դադարեցին: Գնացքների երթևեկությունը կանգ առավ նաև Ալեքսանդրապոլ—Կարս, Ալեքսանդրապոլ—Սրևան գծամասերում:

Կազմակերպվեց գործադուլային կոմիտե Ս. Շահբազյանի ղեկավարությամբ: Կոմիտեն բանվորական վերահսկողություն հաստատեց Ալեքսանդրապոլի ամբողջ հանգուցի և երկաթուղային երթևեկության վրա: Գնացքներն աշխատում էին բացառիկ դեպքում, այն էլ միայն բանվորների թույլտվությամբ: Հոկտեմբերի 16-ին հրապարակվեց գործադուլային կոմիտեի պրոկլամացիան, որտեղ շարադրված էին բանվորների պահանջները:

Հայաստանի գործադուլային շարժումների պատմության մեջ առաջին անգամ առաջադրվում էին քաղաքական պահանջներ, որոնք արդեն բանվորական շարժման նոր փուլն էին սկզբնավորում:

Պրոկլամացիան սկսվում էր հետևյալ ազդարարությամբ.

«Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք:

Ընկերներ՝

Մենք՝ դեպոյի և Ալեքսանդրապոլ կայարանի ծառայողներս միա՛նալով ռուսական երկաթուղայինների ընդհանուր գործադուլին, հայտարարում ենք, որ մենք ընդունել ենք բոլոր գործադուլավորների ընդ-

<sup>46</sup> Վ. Ի. Աեթե, ժԺ, հ. 30, էջ 384—385:

<sup>47</sup> «Всероссийская политическая стачка в октябре 1905 г.» (документы и материалы), ч. I, М.—Л., 1955, с. 214—217.

հանուր որոշումը գործի շանցնել մինչև չբավարարվեն մեր ներքոհիշյալ այն պահանջները, որոնք գրավական են Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների բարեկեցության:

Դրանք են՝

1. Հրավիրել հիմնադիր ժողով ընտրված ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի ձայնատվությամբ:
2. Ընտրական իրավունք հատկացնել 20 տ. լրացած երկսեռ բոլոր հպատակներին:
3. Ազատել քաղաքական և կրոնական համոզմունքների համար բոլոր ձերբակալվածներին:
4. Հավասարություն օրենքի առաջ, առանց ազգությունների և դասակարգերի խտրության:
5. Խոսքի, մամուլի, ժողովների, միությունների և հավատի ազատություն:
6. Մահվան պատժի վերացում:
7. Մըշտական և կանոնավոր զորքի փոխարինում ժողովրդական միլիցիայով:
8. Ամբողջ ազգաբնակչության պարտադիր ուսուցում պետության հաշվին:
9. Վերացնել ամբողջ Ռուսաստանում ռազմական դրությունը, ուժեղացած պահպանությունը և էկզեկուցիաները:
10. Սահմանել ութ-ժամյա բանվորական օր:
11. Ապահովել բոլոր ծառայողներին անդամալուծության և ծերության դեպքերում:
12. Բոլոր ծառայողների համար հաստատված աշխատավարձը չպետք է փոփոխվի պետերի կամայականությամբ, այլ միայն ծառայողների ներկայացուցիչների մասնակցությամբ:
13. Բավարարել այն բոլոր պահանջները, որոնք ներկայացված էին ծառայողների կողմից անցյալ գործադուլների ընթացքում և այլն»<sup>48</sup>:

Հոկտեմբերյան գործադուլների ընթացքում բանվորների հեղափոխական նախաձեռնությունը Ռուսաստանի շատ կենտրոններում ստեղծում էր բանվորների դեպուտատների սովետներ, դրանք մասսայական-քաղաքական այնպիսի կազմակերպություններ էին, որ սկզբնավորվելով որպես գործադուլային պայքարի ղեկավարման օրգաններ, աստիճանաբար վերածվում էին գինված ապստամբության, ապա և հեղափոխական իշխանության օրգանների:

Հայաստանում, ինչպես և Վրաստանում, բանվորների դեպուտատների սովետներ չստեղծվեցին, նրանց ֆունկցիաները հոկտեմբերյան օրերին և հետագա ամիսների ընթացքում իրականացնում էին գործադուլային կոմիտեները: Անդրդեպարտմենտում սովետներ ստեղծվեցին միայն Բաքուում:

<sup>48</sup> «Революционное движение...», с. 146—147.



Հոկտեմբերյան օրերին ամբողջ երկրում գործադուլ էր արել մոտ մեկ միլիոն միայն արդյունաբերական բանվոր:

Հեղափոխության ակիբը ճանապարհից մաքրեց նաև բուլիզինյան խորհրդակցական դուման, որի ընտրությունների նախապատրաստությունը սկսվել էր դեռևս օգոստոսից և որի միջոցով կառավարությունը հուլյս ուներ արգելակել Հեղափոխության հետագա ծավալումը: Հոկտեմբերյան քաղաքական գործադուլը ցույց տվեց, թե որքան ճիշտ էին բուլշևիկները, որոնք որոշել էին վիժեցնել հրավիրվող դուման, ակտիվ բուլկոտի ենթարկելով այն:

Գործադուլների, ինչպես նաև գյուղացիական շարժումների առաջն առնելու համար իշխանությունները շտապեցին այդ շարժումների վայրերը զորքեր, հատկապես կազակային զորամասեր ուղարկել:

Պատժիչ զորամասերի փոխադրումները կանխելու համար հեղափոխականները մի շարք վայրերում կազմակերպեցին երկաթուղային գծերի խախտումներ, որի հետևանքով տեղի ունեցան զինվորական գնացքների խորտակման դեպքեր: Այսպես, հոկտեմբերի 15-ին Ղարաքիլիսա և Շահալի կայարանների միջև խորտակվեց Թիֆլիս գնացող զինվորական գնացքը: Հոկտեմբերի 16-ին Սանահին կայարանի մոտ խորտակվեց զինվորական մի այլ գնացք<sup>49</sup>:

Հոկտեմբերի 17-ին, գործադուլները տարածվելով ամբողջ երկրում, դարձան համառուսաստանյան: Այդ օրերին Վ. Ի. Լենինը գրում էր. «Բարոմետրը փոթորիկ է ցույց տալիս... Եվ ոչ միայն բարոմետրն է փոթորիկ ցույց տալիս, այլև համերաշխ պրոլետարական գրոհի վիթխարի փոթորիկը բացարձակապես ամեն ինչ արդեն պոկել է իր տեղից: Հեղափոխությունը առաջ է գնում ապշեցուցիչ արագությամբ... Մեր առջև են մեծագույն քաղաքացիական պատերազմներից մեկի, ազատության համար մղված պատերազմներից մեկի, որ երբևիցե ապրել է մարդկությունը, համակող տեսարանները...»<sup>50</sup>:

Այսպիսի մթնոլորտում համառուսական քաղաքական գործադուլը ցարիզմի դեմ ուղղված համաժողովրդական ապստամբության նախադուռն էր արդեն: Բուռն կերպով աճում էին հեղափոխության ուժերը և ընդհակառակը, ջլատվում էին կառավարության, ռեակցիայի ուժերը: Այս պայմաններում էր, որ Նիկոլայ II-ը ստիպված եղավ հրապարակել Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որը հռչակում էր «քաղաքացիական

<sup>49</sup> «Хроника»..., с. 79.

<sup>50</sup> Վ. Ի. Լենին, ՆՆԺ, հ. 12, էջ 1:

ազատությունների անխախտ հիմունքներ՝ անձի իսկական անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, ժողովների և միութունների ազատություն»: Մանիֆեստը խոստանում էր նաև օրենսդիր դումա և այդ դումայի ընտրություններին հասարակության այն բոլոր խավերի ներկայացուցիչների մասնակցություն, որոնք մինչև այդ զրկված էին ընտրական իրավունքից:

Գնահատելով ստեղծված իրադրությունը, Վ. Ի. Լենինը այն համարում էր հեղափոխության և ցարիզմի միջև ուժերի հավասարակշռության մի շրջան, այսինքն՝ այնպիսի մի վիճակ, երբ. «ինքնակալությունն առդեն անզոր է՝ բացահայտորեն դուրս գալու հեղափոխության դեմ: Հեղափոխությունը դեռ անզոր է վճռական հարված հասցնելու թշնամուն: Համարյա հավասարակշիռ ուժերի այս տատանումն անխուսափելիորեն ստեղծում է իշխանության շփոթվածություն, առաջ է բերում անցումներ, ռեպրեսիաներից դեպի զիջումները, դեպի մամուլի ազատության ու ժողովների ազատության վերաբերյալ օրենքները»<sup>51</sup>:

Արտահայտելով հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի տրամադրությունները, հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը այդ օրերին գրեց ռեակտիվ պաթոսով առկեսուն իր նշանավոր «Մեկ էլ, մեկ էլ» բանաստեղծությունը:

Սակայն, մանիֆեստի հրապարակումից հետո, երկաթուղայինների միության համառուսական կենտրոնական բյուրոն մենշևիկների և մյուս օպորտունիստների հարկադրանքով առաջարկեց դադարեցնել երկաթուղայինների գործադուլները: Արդեն հոկտեմբերի 22-ին, համարյա ամբողջ երկրում, երկաթուղայինները դադարեցրել էին գործադուլները<sup>52</sup>:

Դադարեցրին գործադուլը նաև Հայաստանի երկաթգծի ծառայողներն ու բանվորները: Սրանց հետևեցին գործադուլ արած մյուս ձեռնարկությունների բանվորները:

Բուլշևիկները դեմ էին գործադուլների դադարեցմանը: Նրանք առաջարկում էին այդ հարցը քննել բանվորական ժողովներում, սակայն մենշևիկների օպորտունիզմի և դավաճանության հետևանքով շատ տեղերում արդեն դադարել էին գործադուլները: Ելնելով ստեղծված դրույթից, բուլշևիկյան կուսակցությունը առաջարկեց շարունակել պայ-

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>52</sup> А. М. Панкратова, Первая русская революция 1905—1907 гг., 1951 г. с. 135, 136.

քարը այնտեղ, որտեղ պայմանները բարենպաստ էին, իսկ որտեղ այդ հնարավոր չէր, պահպանել ուժերը, ամրապնդել պրոլետարիատի կազմակերպությունը նոր, ավելի հզոր ընդհանուր գործադու նախապատաստելու համար, որը պետք է վերաճեր զինված ապստամբության:

1905 թվականին Արևելյան Հայաստանի պրոլետարիատի հեղափոխական պայքարի ամենափայլուն էջերից մեկը Ալավերդու բանվորների նոյեմբերյան քաղաքական գործադուլն էր:

Հոկտեմբերյան գործադուլային շարժումը, այլ վայրերի հետ միասին ոտքի հանեց նաև Ալավերդու բանվորությունը: Այստեղ շարժումը սկսվեց ավելի ուշ և, չնայած դրան, մեծ ծավալ ընդունեց: Ալավերդու գործադուլը, իր հուժկու բնույթով և համառությամբ, առանձնահատուկ տեղ է բռնում Արևելյան Հայաստանի բանվորական շարժումների պատմության մեջ: «Որքան ավելի խոշոր էին գործարանները, այնքան ավելի համառ էին ընթանում գործադուլները, այնքան ավելի հաճախ էին կրկնվում դրանք միևնույն տարվա ընթացքում»<sup>53</sup>, գրել է Վ. Ի. Լենինը 1905 թ. հեղափոխության մասին կարդացած իր զեկուցման մեջ:

Ալավերդու բանվորների գործադուլին ակտիվ մասնակցություն ցույց տվեցին Սանահինի երկաթուղայինները, որոնք համառուսաստանյան հոկտեմբերյան քաղաքական գործադուլի ժամանակ դեպոյի և կայարանի վրա բանվորական վերահսկողություն էին հաստատել և այժմ, գործադուլի ավարտից հետո էլ, տակավին գտնվում էին ալեկոծ վիճակում:

Սանահինի բոլշևիկները սերտ կապի մեջ էին Ալավերդու կազմակերպության հետ և նոյեմբերյան գործադուլի նախապատրաստական աշխատանքները միասին էին տանում: Գործադուլին աջակցում էին նաև շրջակա գյուղերի բնակիչները: Դեռևս ամառվա ընթացքում Հայաստանի մի շարք գյուղերում, և հատկապես Լոռիում, ստեղծվել էին գյուղացիական կոմիտեներ, որոնք կապված էին Ալավերդու կազմակերպության հետ: Երբ Ալավերդում բանվորներն ու Սանահինի երկաթուղայինները որոշեցին գործադուլ հայտարարել, ապա Աքորի, Ուզունյար, Այգեհատ, Հազվի և այլ գյուղերի բնակիչները, գյուղացիական կոմիտեների ղեկավարությամբ, պատրաստակամություն հայտնեցին օգնելու բանվորներին, պաշտպանելու նրանց պահանջները և որո-

<sup>53</sup> Վ. Ի. Լենին, Նժժ. հ. 30, էջ 336—337:

շեցին բանվորների տրամադրության տակ դնել իրենց զինված մարտական ջոկատները<sup>54</sup>:

Այս փաստը՝ բանվորական շարժման և գյուղացիական ելույթի զուգակցումը, եզակի էր Արևելյան Հայաստանում, ուսական առաջին հեղափոխության տարիներին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մի արտահայտություն էր. նման երևույթ հնարավոր էր դառնում այնտեղ, ուր ուժեղ էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը քաղաքային և գյուղական պրոլետարիատի վրա: Այդպիսի վայրերից էր Լոռին:

Նոյեմբերի 20-ին Սանահինի գործադուլավոր երկաթուղայինները շրջակա գյուղերի զինված բնակիչների հետ միասին գնացքով, որը զարդարված էր կարմիր դրոշներով և լողունգներով, հանդիսավոր կերպով ժամանեցին Ալավերդի: Նրանց ժամանումը ազդանշան ծառայեց Ալավերդում աշխատանքները դադարեցնելու և գործադուլ հայտարարելու համար:

Ահա թե ինչ էր գրում այդ մասին Ալավերդու հանքերի դիրեկտորը Քիֆլիսի ֆրանսիական հյուպատոսին. «Այսօր երկաթուղու բանվորները և ծառայողները, զինված անձնավորությունների ուղեկցությամբ, որոնք ինչպես մեզ հայտնեցին, շրջակա գյուղերի քաղաքական կոմիտեների ներկայացուցիչներ են, Սանահին կայարանից Մանես եկան՝ գործարանում աշխատանքները դադարեցնելու նպատակով:

Այդ մարդիկ զգուշացրին, որ նրանք կանգնեցնելու են մեր բոլոր աշխատանքները և ներկայացնելու ութամյա բանվորական օրվա, աշխատավարձի հավելման և այլ պահանջներ: Ես անկարող եմ փոփոխել այն պայմանները, որոնց մեջ աշխատում է մեր բանվորների մեծ մասը, որը ի դեպ, միանգամայն բավարարված է և չի էլ մտածում գործադուլի մասին: Հակառակ պարագայում ես ստիպված կլինեմ փակել մեր ձեռնարկությունները...

Ես Ձեզ շահազանց պարտական կլինեմ, եթե դուք մասնակցություն ցույց տաք և նշեք, թե ես ում պետք է դիմեմ օգնության համար՝ առաջացած դժգոհություններին զոհացում տալու նպատակով, քանի որ մեր գործին քաղաքական խմբերի և օտար բանվորների միջամտության հետևանքով գործարանի կանգնեցումը վերջ ի վերջո ընկերության համար կարող է ճակատագրական լինել»<sup>55</sup>:

<sup>54</sup> А. М. Арутюнян, Революционное движение в Армении, 1905—1907 гг., 1970, с. 169—170.

<sup>55</sup> Գ. Ա. Մուրադյան, Նշված աշխ., էջ 144:

Կովկասյան լեռնային վարչութիւնը նոյեմբերի 23-ին գրած նամակում Պոլմարը ավելի որոշակի էր պնդում, թե գործադուր տեղի է ունեցել սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան դրդումով միայն:

Գործադուրն սկսեցին «Մանես» գործարանի աշխատողները, հաջորդ օրը նրանց միացան «Պերիտիկ»-ի բանվորները և, ապա տարածվելով Ալավերդու ամբողջ հանքային շրջանի վրա, նոյեմբերի 21-ին գործադուրը դարձավ ընդհանուր, կազմվեց գործադուրային կոմիտե տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան անդամներից և առաջավոր բանվորներից: Գործադուրային կոմիտեի կազմի մեջ մտնում էին՝ Ս. Փիրուզյանը, Վ. Չելիձեն, Ա. Դեղորիանին, Մ. Աղամյանը, Ա. Մուրադյանը, Ն. Զաֆարովը, Ա. Խաչիկը և ուրիշներ: Գործադուրի կազմակերպման մեջ ակտիվ դեր են խաղացել նաև Մելիք Մելիքյանը և Ասատուր Կախոյանը<sup>56</sup>: Կոմիտեն կազմեց և բանվորների անունից դիրեկցիային ներկայացրեց հետևյալ պահանջները.

1. Ութժամյա աշխատանքային օր:
2. Աշխատավարձի ավելացում 20 տոկոսով:
3. Բանվորին օրավարձ տալ մեկ ուրլի:
4. Բանվորական տեսչություն, որի պարտականությունն է լինելու բանվորների և վարպետների ընդունումն ու ազատումը, նրանց ուժեղի ավելացումն ու նշանակումը:
5. Տուգանքների վերացում:
6. Շլեզոֆենի վրա աշխատող բանվորների թիվը ավելացնել չորս մարդով այնպես, որ բոլորի թիվը լինի ութ և նրանց տալ գոգնոցներ ու ձեռնոցներ՝ ընկերության հաշվին:
7. Հիվանդացած բանվորներին բուժել ընկերության հաշվին և մինչև առողջանալն աշխատավարձը լրիվ վճարել:
8. Բոլոր բանվորներին տարվա ընթացքում մեկ ամիս արձակուրդ հատկացնել:
9. Վառարանի վրա աշխատող վարպետի օգնականների և կոնվենտորի վրա աշխատող բանվորի համար վերականգնել նախկին աշխատավարձը՝ երկուական ուրլու շափով:
10. Բարձր պաշտոնից ցածր պաշտոնի փոխադրելու դեպքում տարբերությունը վճարել աշխատավարձից դուրս:
11. Վերականգնել պղնձի որոշ քանակի ձուլման համար տրվող պարգևադրամը վառարանի վրա աշխատող վարպետներին և վճարել անցյալ երկու ամսվա հասանելիքը:

<sup>56</sup> Նույն տեղում:

12. Մեխանիկական բաժնում ավելացնել ծառայողների թիվը:
13. Գործարաններում ավելացնել լուսավորությունը:
14. Տոն օրերին դադարեցնել աշխատանքները, իսկ եթե այդ հնարավոր չէ, բանվորական մեկ ժամը երկու ժամ հաշվել:
15. Յուրաքանչյուր շորս բանվորին տրամադրել մեկ սենյակ, ապահովելով լուսավորությամբ և վառելիքով:
16. Վերացնել հաշվետերերի 20 կոպեկ արժողությունը:
17. Կառուցել երեք բաղնիք:
18. Աշխատավարձը վճարել կանոնավոր՝ ամիսը երկու անգամ:
19. Գործարանի վերանորոգման, ինչպես նաև գործադուրի ժամանակ բոլոր բանվորներին վճարել լրիվ աշխատավարձ և չարձակել բանվորներին գործադուրի պատճառով:
20. Գիշերային պահակներին տաք հագուստ տալ գործարանի հաշվին:

21. Ամեն օր գրասենյակում կախել հաշվետախտակ:
22. Հեռացնել. ա) Նիկոլայ Աբաջևին, բ) Ահմեդ Ստեփանովին, գ) Սավինո Չեզերանուն, դ) Եմելյանովին, ե) Սալահ Աբդուլլային, զ) Աղա Մահմեդ Աղային:

Մինչև բավարարելը աշխատանքի չանցնել:  
Կեցցե ՌՍԴԲԿ-ն<sup>57</sup>:

Գործարանի ադմինիստրացիան խոստացավ կատարել պահանջների միայն մի մասը: Չհամաձայնվելով մասնակի բավարարմանը, բանվորները վճռականությամբ շարունակեցին գործադուրը:

Թիֆլիսում գտնվող ֆրանսիական հյուպատոսին հասցեագրված իր հաջորդ նամակում Պոլմարը գրում էր, որ գործադուրը սպառնալի շափեր է ընդունում և այն կարող է ամբողջ ձեռնարկության վերջնական փակման պատճառ դառնալ: Նա հյուպատոսին խնդրում էր ադմինիստրացիայի համար զենք գնել և խնդրամատուց լինել կովկասյան իշխանությունների առջև՝ Ալավերդում եղած կազակների թիվը ավելացնելու համար: Այս նամակում ևս դիրեկտորը շարունակում էր կրկնել, որ բանվորները լրիվ բավարարված են և գործադուրը միայն դրսի մարդկանց միջամտության արդյունք է<sup>58</sup>:

<sup>57</sup> «Հերոսական պայքարի վավերագրեր», կազմել և ծանոթագրել է Լ. Ս. Մելիքյանը, Ե., 1984, էջ 336—337:

<sup>58</sup> Մլի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 40, գ. 3:

Հարկավ, Պոլմարը աղավաղում էր իրականությունը գործադուլի գրգռապատճառների հարցում, դիտմամբ մոռացություն տալով, որ նախորդ գործադուլները և հատկապես մարտյան գործադուլը, դարձյալ աշխատանքի անհանդուրժելի պայմանների և դաժան շահագործման դեմ էին ուղղված և այն ժամանակ օտար մարդկանց միջամտության մասին խոսք չկար:

Չնայած այն բանին, որ բանվորների պահանջների մեծ մասը տնտեսական էր, այնուամենայնիվ ամբողջ գործադուլը քաղաքական բնույթ ուներ: «Չափազանց յուրօրինակ էր,—գրում է Վ. Ի. Լենինը,— տնտեսական ու քաղաքական գործադուլների միահյուսումը հեղափոխության ժամանակ: Կասկածից դուրս է, որ գործադուլների այդ երկու ձևի ամենասերտ կապն էր միայն, որ ապահովեց շարժման մեծ ուժը»<sup>59</sup>:

Սվ իսկապես, ամբողջ երկրում տիրող հեղափոխական շարժման վերելքի պայմաններում, ինչպես նաև զինված ապստամբության նախապատրաստության օրերին այսպես կազմակերպված և համառոտությամբ տարվող գործադուլները քաղաքական բնույթ էին ստանում: Այդ հանգամանքը նկատել էին նաև ցարական իշխանության ներկայացուցիչները:

«Կայարանում (Ալավերդու—Դ. Մ.) բազմության մեջ ճառեր էին արտասանվում այժմյան իրենց սոցիալական ծանր վիճակի մասին,— գրում է Բորչալուի նոր նշանակված գավառապետը Թիֆլիսի նահանգապետին: —Միտինգից հետո այս բանվորները որոշեցին գործադուլ հայտարարել և առաջարկեցին Վերին գործարանի բանվորներին, որոնց թիվը հասնում է երկու հազարի, միանալ իրենց, որը և նրանք իրագործեցին, նոյեմբերի 21-ի առավոտյան դադարեցնելով աշխատանքները: Նույն նոյեմբերի 21-ին ժամանելով գործարան, ես ականատես եղա բանվորների ընդհանուր գործադուլին, որն ուներ փառաբանական բնույթ»<sup>60</sup> (ընդգծումը մերն է—Դ. Մ.):

Գործադուլին մասնակցում էր մոտ 3000 մարդ: Ալավերդում այդ օրերին անընդհատ ցույցեր ու միտինգներ էին տեղի ունենում, որոնց ժամանակ ելույթ ունեցող հոետորները կոչ էին անում համառորեն շարունակելու սլաքարը, այն մինչև վերջ հասցնելու համար:

«Գործադուլի ժամանակ,—գրում էր Կովկասյան բոլշևիկների օրգան «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» թերթը,—քաղաքական բնույթի միտինգներ էին կազմակերպվում:

<sup>59</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 30, էջ 387:

<sup>60</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 34, գ. 1046, ք. 297:

Այստեղ բոլոր ազգերի բանվորները՝ հայերը, պարսկահայատակ թաթարները, վրացիները, ուսները կարմիր հեղափոխական դրոշի տակ լսում էին հոետորներին, որոնք խոսում էին բոլոր շորս լեզուներով: Բացատրվում էր բանվորական հարցի էությունը... քննադատվում ժամանակակից պետական ուժերը...»

Հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես միանաման պայմանները միացրել էին տարբեր ազգերի բանվորներին, ինչպես այս խուլ անկյունում բանվորները որոշեցին ինչ էլ որ լինի դիմանալ մինչև իրենց պահանջների բավարարումը»<sup>61</sup>:

Իսկ «Ընկերությունը» ձգձգում էր բանակցությունները բանվորական կոմիտեի հետ, սպառնալիքների, շանտաժի էր դիմում: Դիրեկտորը հայտնեց, թե ինքը ի վիճակի չէ կատարելու բանվորների պահանջները և նոյեմբերի 23-ից ստիպված պետք է լինի փակելու ձեռնարկությունը:

Սակայն բանվորները մնացին անդրգվելի: Նրանց վճռականությունը ի վերջո հաղթեց, դիրեկցիան համաձայնվեց առաջադրված պահանջներին և աննշան փոփոխություններով ընդունեց այն:

Նոյեմբերի 25-ին «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերությունը», հրապակարեց հատուկ հայտարարություն՝ ձեռնարկության մեջ աշխատանքային կարգի մասին<sup>62</sup>:

Այդ «հայտարարությունը» բանվորների համառ պայքարի և նրանց ձեռք բերած հաղթանակի արդյունքն էր: Նրանում արտահայտվել են բանվորների պահանջների գրեթե բոլոր գլխավոր կետերը:

Չաշխատելով այդ օրը ևս ու հանդիսավոր կերպով տոնելով իրենց հաղթանակը, բանվորները նոյեմբերի 26-ից անցան աշխատանքի: «Ինձ հարկադրեցին այնպիսի զիջումներով վերսկսել աշխատանքները, որ ստիպում է դադարեցնել մեր արտադրությունը ամենակարճ ժամանակամիջոցում»,—դառնորեն գանգատվում էր Պոլմարը Թիֆլիսի ֆրանսիական հյուպատոսին «հայտարարությունը» ստորագրելուց հետո<sup>63</sup>:

Այսպիսով, չնայած բոլոր դժվարություններին, իշխանություններին և ազմինիստրացիայի կողմից հարուցվող բազմաթիվ խոչընդոտներին, բանվորների վճռականությունն ու կազմակերպվածությունը ապահովեցին հաղթանակը: Սվ դեպի դեկտեմբեր՝ հեղափոխության զարգացման

<sup>61</sup> «Кавказский рабочий листок», 1905, № 6.

<sup>62</sup> Վրաց. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 34, գ. 1046, ք. 297:

<sup>63</sup> Միջ հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 40, գ. 4, ք. 20—21:

բարձրագույն աստիճան էր գնում Հայաստանի պրոլետարիատը, իբրև ակտիվում ունենալով նաև Ալավերդու հանքագործների այդ փայլուն գործադուլը:

Դեկտեմբերյան զինված ապստամբությանը նախորդած գործադուլային շարժումների մեջ նշանավոր էր Մոսկվայի փոստ-հեռագրատների ծառայողների համառուսական գործադուլը, որը սկսվեց նոյեմբերի 15-ին<sup>64</sup> և որին արձագանքեցին նաև Անդրկովկասում:

Կապի ծառայողների միութան կողմից նախապես զգուշացված լինելով սկսվելիք գործադուլի մասին՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի փոստ-հեռագրատների աշխատակիցները, ստանալով Մոսկվայի գործադուլի լուրը, նոյեմբերի 15-ին, երեկոյան դադարեցրին աշխատանքներն իրենց բաժանմունքներում:

Երևանի բաժանմունքի գործադուլը ղեկավարում էին տեղական բաժանմունքի աշխատակիցներից Սակվարելիձեն, Ասլամազովը, Անտոնովան (Մելիքյանց), Ռոդովիչը: Ինչպես գործադուլին նախորդող օրերին, այնպես էլ բուն գործադուլի ժամանակ Սակվարելիձեի, Ռազովիչի և Ասլամազովի տներում անընդհատ ժողովներ և հավաքներ էին տեղի ունենում: Այդ ժողովներում քննարկվում էին փոստ-հեռագրատների ծառայողների միութան ծրագիրը, ընթերցվում էին Մոսկվայից և Քիֆլիսից ստացված պրոկլամացիաները: Նրանք ի միջի այլոց, հեռագիր սովեցին Քիֆլիսի բաժանմունքին, որի հետ սերտ կապված էին և խնդրեցին Մոսկվայում տեղի ունեցող փոստ-հեռագրատների ծառայողների համառուսական համագումարին մեկնող Քիֆլիսի ղեկավարներին լիազորություններ տալ նաև Երևանի բաժանմունքի ծառայողների կողմից<sup>65</sup>:

Ալեքսանդրապոլում ևս նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին դադարեցրին աշխատանքները փոստ-հեռագրատան ծառայողները<sup>66</sup>: Կազմվեց գործադուլային կոմիտե, որի նախագահն էր Իզրայելովը, գանձապահը՝ Անանինը, քարտուղարը՝ Կոլելովը: Կոմիտեն բաժանմունքի ծառայողներից որոշ գումար էր հավաքել, որը և ուղարկեց Մոսկվա՝ գործադուլային կոմիտեի տրամադրության տակ:

Գործադուլավորները կազմակերպում էին քաղաքական բնույթի միտինգներ: Դատական ատյանի նրանց վերաբերող գործերում հիշա-

տակվում է դեկտեմբերի 13-ին տեղի ունեցած միտինգը, որը ղեկավարել էր Պյոտր Մերկուրովը: Այդ միտինգում ելույթ ունեցողներից հիշատակվում է նաև ուսանող Եվանգուլովը:

Ալեքսանդրապոլում տեղի ունեցած նոյեմբերյան-դեկտեմբերյան գործադուլների ժամանակ ընդհանրապես և փոստ-հեռագրատների ծառայողների գործադուլի կազմակերպման մեջ մասնավորապես շատ ակտիվ դեր էր խաղացել վերոհիշյալ Մերկուրովը, որի մասին ոստիկանութան փաստաթղթերում արձանագրված է. «արտասահմանյան համալսարանի նախկին ուսանող...»<sup>67</sup>:

Փոստ-հեռագրատների գործադուլներին մասնակցում էին նաև Կարսի բաժանմունքի ծառայողները:

Համառուսական այդ գործադուլը, որը տևեց մեկ ամսից ավելի, միախառնվեց դեկտեմբերյան զինված ապստամբությանը և ավարտվեց միայն նրա պարտությունից հետո:

Նեղափոխական իրադրության հասունացումը դեկտեմբերին երկիրն հասցրել էր զինված ապստամբության անհրաժեշտությանը: Առաջին ազդանշանը տվեցին Մոսկվայի բանվորները:

Ղեկավարվելով Մոսկվայի սովետի կողմից, որը գտնվում էր բոլշևիկների ազդեցության տակ, բանվորները դեկտեմբերի 9-ին ապստամբություն բարձրացրին և կովեցին մինչև դեկտեմբերի 18-ը:

Բանվորները կոչում էին հերոսաբար, սակայն կառավարությանը հաջողվեց, այլ վայրերից զորքեր փոխադրելով ձնշել ապստամբությունը և պարտության մատնել պրոլետարիատին:

Մոսկվայի բանվորների դեկտեմբերյան զինված ելույթներն արձագանք գտան երկրի մի շարք վայրերում, այդ թվում և Անդրկովկասում:

Սակայն, Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբությանը Անդրկովկասը արձագանքեց հիմնականում քաղաքական գործադուլային քարժուկներով: Մինչև հոկտեմբերյան գործադուլը Քիֆլիսում ստեղծվել էր Անդրկովկասյան երկաթուղիների միութան բյուրո, որը գտնվում էր բոլշևիկների ազդեցության ներքո: Այդ բյուրոն երկրամասում երկաթուղային երթևեկության վրա սահմանել էր իր վերահսկողությունը և ղեկավարում էր երկաթուղային բանվորների ու ծառայողների գործադուլային շարժումները: Դեկտեմբերի 9-ին, Մոսկվայում սկսված զին-

<sup>64</sup> «Высший подъем революции 1905—1907 гг.», (документы и материалы) М., 1955, с. 111—123.

<sup>65</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 27, գ. 207, թթ. 1—3, 27—28.

<sup>66</sup> Նույն տեղում:

<sup>67</sup> Հալիկան ՍՍՀ ԿԳՊԱ Քաղաքների ֆոնդ, գործ 165, թ. 116: Հիշյալ Մերկուրովը ապագայի սովետական նշանավոր քանդակագործն էր:

ված ապստամբության լուրն առնելով, ընդհանուր քաղաքական գործադու հայտարարեցին երկրի մի շարք երկաթուղային գծերի հետ նաև Անդրկովկասի երկաթուղագծերի բանվորներն ու ծառայողները<sup>68</sup>:

Գնացքների երթևեկությունը դադարեց նաև Արևելյան Հայաստանի բոլոր գծերում: Ինչպես Հոկտեմբերյան գործադուլների օրերին, այնպես էլ այժմ այս գործադուլին ամենակտիվ մասնակցություն ունեցան Ալեքսանդրապոլի երկաթուղային հանգույցի բանվորներն ու ծառայողները:

Ալեքսանդրապոլը միաժամանակ Արևելյան Հայաստանի երկաթուղային բանվորների գլխավոր կենտրոնն էր: Դեռևս հոկտեմբերյան համառուսական գործադուլի օրերին Ալեքսանդրապոլում ստեղծված գործադուլային կոմիտեն, որը ղեկավարում էին բոլշևիկները, նորից ակտիվացրել էր իր աշխատանքները: Կոմիտեն իր վերահսկողությունը հաստատեց ոչ միայն տեղի հանգույցի, այլև Ալեքսանդրապոլ—Կարս, Ալեքսանդրապոլ—Ուլուխանլու—Նրևան գծամասերի վրա:

«Գործին կցված հեռագրերից երևում է,—գրված է Ալեքսանդրապոլի գործադուլի մասնակիցների դատական արձանագրության մեջ,— որ Ալեքսանդրապոլի գործադուլային բյուրոն (կոմիտեն—Գ. Մ.) Ալեքսանդրապոլ—Կարս, Ուլուխանլու—Նրևան գծերում հանդիսանում էր կենտրոնական օրգան և որ վերջին երեք կայարաններում չկային ինքնուրույն կոմիտեներ, այլ կային միայն Ալեքսանդրապոլի կազմակերպության ներկայացուցիչներ...»<sup>69</sup>:

Դեկտեմբերյան օրերին Ալեքսանդրապոլի գործադուլային կոմիտեի օրինակով գործադուլային բյուրոներ (կոմիտեներ) ստեղծվեցին Արևելյան Հայաստանի ամբողջ երկաթուղագծերում:

Ոստիկանական հաղորդագրության մեջ նշվում է նաև Անի կայարանում ստեղծված այդպիսի բյուրոյի մասին, կազմված տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետևյալ անդամներից. Ալեքսանդր Բոկուրաձե, Վանո Բերիաշվիլի, Արշալույս Սուքիասյանց, Վասիլի Պապավա, որոնց բոլորին էլ հետագայում ձերբակալում են<sup>70</sup>:

Բազմակողմանի էր Ալեքսանդրապոլի գործադուլային կոմիտեի ծավալած գործունեությունը: Կոմիտեն աշխատանքից ազատել էր ցա-

<sup>68</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 26, գ. 6, ք. 3:

<sup>69</sup> Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 389, ք. 12:

<sup>70</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 26, գ. 3, ք. 155:

րական պաշտոնյաներին դեպոչում և կայարանում, նրանց փոխարեն բանվորների նշանակելով: Երկաթուղայինները կազմակերպել էին նաև զինված դրուժինաներ, դատարան, փոխօգնության դրամարկղ և այլն: Գործադուլային կոմիտեն վարձել էր հատուկ շենք, որտեղ տեղի էին ունենում միտինգներ, բանվորական հավաքներ: Այնտեղ նիստեր էր ունենում նաև կոմիտեին կից գործող դատարանը: Ալեքսանդրապոլի գործադուլային կոմիտեն, շեղութեանով պետական օրգաններին՝ վերածվել էր բանվորների հեղափոխական իշխանության օրգանի և փաստորեն իրականացնում էր բանվորների դեպուտատների սովետի ֆունկցիաներ:

Գործադուլի օրերին Ալեքսանդրապոլում բանվորները անընդհատ միտինգներ էին կազմակերպում, որտեղ ելույթ ունեցողները կոչ էին անում զենքի դիմել ցարական կարգերը տապալելու համար:

«Զսահմանափակվելով միտինգներով և ժողովներով, որոնք հրավիրվում էին հաճախ,—գրված է նրանց գործերում,—ընկերության (կոմիտեի—Գ. Մ.) անդամները աշխատում էին օգտագործել ժողովրդի ամեն մի պատահական հավաք արհեստանոցներում, կայարաններում և այլ տեղերում հեղափոխական պրոպագանդայի համար՝ կայսեր, թագավորող տան և կառավարության հեղինակությունը խախտելու համար»<sup>71</sup>:

Բացի բանավոր պրոպագանդայից, կոմիտեի անդամները տարածում էին նաև պրոկլամացիաներ և կոչեր: Զսահմանափակվելով միայն բանվորական շրջաններով, նրանք հեղափոխական աշխատանք էին կատարում նաև զորքերի մեջ: Բանվորների մոտ կատարված խուզարկությունների ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ պրոկլամացիաներ, այդ թվում «Ալեքսանդրապոլի սոցիալ-դեմոկրատական զինվորական կազմակերպության», «Կովկասյան միության» և «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության» կնիքներով: Կոմիտեի անդամներն այդ պրոկլամացիաները տարածում էին զորքի մեջ: Եռանդուն գործունեություն էր ծավալել նաև կոմիտեի դատարանը, որը բանվորների մեջ պահպանում էր հեղափոխական կարգապահությունը և միաժամանակ պատժիչ օրգան էր հանդիսանում գործադուլային կոմիտեի որոշումներին չենթարկվողներին: շտրեյկբրեխերների, դավաճանների և հակահեղափոխականների նկատմամբ: Այսպես, նա ստիպեց

<sup>71</sup> Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 389, ք. 13:

Ալեքսանդրապոլի երկաթուղային դպրոցի տեսուչ Պուզանովին ետ ընդունել դպրոցի պահակին, որին նա ազատել էր աշխատանքից: Դատարանը պատասխանատվության ենթարկեց նաև Կարայազ կայարանի պետ Կոլյանկովսկուն, բանվորների հետ կոպիտ վարվելու համար: Մի այլ նիստում դատարանը քննեց բանվոր Ստեփան Վիշնյակովի և նրա կնոջ գործը: Նրանց միջև եղած վեճերին վերջ տալու համար պարտագրեց Վիշնյակովին գույքը հավասարապես բաժանել կնոջ հետ: Բացի խրատելուց, նկատողություն անելուց և բոյկոտի ենթարկելուց, դատարանը կարող էր նաև մահապատժի ենթարկել, որը նա իրագործում էր պրովոկատորների և դավաճանների նկատմամբ<sup>72</sup>:

Ալեքսանդրապոլի կոմիտեի ամենակտիվ անդամներից էր Սարգիս Շահբազյանը, որ դեռևս հոկտեմբերյան գործադուլի օրերին կոմիտեի նախագահներից մեկն էր և նրա ստորագրությամբ բազմաթիվ հեռագրեր էին ուղարկվել զանազան վայրեր: «Գրավոր փաստերի արձանագրության հետագա ուսումնասիրությունից երևում է,—գրված է դատական արձանագրության նույն գործում,— Ալեքսանդրապոլի գործադուլային կոմիտեից եկող կարգադրությունները հեռագրերի և գրությունների ձևով մեծ մասամբ ստորագրվում էին Շահբազյանի կողմից, որպես «կուսակցության նախագահ», կամ «կոմիտեի նախագահ...»<sup>73</sup>:

Ս. Շահբազյանի գործում նշված է, որ նա հանդես էր գալիս միտինգներում, բազմամարդ ժողովներում, կոչ անում տապալել ցարին ու կառավարությանը և հաստատել հանրապետություն: Նա միաժամանակ թարգմանում էր ռուսերեն և վրացերեն ելույթ ունեցող հոստորների ճառերը այն հայ բանվորների համար, որոնք չէին տիրապետում այդ լեզուներին:

Գեկտեմբերյան օրերին Ալեքսանդրապոլում դրույթյան տերը քաղաքի բանվոր դասակարգն էր, հատկապես նրա միջուկը հանդիսացող երկաթուղային բանվորությունը: Բանվորական դրույթիսանները երկաթուղային հանգույցում և քաղաքում օրինավոր կարգ էին սահմանել և հսկում էին նրա անթերի կատարմանը:

Գործադուլի ժամանակ սակայն երկաթուղու երթևեկությունը լրիվ չէր դադարել: Գնացքները տեղափոխում էին գործադուլային կոմիտեի ներկայացուցիչներին, զորացրման ենթակա զինվորներին, երկաթուղային բեռներ, մթերքներ և սահմանափակ թվով մարդկանց, որոնցից

<sup>72</sup> Նույն տեղում, թ. 14:

<sup>73</sup> Նույն տեղում:

ստացված գումարները դրվում էին գործադուլային կոմիտեի տրամադրության տակ:

Իսկ ցարիզմի հրահրած հայ-ադրբեջանական ընդհարումների հետևանքով աղքատացած և սովի մատնված բնակչությանն ուղարկվող օգնությունը տեղափոխվում էր բուլոբոլին ձրի: «Ձ Ձ 330205, 291094 ալյուրով բեռնված վագոնները,—գրված է գործին կցված հեռագրի մեջ,—որոնք ուղարկվում են Ղամարլու և նշանակված են տուժած հայերի համար, տեղափոխվում են ձրի (ընդգծումը մերն է—Գ. Մ.)»<sup>74</sup>: ՌՍԴԲԿ դելեգատներ...»<sup>74</sup>:

Այս փաստերը վկայում են, որ գործադուլային կոմիտեն, ստանձնելով իշխանության օրգանի դեր, իրոք մտահոգված էր աշխատավորների շահերի պաշտպանության, նրանց անհետաձգելի կարիքների ապահովման հարցերով:

Կարսում ևս երկաթուղայինները պաշտոնից արձակել էին նախկին կայարանապետին և նրա փոխարեն բանվոր նշանակել: Կարսի գործադուլավորներն իրենց գործողությունները ամբողջովին համաձայնեցրել էին Ալեքսանդրապոլի գործադուլային կոմիտեի հետ և գործում էին վերջիններիս ցուցումներով: Ինչպես նշվել է վերևում, իրենց աշխատանքները դադարեցրել էին նաև Ուլուխանլու կայարանի բանվորները, իսկ Երևանի երկաթուղային հանգույցում հայտարարված գործադուլին իր համերաշխությունն էր հայտնել կայարանապետ Կորսակը՝ ինքնակամ դադարեցնելով աշխատանքը<sup>75</sup>:

Միայն Մոսկվայում սկսված զինված ապստամբության պարտությունից հետո ցարական կառավարությանը հաջողվեց ձնշել գործադուլային շարժումները երկրում: Ճնշվեցին նաև երկաթուղային բանվորների գործադուլները: Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում ու Հայաստանում երկաթուղիները հայտարարվեցին ռազմական դրույթյան մեջ: Գործադուլավոր երկաթուղայինների զգալի մասը ազատվեց աշխատանքից և նրանց նկատմամբ սկսվեց բռնությունների մի ամբողջ շրջան:

Արխիվային փաստաթղթերը հարուստ նյութ են տալիս մեզ Արևելյան Հայաստանում երկաթուղային գործադուլների մասին: Նրանց մասնակիցների դատական գործերից երևում է, որ ցարիզմը հատուկ

<sup>74</sup> Նույն տեղում, թ. 15:

<sup>75</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 26, գ. 6, թթ. 17, 74, 278, 387:

դաժանություններ հաշվեհարդար էր տեսնում իր ձեռքն ընկած երկաթուղայինների հետ<sup>76</sup>:

«Դեկտեմբերը բնական և անխուսափելի ավարտն էր այն մասնաշաղկապ ընդհարումների ու ճակատամարտերի,—գրում է Վ. Ի. Լենինը,—որոնք հասունացել էին երկրի բոլոր ծայրերում 12 ամսվա ընթացքում<sup>77</sup>: Ապստամբության պարտությունը սկսվեց հեղափոխության երկրորդ տեղատվության ու նահանջի շրջանը: Պրոլետարիատը նահանջում էր, սակայն նա նահանջում էր աստիճանաբար, մարտեր տալով:

Չնայած պրոլետարիատի 1905 թ. դեկտեմբերյան գրոհը ետ էր մղվել, պրոլետարիատի դիմադրողական կորույքը, սակայն չէր ընկճվել: Բանվորական շարժումները շարունակվեցին նաև 1906 և 1907 թթ.:

1906—1907 թվականների Ռուսաստանում գործադուլային շարժումների համար բնորոշ էր այն, որ նրա մեջ էին ներգրավվում արդյունաբերության նաև ոչ առաջատար ճյուղերի բանվորներ, որոնք համեմատաբար ուշ էին ոտքի ելնում ու թափ առնում, քան ասենք մետաղագործները: Արևելյան Հայաստանում 1906—1907 թթ. Ալավերդու և Ղափանի հանքագործների, Շուստովի և Սարաջևի գործարանների բանվորներից զատ, մասսայական հեղափոխական շարժումների մեջ էին մխրճվում նաև մանր արդյունաբերական ձեռնարկությունների, արհեստանոցների, տպարանների բանվորները, գործակատարներն ու հասարակական վայրերում ծառայող անձնակազմը և այլն: Ընդ որում նրանց պահանջները հիմնականում տնտեսական բնույթ ունեին: Հայտնի է, որ հեղափոխության ժամանակ բանվորական համեմատաբար հետամնաց խավերի համար արթնացման ազդակ է հանդիսանում տնտեսական պայքարը, նրանց անմիջական պահանջների առաջադրումը:

Օգտվելով բանվորների և գյուղացիների վրա ցարիզմի հարձակումից, Ալավերդու ձեռնարկատերերն արդեն 1905 թ. դեկտեմբերի վերջերից սկսեցին ետ վերցնել այն դիջումները, որ ձեռք էին բերել բանվորները գործադուլային համառ պայքարի ընթացքում:

Բանվորները կապիտալիստների այդ լկտի վարմունքից զայրացած, սկսեցին բացարձակ դժգոհություն արտահայտել և շնացած կառավարության գործադրած դաժան ռեպրեսիաներին ու սևհարյուրակային տեռորին, մի շարք ելույթներ ունեցան:

1906 թ. հունվարի 19-ին Բորչալուի գավառապետը զեկուցում էր

<sup>76</sup> Նույն տեղում, գ. 3, թթ. 126—130:

<sup>77</sup> Վ. Ի. Լենին, Եժ, հ. 19, էջ 453—454:

Թիֆլիսի նահանգապետին, որ Ալավերդում դրությունը հանգիստ չէ և ինքը, տեղական ոստիկանական ուժերը բավարար չհամարելով, ավելացրել է նրանց թիվը կազակային մի հիսնյակով: Գավառապետը հայտնում էր միաժամանակ, որ ընդհանրապես, ներկա պահին, ինքը ի վիճակի չէ երաշխավորել հանգստությունը, ուստի գրում էր. «...Գավառում ընդհանուր հուզումներ սկսվելու դեպքում, իմ վրայից վերցնում եմ պատասխանատվությունը, ինչպես գործարանային գույքի, այնպես էլ գործարանի ծառայողների կյանքի անվտանգության համար»<sup>78</sup>:

Չնայած երկրում մոլեգնող ռեակցիային, մի շարք քաղաքների աշխատավորության հետ միասին, Մայիսի մեկը որոշեց տոնել նաև Երեվանի աշխատավորությունը:

Դեռ ապրիլի վերջերին հրատարակվել էին ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության պրոկլամացիաները հայերեն, ռուսերեն, վրացերեն լեզուներով, որոնց մեջ բացատրվում էր պրոլետարիատի միջազգային տոնի նշանակությունը և կոչ էր արվում տոնելու Մայիսի մեկը: Ի նշանավորումն պրոլետարիատի միջազգային համերաշխության տոնի, Երևանում գործադուլ հայտարարեցին Սարաջևի և Շուստովի գործարանների, կաշեգործարանի և մի քանի մանր արհեստանոցների բանվորները, ինչպես և «Լույս» տպարանի աշխատակիցները:

Մայիսի մեկին քաղաքում երևացին կարմիր դրոշներ: Թեև բանվորներին սարսափեցնելու համար իշխանությունները նախօրոք քաղաքի զանազան մասերում զորքեր էին կենտրոնացրել, այնուամենայնիվ, տոնակատարությունը տեղի ունեցավ և անցավ քաղաքական բարձր մակարդակով<sup>79</sup>:

Մայիսի վերջին Երևանում գործադուլ հայտարարեցին «Ռուսական ակցիոներական ընկերության բանկի» Երևանի բաժանմունքի աշխատակիցները: Նրանք սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ մշակեցին և ընկերության տեղական գործակալին հանձնեցին ութ կետից բաղկացած իրենց պահանջները: Նրանք պահանջում էին. 1. կիրակի օրերը անպայման հանգստանալ, 2. աշխատակիցներին ընդունել և ազատել միայն ընկերների համաձայնությամբ, 3. քաղաքավարի վերաբերմունք և այլն:

<sup>78</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՍԱ, ֆ. 34C, գ. 1046, թ. 333:

<sup>79</sup> «Կայծ», 1906, № 12:



Տեսնելով, որ աշխատակիցների գործադուլը համերաշխությամբ շարունակվում է, ընկերության ղեկավարները համաձայնվեցին կատարել նրանց բոլոր պահանջները: Արձագանքելով գործադուլին, բուլղերիկյան «Կայծ» թերթը շնորհավորեց այս հաղթանակը և նրանց նորանոր հաջողություններ ցանկացավ<sup>80</sup>:

Մայիսի վերջերից Ալեքսանդրապոլում գործադուլ հայտարարեցին պայտահատման արհեստանոցների մոտ 200 բանվոր: Գործադուլի պատճառը տնտեսական անտանելի պայմաններն էին և 14-ժամյա աշխատանքային օրը: Հունիսի 6-ին գործադուլ հայտարարեցին նաև քաղաքի դերձակ-բանվորները: Սակայն տերերին հաջողվեց ձախողել այս գործադուլները:

Ավելի հաջող էր կոշկակար բանվորների հունիսի 8-ին, նույնպես տնտեսական հողի վրա, հայտարարած գործադուլը: Բանակցություններից հետո ձեռնարկատերերի և բանվորների միջև կնքվեց հետևյալ համաձայնությունը:

1. Աշխատանքային օրը սահմանել 12 ժամ:
2. Աշխատավարձը ավելացնել 10%-ով:
3. Աշակերտներին հավասար իրավունք տալ բանվորների հետ իրենց ժամերը տնօրինելու գործում:
4. Հիվանդացած բանվորների բուժումը պետք է լինի վարպետի հաշվին:
5. Բանվորներին հեռացնելու դեպքում վճարել մեկ ամսվա աշխատավարձը:
6. Քաղաքավարի վերաբերվել բանվորների և աշակերտների հետ և այլն<sup>81</sup>:

Հուլիսի 3-ին գործադուլ հայտարարեցին նաև Ալեքսանդրապոլի փոխադարձ վարկի ընկերության ծառայողները, որոնք իրենց վարչությանը ներկայացրին հետևյալ պահանջները.

1. Համաձայն հաստատված նախահաշվի վճարել ծառայողների աշխատավարձի ավելացման մասը 1906 թ. հունիսի 1-ից:
2. Անհրաժեշտության դեպքում ծառայողներին վճարել ավանս երկու ամսվա շափով:
3. Ծառայողներին աշխատանքից հեռացնել կարելի է միայն ըն-

<sup>80</sup> Նույն տեղում, № 23:

<sup>81</sup> Նույն տեղում, № 35:

կերական դատարանի գիտություն, հակառակ դեպքում հեռացվածը պետք է ստանա երեք ամսվա աշխատավարձ:

4. Ծառայողների թիվը ավելացնելու դեպքում հարցնել մյուս աշխատակիցների համաձայնությունը:

5. Քաղաքավարի վերաբերվել ծառայողների հետ:

6. Գործադուլի օրերի համար վճարել լրիվ աշխատավարձը և այլն<sup>82</sup>:

Այդ օրերին - ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը, որ ղեկավարում էր գործադուլները, թուցիկներ տպագրեց և տարածեց քաղաքում՝ կոշ անելով աշխատավոր մյուս խավերին ևս միանալու նրանց պայքարին: Այսպես, փոխադարձ ընկերության ծառայողների հուլիսի 3-ի գործադուլի կապակցությամբ բաց թողնված պրոկլամացիայում, ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը, քաղաքի աշխատավորությունը դիմելով, կոշ էր անում ավելի ջանադիր հետևել Ռուսաստանի քաղաքների բանվորների օրինակին: Պրոկլամացիայի հեղինակները հորդորում էին տոկունություն հանդես բերելու և բացատրում էին, որ աշխատավորների ձեռք բերած յուրաքանչյուր հաղթանակը քայլ է դեպի համայն աշխատավորության ազատագրությունը:

Հուլիսի սկզբներին Երևանում գործադուլ հայտարարեցին Ա. Հակոբյանի տպարանի բանվորները, ի նշան բողոքի՝ իրենց ընկերներից մի քանիսին աշխատանքից ազատելու համար: Սակայն տպարանատիրոջը հաջողվեց երկպառակություն առաջացնել բանվորների մեջ և շտրեյկը բեխերների ու դաշնակների օգնությամբ հարկադրել վերսկսել աշխատանքը:

Հարկ է նշել նաև այն երևույթը, որ դաշնակցականներն այդ շրջանում սկսել էին «մասնակցել» գործադուլներին: Եթե 1905 թ. և հեղափոխության նախորդած տարիներին դաշնակցականները ուղղակի ձնշում էին գործադուլները, ազգային դավաճան համարելով ամեն մի հայ հեղափոխականի կամ գործադուլավորի, ապա 1906 թ., երբ հանդես եկավ «Կոմկասյան նախագիծը», նրանք վճռականորեն փոխեցին իրենց տակտիկան: Չսահմանափակվելով միայն «ազգային ինքնապաշտպանության» գործերով, դաշնակցականները սկսեցին բացահայտորեն ընդունել ոչ միայն «Ռուսահայ դատի» գոյությունը, այլև նույնիսկ հանդես գալ «աշխատավոր ժողովրդի», բանվոր դասակարգի անունից, որպես նրանց «շահերի պաշտպան» ասոցիալիստական կու-

<sup>82</sup> Նույն տեղում:

սակցութուն»։ Եվ որպես «սոցիալիստներ» էլ սկսեցին միջամտել որոշ գործադուլների։ Այսպես, Երևանում դաշնակցականները մասնակցեցին Ա. Հակոբյանի տպարանի բանվորների գործադուլին և հետո իրենց նկատառումներով լքեցին բանվորներին։

Անդրադառնալով այս գործադուլին, բոլշևիկյան «Նոր խոսք»-ը համառուսական պրոլետարիատի անունից անարգանքի սյունին գամեց դաշնակներին և այն բանվորներին «...որոնք իրենց շահի համար ստորաբար դավաճանեցին իրենց մյուս ընկերներին»<sup>83</sup>։

Դաշնակցականների քաղաքական մարզանքները չվրիպեցին նաև Ստ. Շահումյանի ուշագրությունից։ «Կալօթի» հունիսյան համարներում լույս տեսավ նրա հոդվածը «Դաշնակցությունը Պրոլետարիատի ղեկավար» վերնագրով<sup>84</sup>։ Հոդվածում Շահումյանը մերկացրեց դաշնակցությանը և ցույց տվեց, որ քաղաքական սկզբունքներից զուրկ այդ կուսակցությունը, բանվորական շարժման հզոր վերելքի առաջ անկարող լինելով այլևս սահմանափակվել միայն «տաճկահայ դատով», որի քարոզն էր 15 տարի նա անընդհատ անում, դառնում է նաև «բանվորական կուսակցություն», որպեսզի, քողարկվելով այդ անվամբ, փորձի անջատել հայ պրոլետարիատին համառուսական շարժումից։ Այդպիսի նպատակ էր հետապնդում դաշնակցությունը, երբ նա միացավ 1906 թ. հունիսի 22-ին Թիֆլիսում տեղի ունեցած ընդհանուր գործադուլին, որը հայտարարված էր ի նշան բողոքի Մինգրեկյան գնդի 27 զինվորներին մահապատժի ենթարկելու դեմ։

Ստ. Շահումյանը նշում էր, որ դաշնակցականների հանդգնությունը այն աստիճանի է հասնում, որ գործադուլի ավարտից հետո, հայտարարում էին, թե «Պրոլետարիատի ղեկավար երկու խոշոր կազմակերպությունները, Ն. Ն. դաշնակցությունը և սոցիալ-դեմոկրատիան են ղեկավարել գործադուլը»<sup>85</sup>։

1906 թվականին Հայաստանում տեղի ունեցած գործադուլների մեջ ամենախոշորն Ալավերդու բանվորների օգոստոսյան ելույթն էր։ Ինչպես նշել ենք վերևում, արդեն հոնավար ամսից, Ալավերդում հուզումներ էին տեղի ունենում։ Բանվորները խիստ զայրացած էին կապիտալիստների ուխտադրությունից, որոնք օգտվելով հեղափոխության տեղատվությունից, սկսել էին ետ վերցնել իրենց արած զիջումները։

<sup>83</sup> «Նոր խոսք», 1906, № 13։

<sup>84</sup> Ստ. Շահումյան, ԵԼԺ, հ. 1, Ե., 1975, էջ 224։

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 227։

Տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությանը բանվորները, պատշաճ կերպով նախապատրաստվելով, օգոստոսի 2-ին Ալավերդում ընդհանուր գործադուլ հայտարարեցին։ Այդ գործադուլին մասնակցում էր 4500 մարդ։ Կազմվել էր գործադուլային կոմիտե, նախորդ՝ 1905 թ. նոյեմբերյան գործադուլի օրերին ստեղծված կոմիտեի անդամների, ինչպես նաև այլ բանվորների մասնակցությամբ։ Գործադուլային կոմիտեի մեջ մտնում էին՝ Ս. Փիրուզյանը, Վ. Զելիձեն, Հ. Մանթաշյանը, Մ. Աղամյանը, Ս. Վերմիշյանը, Ալ. Խաչիկը և ուրիշներ։ Գործադուլային կոմիտեի աշխատանքներին ակտիվ մասնակցում էին նաև Սանահին կայարանի բոլշևիկյան կազմակերպության մի քանի անդամներ։

Կոմիտեն անցյալի օրինակով կազմեց բանվորների պահանջները, բաղկացած 18 կետից և ներկայացրեց «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերության» նոր ղերեկտոր Գրոյին։

Գործադուլային կոմիտեի և ֆրանսիական «Ընկերության» միջև բանակցություններ սկսվեցին։ Սակայն «Ընկերությունը» ձգձգում էր բանակցությունները, փորձելով միաժամանակ պրովակացիոն միջոցներով ներսից խափանել գործադուլը։ Այսպես, օրինակ, գործարանի ադմինիստրացիան հավաքագրեց Ալավերդու փայտտեր-բանվորներից (բանվորական արիստոկրատներ) 147 մարդու և նրանց ստորագրությամբ խնդրագիր ներկայացվեց «Ալավերդու պղնձահանքերի գերազնիվ ղերեկտոր պարոն Գրոյին»<sup>86</sup>։ Հիշյալ խնդրագրով նրանք հանձն էին առնում՝ 1. ոչ մի պահանջ չդնել ղերեկցիայի առաջ, 2. հրաժարվել առանց ղերեկցիայի գիտության ժողովներին մասնակցելուց, 3. բանվորների մեջ մի որևէ երևույթ նկատելիս անմիջապես հայտնել ղերեկցիային, 4. ամեն կերպ պահպանել գործարանի շահերը, 5. անմիջապես անցնել աշխատանքի։

Խնդրագիրն, այնուհետև, բովանդակում էր նման այլ ստորացուցիչ պարտավորություններ։

Գործադուլը ձախողելու համար ադմինիստրացիան ղիմեց նաև զանազան նացիոնալիստական և անարխիստական տարրերի օգնությանը, որոնք պրովակացիոն փորձեր կատարեցին բանվորների մեջ անհամաձայնություններ առաջացնելու համար։

Ալավերդի ժամանեցին նաև Թիֆլիսի պարսկական հյուպատոսի ներկայացուցիչը և նահանգապետի օգնական գնդապետ Զոլոտարյովը։

<sup>86</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Ե., 1981, էջ 386—387։

Ստ. Շահումյանի խմբագրությանը լույս տեսնող բուլղարական «Նոր խոսք» թերթը, որը լայնորեն մեկնաբանում էր գործադուլի ընթացքը, այդ կապակցությամբ գրում էր. «Հանքերի վարչությունը խոսք էր տվել բանվորների ներկայացուցիչներին, որ չի դիմի բռնի ուժի և ռեպրեսիաների, բայց տեսնելով բանվոր մասսայի տոկունությունը, համերաշխությունը և հաստատ կամքը կռվել մինչև հաղթանակ տանելը, սկսեց դիմել պրովոկացիայի, սպառնալով սվիններով և կազակի մրտրակով: Այս օրերին այնտեղ են հավաքվել գավառային իշխանությունները, Զոլոտարյովը, պարսից կոնսուլի օգնականը և այլն»<sup>87</sup>:

Չնայած այս բոլորին, գործադուլը շարունակվում էր: Օգոստոսի 14-ին նահանգապետին ուղարկած հեռագրում գնդապետ Զոլոտարյովը հայտնում էր, որ բանվորներն աշխատանքները չեն վերսկսում և միաժամանակ հրաժարվում են հաշիվները մաքրելուց և հեռանալուց, ուստի ինքը զորքեր է հրավիրում Ալավերդի<sup>88</sup>:

Գործադուլը ղեկավարելու համար կովկասյան բուլղարական բյուրոն Ալավերդի գործուղեց նախ Սուրեն Սպանդարյանին, ապա Ստեփան Շահումյանին: Բանվորներին օգնելու համար Թիֆլիսից եկան նաև Գաբո Սադաթյանը և Ասատուր Կախոյանը:

Գործադուլի օրերին Ալավերդու բանվորներին իրենց համերաշխությունն էին ցույց տալիս Մեծ Ղարաքիլիսայի (Կիրովական) աշխատավորները: Գործադուլավորներին նյութապես օգնելու համար դրամական միջոցներ ձեռք բերելու գործը կազմակերպեց Հայկ Ազատյանը, իսկ հավաքված գումարը Ալավերդի՝ գործադուլավորներին հասցրեց այն ժամանակ Մեծ Ղարաքիլիսայում գտնվող Նուշիկ Զավարյանը<sup>89</sup>:

Գործադուլը տևեց մոտ մեկ ամիս:

Տեսնելով բանվորների վճռականությունը, իշխանությունները դիմեցին ռազմական ուժի օգնությանը:

Գնդապետ Զոլոտարյովը օգոստոսի վերջերին Զալաուղլիից ժամանած զինվորների վաշտով, կազակային հարյուրակով, գնդացիներով ու լեռնային երկու թնդանոթով պաշարեց Ալավերդին: Շուրջվերից էլ նրանց օգնության եկավ գավառապետի օգնականը՝ ոստիկանների մի ջոկատով:

Զոլոտարյովը վերջնազիր ներկայացրեց բանվորներին՝ սպառնա-

<sup>87</sup> «Նոր խոսք», 1906, № 3:

<sup>88</sup> «Հերոսական պայքարի վավերագրեր», էջ 343:

<sup>89</sup> «Նոր խոսք», 1906, № 3:

լով աշխատանքները չվերսկսելու դեպքում քարուքանդ անել Ալավերդին:

Զորքի ճնշման տակ բանվորները ստիպված տեղի տվեցին և օգոստոսի 29-ին գործադուլը դադարեց:

Իշխանությունները և գործարանի ադմինիստրացիան հաշվեհարդար սկսեցին բանվորների հետ: Կապիտալիստները գործադուլավորներից վրեժ լուծելու համար դիմեցին նաև մասսայական լոկաուտի: Դիրեկցիայի ներկայացուցիչները հայտարարեցին, թե «Ընկերությունը» անանկուցել է, ուստի նրանք փակելու են ձեռնարկությունը: Այդ պատրվակով նրանք աշխատանքից ազատեցին մոտ 2500 բանվորի՝ գրվալավորապես պարսկահպատակ ադրբեջանցիներին: Այդ բանվորների հետ նրանք վարվեցին ամենատարղի կերպով: «Ընկերությունը» բանվորներին չվճարեց ոչ միայն նրանց աշխատավարձը, այլև այն շինությունների՝ բարաքների արժեքը, որ տարիների ընթացքում արյուն ու քրտինք թափելով, իրենց սեփական միջոցներով կառուցել էին նրանք<sup>90</sup>:

Բանվորների բողոքները հաշվի չառնվեցին: Անտարբեր մնաց այդ բողոքների նկատմամբ նաև պարսից հյուպատոսը:

Սակայն գործադուլի ընթացքում բանվորների կողմից թույլ տրվեցին սխալներ: Երկարատև գործադուլին դիմանալու համար անհրաժեշտ էր հիմնովին նախապատրաստվել և ապահովել նյութական-ֆինանսական ավելի լայն միջոցներ, քան ի վիճակի եղան անել նրանք: Ուստի, երբ հավաքված դրամը և մթերքները սպառվելու վրա էին, բանվորները շրջահայեցողություն ցուցաբերելով, պետք է համաձայնվեին գործարանատերերի կողմից սկզբում տրվող զիջումներին և վերսկսեին աշխատանքները, մանավանդ, որ ակնառու էր դառնում զորքի միջամտության հնարավորությունը: Բայց բանվորները չհամաձայնվեցին ոչ մի զիջման և չնայած արհուլթյան և հաստատակամության հերոսական օրինակներ ցույց տվեցին, այնուամենայնիվ՝ տանով տվեցին:

Ստ. Շահումյանը, գործադուլը ճնշվելու հենց առաջին օրը՝ օգոստոսի 30-ին թղթակցություն ուղարկեց, «Նոր խոսքին», «Անհաջող գործադուլ»<sup>91</sup> խորագրով: Անդրադառնալով գործադուլին Շահումյանը գրում էր. «Բանվորների տրամադրությունը չափազանց ընկճված է: Նրանք չէին սպասում այս տեսակ պարտություն: Բայց պարտությունը, զժբախտաբար, սպասելի էր, ինչպես նկատեցինք վերը, և մինչև իսկ

<sup>90</sup> Ստ. Շահումյան, ԵԺ, հ. 1, էջ 328—330:

<sup>91</sup> Նույն տեղում, էջ 328:

անխուսափելի: Դրա պատճառը ամենից առաջ բանվորական մասսայի գիտակցության (ընդգծումը հեղինակինն է—Գ. Մ.) պակասությունն էր...: Եթե մասսան ավելի գիտակից լիներ և լսեր Թիֆլիսի ս. գ. կազմակերպության ներկայացուցիչներին և տեղական գործադուլը դեկավարող ս.—գ. կազմակերպության անդամներին, երբ նրանք առաջարկում էին համաձայնվել այն խոշոր գիշումների հետ, որ անում էր գործարանի ադմինիստրացիան առաջին բանակցությունների ժամանակ և վերջացնել գործադուլը, այն ժամանակ բանվորները շատ խոշոր հաղթություն տարած կլինեին և գործադուլը մեծ նշանակություն կունենար բանվորական շարժման և սոցիալ-դեմոկրատական գործի հաջողության տեսակետից»<sup>92</sup>:

Խոսելով 1906—1907 թթ. տեղի ունեցած գործադուլային շարժումների մասին, վ. Ի. Լենինը ասում էր, որ դրանց նշանակությունն այն է, որ կասեցնում էին ընդհանրապես հակահեղափոխության հարձակումը աշխատավորական մասսաների վրա և, եթե բանվորները պակաս ակտիվություն ցուցաբերեին այդ տարիներին, ինչպես նաև 1905 թվականին, ապա հունիսերեքյան հեղաշրջումը ավելի շուտ տեղի կունենար և հեղափոխության ձեռք բերած նվաճումները ավելի շուտ ետ կխլվեին<sup>93</sup>:

Այս տեսանկյունից գնահատելով Ալավերդու բանվորների օգոստոսյան ելույթը, պետք է ասել, որ շնայած գործադուլի անհաջող վախճանին, այն Հայաստանի բանվոր դասակարգի մղած հերոսական պայքարի կարևոր դրվագներից մեկն է:

Ալավերդու բանվորների պայքարին գործադուլային շարժումներով արձագանքեցին նաև այլ վայրերի բանվորները: Օգոստոսի 10-ին Ալեքսանդրապոլում գործադուլ արեցին հացթուխ բանվորները: Գործադուլը ձախողելու համար հացի փոփ տերերը, համաձայնության գալով այլ ձեռնարկատերերի հետ, աշխատանքից ազատել տվեցին վերջիններս մոտ ծառայող մի խումբ մարդկանց, որոնք կասկածում էին հացթուխ բանվորներին գործադուլ դրդելու մեջ<sup>94</sup>:

Օգոստոսի 11-ին գործադուլ հայտարարեցին Ալեքսանդրապոլ քաղաքի փոքրի և գինեվաճառանոցների բանվորներն ու գործակատարները, պահանջելով աշխատավարձի ավելացում, տերերի հաշվին տա-

րեկան մեկ ամիս արձակուրդ, աշխատանքային օրվա կրճատում, կիրակի և տոն օրերին հանգստանալու իրավունք և այլն: Այս մասին գեկուցելով Կովկասի ոստիկանապետին, Երևանի նահանգապետը հայտնում էր, որ միջոցներ են ձեռնարկված հայտնաբերելու գործադուլի ղեկավարներին:

Նույն օրերին, տնտեսական հողի վրա, տեղի ունեցավ նաև Ալեքսանդրապոլի քաղաքային հիվանդանոցի ծառայողների գործադուլը<sup>95</sup>: Օգոստոսի 21-ին Երևանում գործադուլ հայտարարեցին քաղաքի հյուանների և խառատների բոլոր ենթավարպետները և աշակերտները: Նրանք ներկայացրին հետևյալ պահանջները.

1. բանվորական օրը սահմանափակել, դարձնելով 9 ժամյա.
2. ավելացնել աշխատավարձը 20% -ով.
3. քաղաքավարի վերաբերմունք տերերի կողմից և այլն:

Գործադուլավորների պահանջները բավարարվեցին, և նրանք անցան աշխատանքի<sup>96</sup>:

1906 թ. օգոստոսի 21-ին բռնկվեց Թիֆլիսի առևտրական բանկի Երևանի բաժանմունքի գործադուլը: Գործադուլավորները առաջադրեցին մի շարք պահանջներ: Նրանց հետ բանակցություններ վարելու համար Թիֆլիսից Երևան եկան բանկի կառավարիչի ներկայացուցիչները, որոնք փորձեցին խաբեության և խոստումների միջոցով ստիպել վերսկսելու աշխատանքները, սակայն նրանց միջև համաձայնություն չկայացավ: Ծառայողները պնդեցին իրենց պահանջների վրա և շարունակեցին գործադուլը:

Գործադուլի օրերին ՌՄԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն հրատարակեց մի թուղթիկ՝ ուղղված «Բոլոր քաղաքացիներին»<sup>97</sup>: Այդ թուղթիկի մեջ բերված էին ծառայողների պահանջները և հասարակությանը կոչ էր արվում օժանդակություն ցույց տալ գործադուլավորներին: Դիմելով Երևանի բաժանմունքի ծառայողներին, թուղթիկը առաջարկում էր շնահանջել իրենց պահանջներից: Թուղթիկը միաժամանակ կոչ էր անում Թիֆլիսի բանկի ծառայողներին համերաշխություն ցույց տալ Երևանի իրենց ծառայող-ընկերներին, բացատրելով, որ միայն համերաշխու-

<sup>92</sup> Գ. Հաբուշյանյան, Հեղափոխական շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Ե., 1956, էջ 109:

<sup>93</sup> Մ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 19, էջ 456:

<sup>94</sup> «Հեղափոխական կոչեր և թուղթիկներ», Ե., 1960, էջ 265—267:

<sup>92</sup> Նույն տեղում, էջ 329—330:

<sup>93</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 19, էջ 456:

<sup>94</sup> «Նոր խոսք», 1906, № 1:

Քյամբ նրանք կարող են ստիպել բուրժուաներին հարգել իրենց պահանջները<sup>96</sup>։

Գործադուլը տևեց մոտ երեք ամիս։ Չնայած գործադուլավորների ծանր դրությունը, նրանք համառորեն շարունակում էին պայքարը։ Այն ժամանակ տերերին օգնության եկան Երևանի վաճառականները և նրանց հետ կապված գաշնակցականները։ Գաշնակցականների թիֆլիսի ղեկավարներից մի քանիսը հենց այդ բանկի փայտաբերից էին, ուստի սեփական գրպանին սպառնալիք նկատելով, կարգադրություն արեցին Երևանի իրենց ներկայացուցիչներին, որոնք և ահաբեկման ենթարկելով ծառայողներին, ստիպեցին նրանց գործի անցնելու, իսկ ավելի անհաշտները հեռացվեցին աշխատանքից<sup>99</sup>։

Սեպտեմբերի 4-ին Երևանում գործադուլ հայտարարեցին փակահազորժ և դարբին ենթավարպետները։ Նրանք ներկայացրին իրենց տնտեսական վիճակը բարվոքող մի շարք պահանջներ։ Կովկասի փոխարքային ներկայացված զեկուցման մեջ նշվում էր, որ այս գործադուլը կազմակերպել են քաղաքի հեղափոխական կազմակերպությունները<sup>100</sup>։

Սեպտեմբերի սկզբներին Երևանում գործադուլ հայտարարեցին նաև քաղաքի շորս տպարանների բանվորները։ Նրանց առաջադրած պահանջները տնտեսական բնույթի էին. դրանք աշխատավարձի ավելացման, աշխատանքային օրը 9 ժամյա դարձնելու, աշակերտ ընդունելիս բանվորների հետ համաձայնեցնելու մասին էին։

Գործադուլը, որը տևեց մեկ շաբաթ, ավարտվեց բանվորների պահանջների զգալի մասի բավարարումով։ Մասնավորապես կատարվեց աշխատավարձի ավելացման պահանջը։ Տպարանական բանվորների գործադուլի կազմակերպման մեջ ակտիվ դեր էր կատարել թիֆլիսի բնակիչ Պյոտր Կուլմիչ Պիպտիևը, որը սեպտեմբերի 19-ին ձերբակալվեց և նահանգապետի կարգադրությամբ տեղափոխվեց Ալեքսանդրապոլի բանտը<sup>101</sup>։

1906 թ. Երևանում ծավալված գործադուլային շարժումների մեջ նշանակալի էր Սարաջևի ռեկտիֆիկացիոն և կոնյակի գործարանների բանվորների նոյեմբերի սկզբներին հայտարարած գործադուլը, որն

<sup>96</sup> Նույն տեղում։

<sup>99</sup> «Революционное движение...», с. 310—315.

<sup>100</sup> Մի վրացական մասնագետի կուսարիիվ, ֆ. 2, գ. 112։

<sup>101</sup> Վրաց. ՍՄԷ ԿՊՊԱ, ֆ. 2, գ. 59, թ. 5։

ընդմիջումներով տևեց մոտ երեք ամիս։ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության ղեկավարությունը դադարեցնելով աշխատանքները և չհամաձայնվելով Սարաջևի առաջարկած պայմաններին, բանվորները համաբաշխությամբ շարունակեցին գործադուլը մինչև վերջ և 1907 թ. հունվարին հաղթանակի հասան։ Բանվորների և գործարանատիրոջ միջև կնքվեց համաձայնագիր, որը բաղկացած էր 13 կետից և ամբողջովին տպագրվեց Երևանում լույս տեսնող «ФАКТЫ» սոցիալ-դեմոկրատական թերթում<sup>102</sup>։

Սարաջևի գործարաններում բռնկված այս գործադուլը հաղթանակով ավարտվեց, որովհետև լավ էր նախապատրաստված։ Մինչև այդ էլ նրանց բանվորները մի շարք գործադուլներ էին արել և կազմակերպված պայքարի բավականին փորձ ունեին։

Չնայած գործադուլը տնտեսական բնույթի էր, այնուամենայնիվ, բանվորների պահանջների մեջ իրենց դրությունը բարելավող արմատական շատ կետեր կային. 8 ժամյա բանվորական օր սահմանելու, ձրի բժշկական օգնություն ստանալու, մահվան և անդամալուծության դեպքում ապահովագրվելու, միջնորդ դատարան հիմնելու և այլ կարգի պահանջները ցույց են տալիս, որ բանվորների քաղաքական-գիտակցական մակարդակը բավականին բարձր էր։

Գործադուլի հաջող ավարտը միաժամանակ վկայում էր այն քաղաքական-կազմակերպական աշխատանքների մասին, որ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը ծավալել էր 1906—1907 թվականներին քաղաքի աշխատավորության և մանավանդ գործարանային բանվորության շրջաններում։

1906 թ. դեկտեմբերին Երևանում գործադուլ հայտարարեցին նաև Ֆաշեգործարանի բանվորները, զինու խանութների գործակատարները և այլ ձեռնարկությունների աշխատողներ։ Նրանք առաջադրեցին տնտեսական պահանջներ։ Գործադուլները, որ տևեցին մեկ-երկու շաբաթ, վերջացան նրանց օգտին։

1907 թվականին ևս, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում չնայած հեղափոխական ալիքի տեղատվությանը, տեղի ունեցան մի շարք գործադուլներ, գյուղացիական ելույթներ և հեղափոխական ընդվզումներ։ 1907 թ. հունվարին շարունակվում էր դեռևս 1906 թվականի աշնանից Սարաջևի գործարաններում սկսված գործա-

դուրը, որը ինչպես նշել էինք վերևում, ավարտվեց բանվորների օգտին:

Հունվար-փետրվար-մարտ ամիսներին մի շարք, մանր գործադուներ եղան Երևանի և Ալեքսանդրապոլի ձեռնարկութուններում: 1907 թ. Հայաստանում ծավալված գործադուների մեջ ամենախոշորը մարտի վերջին Ղափանում բռնկված հանքագործների գործադունն էր:

Ղափանի պղնձի հանքերի և գործարանների բանվորները ամենատմարդի շահագործման էին ենթարկվում: «Բանվորների կենցաղին և վարձվելու պայմաններին մոտիկից ծանոթանալով, ակնհայտ է դառնում,—ստիպված է խոստովանել նույնիսկ բուրժուական «Баку» թերթի թղթակիցը,—վերջինների ծանր դրությունը պատկերը: Կան բանվորներ, որոնք օրական ստանում են 15 կոպեկ»<sup>103</sup>: Ապահովված չէր նաև բանվորների կյանքը՝ հանքերում տեղի ունեցող հաճախակի փլուզումներից:

Մինչև 1907 թվականը Ղափանում բանվորները մի քանի անգամ ելույթների փորձեր էին արել, որոնք, սակայն, այդպես էլ մնացել էին իբրև լոկ փորձեր:

1907 թ. սկզբներին Ղափան եկան Բաքվում աշխատած 50 բանվոր: Հեղափոխական այս բանվորներն էլ հենց կազմակերպված բնույթով եղան Ղափանի հանքագործների մեջ տեղի ունեցող խմորումներին: Դրանց մեծ մասը բնիկ զանգեզուրցիներ էին, տարիներ առաջ ապրուստի միջոց հայթայթելու համար արտազնացություն դիմած գյուղացիներ, որոնք անցնելով հեղափոխական պայքարի բովոյ, վերադառնում էին հայրենի վայրերը արդեն որպես կոփված բուլձեղներ: Սկսած բանվորները, որոնց գործուղել էր Բաքվի բուլձեղկյան կոմիտեն, իրենց հետ բերել էին անլեզալ գրականություն՝ գրքեր, թերթեր, պրոկլամացիաներ:

Նախապատրաստական որոշ աշխատանքից հետո, մարտի 26-ին, երկուշաբթի օրը, Ղափանի բոլոր հանքերի ու պղնձագործարանների բանվորներն ընդհանուր գործադու հայտարարեցին: Մոտ 2500 մարդ դադարեցրեց աշխատանքը: «Զանգեզուրի գավառում, պղնձի հանքերի ու գործարանների ուղյակում, սկսվեց բանվորների գործադուը,—գրում էր պարիզի 1-ին «Баку» թերթը,—հանքերը ամայացան, հեռախոսային կապը հանքերի և գործարանների միջև կտրված է»<sup>104</sup>:

<sup>103</sup> „Баку“, 1907, № 74:

<sup>104</sup> Նույն տեղում:

Կազմվեց գործադուլային կոմիտե, որը ձեռնարկատերերին ներկայացրեց բանվորների պահանջները՝ բաղկացած 27 կետից, որոնք գերազանցապես տնտեսական էին<sup>105</sup>:

Գործադուլի օրերին բանվորներն անընդհատ միտինգներ, ժողովներ էին անում, որտեղ ելույթ ունեցողներից շատերը քաղաքական բնույթի ճառեր էին արտասանում:

Լուր ստանալով գործադուլի մասին, կազակների ուղեկցութամբ այնտեղ շտապեցին հանքատերերը և գավառական ազմիխիստրացիան: Սկսվեցին բանակցություններ գործադուլային կոմիտեի հետ: Սակայն այդ բանակցությունները արդյունքի չհասցրին:

Ազմիխիստրացիայի հետ ժամանած ոստիկանական պրիստավը, հավաքելով բանվորներին, սկսեց սպառնալիքներ կարդալ նրանց և շանտաժի դիմել: Սակայն բանվորները մնացին անդրդվելի: Տեսնելով գործադուլավորների անընկճելի կամքը և համերաշխությունը, պրիստավը պրոպոկացիոն հայտարարություններ արեց, փորձելով հայադրեջանական ընդհարում առաջացնել: Ի պատասխան նրա պրոպոկացիոն ելույթի ադրբեջանցի և հայ բանվորներից Ստեփանյանը և Զաբարին հավաքված մասսայի առաջ հրապարակայնորեն համբուրվեցին<sup>106</sup>:

Այդ քայլը ավելի կատաղեցրեց պրիստավին և նա կարգադրեց ձերբակալել բանվորների ղեկավարներին: Սակայն ռեպրեսիաները չվախեցրին բանվորներին: Նրանք հայտարարեցին, որ եթե ձերբակալված բանվորները անմիջապես ազատ շարձակվեն, ապա իրենք կպայքեն հանքերն ու էլեկտրակայանը: Սարսափած բանվորների վճռականությունից, պրիստավը ազատեց ձերբակալվածներին:

Զկարողանալով ոչ մի կերպ ընկճել բանվորների դիմադրությունը, գործարանատերերը վերջ ի վերջո զիջեցին և ընդունեցին նրանց պահանջների գլխավոր կետերը:

Մարտի 29-ին գործադուլավորներն անցան աշխատանքի:

Ղափանի մարտյան այս գործադուլն ինչպես գաղափարական, այնպես էլ կազմակերպական տեսակետից ընթացավ Բաքվի պրոլետարիատի պայքարի ազդեցության տակ: Այն նշանակություն ունեցավ նաև պրոլետարական տրադիցիաներն արմատավորելու ուղղությամբ: Այստեղ ընդհանրապես ուժեղ էր Բաքվի ազդեցությունը: Ամբողջ երկրում

<sup>105</sup> Մի հայկական մասնաճյուղի կուսարիւիվ, ֆ. 34, գ. 6:

<sup>106</sup> Նույն տեղում:

մալեգնող ևեակցիայի տարիներին Բաքուն էր, որ դեռևս չէր խոնարհել պրոլետարիատի մարտական գրոշը, շարունակում էր պայքարը և ամեն տարի բանվորական մայովկաներ կազմակերպում: Գործադուլից հետո Ղափանում բանվորներն սկսեցին կազմակերպել մայովկաներ: Առաջինը տեղի ունեցավ 1907 թ. մայիսի 1-ին «Սյունիք» գործարանի մոտ: Հետագա տարիներին Ղափանում շարունակվեցին մայիսմեկյան տոնակատարությունները<sup>107</sup>:

Տնտեսական հողի վրա 1907 թ. ապրիլի 1-ին Ալեքսանդրապոլում գործադուլ հայտարարեցին քաղաքի վեց հրուշակարանների վարպետներն ու բանվորները:

Դեռևս մարտի 28-ին հրուշակարանների վարպետներն ու բանվորները, հավաքվելով քաղաքի հին հայկական գերեզմանատանը, կազմել էին իրենց պահանջները և ներկայացրել տերերին, առաջարկելով երեք օրվա ընթացքում բավարարել դրանք: Մերժում ստանալով, նրանք ապրիլի 1-ից դադարեցրին աշխատանքները:

Գործադուլի կապակցությամբ ծագած ոստիկանական գրագրության մեջ արձանագրված է, որ Երևանի նահանգապետը կարգադրել է Ալեքսանդրապոլի գավառապետին միջոցներ ձեռնարկել «հանցավորներին» պատժելու համար<sup>108</sup>:

Ապրիլի 17-ին, դարձյալ տնտեսական հողի վրա, գործադուլ հայտարարեցին Երևանի շորս հրուշակարանների վարպետներն ու աշակերտները: Ապրիլի 18-ին նրանք ընդհատեցին աշխատանքի: Սակայն կեսօրից հետո տերերը համաձայնության եկան գործադուլավորների հետ և վերջիններս վերսկսեցին աշխատանքը<sup>109</sup>:

Հուլիսի 3-ին Երևանում գործադուլ հայտարարեցին Հակոբյանի, Այվազյանի տպարանների և Տեր-Նիկողոսյանի ու Առաքելյանի կազմատների բանվորները<sup>110</sup>:

Ձեռնարկատերերը կտրականապես մերժեցին կատարել նրանց պահանջները: Միայն Տեր-Նիկողոսյանն էր, որ զիջեց բանվորներին: Նա համաձայնվեց մասնավորապես 9 ժամյա աշխատանքային օր սահմանել և 10-ից 15 ուրվի ստացող բանվորների աշխատավարձը 30%-ով ավելացնել: Այդ պատճառով էլ նրա կազմատանը աշխատանքները հուլիսի 10-ից վերսկսվեցին: Մյուս ձեռնարկություններում

<sup>107</sup> Նույն տեղում:

<sup>108</sup> Մի վրացական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 2, գ. 112.

<sup>109</sup> Նույն տեղում:

<sup>110</sup> Նույն տեղում:

գործադուլը շարունակվեց մեկ ամսից ավելի: Նահանգական արմինիստրացիան ամեն միջոց գործադրում էր գործադուլի կազմակերպիչներին հայտնաբերելու համար<sup>111</sup>:

1907 թ. օգոստոսի 22-ին Երևանում գործադուլ հայտարարեցին ինժեներ Միրզոկին պատկանող ձիաքարշի բանվորներն ու ծառայողները: Մանր էր քաղաքի ձիաքարշի վրա աշխատողների դրուժյունը: Նրանց բանվորական օրը հասնում էր 14—16 ժամի: Ձիաքարշին հասած ամենաշնչին վնասի համար Միրզոկը տուգանում էր աշխատողներին: Հաճախ այնպես էր պատահում, որ ամսի վերջին, աշխատավարձը հաշվելիս, բանվորներն ու ծառայողները դեռևս մի բան էլ պարտք էին մնում տիրոջը: Ձիաքարշի կայարանում Միրզոկը հատուկ բանտ ուներ, որտեղ կալանավորում էր «անհնազանդ» մարդկանց:

Չտանելով այլևս տնտեսական ծանր վիճակը, ձեռնարկատիրոջ ծաղր ու ծանակը, ձիաքարշի սպասարկող անձնակազմը որոշեց գործադուլ հայտարարել և օգոստոսի 22-ից դադարեցրեց աշխատանքները:

Իր աշխատողների «հանդգնությունից» գազազած Միրզոկը պահանջեց անմիջապես իրեն հանձնել գործադուլի ղեկավարներին, սպառնալով, հակառակ դեպքում բոլորին արձակել աշխատանքից: Սակայն նրա սպառնալիքներն իրենց նպատակին չհասան: Գործադուլավորների համառության վկայությունն է այն, որ կովկասյան ոստիկանության հատուկ բաժնի պետը, օգոստոսի վերջերին փոխարքային ղեկուցելով այս գործադուլի մասին, հայտնում էր, որ գործադուլը դեռևս շարունակվում է:

Չնայած 1906 թ. օգոստոսին ճնշվել էր Ալավերդու բանվորների գործադուլը, սակայն ձեռնարկատերերը իրենց ցանկալի «հանգստությունը» չէին ստացել: 1907 թ. հունիսին Ալավերդում մահափորձ էր կատարվել «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերության» դիրեկտոր Գրոյի դեմ<sup>112</sup>:

1907 թ. նոյեմբերին Թիֆլիսի ֆրանսիական հյուպատոսը Կովկասի փոխարքային խնդրեց ուժեղացնել Ալավերդու պահպանությունը կազակներով, որովհետև բանվորների մեջ լուրջ հուզումներ էին սկսվել և գործադուլն անխուսափելի էր դառնում<sup>113</sup>:

<sup>111</sup> Նույն տեղում:

<sup>112</sup> «Революционное движение...», с. 934.

<sup>113</sup> Նույն տեղում:

Հնդհանրապես 1906 և 1907 թթ. գործադուլների, այդ թվում Արև-վելյան Հայաստանում տեղի ունեցած գործադուլների նշանակությունն այն էր, որ հեղափոխության նահանջի տարիներին պրոլետարիատն իր այդ արիերգարդային մարտերով զգալի շահով կասեցնում ու արգելա-կում էր ռեակցիայի հարձակումը աշխատավորական մասսաների վրա:

Կապիտալիստների դեմ կազմակերպված պայքար մղելու, պրո-լետարիատի և աշխատավորական մյուս խավերի շահերը պաշտպա-նելու համար հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան ձեռնամուխ եղավ արհեստակցական միություններ կազմակերպելու գործին:

Արևելյան Հայաստանի բուլղարիկյան կազմակերպությունները ևս կազմակերպական-ազիտացիոն աշխատանքներ էին փանում բանվոր-ներին և քաղաքային աշխատավորական այլ խավերին արհեստակցա-կան միությունների մեջ համախմբելու համար:

1905 թ. հոկտեմբերյան Համառուսաստանյան գործադուլից հետո որոշակի աշխուժություն սկսվեց արհեստակցական շարժման ծավալ-ման ուղղությամբ: Այսպես ՌՄԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպու-թյունը 1906 թ. մարտին հրատարակեց մի կոչ՝ ուղղված քաղաքի գրա-սենյակների և վաճառատների ծառայողներին: Նրանում հանրամատ-չելի ձևով բացատրվում էր, թե ինչ նշանակություն ունեն արհեստակ-ցական կազմակերպություններն աշխատավորների համար: Առաջարկ-վում էր տերերի դեմ համերաշխ պայքարելու համար կազմակերպել միություններ: Միաժամանակ նշվում էր, որ այդ միությունները պետք է ղեկավարվեն սոցիալ-դեմոկրատիայի կողմից, որը պրոլետարիատի և մյուս աշխատավոր խավերի միակ պաշտպանն է:

Սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպական-ազիտացիոն աշխա-տանքների շնորհիվ 1906 թ. սկզբներին իր արհեստակցական միություն-նր ստեղծեցին Երևանի գործակատարները: 1906 և 1907 թթ. ընթաց-քում արհեստակցական միություններ ստեղծվեցին Արևելյան Հայաս-տանի նաև այլ քաղաքներում<sup>114</sup>:

Այդ տարիներին Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում բան-վորների իրավական և տնտեսական պահանջների «պաշտպանությամբ» հանդես եկան և ազգայնական կուսակցությունները, մասնավորապես դաշնակցությունը: Սակայն արհեստակցական միությունները սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունից հեռու պահելու համար դաշնակցա-կանները հռչակեցին նրանց կառուցման ոչ թե ինտերնացիոնալ, այլ

ազգային սկզբունքը, հայտարարելով միաժամանակ, որ արհեստակ-ցական միությունները պետք է լինեն նաև կուսակցական:

Արհեստակցական միություններ կազմակերպելու և նրանց նվա-ճելու համար դաշնակցականները ոտքի հանեցին ոչ միայն իրենց հա-սարակ շրջիկներին, այլ նաև ղեկավարներին: Այսպես, 1906 թ. հու-լիսի 17-ին Ալեքսանդրապոլում դասախոսություն կազմակերպվեց ար-հեստակցական միությունների մասին, որտեղ զեկուցումով հանդես եկավ ոչ անհայտ Եղիշե Թոփչյանը: Նա՝ զարգացնելով դաշնակցական տեսակետներ, պաշտպանեց արհեստակցական միությունների կառուց-ման կուսակցական սկզբունքը: Ժողովին ներկա գտնվող որոշ անձանց փորձերը ընդդիմախոսելու ճառախոսին, վերջացան դաշնակցական ամ-բոխի համար սովորական դարձած՝ գոռում-գոչյունով, հայհոյանքով և սպառնալիքներով<sup>115</sup>:

1906 թ. կեսերին արհեստակցական շարժման ուժեղացման հետ ավելի հաճախակի դարձան և դաշնակցականների պարագլուխների այցելությունները Թիֆլիսից՝ Հայաստան, բանվորական-արհեստավոր-ական շրջաններն իրենց ազդեցությանը ենթարկելու համար: Սակայն, որպես կանոն, գործարանային բանվորների վրա նրանք ոչ մի ազ-դեցություն ձեռք բերել չէին կարողանում: Նրանց հաջողվեց Ալեքսան-դրապոլում և Կարսում միայն մի քանի մանր ձեռնարկության արհես-տակցական միություն կազմակերպել և դրանց անունից էլ մի երկու անհաջող գործադուլ ղեկավարել<sup>116</sup>:

Դաշնակցականների այս «արհմիութենական» մետամորֆոզի կա-պակցությամբ Ս. Սպանդարյանը «Կայծ»-ում հանդես եկավ «Պրոֆե-սիոնալ միությունները և Հ. Հ. Դաշնակցությունը»<sup>117</sup> հոդվածով և բուլ-ղերիկյան դիրքերից մերկացրեց արհեստակցական միությունները սո-ղոսկելու նրանց փորձերը:

Իր հոդվածում Ս. Սպանդարյանը ցույց տվեց, որ կապիտալի դեմ կազմակերպված պայքար մղելու համար անհրաժեշտ է աշխատավոր-ների միավորումը արհեստակցական սկզբունքով՝ անկախ ազգությու-նից և քաղաքական համոզմունքներից: Այնինչ «Դաշնակցություն»-ը, — գրում է Սպանդարյանը, — ամենից ավելի երկյուղ է կրում անկուսակ-ցականությունից. նա վախենում է, որ այդ անկուսակցական կազմա-

<sup>115</sup> «Մշակ», 1906, № 155:

<sup>116</sup> «Մշակ», 1906, № 178:

<sup>117</sup> Սուրեն Սպանդարյան, Երկեր, հ. 1, 1959, էջ 47—48:

<sup>114</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, էջ 390—391:



կերպութիւնների մեջ երևան կգա իր բուրժուական և նեղ ազգայնական բնույթը, որը կարող է խորտակել այն շինական պարիսպը: որը նա այնքան շանքով բարձրացրել է հայ և մյուս ազգերի միջև...»<sup>118</sup>:

Ինչպես ասվեց վերևում, սկզբնական շրջանում Արևելյան Հայաստանում արհեստակցական միութիւններ կազմակերպեցին ծառայողները: Հետագայում արհեստակցական միութիւններ ստեղծեցին արդյունաբերական ձեռնարկութիւնների և արհեստանոցների բանվորները: Բուլճարիները տեղական աշխատանք էին տանում քաղաքների և արդյունաբերական վայրերի բոլոր բանվոր-ծառայողներին արհեստակցական շարժման մեջ ընդգրկելու համար: Այս ուղղությամբ գրավոր և բանավոր պրոպագանդան շարունակվում էր նաև 1907 թ. և հետագա տարիներին: Պրոկլամացիաներ էին բաց թողնվում ուղղված թե՛ առանձին հիմնարկ-ձեռնարկութիւնների բանվորներին, և թե՛ ընդհանրապես քաղաքների բոլոր բանվորներին և ծառայողներին: Այսպես 1907 թ. ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպութիւնը մի շարք կոչեր հրապարակեց, որոնց մեջ կրկին ու կրկին նշվում էր, որ բանվորների ուժը նրանց՝ միութեան, նրանց համախմբվածութեան մեջ է և որ այդ միավորումը պետք է տեղի ունենա ինտերնացիոնալ հիմունքներով, առանց ազգային տարբերության<sup>119</sup>:

Արհեստակցական միութիւնների կազմակերպման, նրանց անելիքների պարզաբանման հարցում բուլճարիները ոչ միայն գրավոր պրոպագանդա էին մղում մամուլում, պրոկլամացիաներ հրատարակում, այլև անձնական մասնակցութիւն էին ցուցաբերում և ելույթներ ունենում արհեստակցական կազմակերպութիւնների հավաքներում:

Բուլճարիները մեծ ուշադրութիւն էին դարձնում հատկապես դաշնակցական կուսակցության ազդեցութեան տակ գտնվող արհեստակցական միութիւնների վրա, նրանցում մոլորութեամբ ընդգրկված աշխատավորական որոշ խավերին ազգայնականների ազդեցութիւնից դուրս բերելու համար:

Դաշնակցականներից ավելի վաղ, հայ բանվոր դասակարգի անունից, հետևապես և նրա արհեստակցական միութիւնները ղեկավարելու ակնկալությամբ, հանդես էին գալիս «սպեցիֆիկները»՝ «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպութիւնը»: Այդ կազմակերպութիւնը, որ հիմնվել էր 1903 թվականին, փորձում էր իրեն

<sup>118</sup> Նույն տեղում, էջ 49:

<sup>119</sup> Մի հայկական մասնագետի կուսարխիվ, ք. 33, գ. 338:

ներկայացնել որպես հայ պրոլետարիատի շահերի միակ ներկայացուցիչը, բայց փաստորեն հայ բուրժուազիայի ազդեցութիւնը հայ բանվորութեան վրա տարածող նացիոնալիստական, մանրբուրժուական մի կազմակերպութիւն էր: «Սպեցիֆիկները» հայտարարում էին, որ հեղափոխութեան մեջ հայ պրոլետարիատն ունի իր սպեցիֆիկ նպատակները, որոնք անհարիր չեն նաև հայկական բուրժուազիայի շահերին: Նրանք իրենց գաղափարական բազածը ամբողջովին վերցնում էին հրեական բունդից: Դեռևս 1905 թ. սեպտեմբերին Վ. Ի. Լենինը ՌՍԴԲԿ Կենտրոնական կոմիտեին գրած նամակներից մեկում խիստ զգուշացնում էր «Սպեցիֆիկներից»: Նա գրում էր. «Դրանք—ծնկյան մի զույգ կազմալուծիչներ են, որոնք այստեղ հրատարակում են ամենադատարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ: Դա—բունդական կրեատուրա է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմը սնելու համար...»<sup>120</sup>:

Չնայած «Սպեցիֆիկները» մեծ հավակնութիւն ունեին հայ բանվորութեանը «կազմակերպելու» գործում, իրականում շատ չնչին ազդեցութիւն ունեին նրա վրա: Ավելի փոքր էր նրանց ազդեցութիւնը, քան հնչակյաններինը, որոնց որոշ կազմակերպութիւնները մասնակցում էին հեղափոխական շարժումներին: Սակայն մանրբուրժուական այդ կուսակցութեան մեծամասնութիւնը տակավին շարունակում էր կանգնած մնալ Արևմտյան Հայաստանում ազգային հեղափոխութիւն առաջացնելու խոտոր ճանապարհի վրա:

Կուսակցութեան մեջ առանձին ֆրակցիաների գոյութիւնը զգալիորեն խոչընդոտում էր հեղափոխական շարժումների ծավալմանը: Վ. Ի. Լենինը բազմիցս նշում էր, որ ստեղծված նման վիճակը բանվորների իրավացի դժգոհութիւնն է առաջացնում:

Միասնական կազմակերպութիւններ ստեղծելու շարժումը համակել էր ՌՍԴԲԿ շարքային բոլոր անդամներին: Բուլճարիները ընդառաջում էին այդ տրամադրութիւններին, միաժամանակ ընդգծելով, որ միավորումը պետք է տեղի ունենա առանց սակայն սքողելու ներքին տարածայնութիւնները:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում 1906 թ. ընթացքում ստեղծվեցին ՌՍԴԲԿ միացյալ մի շարք կազմակերպութիւններ, այդ թվում Բաքվի ու Թիֆլիսի կոմիտեները, ինչպես և ընտրվեց Անդրկովկասյան մարզային կոմիտե, ուր գերակշռում էին մենշևիկները:

<sup>120</sup> Վ. Ի. Լենին, ՆԺՄ, հ. 47, էջ 79:

Հետագայում 1907 թ. սկզբներին, Անդրկովկասի բոլշևիկները ստեղծեցին իրենց առանձին կենտրոնը՝ ՌՍԴԲԿ մարզային բյուրոն, որը կոնսպեկտիվ նկատառումներով կոչվում էր «Գրական բյուրո»:

Կուսակցության միասնությունը վերականգնելու համար բոլշևիկները մենշևիկներին առաջարկեցին հրավիրել միավորիչ համագումար: Մենշևիկները բանվորական մասսաների ձեռնարկով համաձայնվեցին դրան:

Նախապատրաստվելով կուսակցության IV համագումարին, բոլշևիկյան կազմակերպությունները քաղաքական-քաղաքական լայն աշխատանք ծավալեցին բանվորական շրջաններում: Տպագրվում և տարածվում էին բազմաթիվ պրոկլամացիաներ ու թոռուցիկներ, որոնց մեջ բացատրվում էր կուսակցության միասնությունը վերականգնելու, հեղափոխական ուժերը համախմբելու գործում առաջիկա համագումարի նշանակությունը: Նման բովանդակությամբ պրոկլամացիաներ էին տպագրվում նաև հայերեն, որոնց վրա նահանգական ժանդարմական վարչությունների ուշադրություն էր հրավիրում Կովկասի ոստիկանության պետը և պահանջում՝ կտրուկ միջոցներ ձեռնարկել այդ երևույթին վերջ տալու համար<sup>121</sup>:

1906 թ. ապրիլին Ստոկհոլմում տեղի ունեցավ կուսակցության IV (միավորիչ) համագումարը, որը սակայն միայն ձևականորեն միավորեց կուսակցության բոլշևիկյան և մենշևիկյան ֆրակցիաները: Համագումարում մեծամասնությունը կազմում էին մենշևիկները, որը և պայմանավորեց մի շարք հարցերի վերաբերյալ համագումարի մենշևիկյան դիրքորոշումը:

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների կողմից կուսակցության IV համագումարի աշխատանքներին, որպես ՌՍԴԲԿ Երևանի բոլշևիկյան կազմակերպության պատգամավոր, մասնակցում էր Ստեփան Շահումյանը՝ «Սուրենին» ծածկանունով: Շահումյանը ընտրվում է համագումարի մանդատային հանձնաժողովի անդամ և հեղափոխական կրթությունը պաշտպանում բոլշևիկյան մանդատները մենշևիկների ոտնձգություններից, որոնք փորձում էին շեղյալ հայտարարել բոլշևիկյան շատ մանդատներ<sup>122</sup>:

<sup>121</sup> Վրաց. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 7, գ. 802, թ. 38:

<sup>122</sup> Протоколы 4-го (объединительного) съезда РСДРП, М., 1959, с. 146, 184.

Ժխտելով հայտնի փաստերը և կեղծելով իրողությունը, մենշևիկները, մասնավորապես, հայտարարում էին, թե Երևանում սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն գոյություն չունի և այնտեղ հեղափոխական աշխատանքներ չեն տարվում, այլ, իբր թե, կան միայն հնչակյան կուսակցության կազմակերպություններ:

Սակայն համագումարը մերժեց մենշևիկյան առարկությունները և հաստատեց Ստ. Շահումյանի մանդատը:

Վերադառնալով Ստոկհոլմից, Ստ. Շահումյանը մայիսի վերջերին այցելեց Երևան և տեղի կոմիտեի նիստում զեկուցում տվեց կուսակցության IV համագումարի մասին: Հաջորդ օրը նա հանդես եկավ ավելի քաղամարդ ժողովում<sup>123</sup>: Այդ զեկուցումն ունկնդրում էին ոչ միայն քաղաքի բոլշևիկյան կազմակերպության անդամներն ու առաջավոր բանվորները, այլև շրջակա գյուղերի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամները, որոնք կապված էին ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեի հետ:

Ձեկուցումից հետո Ստ. Շահումյանը զրույցներ ունեցավ Երևանի կազմակերպության առանձին ղեկավարների հետ և խորհուրդ տվեց կազմակերպության աշխատանքներին ավելի լայն շափով մասնակից դարձնել բանվորներին: Շահումյանը նրանց ուշադրությունը հրավիրեց Երևան—Ուլուխանլու երկաթուղային ուղեմասի և քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող բանվորների վրա<sup>124</sup>:

Երևանում Շահումյանը այցելեց նաև Գաբրիելյան եղբայրների կաշեգործարանը, տեղում ծանոթացավ բանվորների դրուժյանը, նրանց աշխատանքային պայմաններին: Շահումյանի հետ կաշեգործարան այցելեցին ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեի մի շարք ղեկավար գործիչներ, այդ թվում Մարտիրոս Միրաբյանը (բանվոր Շանթ), Ասքանազ Մուսվյանը և Արամ Շուշանյանը:

1907 թ. մայիսին Լոնդոնում գումարվեց կուսակցության V համագումարը, որը բոլշևիկների խոշոր հաղթանակն էր բանվորական շարժման մեջ:

ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունն այս անգամ էլ մասնակցեց համագումարին, պատգամավոր ունենալով կազմակերպության անդամ,

<sup>123</sup> Ա. Մուսվյան, Հուլիս, Երևանի բոլշևիկյան կազմակերպության առաջին տարին, «Խորհրդային Հայաստան», 1923, № 51:

<sup>124</sup> Ա. Մուսվյան, Հուլիս, Ստեփան Շահումյանը Երևանում, «Խորհրդային Հայաստան» 1925, № 213:

Երևանում լույս տեսնող «ФАКТЫ» սոցիալ-դեմոկրատական թերթի խմբագիր Գ. Սոկոլովսկուն։ Երբ Թիֆլիսի մարզային կոմիտեի մենչևիկ անդամները լուր առան, որ Երևանի կազմակերպությունը պատրաստվում է V համագումարին մասնակցելու համար առաջադրել Գ. Սոկոլովսկուն, բոլոր միջոցներին դիմեցին նրա թեկնածությունը ձախողելու համար։ Սակայն այդ փորձերը անհաջողությամբ վերջացան։ Երևանի կազմակերպության կողմից պատգամավոր ընտրվեց Գ. Սոկոլովսկին։

Զկարողանալով տեղերում տապալել բոլշևիկյան թեկնածուներին, մենչևիկներն սկսեցին համագումարում վիճարկության ենթարկել կովկասյան բոլշևիկների, մասնավորապես, Երևանի ու Բորչալուի պատգամավորների մանդատները, զանազան կեղծ փաստարկներ բերելով այն մասին, որ իբր թե այդ կազմակերպություններն իրավասու չեն պատգամավորներ ուղարկել համագումար։

Անդրկովկասի բոլշևիկների ամենաուժեղ հենակետերից մեկը ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունն էր։ Նա ընդգրկում էր հիմնականում Լոռին՝ Ալավերդու պղնձարդյունաբերական շրջանը, Սանահին կայարանի, Ախթալա, Հաղպատ կիսակայարանների բանվորական ինչպես նաև գյուղական բջիջները և այդ թվում առաջին հերթին Հաղպատի ու Զալալօղլու կազմակերպությունները։

1906 թ. հոկտեմբերի 15-ին Հաղպատում տեղի ունեցավ ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության առաջին կոնֆերանսը, որի աշխատանքները ընթացան Շահումյանի ղեկավարությամբ։ Կոնֆերանսը, որտեղ ներկայացված էին 10 տեղական կազմակերպություններ, քննեց կուսակցական կյանքի մի շարք հարցեր, այդ թվում լավեց Բորչալուի կազմակերպության գավառական կոմիտեի հաշվետվությունը։ Կոնֆերանսում ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Ստ. Շահումյանը։

Նույն թվականի դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ Բորչալուի կազմակերպության 2-րդ կոնֆերանսը Հաղպատում՝ դարձյալ Շահումյանի ղեկավարությամբ։ Կոնֆերանսին ներկայացված էին 21 տեղական կազմակերպություններ։ Կոնֆերանսը քննության առավ դումայական կամպանիայի անցկացման, բուրժուական կուսակցությունների, դաշնակցության դեմ մղվող պայքարն ուժեղացնելու հարցերը և այլն։ Կոնֆերանսը միաժամանակ կոնգրեսում գումարվելիք կուսակցության V համագումարին պատգամավորների ընտրություններ անցկացրեց։ ՌՍԴԲԿ Բորչալուի (Լոռու) կազմակերպության կողմից, որն ուներ հազարից ավելի անդամ, վճռական ձայնով պատգամավորներ ընտրվեցին Ստեփան Շահումյանը և Ասատուր Կախոյանը («Բորչալիսկի»

ծածկանունով) և խորհրդակցական ձայնով՝ Միխայ Յիսակյան<sup>125</sup>։ Կոնֆերանսը նրանց տվեց հատուկ փաստաթղթեր, որոնք պետք է ներկայացվեին համագումարին՝ իբրև մանդատ։ Սակայն զանազան մեքենայությունների միջոցով Թիֆլիսում մենչևիկներին հաջողվեց շեղյալ համարել նրանց մանդատները։

Շահումյանը ստիպված եղավ վերադառնալ Լոռի և նոր կոնֆերանս հրավիրել։ Կոնֆերանսը, որ ներկայացնում էր ՌՍԴԲԿ 928 անդամի, վերընտրեց նրանց և նոր մանդատներ տալով, հաստատեց համագումարի Բորչալուի կազմակերպության պատգամավորներին<sup>126</sup>։

Զկարողանալով տեղում տապալել կովկասյան բոլշևիկների մանդատները, մենչևիկները, ինչպես նախորդ համագումարում, այնպես էլ V համագումարում, սկսեցին դարձյալ վիճարկել նրանց փաստաթղթերի իսկությունը, հանձնելով դրանք մանդատային հանձնաժողովի կրկնակի քննությանը։

Մենչևիկների առարկությունները, հատկապես Բորչալուի կազմակերպության պատգամավորների դեմ, պատճառաբանվում էին նրանով, որ այնտեղ իբր թե կազմակերպություն չկա, որը սոցիալ-դեմոկրատական աշխատանքներ կատարի։

Ստ. Շահումյանը համագումարում հանդես եկավ մարտական մի ճառով և, մերկացնելով մենչևիկների վարքագիծը, ցույց տվեց կուսակցական հեղափոխական այն աշխատանքը, որ կատարել էր ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունը<sup>127</sup>։

1907 թ. մարտին Լեջանում տեղի ունեցավ ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության III կոնֆերանսը, որին մասնակցում էին 13 կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Կոնֆերանսը քննարկեց կուսակցական մի շարք հարցեր, ինչպես և ընդունեց առանձին գյուղերին վերաբերող կոնկրետ որոշումներ։ Կոնֆերանսից հետո հրապարակվեց «Ընկերներ» թուրքիկը, որով ազդարարվում էր տեղի ունեցած կոնֆերանսի մասին և հայտնվում այն որոշումները, որ ընդունվել էին Լեջանում<sup>128</sup>։

1907 թ. աշնանը տեղի ունեցավ ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության IV կոնֆերանսը Հաղպատի ձորի այգիներում։ Նրան մաս-

<sup>125</sup> «Հին բոլշևիկների հիշողություններ», գ. 1, էջ 64։

<sup>126</sup> Протоколы 5-го (Лондонского) съезда РСДРП, М., 1935, с. 936—938.

<sup>127</sup> Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 406—410։

<sup>128</sup> «Հեղափոխական կոչեր և թուրքիկներ», էջ 301—302։

նակցում էին կազմակերպության 35 տեղական բջիջներից 55 մարդ՝ վճռական ձայնով:

1908 թ. ապրիլի 15-ին տեղի ունեցավ ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության ժողովը, որը քննեց կուսակցական-կազմակերպական մի շարք հարցեր և ընդունեց համապատասխան որոշումներ<sup>129</sup>:

ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության ղեկավար կենտրոնը՝ կոմիտեն իր գոյությունը պահպանեց մինչև 1909 թվականը: Հետագայում ռեակցիայի սաստկացման հետ դադարեցին գավառական կոմիտեի աշխատանքները: Գործում էին միայն առանձին տեղական կազմակերպությունները: 1909 թվականից հետո այդպիսի կազմակերպություններից իրենց կենսունակությունը պահպանեցին Ալավերդու գործարանի և Սանահին, Այրում, Ախթալա կայարանների բջիջները ու Ջալալօղլի, Մղարթ, Հաղպատ գյուղերի կազմակերպությունները:

\* \* \*

Ռուսաստանյան առաջին հեղափոխության պարտությունից հետո սկսված ռեակցիայի տարիներին ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում և Հայաստանում բանվորական շարժումները զգալիորեն թուլացան: Այդ տարիներին Հայաստանում տեղի ունեցած հեղափոխական շարժումներից ուշագրավ է 1907 թ. սկսված և 1908 թ. ընթացքում շարունակվող Զանգեզուրի գավառի Բաշքենդ (Կավարտ) գյուղի բնակիչների ելույթը:

Այդ կապակցությամբ ծագած դատական գործի մեջ արձանագրված է, որ Բաշքենդ գյուղի բնակիչներ Ֆրանկոպուլո, Իգոմեիդի և Լոլոպուլու եղբայրները վաղուց ի վեր ագիտացիա են տանում ինչպես թագավորի և կառավարության, այնպես էլ տեղական կալվածատեր-կապիտալիստ Կոնդուրովի դեմ<sup>130</sup>: Նրանք կոչ էին անում գյուղացիներին, որոնց մեծագույն մասը աշխատում էին հանքերում, չվճարել պետությանը և կալվածատերերին տրվելիք հարկերը, զինվորներ չտալ կառավարությանը, միահամուռ կերպով համախմբվել, խլել հողը կալվա-

<sup>129</sup> ՄԼԻ հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 33, գ. 320:

<sup>130</sup> Բաշքենդը Ղափանի հանքարդյունաբերական շրջանի կենտրոններից էր, որտեղ գտնվում էին Կոնդուրովի պղնձահանքերն ու գործարանը: Կոնդուրովը նոր պղնձահանքեր հայտնաբերելու ակնկալությամբ որոշել էր յուրացնել այն հողակտորները, որոնց վրա ապրում և իրենց տնտեսությունն էին վարում բաշքենդցիները:

ծատերերի ձեռքից և բաժանել գյուղացիներին, շկատարել իշխանությունների կարգադրությունները, չճանաչել նրանց ներկայացուցիչներին և նրանց փոխարենն ընտրել սեփական իշխանություն՝ ժողովրդի ներկայացուցիչներից<sup>131</sup>: Նրանք այսպիսի բովանդակությամբ ելույթներ էին ունենում ոչ միայն Բաշքենդի գյուղացիների, այլև պղնձահանքերի և գործարանների բանվորների մոտ: Այդ տրամադրություններն անշուշտ պարարտ հող էին գտնում տնտեսական կեղեքման և քաղաքական իրավագրկության պայմաններում ապրող բանվորների և գյուղացիների մոտ. «...Այդ ճառերը շատ էին ազդում բնակչության, մանավանդ երիտասարդության վրա»—գրված է դատական արձանագրության մեջ<sup>132</sup>: Ակտիվ գործունեություն էին ծավալել հատկապես Ֆրանկոպուլո եղբայրները: Նրանք օգտվելով ամեն մի հարմար առիթից, բնակիչների հետ զրույցներ էին ունենում տիրող անարդարացի կարգերի մասին: Այդ գործունեության համար Ֆրանկոպուլո եղբայրները ձերբակալվեցին, սակայն, երբ որոշ ժամանակ անց ազատ արձակվեցին, նորից շարունակեցին իրենց հակակառավարական ագիտացիան:

Այսպես աստիճանաբար շիկանում էր մթնոլորտը, և երբ 1908 թ. գարնանը Կոնդուրովը փորձեց քանդել տալ Լոլոպուլոներին պատկանող տունը, բաշքենդցիները դանակներով և մահակներով զինված հարձակվեցին ձեռնարկատիրոջ վրա, փորձելով սպանել նրան:

Կոնդուրովը ազատվեց՝ ապավինելով իր ստրամենիկին, որը սպառնաց հրազենով, եթե փորձեին շարունակել գործարանատիրոջ հետապնդումը: Այդ ելույթն անպատիժ չմնաց: Բաշքենդ եկան մի խումբ ոստիկաններ պրիստավ Խան-Խոյսկու գլխավորությամբ և ձերբակալեցին բազմաթիվ մարդկանց:

Բանտարկելով շարժման ղեկավարներին, իշխանությունները երկու տարի հետաքննություններ էին կատարում և միայն 1910 թ. նրանց հանձնեցին Թիֆլիսի դատական ատյանին. «...շրջակայքի բնակչության մեջ հրապարակային ճառեր արտասանելու, պետության մեջ տիրող հասարակական կարգը տապալելու և իշխանությունների կարգադրությունները շկատարելու կոչ անելու համար»<sup>133</sup>:

Չմայած խիստ պատիժներին և այն հանգամանքին, որ բանտարկված հույն բանվորների մեծ մասը այնպես էլ չվերադարձավ, իշխա-

<sup>131</sup> ՄԼԻ վրացական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 2, գ. 112:

<sup>132</sup> Նույն տեղում:

<sup>133</sup> Նույն տեղում:

նությունները ցանկալի «հանգստություն» չվերահաստատեցին: 1911 թ. «անհայտ հանգամանքներում» սպանվեց ձեռնարկատեր Ապոստոլ Կոնգուրովը<sup>134</sup>: Բաշքենդցիների դժգոհությունը շարունակվեց երկար տարիներ:

Ռեակցիայի տարիներին տնտեսական հողի վրա գործադուլներ տեղի ունեցան Կարսում, Ալեքսանդրապոլում, Երևանում: Զինվորական հուզումները, որ այնպես բուռն էին առաջին հեղափոխության տարիներին, ռեակցիայի տարիներին արտահայտվում էին առանձին, անհնազանդ զինվորների հեղափոխական գործունեության միջոցով:

Չէին մարել ուսանող երիտասարդության շարժումները ևս:

Հայկական գավառներում շարունակվում էին նաև ագրարային շարժումները:

Չնայած սևհարյուրակային ռեակցիայի հետևանքով ստեղծված անտանելի պայմաններին հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, բոլշևիկյան բռնիքները գործում էին որտեղ որ հնարավոր էր: Այդ տարիներին ընդհատակյա գործող կազմակերպություններից իրենց կենսունակությունը շարունակում էին պահպանել Երևանի, Ալավերդու, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Կարսի կազմակերպությունները:

Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը, որի ղեկավարներն էին Գ. Սոկոլովսկին, Վ. Բաղդասարյանը, Զ. Մազնեշտեյնը, Լ. Տեր-Հովսեփյանը, Կ. Ալավերդովը, աշխատանքներ էր տանում Շուստովի և Սարաջևի գործարանների, Տեր-Ավետիքովի մեխանիկական արհեստանոցի բանվորների, Երևանի և Ուլուխանլուի երկաթուղայինների, ուսուցչական սեմինարիայի և թեմական դպրոցի ուսուցիչ-աշակերտների մեջ:

Ռեակցիայի տարիներին իր գործունեությունը սահմանափակելով հանդերձ՝ շրագարեցրեց գործելուց Արևելյան Հայաստանի մյուս նշանավոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը՝ Բորչալուի (Լոռու) գավառային կոմիտեն, որտեղ աչքի ընկնող աշխատանքներ էին տանում Ս. Էվոյանը, Ա. Թումանյանը, Մ. Թանդիլյանը, Շ. Բեժանյանը, Ս. Իսրայելյանը, Ն. Գաղիվանյանը:

Ինչպես 1905—1907 թթ., այնպես էլ հետագա տարիներին Հայաստանի բոլշևիկների գործունեությունը ղեկավարում և ուղղություն էին տալիս Բաքվի և Թիֆլիսի կազմակերպությունները, մասնավորա-

պես Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը: Բաքվից և Թիֆլիսից հաճախակի Հայաստան էին գալիս և տեղում աշխատող ընկերներին մըշտական օգնություն ցույց տալիս նաև Մ. Մելիքյանը, Հ. Հակոբյանը, Ռ. Քաթանյանը, Բ. Բորյանը, Ս. Կասյանը, Ս. Խանոյանը, Ա. Խումարյանը և ուրիշներ:

Այդ ժամանակաշրջանում կուսակցական աշխատանքները շրագարեցին նաև Ղափանում, Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում: Այս վայրերում ընդհատակում գործում էին Ա. Մարտիրոսյանը, Մ. Մանուշարյանը, Ա. Շահինյանը, Վ. Խաչատրյանը, Ա. Վարդանյանը, Հ. Սարուխանյանը, Բ. Բաղիկյանը, Վ. Պողոսյանը<sup>135</sup>:

\*  
\*

Սակայն ռեակցիայի տիրապետությունը երկարատև չեղավ: Արդեն 1910 թ. բանվորական շարժման աշխուժացումն ազդարարեց հեղափոխական շարժման նոր վերելքը: Արդարացավ բոլշևիկների կանխատեսումը՝ երկիրը հեղափոխական շարժումների նոր փուլ թևակոխելու մասին: Վ. Ի. Լենինը 1910 թ. գրում էր. «Սևհարյուրակային ռեակցիայի լիակատար տիգրապետության շրջանը վերջացավ: Սկսվում է նոր վերելքի շրջանը»<sup>136</sup>:

Չնայած 1905—1907 թթ. գոտեմարտերից հետո ռեակցիայի տարիներին հեղափոխական շարժումները խիստ թուլացել էին, բայց լրիվ չէին մարել: Աշխատավորական զանգվածների մեջ հասունացած խուլ դժգոհությունը մերթ ընդ մերթ արտահայտվում էր գործադուլների, գյուղացիական հուզումների, զինվորական ելույթների, սովորողների բողոքների ձևով: Անկումայնության, հուսահատության հաղթահարման հետ միաժամանակ տիրող իրավակարգի դեմ ընդվզումը վերածվում է կազմակերպված շարժման: 1910 թ. բացվում է Ռուսաստանի բանվորական շարժման նոր էջ:

Հայաստանում հեղափոխական շարժման նոր վերելքը նշանավորվում է բանվորական և գյուղացիական մի շարք ելույթներով: 1910 թ. հուլիսին գործադուլ են հայտարարում Սիսիամդանի պղնձաձուլական գործարանի մոտ 200 բանվորներ: Գործադուլավորների պահանջները տնտե-

<sup>135</sup> «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուղղագծեր», Ե., 1967, էջ 122—128:

<sup>136</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԾ, հ. 20, էջ 90:

<sup>134</sup> В. Х. Оганесян, Кафанские медные рудники, Ереван, 1978., с. 52.

սական բնույթ ունեին և հիմնականում վերաբերում էին աշխատավարձի բարձրացման ու բնակարանային պայմանների բարելավման հարցերին: 1910 թ. ամռանը գործադուլ են հայտարարում նաև Երեվանի և Ուլուխանլուի կայարանների երկաթուղայինները, որոնք ստեղծում են գործադուլային կոմիտե, որը և բանվորների պահանջները ներկայացնում է երկաթուղու վարչությանը: 1911 թ. փետրվարին գործադուլ է բռնկվում Կողբի աղահանքերում: Աղահատները հանքերի վարձակալությունը վերցրած կապալառուներից պահանջում են բարձրացնել արդյունահանվող աղի գումարը: Գործադուլը, որ տևում է մոտ մեկ շաբաթ, վերջանում է անհաջողությամբ: Բանվորները, ստիպված, վերսկսում են աշխատանքները նախկին պայմաններով:

Չնայած բանվորների պահանջները տնտեսական բնույթ ունեին, բայց հեղափոխական շարժման ընդհանուր վերելքը ժողովրդական զանգվածների ընդլայնումը նպատակամղում էր դեպի քաղաքական պայքարի ուղին: Եվ պատահական չէ, որ հեռավոր Սիբիրում՝ Լենայի ոսկու հանքերի բանվորների գնդակոծումն ալեկոծեց ամբողջ Ռուսաստանը: Բողոքի գործադուլներ հայտարարվեցին ողջ երկրով մեկ, այդ թվում և Անդրկովկասում: Ցարական կառավարության նոր ոճրագործությունը վրդովեց առաջավոր Ռուսաստանի հասարակական միտքը: Գործադուլների, բողոքի, միտինգների, ցույցերի, մամուլի կողմից արվող զայրալից մերկացումների նկատմամբ քար անտարբերություն էր պահպանում միայն ցարական կառավարությունը: Ընդհակառակը, կառավարությունը պատրաստվում էր շարունակելու բռնությունների քաղաքականությունը և շատ բնորոշ է, որ երբ 3-րդ պետական դումայում սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կողմից հարցապնդում արվեց Լենայի դեպքերի կապակցությամբ, ներքին գործերի մինիստր, արխի-ոնակցիոներ Ա. Մակարովը լկտիորեն պատասխանեց. «Այդպես եղել է, այդպես էլ կլինի»<sup>137</sup>:

Արևելյան Հայաստանում ևս, որպես բողոք ցարիզմի ոճրագործության դեմ՝ ցույցեր, միտինգներ տեղի ունեցան Ալեքսանդրապոլում, Կարսում, Ղափանում, Ալավերդում, Զալալոլիում և այլուր: Ցարիզմի եղեռնագործությունը մերկացնող զայրացուցիչ հոբելաններ տպագրեց Ալեքսանդրապոլում հրատարակվող «Արագած» թերթը: Ղափանում բանվորները 1912 թ. մայիսին բռնկեցին Մ. Մանուշարյանի ու Ա. Մարտիրոսյանի ղեկավարությամբ բողոքի միտինգ են կազմակերպում

Լենայի բանվորների գնդակոծության դեմ և մայիսմեկյան տոնակատարությունը վերածվում է պրոլետարիատի համերաշխության վառ ցույցի<sup>138</sup>, Ընդհանրապես Արևելյան Հայաստանում հեղափոխական նոր վերելքի տարիներին քաղաքական ցույցերն անց են կացվում մայիսմեկյան տոնակատարության, բանվորների միջազգային համերաշխության օրը նշելու լողունգներով: Ղափանում բանվորները քաղաքական բարձր տրամադրությամբ անցկացրեցին 1913 թ. մայիսմեկյան տոնակատարությունը և հատկապես 1914 թ. մայովկան:

1913 թ. խմորումներ են սկսվում Ալավերդում, ուր օտարերկրյա կապիտալիստների դաժան շահագործումից և քաղաքական ընդհանուր իրավազուրկ վիճակից խիստ դժգոհ բանվորական հոծ զանգվածի համար գործադուլի առիթներ միշտ կային: 1913 թ. օգոստոսին Քիֆլիսի ժանդարմական վարչության պետին տեղեկացնում են, որ Ալավերդու բանվորները պատրաստվում են գործադուլի: Նախապատրաստվող գործադուլի պատճառը, ըստ հաղորդագրության, Ալավերդու հանքատերերի՝ ֆրանսիական կոնցեսիոներների դաժան և անմարդկային վերաբերմունքն էր: Ալավերդու առաջավոր բանվորներն աշխատում էին կազմակերպված բնույթ տալ բանվորական ելույթներին, 1914 թ. մարտին Ալավերդում բռնկվում է գործադուլ: Առիթը՝ տեխնիկական անվտանգության կանոնների իսպառ բացակայության պատճառով, գործարանի բանվորներից մեկի հետ տեղի ունեցած դժբախտ, բայց սովորական դարձած պատահար էր: Հանքերի և գործարանների վարչությունը փորձեց անուշադրության մատնել պատահարը: Նման վերաբերմունքը լցրեց բանվորների համբերության բաժակը, և մարտի 18-ին նրանք գործադուլ հայտարարեցին, պահանջելով տնտեսական դրության բարելավում՝ 8-ժամյա աշխատանքային օր, աշխատավարձի բարձրացում 20% -ով և բանվորական տեսչության նշանակում: Հանքերի և գործարանների վարչությունը դիմում է իշխանությունների օգնությանը: Անմիջապես Ալավերդի են ժամանում ոստիկաններ, ինչպես նաև Կովկասյան լեռնային վարչության կողմից (որն իրականացնում էր լեռնահանքային արդյունաբերության վրա պետական վերահսկողությունը)՝ օկրուգային ինժեներ Ա. Յեյտլինը: Վերջինիս հաջողվում է, գործակցելով ոստիկանության հետ, սպառնալիքներով, խոստումներով

<sup>137</sup> «История СССР», т. 2, М., 1965 г., с. 527.

<sup>138</sup> «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուղագծեր», էջ 134—135, 145:

ու խաբեությամբ համոզել բանվորներին՝ բավարարվել պահանջներին մասնակի կատարումով և վերսկսել աշխատանքները<sup>139</sup>։

Բանվորական և գյուղացիական ելույթներն արձագանք գտան բանակում։ Արևելյան Հայաստանի քաղաքներում և բնակավայրերում տեղավորված ռազմական միավորումներում նորից խմորումներ սկսվեցին։ Դեռ ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հայաստանի քաղաքների և առաջին հերթին Ալեքսանդրապոլի ու Կարսի զինվորական կազմակերպությունները գտնվում էին գերազանցապես բուլշևիկների ազդեցության տակ։ Հեղափոխության տեղատվության ժամանակաշրջանում և հետագա տարիներին այդ կազմակերպությունները խոր ընդհատակում աշխատում էին պահպանել իրենց շարքերի միասնությունը։ Հեղափոխական շարժման վերելքը նորից աշխուժացրեց զինվորական շարժումները։ Ի պատասխան դրան, իշխանություններն ուժեղացնում էին բռնությունները։ 1911 թ. փետրվարին Երևանի օկուպացիոն դատարանը հեղափոխական գործունեության համար վեց տարով տաժանակրության դատապարտեց Իվան Վեդենկին, Անտոն Սուչչենկոյին և Ալեքսեյ Սորոկինին, որոնք լինելով «Կարսի զինվորական կազմակերպության» ակտիվ անդամները, բանտարկված էին և փախուստի փորձ էին կատարել կայազորի գլխավոր կալանատնից։

Հուզումներ բռնկվեցին նաև Երևանի, Ալեքսանդրապոլի, Կաղզվանի, Սարիղամիշի, Օլթիի զինվորական մասերում։ 1912 թ. հոկտեմբերին Կաղզվանի զորամասի զինվորները բողոքեցին բանակում տիրող կամայականությունների դեմ։ 1913 թ. հունվարին խլրտումներ սկսվեցին Ալեքսանդրապոլում, մասնավորապես անհանգիստ էին Բաքվի 153-րդ հետևակային գնդի զինվորները։ 1913 թ. դարձյալ հունվարին դժգոհություն է սկսվում Կարսի 80-րդ կաբարդինյան հետևակային գնդի զինվորների մեջ։ Սակայն ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում և Հայաստանում զինվորական հուզումները բացահայտ ապստամբության չվերաճեցին, որովհետև վրա հասած համաշխարհային պատերազմը փոխեց իրադրությունն ամբողջ երկրում։

Հեղափոխության վերելքի տարիներին բուլշևիկների գործունեությունը նպատակադրվում էր ծավալվող բանվորական, գյուղացիական ելույթները, զինվորական խլրտումները, դեմոկրատական խավերի

շարժումները պրոլետարական պայքարի դրոշի ներքո համախմբելու ուղղությամբ։ Այդ տարիներին աշխուժանում է Երևանի, Ալեքսանդրապոլի, Ալավերդու, Կարսի, Ջանգեզուրի, Նոր Բայազետի, Իգդիրի և այլ վայրերի բուլշևիկյան խմբակների գործունեությունը։

1910—1914 թթ. Երևանում ծառայողների, ուսանողների, աշակերտների մեջ քաղաքական-կազմակերպական աշխատանք էին տանում բուլշևիկներ Արշ. Մելիքյանը, Վ. Բաղդասարյանը, Լ. Տեր-Հովսեփյանը և ուրիշներ։ Մինչև 1910 թ. կեսերը Երևանում էր աշխատում նաև Գ. Սոկոլովսկին։ 1913—1914 թթ. Երևանի բուլշևիկները հրատարակում են «Խոսք» թերթը, որը մատչելի լեզվով ընթերցողներին բացատրում էր հասարակական հարաբերությունների էությունը և ցույց տալիս ժողովրդական զանգվածների թշվառությունը։ «Խոսքը» լայն տեղ էր հատկացնում հատկապես գավառների աշխատավորության դրության նկարագրությանը, լուսաբանում էր համառուսական քաղաքական կարևոր իրադարձությունները, անդրադառնում դասակարգային պայքարի խնդիրներին<sup>140</sup>։ Թերթն իր վերաբերմունքն էր արտահայտել նաև Հայկական հարցի, մասնավորապես արևմտահայության ճակատագրի նկատմամբ<sup>141</sup>։ «Խոսք» թերթին աշխատակցում էին Ա. Կարինյանը, Վ. Բաբայանը, Մ. Ենգիբարյանը, Բ. Բորյանը, խմբագիրը՝ Արշ. Մելիքյանն էր։

Կուսակցական-քաղաքական աշխատանքներն աշխուժացան նաև Ալեքսանդրապոլում, որտեղ իր ակտիվությամբ աչքի էր ընկնում երկաթուղային հանգույցի բուլշևիկյան բջիջը, որը ղեկավարում էր 1906 թ. կուսակցության անդամ Նոյ Լեժավան։ Խուսափելով ոստիկանական հետապնդումներից, նա Թիֆլիսից փոխադրվել էր Ալեքսանդրապոլ և, աշխատելով որպես մեքենավարի օգնական, հեշտությամբ զուգակցում էր լեզալ և անլեզալ գործունեությունը։ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը հրավիրում էր գաղտնի ժողովներ, ստանում արգելված գրականություն, կապ հաստատում քաղաքի կայազորի զինվորական կազմակերպության հետ։ Ալեքսանդրապոլի բուլշևիկները ձգտում էին կազմակերպված բնույթ տալ զինվորների մեջ տեղի ունեցող խմորումներին, ապահովել նրանց նկատմամբ բուլշևիկյան ղեկավարություն։

Հեղափոխության վերելքն զգալիորեն խթանում է նաև Բորչալուի բուլշևիկյան խմբերի գործունեությանը։ Այդ տարիներին Բորչալուի

<sup>139</sup> Ա. Կ. Գրիգորյանց, Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, Ե., 1960, էջ 21։

<sup>140</sup> «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուղիղ գծեր», էջ 148—149, 154—156, 158—159։

<sup>141</sup> Մ. Գ. Աղայան, Արշավիր Մելիքյան, Ե., 1969, էջ 15—23։

կազմակերպության Ալավերդու հանքարդյունաբերական շրջանում և գյուղական վայրերում, մասնավորապես Հաղպատի, Զալալօղլու, Շնողի խմբերում աչքի ընկնող դեր էին կատարում բուլշևիկներ Ս. Էվոյանը, Ֆ. Գարգալաչևը, Հ. Շահնազարյանը, Ի. Խաչիկը, Մ. Թանդիլյանը, Շ. Բեժանյանը, Ա. Թումանյանը, Ս. Հարությունյանը: Թիֆլիսի բուլշևիկյան կենտրոնից մշտական աջակցություն էին ցույց տալիս և սիստեմատիկաբար Բորչալու էին գալիս Ս. Կասյանը, Ա. Կախոյանը և ուրիշներ, իրենց հետ բերելով մարքսիստական գրականություն, թերթեր և թոռուցիկներ<sup>142</sup>:

1910—1914 թթ. կուսակցական-կազմակերպական աշխատանքներն աշխուժանում են նաև Կարսում, Կաղզվանում, Իզդիբում: Կարսում ստացվում էին բուլշևիկյան պարբերականներ, մասնավորապես «Զվեզդա» թերթը: Կարսի բուլշևիկյան խումբը, որտեղ աչքի ընկնող դեր էին կատարում Վահան Հովսեփյանը և Բենո Սահակյանը, Ս. Կասյանի ու Գ. Շահվերդյանի միջոցով մշտական կապ էր պահպանում Թիֆլիսի բուլշևիկների հետ: Կաղզվանում գործող մարքսիստական խումբը գլխավորում էր Հ. Սարուխանյանը: Նա միաժամանակ Իզդիբում կազմակերպում է մարքսիստական խումբ, որի աշխատանքներին գործուն մասնակցություն էին ցույց տալիս Բ. Ղարիբջանյանը, Գ. Ղալաչյանը և ուրիշներ:

Այդ տարիներին Զանգեզուրի բուլշևիկյան խմբերը ևս ակտիվացրին իրենց գործունեությունը: Զանգեզուրում և մասնավորապես Ղափանի պղնձահանքերում էին աշխատում դեռևս առաջին ուսական հեղափոխության բովում թրծված բուլշևիկներ Ա. Մարտիրոսյանը, Մ. Մանուշարյանը, Ա. Առաքելյանը, Ա. Վարդանյանը և ուրիշներ: Զանգեզուրի գավառում գյուղական բնակչության մեջ հեղափոխական գործունեություն էին ծավալել Ա. Բաղդասարովը, Լ. Առուստամյանը, Ք. Մկրտչյանը և ուրիշներ: Զանգեզուրի բուլշևիկները ղեկավար ցուցումներ և աջակցություն էին ստանում Բաքվի բուլշևիկյան կենտրոնից<sup>143</sup>:

Այսպիսով հեղափոխական նոր վերելքի տարիներին Հայաստանի շաղաքներում և գյուղական շրջաններում հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները զգալիորեն աշխուժացրին իրենց աշխատանքները:

<sup>142</sup> Մ. Վ. Արզումանյան, Բուլշևիկների գործակալությունը ևևուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թթ. Ե., 1959, էջ 273—274:

<sup>143</sup> Մ. Վ. Արզումանյան, նշված աշխ., էջ 275:

Հեղափոխական շարժման նոր վերելքը կուսակցության առջև նոր խնդիրներ էր դնում: Բանվորական և գյուղացիական ելույթները, զինվորական հուզումները, հեղափոխական շարժման մեջ նոր շերտերի մխրճվելը այնպիսի մասսայական բնույթ էին ընդունել, որ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայից պահանջում էին նոր դիրքորոշում: Հեղափոխական կուսակցությունը չէր կարող օպորտունիստական և լիկվիդատորական տարրերի գոյակցության պայմաններում ղեկավարել այդ շարժումները: Դրա համար անհրաժեշտ էր մաքրել կուսակցությունն այդպիսի տարրերից: Այդ հարցերը քննելու համար բուլշևիկները Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ առաջարկեցին հրավիրել կուսակցության կոնֆերանս:

Անդրկովկասի բուլշևիկները ջերմորեն ողջունեցին կոնֆերանս հրավիրելու առաջարկությունը: Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ կոնֆերանսի նախապատրաստման Ռուսաստանյան կազմակերպչական հանձնաժողովի աշխատանքները ղեկավարելու համար 1911 թ. ամռանն արտասահմանից անլեզալ Անդրկովկաս ժամանեց Ս. Օրջոնիկիձեն: Սեպտեմբերի 29-ին Բաքվի, Թիֆլիսի, Կիևի, Եկատերինոսլավի ու Եկատերինբուրգի կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչների համատեղ նիստում ստեղծվեց կոնֆերանսի նախապատրաստման Ռուսաստանյան կազմակերպչական հանձնաժողով, որի մեջ անդրկովկասյան բուլշևիկներից մտան Ս. Օրջոնիկիձեն, Ս. Սպանդարյանը, Ստ. Շահումյանը<sup>144</sup>, Սակայն Ստ. Շահումյանը Բաքվի ՌՍԴԲԿ կոմիտեի անդամների մեծ մասի հետ հաջորդ օրը ձերբակալվեց, որի հետևանքով հանձնաժողովն իր աշխատավայրը Բաքվից տեղափոխեց Թիֆլիս: Ռուսաստանյան կազմակերպչական հանձնաժողովի ներկայացուցիչները տեղերում քաղաքական-կազմակերպական լայն գործունեություն ծավալեցին, բանվորներին ուղղված դիմումներ, պրոկլամացիաներ հրատարակեցին: Ս. Սպանդարյանը ՌԿԸ-ի հանձնարարությամբ եղավ Պետերբուրգում, Մոսկվայում, Ռիգայում:

1912 թ. հունվարի 5-ին Պրագայում բացվեց ՌՍԴԲԿ համառուսաստանյան VI կոնֆերանսը, որտեղ ներկայացված էին ավելի քան քսան տեղական կազմակերպություններ: Բաքվի և Թիֆլիսի կազմակերպությունների պատգամավորներն էին Ս. Սպանդարյանը և Ս. Օրջոնիկիձեն:

<sup>144</sup> Գ. Բ. Գарибджанян, В. И. Ленин и большевистские организации Закавказья (1893—1924), Е., 1967, с. 158.



Կոնֆերանսը կուսակցության շարքերից վտարեց մենշևիկ-լիկվի-  
քատորներին և այլ օպորտունիստների, որոնք վերասերվելով դարձել  
էին բուրժուազիայի գործակալներ բանվորական շարժման մեջ<sup>145</sup>։ Ել-  
նելով ՌՍԳԲԿ մինիմում ծրագրի ելակետային սկզբունքներից, կոն-  
ֆերանսը կուսակցական կազմակերպություններին առաջադրեց հեղա-  
փոխական շարժման նոր վերելքին համապատասխան տակտիկա։

Անդրադառնալով ազգային հարցին, կոնֆերանսը դարձյալ ընդ-  
գծեց ազատագրական պայքարի մեջ Ռուսաստանի բոլոր ազգություն-  
ների նպատակների միասնությունը<sup>146</sup>։ Կոնֆերանսում Անդրկովկասի  
բուլշևիկների գործունեության մասին ղեկուցումով հանդես եկավ Ս.  
Սպանդարյանը, որն արժանացավ Վ. Ի. Լենինի ուշադրությանը։ Ըն-  
տրվեց կենտրոնական կոմիտե, որի կազմի մեջ մտան Վ. Ի. Լենինը,  
Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ս. Ս. Սպանդարյանը, Ֆ. Ի. Գոլոշոկինը։

Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի բուլշևիկները գոհունակու-  
թյամբ ընդունեցին Պրագայի կոնֆերանսի որոշումները և իրենց ամեն-  
օրյա գործունեության ուղեցույց դարձրին։

Առաջին համաշխարհային պատերազմը ընդհատեց հեղափոխական  
շարժման նոր վերելքը Ռուսաստանում։ Պատերազմի մեջ մտնելով՝  
Ռուսաստանի կառավարողները մտադրվում էին միաժամանակ «հայ-  
րենասիրական» լաիք բարձրացնելով թուլացնել հեղափոխական ու-  
ժերի գրոհը, գործադուլային շարժումները, գյուղացիական ընդվզում-  
ները, զինվորական հուզումները։

Ռուսաստանյան քաղաքական բոլոր կուսակցությունները, այդ  
թվում և հայկական բուրժուական և մանրբուրժուական կուսակցու-  
թյունները ամբողջովին լծվեցին ցարիզմի ռազմական կառքին։

Հայկական քաղաքական կուսակցությունները ոչ միայն իրենց  
զինվորական ուժերը տրամադրեցին կովկասյան բանակի հրամանա-  
տարությանը, ներգրավելով կամավորական խմբերի կազմակերպման  
մեջ, այլև ակտիվորեն մասնակցեցին ռազմաարդյունաբերական կոմի-

<sup>145</sup> Մ. Վ. Արզումանյան, նշված աշխ., էջ 268—269.

<sup>146</sup> Գ. Ա. Գալոյն, Рабочее движение и национальный вопрос в Закавказье  
1900—1922, Ереван, 1969, с. 156—157.

տներին ստեղծմանը, որոնք նպատակ ունեին աշխուժացնել արդյունա-  
բերությունը պատերազմի տարիներին։

Պատերազմը սկզբնական շրջանում ոգևորություն առաջացրեց  
արևմտահայության հարցով մտահոգ հայ հասարակական որոշ շեր-  
ջաններում։ Ողջակիզվող արևմտահայությանը օգնելու գաղափարը վառ  
էր նաև երիտասարդության մոտ, ուստի զարմանալի չէ, որ ուսանող-  
ները խմբովին մտնում էին կամավորական ջոկատների մեջ<sup>147</sup>։

Հայկական մանրբուրժուական կուսակցությունները չէին կասկա-  
ծում, որ պատերազմի հաղթական ավարտը հնարավորություն կստեղ-  
ծի Հայկական հարցի բարեհաջող լուծման համար, իսկ հայկական  
բուրժուազիան և նրա կուսակցությունները, յուրովի արտահայտելով  
համառուսաստանյան բուրժուազիայի շահերը, գտնում էին, որ պա-  
տերազմը նաև նոր շուկաներ ձեռք բերելու հնարավորություններ կըն-  
ձեռի իրենց։

Միայն բուլշևիկյան կուսակցությունը Վ. Ի. Լենինի ղեկավարու-  
թյամբ հանդես եկավ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիա-  
կանի վերածելու կոչով։ Սոցիալ-շովինիզմից զերծ մնաց նաև ռուսաս-  
տանյան պրոլետարիատի մեծ մասը։ Պատերազմի հենց առաջին օրե-  
րին Պետրոգրադի, Մոսկվայի, Ռիգայի, Կիևի, Բաքվի և այլ քաղաք-  
ների բանվորները հակապատերազմական ցույցեր կազմակերպեցին։

Այնուամենայնիվ պատերազմն իր գործն անում էր և բանվորա-  
կան շարժումները թուլանում էին։ Սակայն մյուս կողմից ժողովրդա-  
կան զանգվածների ատելությունը ցարական կարգերի նկատմամբ գնա-  
լով աճում էր և արդեն 1915—1916 թթ. ամբողջ երկրում բանվորական  
շարժումները դարձյալ վերելք էին ապրում։

Անդրկովկասում գործադուլային շարժումները նորից սկսվեցին  
1915 թ. կեսերին՝ ընդգրկելով 6000 գործադուլավորի, իսկ 1916 թ.  
նրանց թիվը անցավ 40000-ից<sup>148</sup>։ Հայաստանում այդ թվականներին  
գործադուլներ տեղի ունեցան Ալավերդում, Ղափանում և մի շարք այլ  
վայրերում։

Երկրում ստեղծված ընդհանուր ճգնաժամային վիճակը, քաղա-  
քական հեղձուցիչ մթնոլորտը, տնտեսական դժվարությունները աշխա-

<sup>147</sup> Ս. Բ. Оганджаниян, Революционное движение молодежи Закавказья  
(1890—1917 гг.), Е., 1975, с. 271—273.

<sup>148</sup> Զ. Ա. Պետրոսյան, Անդրկովկասի բանվոր դասակարգը և բուլշևիկյան կազմ-  
ակերպությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Ե., 1977, էջ  
301.

տավորական զանգվածներին հակացարական և հակապատերազմական տրամադրություններով էին համակում: Հայաստանի գյուղերում և քաղաքներում պարենավորման դժվարությունների հետ կապված մի շարք ելույթներ տեղի ունեցան: 1915—1916 թթ. Հայաստանի տարբեր բնակավայրերում գտնվող զինվորական մասերում ևս հուզումներ էին տեղի ունենում: Շարունակվում էին նաև ագրարային շարժումները: 1916 թ. ընթացքում անհանգիստ էր Ալավերդու բանվորությունը, նույնիսկ ցարական իշխանության ներկայացուցիչների զեկուցագրերում ասվում էր, որ հանքագործների տնտեսական դրությունը շատ ծանր է. և աշնանը Ալավերդում գործադու է բռնկվում<sup>149</sup>:

1916 թ. նոյեմբերին ելույթ ունեցան Ղափանում Կոնդուրովներին պատկանող Ուղուրչայի պղնձաձուլական գործարանի բանվորները: Կովկասյան իշխանությունները փորձեցին կանխել գործադուլի տարածումը մյուս գործարաններում և հանքավայրերում, սակայն տնտեսական ծայրահեղ վատթար պայմաններում գտնվող Ղափանի ամբողջ շրջանի բանվորությունն անմիջապես արձագանքեց գործադուլին և աշխատանքները դադարեցրին 1200 հանքագործներ: Բանվորները պահանջում էին կրճատել աշխատանքային օրը և աշխատավարձը ավելացնել 40%-ով: Երեք օր բանվորները կազմակերպված դիմավորեցին գործարանատերերի ճնշմանը և ի վերջո հասան իրենց պահանջների որոշակի բավարարման<sup>150</sup>:

1916 թ. հուզումներ տեղի ունեցան նաև սովորող երիտասարդության շրջանում, մասնավորապես անհանգիստ էին Գևորգյան ճեմարանի ուսանողները:

Պատերազմի տարիներին, բորբոքված շովինիստական կրթերի շրջապատում ծանր պայմաններ ստեղծվեցին հեղափոխական գործունեության համար, շնայած դրան բոլշևիկները հակապատերազմական լայն աշխատանք ծավալեցին աշխատավորական զանգվածների մեջ:

Կովկասի և Հայաստանի բոլշևիկները գործունեությունը նպատակամղելու գործում մեծ նշանակություն ունեցավ 1915 թ. հոկտեմբերի 4-ին Բաքվում Ստ. Շահումյանի գլխավորությամբ հրավիրված անլիզալ խորհրդակցությունը: Խորհրդակցությունը քննարկեց բոլշևիկյան կազմակերպությունների առջև կովկասյան առանձնահատուկ պայմաններում ծառայած և պատասխան պահանջող ամենահրատապ հարցերը՝

<sup>149</sup> Մ. Վ. Արզումանյան, նշված աշխ., էջ 526—527:

<sup>150</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 800—801:

պատերազմի և ընթացիկ մոմենտի, ազգային հարցի, ազգային հարաբերությունների խնդիրը և կազմակերպական հարցեր: Պատերազմական իրադրության բարդ և հակասական պայմաններում, Անդրկովկասում ստեղծված ազգային փոխհարաբերությունների խճճված միջավայրում, խորհրդակցությունը հստակորեն նշեց երկրամասի բոլշևիկների անելիքները աշխատավորական զանգվածներին համախմբելու, ցարիզմի դեմ գրոհի տանելու, միապետական կարգերը տապալելու և դեմոկրատական հանրապետություն ստեղծելու համար:

Բաքվի 1915 թ. հոկտեմբերյան խորհրդակցությունը ընտրեց ՌՍԴԲԿ Կովկասյան բյուրո, որի մեջ ղեկավար դեր էին կատարում Ստ. Շահումյանը, Ֆ. Մախարաձեն, Ի. Ֆիոլետովը, Ս. Քավթարաձեն, Ն. Ալաշալվան և ուրիշներ:

1915 թ. հոկտեմբերյան խորհրդակցության բանաձևերը 3000 օրինակով տպագրվեցին բոլշևիկյան անլիզալ տպարաններում և տարածվեցին տեղերում, այդ թվում և Կովկասյան բանակում<sup>151</sup>:

Խորհրդակցության աշխատանքներն ըստ արժանվույն գնահատեց կուսակցության կենտրոնական օրգան «Սոցիալ-դեմոկրատ» թերթը: Թերթը միաժամանակ նշում էր, որ 1915 թ. Հոկտեմբերյան խորհրդակցությունից հետո կուսակցական աշխատանքն աշխուժացել է Կովկասի բոլոր վայրերում<sup>152</sup>:

Պատերազմի տարիներին բանվորներին, գյուղացիներին, սովորողներին ինտերնացիոնալ-դասակարգային դաստիարակություն տալու ուղղությամբ մեծ դեր է կատարել 1915 թ. դեկտեմբերից հրատարակվող «Պայքար» հայերեն շաբաթաթերթը: «Պայքար-ին» աշխատակցում էին բոլշևիկներից Ստ. Շահումյանը, Ա. Մոսվյանը, Ս. Խանոյանը, Ա. Միկոյանը, Մ. Մելիքյանը, Ա. Ամիրյանը, Հ. Կամարին, Վ. Երեմյանը, Հ. Սոլովյանը, Հ. Հակոբյանը, մենշևիկ-ինտերնացիոնալիստներից Ա. Երզնկյանը, Հ. Ազատյանը և ուրիշներ: «Պայքարը» Թիֆլիսի միացյալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության օրգանն էր և մինչև 1917 թ. հունիս ամիսը, մինչև հարյուրերորդ համարի հրատարակությունը, փաստորեն գտնվում էր գերազանցապես բոլշևիկների ազդեցության տակ:

<sup>151</sup> Հ. Ս. Մելիքյան, Հեղափոխական շարժումները կովկասյան բանակում (1914—1917), Ե., 1975, էջ 63—65:

<sup>152</sup> «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուղիղ գծեր», Ե., էջ 178:

Հնայած պատերազմական պայմանների դժվարություններին Հայաստանի բուլճարիկները կարողանում են հաղթահարել անլեզալ աշխատանքի դժվարությունները և ուստիկանական խիստ հետապնդումներից ու հսկողությունից խուսափելով աստիճանաբար վերականգնել կուսակցական կազմակերպությունները: Մեծ էր այս ուղղությամբ ՌՍԳԿ Կովկասյան բյուրոյի և Թիֆլիսի ու Բաքվի բուլճարիկյան կազմակերպությունների օգնությունը Հայաստանին:

1915 թ. վերջերին 1916 թ. սկզբներին արդեն աշխույժ գործունեություն էին ծավալել Ալեքսանդրապոլի բուլճարիկները: Բուլճարիկյան խմբեր կազմակերպվեցին ոչ միայն քաղաքի ձեռնարկություններում, այլև կայազորում, որի կազմում գտնվող զինվորական միավորումների թիվը պատերազմական գործողությունների հետևանքով բավականին մեծացել էր: Ալեքսանդրապոլում բուլճարիկյան խմբերն ու բջիջները ղեկավարում էին՝ Պ. Արվելաձեն, Ա. Շահինյանը, Ա. Վարդանյանը, Բ. Ղարիբջանյանը:

1915—1916 թթ. գործում էր նաև Ալավերդու բուլճարիկյան խումբը, որը բավականին ազդեցություն ուներ ոչ միայն արդյունաբերական շրջանի բանվորության մեջ, այլև շրջակա գյուղերում: Ալավերդու բուլճարիկները կապված էին ՌՍԳԿ Թիֆլիսի կոմիտեի հետ:

1915—1916 թթ. բուլճարիկյան և ուսանողական մարքսիստական խմբեր էին գործում էլմիածնում՝ Գ. Աթարբեկյանի, Ա. Հովհաննիսյանի, է. Մելիք-Աղաջանյանի, Ա. Միկոյանի, Ա. Ստամբուլցյանի և ուրիշների մասնակցությամբ<sup>153</sup>:

Երևանում հեղափոխական տրամադրություններն առանձնապես ուժեղ էին սովորող-երիտասարդության և կայազորի զինվորների շրջանում: Երևանի բուլճարիկների ղեկավարն էր ճանաչված մարքսիստ Արշավիր Մելիքյանը<sup>154</sup>:

1915—1916 թթ. Սարիղամիշում, Կարսում հեղափոխական աշխատանք էին կատարում Ս. Տ. Ալավերդյանը, Ս. Թավրիաշվիլին, Հ. Սարուխանյանը և ուրիշներ:

Պատերազմի տարիներին բուլճարիկները ուժեղացրին աշխատանքները հատկապես զորամասերում, ուր անլեզալ գործունեություն էին ծավալել դասակարգային գոտեմարտում թրծված այնպիսի նշանավոր

<sup>153</sup> Նույն տեղում, էջ 181—182:

<sup>154</sup> Խ. Հ. Բարսեղյան, նշված աշխ., էջ 326:

անձնավորություններ, ինչպիսիք էին Ա. Զափարիձեն, Գ. Կորգանովը, Պ. Արվելաձեն, Ս. Հովսեփյանը, Ի. Մալիգինը:

1917 թ. տեղի ունեցած փետրվարյան բուրժուազեմոկրատական հեղափոխությունը չլուծեց Ռուսաստանի առջև կանգնած կենսական խնդիրները: Երկրի աշխատավորները դարձյալ մնացին աղքատության և իրավազրկության մեջ: Բնական է, որ նրանք պետք է շարունակեին իրենց ազատագրական պայքարը, որը գլխավորում էր ռուս պրոլետարիատը բուլճարիկյան կուսակցության ղեկավարությամբ: Պետրոգրադում, Մոսկվայում, Ռուսաստանի արդյունաբերական խոշոր քաղաքներում ժամանակավոր կառավարության դեմ հզոր գործադուլներ, քաղաքական ցույցեր տեղի ունեցան:

Հեղափոխությունը ոտքի հանեց նաև Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի աշխատավորությանը: 1917 թ. փետրվար-հոկտեմբերամիսներին Ալավերդու, Ղափանի, Երևանի, Ալեքսանդրապոլի բանվորները հանդես եկան քաղաքական-տնտեսական բնույթի մի շարք պահանջներով: Տեղի ունեցան նաև զինվորական խլրտումներ, գյուղացիական շարժումներ, աշակերտական-ուսանողական հուզումներ<sup>155</sup>: Ժամանակավոր կառավարության գործադրած բռնությունները չէին կարող ընկճել ազատության համար պայքարող ժողովրդի կամքը:

Անդրկովկասի ու Հայաստանի բուլճարիկները առաջնորդվելով լեհինյան ցուցումներով նախապատրաստում էին աշխատավորական զանգվածներին վերջնական ազատագրության՝ սոցիալիստական փոխության անցնելու ուղղությամբ:

<sup>155</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 615—619:

Հ Ա Վ Ն Վ Ա Ս Մ Ո Ւ

Ա ղ յ ա տ ա կ ի

Արևելյան Հայաստանի պրննահանգների թվաքանակը 1888—1916 թթ.

Table with columns for years (1888-1907) and categories: Զարգացող թիվ, Զարգացող թիվ (subdivided into 3-6), Զարգացող թիվ (subdivided into 7-9), Զարգացող թիվ (subdivided into 10-13). Rows show population growth data for various years.

Table with columns for years (1898-1916) and categories: 1-13. Rows show population data for years 1898 through 1916.

Աղյուսակը կարգված է հետևյալ աղբյուրների հիման վրա՝ Վրաց. ՄԱՀ Կողմ, ք. 264, ց. 1, գ. 1658, ք. 23, 35, 52, 53, 140, 156, 292, գ. 1908, ք. 46, 47, 223, գ. 1909, ք. 47, 52, գ. 5746, ք. 13, 48, 88, 89, 187, 259, 319, գ. 5858, ք. 6, 228, գ. 2144, ք. 21, գ. 2143, ք. 105, 216, գ. 2318, ք. 11, 13, գ. 2511, ք. 20, 142, գ. 5732, ք. 41, գ. 2673, ք. 26, 91, գ. 2671, ք. 149, 159, գ. 2670, ք. 39-40, 62, 98, գ. 2913, ք. 64-65, գ. 2912, ք. 88, գ. 5660, ք. 20, գ. 3308, ք. 93, 110, 111, 185, 202, գ. 3531, ք. 106, 340, 355-356, գ. 3694, ք. 296, գ. 3780, ք. 96, 105-106, 350, գ. 4089, ք. 276, գ. 4580, ք. 64-66, գ. 4991, ք. 37, 144-145, գ. 5329, ք. 13-14, 42, 44, գ. 5328, ք. 22-23, 206, 208, գ. 5330, ք. 15, 16, 55, գ. 3901, ք. 75, 84-85, 151, ք. 415, ց. 1, գ. 88, ք. 6:

Сборник статистических сведений о горнозаводской промышленности России: в 1888 году.—СПб., 1891, отд. II, с. 165—166; в 1889 году. том II—СПб., 1892, с. 7; в 1890 году.—СПб., отд. II, с. 135; в 1891 заводском году.—СПб., 1893, отд. II, с. 151; в 1892 заводском году.—СПб., 1895, с. 167; в 1893 заводском году.—СПб., 1896, с. 174—175; в 1894 заводском году.—СПб., 1899, с. 198—199; в 1895 заводском году.—СПб., 1897, с. 190—191; в 1896 заводском году.—СПб., 1899, отд. II, с. 210—211; в 1897 заводском году.—СПб., 1899, с. 194, 195; в 1898 заводском году.—СПб., 1900, с. 192—193, в 1899 заводском году.—СПб., 1901, с. 199; в 1900 заводском году.—СПб., 1903, с. 210, 211; в 1901 заводском году.—СПб., 1904, с. 235—236; в 1902 заводском году.—СПб., 1905, с. 226—228; в 1903 заводском году.—СПб., 1906, с. 222—225; в 1904 заводском году.—СПб., 1907, с. 248, 250; в 1905 году.—СПб., 1908, с. 284, 236; в 1906 году.—СПб., 1909, с. 215—217; в 1907 году.—СПб., 1910, с. 219—221, в 1908 году. Часть II.—СПб., 1910, с. 249—250; в 1909 году.—СПб., 1912, с. 264—266; в 1910 году.—СПб., 1913, с. 223—224.

1. Առանց Պիլիզանի հանքերի:
2. Այլ տվյալներով Հյուսիսային Հայաստանի հանքագործ բանվորների թիվը կազմում էր 127, բանվորների ընդհանուր թիվը 145, իսկ Հարավային Հայաստանում հանքագործ բանվորների թիվը կազմում էր 597, օժանդակ բանվորներինը 89, ընդհանուրը 686 (տե՛ս Վրաց. ՍՍՀ կողմից, ֆ. 264, ց. 1, գ. 1908, ք. 21):
3. Այլ տվյալներով Հյուսիսային Հայաստանի հանքերի թիվը 8 էր, իսկ հանքագործ և օժանդակ բանվորների թվաքանակը հավասար էր համապատասխանաբար 58-ի և 3-ի, ընդհանուր թիվը 61-ի (տե՛ս Վրաց. ՍՍՀ կողմից, ֆ. 264, ց. 1, գ. 5858, ք. 7, 228):
4. Առանց Սիսիմազանի հանքերի, որոնց մասին տվյալներ չկան:
5. Առանց Աթիկիի հանքերի, որոնց մասին տվյալներ չկան:
6. Հանքերից երեքը գտնվում էին Կարսի մարզում, Ղարան գյուղի մոտ, որտեղ աշխատում էին 10 հանքագործ բանվորներ:
7. Այլ տվյալներով Հյուսիսային Հայաստանի հանքերի թիվը 7 էր, իսկ հանքագործ և օժանդակ բանվորների թվաքանակը հավասար էր համապատասխանաբար 256-ի և 344-ի, ընդհանուր թիվը՝ 600-ի (տե՛ս Վրաց. ՍՍՀ կողմից, ֆ. 264, ց. 1, գ. 3694, ք. 296):
8. Այլ տվյալների համաձայն Հարավային Հայաստանում գործում էին 22 հանք 1523 բանվորներով (1021 հանքագործ և 502 օժանդակ), այդ թվում 1 բանվոր աշխատում էր Կարսի մարզի Ղարան գյուղի հանքում (տե՛ս Վրաց. ՍՍՀ կողմից, ֆ. 264, ց. 1, գ. 3780, ք. 96, 105—106):
9. Այլ տվյալների համաձայն Հյուսիսային Հայաստանում գործում էին 17 հանք 1168 բանվորներով (1042 հանքագործ և 126 օժանդակ), տե՛ս Վրաց. ՍՍՀ կողմից, ֆ. 264, ց. 1, գ. 4580, ք. 64—66):
10. Այդ թվում հանքերից 4-ը 16 հանքագործ բանվորներով գտնվում էին Նախիջևանի գավառի Շաքար-Ռարա գավառում:
11. Այդ թվում 2 հանք 4 հանքագործ և 1 օժանդակ բանվորներով գտնվում էին Նախիջևանի գավառի Շաքար-Ռարա գավառում:
12. Այդ թվում 2 հանք 2 հանքագործ բանվորներով և 2 հանք ևս 22 հանքագործ բանվորներով գտնվում էին Նախիջևանի գավառի Շաքար-Ռարա և Քենդիր-Մալարա վայրերում:
13. Այդ թվում 1 հանքագործ և 1 օժանդակ բանվորներ Շաքար-Ռարայի հանքերում:

Ա Ղ Յ Ո Ւ Մ Ա Կ 2  
Պ ռ Ն ա ճ ո Վ յ ա ի ն Հ ա յ ա տ ա ն ու մ 1888—1916 թթ.

Տարիներ	Հյուսիսային Հայաստանում		Հարավային Հայաստանում		Հարավային Հայաստանում		Ստամբուլ Արևելյան Հայաստանում					
	Ընդհանուր	Բանվորների թիվը	Ընդհանուր	Բանվորների թիվը	Ընդհանուր	Բանվորների թիվը	Ընդհանուր	Բանվորների թիվը				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1888	3	—	—	701	5	354	81	435	8	—	—	505
1889	2	27	25	47	5	1032	532	1562	7	125	78	203
1890	3	27	23	60	5	124	57	181	8	151	80	231
1891	4	38	93	131	5	132	67	169	9	160	150	320
1892	3	67	29	96	5	119	54	173	8	186	83	269
1893	3	93	8	101	5	195	130	325	8	288	138	426
1894	3	15	52	67	5	160	150	310	8	175	292	377
1895	3	44	22	66	5	170	175	345	8	214	197	411
1896	1	65	—	65	5	148	105	253	6	213	105	318
1897	2	42	66	108	6	184	117	301	8	226	183	409
1898	1	25	15	40	7	178	39	217	8	203	54	257
1899	1	198	22	220	5	տվյալներ չկան		—	—	—	—	—
1900	1	—	—	190	5	53	63	116	6	—	—	300
1901	1	130	300	430	5	94	733	1073	6	224	373	597
1902	14	2634	370	633	3	82	53	137	4	345	425	770
1903	1	2635	370	633	3	85	64	149	4	348	434	782
1904	1	350	255	605	3 <sup>6</sup>	97 <sup>6</sup>	63 <sup>6</sup>	160 <sup>6</sup>	4	447	318	765
1905	2	323	604	927	4	122	48	170	6	445	652	1097
1906	3	659	69	748	4	98	56	154	7	757	115	902
1907	2 <sup>7</sup>	182 <sup>7</sup>	232 <sup>7</sup>	414 <sup>7</sup>	4	93	39	132	6	275	271	546
1908	3	394	124	518	4	113	76	189	7	507	200	707
1909	3	328	402	730	4	130	42	172	7	458	444	902
1910	3	499 <sup>3</sup>	651	1150 <sup>3</sup>	3	116	38	154	6	615	689	1304

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1912	3	—	—	6059	—	—	—	—	—	—	—	—
1913	2	502	440	918	3	126	106	232	5	628	552	1180
1914	2	468	451	919	3	108	114	222	5	376	363	1141
1915	2	42910	404	533	2	214	—	214	4	623	404	1047
1916	—	—	—	—	2	—	—	203	—	—	—	—

Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա՝ Վրաց. ՍՍՀ, Կողմ, ֆ. 264, ց. 1, Կ. 1658, Բ. 24, 25, 35, 52, 53, 142, 143, 164, 165, 293, 294, Գ. 1909, Բ. 48, 49, Գ. 1908, Բ. 46, 47, 226, 27, Գ. 5746, Բ. 14, 15, 88, 89, 189, 190, 261, 262, 317, 318, Գ. 5858, Բ. 8, 9, 44, 45, 113, 182, 183, 217, 218, Գ. 2144, Բ. 23, 24, Գ. 2143, Բ. 106, 107, 216, 219, Գ. 2318, Բ. 13, Գ. 2511, Բ. 18, 19, 140, 141, Գ. 5732, Բ. 39, 40, Գ. 2673, Բ. 28, 29, 89, 90, Գ. 2671, Բ. 151, 152, 157, 158, Գ. 2670, Բ. 39, 40, 62, 96, 97, Գ. 2913, Բ. 66, 67, Գ. 5660, Բ. 24—25, Գ. 3308, Բ. 93, 108, 109, 186, 187, 203, 204, Գ. 3531, Բ. 108, 109, 340, 354, 355, Գ. 3694, Բ. 297, 298, Գ. 3780, Բ. 96, 103, 104, 351, 352, Գ. 4089, Բ. 176, Գ. 4991, Բ. 35, 36, 146, 147, Գ. 5329, Բ. 14, 15, 44, 45, Գ. 5330, Բ. 17, 18, 69, 70, Գ. 5328, Բ. 22, 23, Գ. 5328, Բ. 207—208, Գ. 3901, Բ. 75, 82—83, 151, 221, 222, Գ. 415, ց. 1, Գ. 88, Բ. 6.

Сборник статистических сведений о горнозаводской промышленности России: в 1888 году.—СПб., 1891, отд. II, с. 166, 170—173; в 1889 году. Том II.—СПб., 1892, с. 10—11; в 1890 году.—СПб., 1892, отд. II, с. 138—139; в 1891 заводском году.—СПб., 1893, отд. II, с. 152—155; в 1892 заводском году. СПб., 1895, с. 168—171; в 1893 заводском году.—СПб., 1896, с. 200—203; в 1895 заводском году.—СПб., 1897, с. 192—195; в 1896 заводском году.—СПб., 1899, отд. II, с. 212—215; в 1897 заводском году.—СПб., 1899, с. 196—199; в 1898 заводском году.—СПб., 1900, с. 196—199; в 1898 заводском году.—СПб., 1900, с. 194—197; в 1899 заводском году.—СПб., 1901, с. 200—201; в 1900 заводском году.—СПб., 1903, с. 212—213; в 1901 заводском году. СПб., 1904, с. 238—241; в 1902 заводском году.—СПб., 1905, с. 230—233; в 1903 заводском году.—СПб., 1906, с. 228—229; в 1904 заводском году.—СПб., 1907, с. 254—255; в 1905 году.—СПб., 1908, с. 240—241; в 1906 году. СПб., 1909, с. 222—223; в 1907 году.—СПб., 1910, с. 226—227, в 1908 году. Часть II.—СПб., 1910, с. 254—257; вв 1909 году.—СПб., 1912, с. 272—273; в 1910 году.—СПб., 1913, с. 228—231.

1. Այդ թվում Գիլիշանի գործարանի և հանքերի բանվորների, որոնց թվաքանակը աղանձին-առանձին որոշել հնարավոր է:

2. Այլ տվյալներով, Հարավային Հայաստանի պղնձաձուլական գործարաններում 1889 թ. աշխատում էին 138, լեռնագործ, 71 օժանդակ, ընդամենը 209 բանվոր (տե՛ս Վրաց. ՍՍՀ Կողմ, ֆ. 264, ց. 1, Բ. 23, 24):

3. Այլ տվյալներով 1901 թ. Հարավային Հայաստանում օժանդակ բանվորների թիվը հասնում էր 83-ի, իսկ ընդհանուր թիվը 177-ի (տե՛ս Վրաց. ՍՍՀ Կողմ, ֆ. 264, ց. 1, Գ. 3308, Բ. 93, 108, 109, 186, 187):

4. Այլ տվյալներով 1902 թ. Հյուսիսային Հայաստանում գործում էին 2 պղնձաձուլական գործարան, 298 լեռնագործ, 376 օժանդակ, ընդամենը 674 բանվորներով:

5. Այլ տվյալներով 1903 թ. Հյուսիսային Հայաստանի պղնձաձուլական գործարանում (Ալավերդի) աշխատում էին 793 բանվոր, որոնցից 363 լեռնագործ (տե՛ս Վրաց. ՍՍՀ Կողմ, ֆ. 264, ց. 1, Գ. 3694, Բ. 297, 298):

6. Առանց կատարի գործարանի, որի մասին տվյալներ չկան:

7. Առանց Սիսիմադական գործարանի, որի մասին տվյալներ չկան:

8. Այդ թվում Ալավերդում և Շամլուղի գործարաններում աշխատում էին 473 լեռնագործ, 611 օժանդակ, ընդամենը 1084 բանվոր: Այլ տվյալներով նույն գործարաններում աշխատում էին 473 լեռնագործ, 679 օժանդակ, ընդամենը 1152 բանվոր (տե՛ս Վրաց. ՍՍՀ Կողմ, ֆ. 264, ց. 1, Գ. 4580, Բ. 66, 67):

9. Ըստ երևույթին աղբյուրում բերված են թերի տվյալներ:

10. Այդ թվում 52 բանվոր չհաղված էին ծծմբաքարի արտադրության մեջ (տե՛ս Վրաց. ՍՍՀ Կողմ, ֆ. 264, ց. 1, Գ. 5330, Բ. 34, 35):



